Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2020

Բովանդակություն

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը. հանցագործությունների դեմ պայքարի, հանցավորության հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքները.....3

2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.....35

3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ.....76

4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.....126

5. Պետական շահերի պաշտպանության ոլորտ 151

6. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 165

7. Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ. 176

8. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ.....197

9. Քաղաքացիների ընդունելության, դիմումների քննարկման և հանրային կապերի ոլորտ.....213

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը. հանցագործությունների դեմ պայքարի, հանցավորության հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքները

Հանցավորության վիճակի, շարժընթացի և բացահայտման վերաբերյալ վիճակագրական տվյալները հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը գնահատելու հիմնական չափանիշներից մեկն են, հետևաբար այդ տվյալների օբյեկտիվությունը հանցավորության դեմ պայքարի արդյունավետության հիմնական գրավականներից է:

Թեև նախկինում արդեն իսկ միջոցներ էին ձեռնարկվել հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի և բացահայտման վերաբերյալ վիճակագրության վարման կարգի կատարելագործման ուղղությամբ և դրանք արդեն իսկ տվել էին իրենց դրական արդյունքները վիճակի ճշգրիտ արտացոլման և գնահատման առումով, այդուհանդերձ, 2018թ. դատախազության աշխատանքների ամփոփման շրջանակներում արձանագրվել էր, որ կատարված ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների զգալի մասը դուրս էր մնում հանցավորության վիճակի վերաբերյալ վիճակագրությունից, այսինքն՝ ընդհանրապես չէր արտացոլվում դրանում: Հարցն այն էր, որ մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունները, որոնք ոչ մեծ և միջին ծանրության էին, որպես հանցագործության դեպք չէին հաշվառվել և չէին հաշվառվում դրանց վերաբերյալ քրեական գործի հարուցումը դիմողի բողոքի բացակայության հիմքով մերժվելու դեպքում: Այլ կերպ ասած՝ այս հանցագործությունների հաշվառումը անհասկանալիորեն պայմանավորվում էր այն կատարած անձի ի հայտ գալով, ինչն, ակնհայտորեն, անընդունելի էր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2019թ . Հայաստանի Հանրապետության դատախազության նախաձեռնությամբ տեղի ունեցած քննարկման արդյունքներով, որին մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության և քննչական կոմիտեի ներկայացուցիչները, որոշվել է 2019թ. առաջին եռամսյակից սկսած վերը նշված հանցագործությունների դեպքերը ևս հաշվառել հանցագործությունների վիճակագրական հաշվետվությունների ընդհանուր թվաքանակում, որի հետևանքով հանցավորության վերաբերյալ ներկայացվող տվյալները, նշված մեթոդաբանության փոփոխությամբ պայմանավորված, կարող են տարբերվել նախորդ տարվա ներկայացված տվյալներից:

2019թ. ընթացքում Հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.850 դեպք (2018թ.՝ 24.678), որոնցից 14.961-ը (2018թ.՝ 13.067)՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 2172-ով կամ 8.8%-ով (2018թ.՝ 2266-ով կամ 11.2%-ով):

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ հանցագործությունների դեպքերի աճն ապահովվել է առավելապես միջին ծանրության (7463 դեպք կամ

ընդհանուր հանցագործությունների 27.8%-ը) և ծանր (4490 դեպք կամ ընդհանուր հանցագործությունների 16.7%-ը) հանցագործությունների հաշվին, սակայն աճել են նաև ոչ մեծ ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը:

Այսպես, ոչ մեծ ծանրության հանցագործությունները 2019թ. աճել են 521-ով (14092-14613) կամ 3.7%-ով, միջին ծանրության հանցագործությունները՝ 739-ով (6724-7463) կամ 11.0%-ով, ծանր հանցագործությունները՝ 852-ով կամ 23.4%-ով (3638-4490), իսկ առանձնապես ծանր հանցագործության դեպքերն աճել են 60-ով կամ 26.8%-ով (224-284):

Տարեթիվը	Հանցագործության դեպքերի ընդհանուր թիվը	ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	միջին ծանրության հանցագործության դեպքեր	ծանր հանցագործության դեպքեր	առանձնապես ծանր հանցագործության դեպքեր
2018	24.678	14.092	6724	3638	224
2019	26.850	14.613	7463	4490	284
2019 թ. աճը	**+2172**	**+521**	**+739**	**+852**	**+60**
	+8.8%	**+3.7%**	**+11.0%**	**+23.4%**	**+26.8%**

Եթե 2018թ. առանձնապես ծանր հանցագործությունները ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմել են 0.9%-ը, ապա 2019թ.՝ 1.1%-ը: Ծանր հանցագործությունները 2018թ. կազմել են ընդհանուր հանցագործությունների 14.7%-ը, իսկ 2019թ.՝ 16.7%-ը:



2008-2018 թվականների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 28.1%: Մինչդեռ, 2019թ. ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների ընդամենը 17.8%-ը:

Նշված ցուցանիշն ակնհայտ վկայությունն է հատկապես ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների հաշվառման գործընթացի բարելավման, ինչը հատկապես վերջին տարիներին ապահովվում է դատախազության գործադրած ջանքերի շնորհիվ:





Վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների թվի աճը հիմնականում պայմանավորվել է գողությունների, ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերի աճով, ինչը մտահոգիչ է, ինչպես նաև առավել լատենտային համարվող՝ թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների և կեղծ փողեր, արժեթղթեր պատրաստելու, պահելու և իրացնելու դեպքերի հայտնաբերման աճով, ինչը անշուշտ, դրական դինամիկայի վկայություն է:

Հանցագործության դեպքերի աճը կարելի է պայմանավորել նաև այն հանգամանքով, որ շարունակական բարելավման են ենթարկվել քրեական հետապնդման մարմինների՝ հանցագործությունների բացահայտման, հայտնաբերման գործառույթների իրականացման մասնագիտական, տեխնիկական հնարավորությունները, կատարելագործվել են պրոֆիլակտիկ միջոցները և, ամենակարևորը, հատկապես լատենտային հանցագործությունների դեպքում զգալիորեն աճել է քաղաքացիների նախաձեռնողականությունը, իրավապահ մարմինների հետ համագործակցության մակարդակը: Օրինակ՝ եթե 2018թ. ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ ստացվել է 203.539 առերևույթ հանցագործության մասին հաղորդում, ապա 2019 թ. դրանց թիվն աճել է 42.882-ով՝ կազմելով՝ 246.421: Ի դեպ, 10. 4%-ով աճել են այն դեպքերը, երբ քաղաքացիները դիմել են ոստիկանություն նախկինում չհայտնած դեպքերի վերաբերյալ:

Մյուս կողմից, ցուցանիշների վրա էական ազդեցություն են ունեցել հանցագործությունների հաշվառման գործընթացի իրավական բարեփոխումները: Գաղտնիք չէ, որ նախկինում առկա էր ոստիկանության կողմից «վիճակագրությունը բարելավելու» մղումով դեպքեր թաքցնելու արատավոր պրակտիկան, ինչի համար պատասխանատվության են ենթարկվել ոստիկանության բազմաթիվ աշխատակիցներ: Նման դրսևորումները անհամեմատ նվազել են:

Միաժամանակ պետք է փաստել, որ չնայած հանցագործությունների թվի որոշակի աճին՝ տարվա ընթացքում իրականացված ծավալուն օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում էականորեն՝ տարվա ընթացքում՝ եռամսյակների կտրվածքվ շուրջ չորս անգամ կրճատվել է աճի տեմպը (2019թ. հունվար՝ 35.3%, դեկտեմբեր՝ 8.8%):

Պետք է փաստել, որ հանցավորության ընդհանուր կառուցվածքում շարունակվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշռի նվազման միտումը (20,1%-ից 16,0%), փոխարենը աճ է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշռում (48,8%-ից՝ 52,9%):

Ինչպես վերը նշվեց, 2019թ. հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.850 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է հասնում 906 դեպք: Պետք է նշել, որ այս ցուցանիշով մեր երկիրն էական դրական պատկեր է ապահովել (համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշը Էստոնիայում 2045 է, Ռուսաստանի Դաշնությունում՝ 1379, Ղազախստանի Հանրապետությունում՝ 1305, Ուկրաինայում՝ 997, Բելառուսի Հանրապետությունում՝ 938):

2020թ. փետրվարի 17-ին worldpopulationreview.com կայքում հրապարակված տվյալների համաձայն՝ հանցավորության մակարդակի 2020 թվականի ցուցիչով (ցուցիչը հաշվարկվում է 0-ից 100 ինդեքսով՝ հանցավորության ցածր մակարդակից դեպի բարձր մակարդակ կարգով) Հայաստանը զբաղեցնում է 7-րդ տեղը՝ 20.78 ինդեքսով՝ առաջ անցնելով ԱՊՀ և եվրոպական բոլոր երկրներից[1]: Համեմատության համար նշենք, որ Սինգապուրը զբաղեցնում է 20-րդ տեղը՝ 27.7 ինդեքսով, Նորվեգիան՝ 35-րդ տեղը՝ 33.51 ինդեքսով, Գերմանիան՝ 36-րդ տեղը՝ 34.6 ինդեքսով, Կանադան՝ 47-րդ տեղը՝ 39.48 ինդեքսով, Բելգիան՝ 58-րդ տեղը՝ 42.5 ինդեքսով, Մեծ Բրիտանիան՝ 63-րդ տեղը՝ 43.64 ինդեքսով, Ֆրանսիան՝ 72-րդ տեղը՝ 46.45 ինդեքսով, Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ 73-րդ տեղը՝ 46.73 ինդեքսով, Շվեդիան՝ 75-րդ տեղը՝ 47.21 ինդեքսով:

Հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց՝ 2019թ. արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի նվազում:

Այսպես, համաձայն ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2019 թվականին ՀՀ քրեական հետապնդման մարմինների վարույթում գտնված քրեական գործերով և նյութերով անցնող բացահայտման տոկոսում հաշվվող 30. 500 դեպքից (2018թ.՝ 26.781) բացահայտվել է 17. 701-ը (2018թ.՝ 16.853), չի բացահայտվել 12. 799-ը (2018թ.՝ 9928):

Այսինքն, 2019թ. բացահայտման ցուցանիշը կազմել է 58. 0%, նախորդ տարվա 62. 9%-ի դիմաց: Այսպիսով, 2018թ. համեմատ, 2019թ. բացահայտման ցուցանիշը նվազել է 4.9%-ով:

---

[1] Տե՛ս հետևյալ աղյուսակում՝ https://worldpopulationreview.com/countries/crime-rate-by-country/

Ըստ էության թեև տոկոսային առումով արձանագրվում է բացահայտման ցուցանիշի նվազում, սակայն բացահայտման աշխատանքների ծավալները զգալի աճ են արձանագրել: Բերված ցուցանիշը վկայում է, որ հաշվետու տարում բացահայտվել են 848-ով ավելի հանցագործություններ /17. 701-16. 853/:

Միջին ծանրության հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 45.2%, այն դեպքում, երբ 2018թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը եղել է 49.3%:

Ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 34.0%, այն դեպքում, երբ 2018թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 38.0%:

Հաշվետու ժամանակահատվածում 1.9%-ով նվազել է նաև առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 57.8%, նախորդ տարվա 59.7%- ի դիմաց:

Ըստ հիմնական հանցատեսակների՝ բացահայտման ընդհանուր ցուցանիշից առավել բարձր է սպանությունների՝ 72,7%, սպանության փորձերի՝ 70,5%, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու՝ 84,6%, այդ թվում՝ ծանր՝ 72,2%, ճանապարհային երթևեկության կանոնների խախտման՝ 85,5%, ավազակության՝ 78,8%, խարդախության՝ 60,8%, յուրացման կամ վատնման՝ 59,0% և տրանսպորտային միջոց փախցնելու՝ 80,4% դեպքերի բացահայտման արդյունավետությունը, իսկ ցածր է՝ կեղծ փողեր, արժեթղթեր պատրաստելու, պահելու և իրացնելու դեպքերի՝ 4,0%, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների՝ 8,8%, բնակարանային գողությունների՝ 21,1%, համակարգչային տեխնիկայի միջոցով հափշտակությունների՝ 33,3% դեպքերի արդյունավետությունը:

Հարկ է արձանագրել նաև, որ հաշվետու ժամանակահատվածում գրանցված հանցագործությունների բացահայտման ցուցանիշների վրա էական ազդեցություն են ունեցել, ի թիվս այլնի, հանցագործությունների հաշվառման գործընթացի բարեփոխումները:

Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության լիազորության իրացման ընթացքում դեռևս 2018 թվականին պարզվել էր, որ ՀՀ ոստիկանությունում հանցագործության դեպքերը որպես բացահայտված համարելու համար բավարար էր հանցագործության դեպքի մասին օպերատիվ հաղորդագրության ամփոփագրում հանցանք կատարած անձի անհատական տվյալների վերաբերյալ նշումը, թեև տվյալ դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված անձ չի եղել: Փաստորեն, դեպքը համարվել է բացահայտված՝ դրա բացահայտված լինելը դատավարական առումով փաստված չլինելու պարագայում: Արդյունքում բացահայտման վերաբերյալ վիճակագրությունը չի արտացոլել բացահայտման իրական ցուցանիշներ:

Խնդիրը կարգավորելու նպատակով ՀՀ դատախազության կողմից առաջարկվել է հանցագործության դեպքերը բացառապես անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում հաշվառել որպես բացահայտված:

Այդ նպատակով ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների հետ համատեղ մշակվել է «Քրեական հետապնդման ենթարկված անձի վիճակագրական քարտի (Ձև 2.1)» նախագիծ:

2018 թվականի 2-րդ կիսամյակից սկսած, ՀՀ ոստիկանության կողմից հանցագործության դեպքերը հաշվառվել են որպես բացահայտված բացառապես անձին որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ «Ձև 1.2» վիճակագրական քարտի հիման վրա:

Արդյունքում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում 2018 թվականի 2-րդ կիսամյակից սկսած արտացոլվում են հանցագործության դեպքերի բացահայտման վերաբերյալ առավել ճշգրիտ ցուցանիշներ:

Նշված հանգամանքը, ինչ խոսք, իր ազդեցությունն է ունեցել 2019 թվականին արձանագրված հանցագործությունների բացահայտման ցուցանիշների վերլուծության վրա այն առումով, որ 2019 թվականի ողջ տարվա ցուցանիշներն են հաշվարկվել բացառապես որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հիման վրա, ուստիև հաշվառումների մեթոդաբանության փոփոխության բերումով բացահայտման ցուցանիշներն ինչ-որ տեղ ողջամտորեն պետք է նվազեին:

Այդուհանդերձ, խոսելով հանցագործությունների բացահայտման չգոհացնող ցուցանիշների մասին՝ ստիպված ենք կրկնել, որ դրանց սուբյեկտիվ պատճառների շարքում լուրջ կշիռ ունի առանձին գործերով քննիչի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող աշխատակիցների համագործակցության ոչ բավարար մակարդակը, կոնկրետ քրեական գործերով իրականացվող քննության որակը, քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը, դատախազական ոչ պատշաճ հետևողականությունը:

Այս կապակցությամբ նշենք, որ դատախազական աշխատանքի ընթացքում վեր են հանվել քրեական գործերի քննության մի շարք ընդհանուր թերություններ՝ կապված անհետաձգելի համարվող գործողությունները ժամանակին չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ապացույցների ոչ պատշաճ հավաքման և ստուգման հետ, որոնք բացասաբար են ազդել գործերի ելքի վրա և որոնց բացառումը կարող է էականորեն դրական ազդեցություն ունենալ հանցագործության դեպքերի բացահայտման ցուցանիշի վրա:

Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությունում հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով քննվող քրեական գործերի քննարկումների և ստուգման ընթացքում պարզվել է, որ դեպքի վայրի զննության ընթացքում հաճախ չեն արձանագրվում կարևոր ապացույցների վերաբերյալ տվյալներ, օրինակ՝ տեսախցիկների առկայությունը, բացի մատնահետքերից, որպես կանոն, մարդու

հետքերի այլ նմուշներ փնտրելուն ուղղված գործողություններ չեն կատարվում, լուսանկարում կամ չի կատարվում կամ կատարվում է առանց կրիմինալիստիկական կանոնների պահպանման: Դեպքի վայրում գտնվող ականատեսներին ժամանակին չեն հրավիրում հարցաքննության, իսկ հետո դժվարանում է նրանց կամ նրանց գտնվելու տեղի պարզումը:

Նշված խնդիրները վերացնելու նպատակով կիրառվել են բազմաթիվ դատախազական համապատասխան ակտեր, այդպիսիք վեր հանելու և բացառելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները քննարկվել են համատեղ խորհրդակցություններում ու կոնկրետ քրեական գործեր քննարկելիս:

Իրենց աշխատանքներում թերացած հետաքննության, նախաքննության մարմինների նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդություններ են նախաձեռնվել, այդպիսիք կիրառվել են նաև համապատասխան դատախազների նկատմամբ:

Ինքնուրույն խնդիր է օպերատիվ աշխատանքի նկատմամբ դատախազական հսկողության աշխատանքներում առկա ոչ բավարար հետևողականությունը, որը բարելավելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին տրվել է հանձնարարական՝ հետաքննության մարմիններին տրված հանձնարարականների կատարման արդյունքների վերաբերյալ անորոշ և ոչ հստակ պատասխաններ ստանալու դեպքում, ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պարտադիր պահանջել միջոցառումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, ինչպես նաև վերաբերելի այլ տեղեկատվությունը՝ օպերատիվ հանձնարարականների իրապես կատարված լինելը ստուգելու համար:

Սակայն գործող իրավակարգավորումները բավարար չեն դատախազական հսկողությամբ օպերատիվ-հետախուզական աշխատանքների իրական որակն ու արդյունավետությունը բովանդակային առումով վեր հանելու համար: Այս առումով համապատասխան մարմիններում ներքին վերահսկողական մեխանիզմները զարգացնելու անհրաժեշտություն կա, ինչի ուղղությամբ ներկայումս ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր:

Շարունակում է խնդիր հանդիսանալ նաև հասարակական վայրերում կատարված հանցագործությունները բացահայտելիս տեսագրող սարքերի ուսումնասիրությունների թերությունները: Փորձը ցույց է տալիս, որ հանցագործությունների մի քանի տեսակների դեպքերում է միայն, որ իրավասու մարմինները ստանում և ուսումնասիրում են ոչ միայն դեպքի վայրն անմիջականորեն նկարահանող, այլև հարակից տարածքների տեսագրող սարքերը: Այս աշխատանքի ոչ լիարժեքությունը հատկապես դրսևորվում է հափշտակությունների կամ ցանկացած այլ հանցագործությունների դեպքում, որոնք ընդունված են որպես առավելապես չբացահայտվող:

Մյուս կողմից, ցավոք, թեև որոշակիորեն բարելավվել, սակայն չի վերացել տեսագրող սարքերին ոստիկանության մատչելիության՝ նախորդ տարի արձանագրված խնդիրը: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան քաղաքի մի շարք փողոցները նկարահանող «Փարքինգ սիթի» ՓԲԸ-ի տեսագրող սարքերին ՀՀ ոստիկանության մատչելիությունը հնարավոր չի եղել մինչ օրս ապահովել ֆինանսների բացակայության պատճառով: Մասնավորապես, պարզվել է, որ այդ խնդրի լուծումը պահանջում է ՓԲԸ-ում առկա տեխնիկական միջոցների վերազինում, որը զգալի ֆինանսական ծախսեր է պահանջում:

Հանցագործությունների բացահայտման գործընթացում ավելի ու ավելի նկատվող բացասական գործոն է այդ հարցում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների աշխատանքի վրա բացարձակ շեշտադրումը՝ անտեսելով հանցագործությունը քննչական գործողությունների միջոցով, դրանցով ստացված ապացույցների վերլուծությամբ և համադրմամբ բացահայտելու հնարավորությունները: Քիչ չեն դեպքերը, երբ գործի համար նշանակություն ունեցող հետախոսահամարների վերծանումներն ստացվում են, սակայն, դրանցով պատշաճ քննություն կատարելու փոխարեն, ուղարկվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ հանցագործությունը բացահայտելու նպատակով:

Ընդ որում, արձանագրվել են դեպքեր, երբ քննությունը պատշաճ չկազմակերպելու և չիրականացնելու, նոր ի հայտ եկած պարզաբանման ենթակա հանգամանքներն անտեսելու հետևանքով քրեական գործի վարույթը մի քանի անգամ կասեցվել է, սակայն կայացված որոշումների օրինականությունը քանիցս չհաստատվելուց և դատախազի կողմից ցուցում տալուց հետո հանցագործությունները և այն կատարած անձինք բացահայտվել են:

Նման հետևողականություն ցուցաբերող դատախազները խրախուսվել են:

Միաժամանակ պետք է փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում 46-ով (1.475-1.521) աճել է ինչպես նախկին տարիներին կասեցված քրեական գործերով հանցագործությունների բացահայտման աշխատանքների արդյունավետությունը, այնպես էլ 51-ով կամ 37. 2%-ով՝ հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ կասեցված քրեական գործերով բացահայտված հանցագործությունների թիվը (137-188):

Չնայած ընդհանուր հանցավորության աճին, մարդու դեմ ուղղված հանցագործության մակարդակում նվազում է արձանագրվել. 2019 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4293 դեպք (2018թ.՝ 4964):

Փաստորեն, նախորդ տարվա համեմատությամբ, մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը նվազել են 671-ով կամ 13.5%-ով, ինչը, ընդհանուր հանցավորության աճի ֆոնի վրա, պետք է համարել դրական ցուցանիշ:

Ընդ որում, նախորդ տարի նույնպես, թեև աննշան՝ 1.4%-ով, սակայն արձանագրվել էր մարդու դեմ ուղղված հանցագործությունների նվազում:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 78,6%, նախորդ տարվա 84,3%-ի դիմաց:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազումն արձանագրվել է հիմնականում ծեծի և այլ բռնի գործողությունների, սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի դեպքերի նվազման հաշվին: Այսպես, ծեծի և այլ բռնի գործողությունների դեպքերը նվազել են 682-ով կամ 23,6%-ով /2889-2207/, իսկ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի դեպքերը՝ 42-ով կամ 14%-ով /299-257/:

Պետք է արձանագրել, որ, չնայած մարդու դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր դեպքերի նվազմանը, 12-ով կամ 34.3%-ով աճ է արձանագրվել հանրային մեծ վտանգավորություն ունեցող այնպիսի հանցատեսակով, ինչպիսին սպանությունն է (35-47): Ընդ որում, Երևան քաղաքում արձանագրվել է 41. 7% /12-17/, իսկ ՀՀ մարզերում՝ 30. 4 % աճ:

Այս կապակցությամբ նշենք, որ նախորդ տարի արձանագրվել էր սպանության դեպքերի աննախադեպ ցածր ցուցանիշ՝ ընդամենը 35 դեպք, ինչը նվազագույնն է առնվազն վերջին 35 տարվա կտրվածքով: Միայն նախորդ տարում սպանության դեպքերը նվազել էին 28.6%-ով:

Այստեղ անհրաժեշտ է փաստել, որ, չնայած նախորդ տարվա համեմատ արձանագրված աճին, 2019 թվականին արձանագրվել է սպանության ավելի քիչ դեպք, քան 2017 /49 դեպք/ և 2016 /66 դեպք/ թվականներին:

2019 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված սպանության 47 դեպքից 5-ը կատարվել է նախորդ տարիներին, այդ թվում՝ 3-ը՝ նախորդ տարում: 2018 թվականին արձանագրված 35 դեպքից միայն 1-ն է կատարված եղել նախորդ տարիներին:

Ընդ որում, նշված դեպքերից 1-ը վերաբերում է անձի անհետ կորելու փաստին /նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 3/:

Տարեթիվը	2016-2019թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	Որից՝ անհետ կորածների թիվը
2016թ.	**66**	**10**
2017թ.	**49**	**6**
2018թ.	**35**	**3**
2019թ.	**47**	**1**

Հատկանշական է, որ վերջին չորս տարվա կտրվածքով 10 անգամ նվազել են անձանց անհետ կորելու դեպքերը, իսկ 2019 թվականին արձանագրված 1 դեպքով էլ անձի անհետ կորելու վերաբերյալ տեղեկությունը ստացվել է 2018 թվականին: Փաստորեն՝ 2018 թվականին արձանագրվել է անձի անհետ կորելու 1 դեպք, իսկ 2019 թվականին անձի

անհետ կորելու դեպքի առթիվ քրեական գործ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ չի քննվել:

Հաշվետու ժամանակահատվածի և նախորդող 10 տարիներին արձանագրված սպանությունների տվյալները ներկայացվում են ստորև՝

Տարեթիվը	2009-2019թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	2009-2019թթ. մշտական բնակչության թիվը ՀՀ-ում[2] /հազար մարդ/	Գործակիցը 100 հազար մարդու հաշվով
2009 թ.	68	3076.8	2,2
2010 թ.	41	3055.2	**1,3**
2011 թ.	60	3018.9	2
2012թ.	**50**	**3021.4**	**1,6**
2013թ.	**48**	**3026.9**	**1,6**
2014թ.	**53**	**3017.1**	**1,7**
2015թ.	**52**	**3010.6**	**1,7**
2016թ.	**66**	**2998.6**	**2,2**
2017թ.	49	2986.1	1,6
2018թ.	35	2965.3	1,2
2019թ.	47	2957.5[3]	1,6
Տարեկան միջին	52	3012.2	2

[2] Մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից: http://www.armstat.am/am/?nid=82&id=1991 Աղ 1: Ամփոփում, էջ 22:

[3] ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքում ՀՀ մշտական բնակչության թվաքանակի վերջին տվյալը 2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ է:

2009-2019թթ. տեղի ունեցած սպանությունների տարեկան միջին թիվը կազմել է շուրջ 52: Վերջին տասնամյակում /2009-2019թթ./ սպանության դեպքերը նվազել են շուրջ 31%-ով /68-47/:

Նշենք, որ 2019 թվականին 100.000 բնակչին բաժին է ընկնում սպանության 1,6 դեպք: Այս ցուցանիշը թեև վերջին 10 տարիների տարեկան միջին ցուցանիշից /2/ ցածր է /0,4%-ով/, սակայն նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 0,4%-ով:

Սպանության դեպքերի աճը, ինչ խոսք, մտահոգիչ է, սակայն վերը նշված վերլուծությունների պայմաններում կարող ենք այս ոլորտի հանցավորության վիճակը գնահատել վերահսկելի:

Սպանության դեպքերի աճին զուգահեռ նվազել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 72,7%, նախորդ տարվա 74,6%-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում, ինչպես նախորդ տարում, արձանագրվել է սպանության փորձի 28 դեպք, իսկ սպանության նախապատրաստության 2 դեպք: Ընդ որում, Երևան քաղաքում սպանության փորձի դեպքերի թիվը նվազել է 25%-ով, իսկ մարզերում աճել է 17%-ով:

Նշենք, որ նախորդ տարի արձանագրվել էր սպանության փորձի դեպքերի աճ՝ 30,4%-ով, որպիսի պայմաններում տվյալ հանցատեսակի առումով վիճակը կարելի է գնահատել վերահսկելի:

40-ով կամ 20,9%-ով /191-231/ աճ է արձանագրվել դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի թվում: 2018թ. արձանագրվել էր նման դեպքերի 1,5%-ով նվազում:

Ընդ որում, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը Երևան քաղաքում աճել են 6-ով կամ 7%-ով /86-92/, իսկ մարզերում՝ 34-ով կամ 32,4 %-ով /105-139/:

Փաստորեն, հանրապետությունում անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի աճում /40-ով/ էական է մարզերում արձանագրված դեպքերի աճի համամասնությունը:

Անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի աճին զուգահեռ նվազել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 84,6%, նախորդ տարվա 87,0% դիմաց:

Ստորև ներկայացվում է 2009-2019թթ. սպանության, սպանության փորձի, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ինչպես նաև հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ հանցագործությունների վերաբերյալ աղյուսակը.

	Տարեթիվը	Հրազենի գործադրմամբ հանցագործություններ	Սպանություն	Սպանության փորձ	Դիտ. առողջ. ծանր վնաս
1.	2009	100	68	29	181
2.	2010	66	41	27	167

3.	2011	60	60	29	170
4.	2012	63	50	25	170
5.	2013	66	48	25	186
6.	2014	68	53	28	216
7.	2015	69	52	35	173
8.	2016	62	66	36	200
9.	2017	52	49	23	194
10.	2018	60	35	30	191
11.	2019	74	47	30	231

Սպանության և դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերի վերլուծությամբ դրանց կատարմանը նպաստող օրինաչափ պատճառներ ի հայտ չեն եկել: Արձանագրված սպանությունները կատարվել են խուլիգանական, շահադիտական, կենցաղային, նախկին անհաշտ հարաբերությունների հողի վրա վրեժի և այլ շարժառիթներով: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ հատկապես վերջին շարժառիթով կատարված սպանությունների ու դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը վկայում են առանձին դեպքերում դրանք կանխելու նպատակով ձեռնարկված օպերատիվ-հետախուզական և պրոֆիլակտիկ միջոցառումների անբավարարության մասին:

Օրինակ, 2018թ. դեկտեմբերից Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում երկու տարբեր շրջանակի անձանց միջև պարբերաբար տեղի էին ունենում բախումներ, որոնք ուղեկցվում էին նաև ծանր հանցագործություններով, մասնավորապես՝ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելով, անձանց առևանգումներով, զինված բախումներով և այլն: Հաշվի առնելով առկա իրավիճակը՝ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ ծանր հանցագործությունների քննության բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում, Երևան քաղաքի դատախազի կողմից 2019թ. նոյեմբերի 18-ին և 29-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությանը տրվել էին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու գրավոր հանձնարարություններ, որոնցով հետաքննության մարմնին տեղեկացվել էր այդ գործով անցնող անձանց և նրանց շրջապատի անդամների միջև լարված հարաբերություններ լինելու, վերջիններիս միջև բախումները, զինված հանդիպումները, փոխադարձ ոտնձգությունները շարունակվելու, փոխադարձ լարվածությունը հանցավոր վարքագծով դրսևորելու մասին: Հանձնարարվել էր նշված շրջանակների անձանց նկատմամբ սահմանել օպերատիվ հսկողություն, ինչպես նաև ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հիշյալ շրջանակների անձանց մոտ հրազենի ու ռազմամթերքի առկայությունը պարզելու, նրանց միջև հնարավոր նախապատրաստվող հանցագործությունները, վերջիններիս միջև բախումները, պարզաբանումների համար հանդիպումները, վիճաբանությունները կանխելու, խափանելու և ձևավորված լարված հարաբերությունները չեզոքացնելու ուղղությամբ:

Չնայած տրված հանձնարարություններին՝ նշված քրեական գործով անցնող անձանց և նրանց շրջապատի անդամների միջև բախումները շարունակվել են, որի հետևանքով

2019թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Երկաթուղայինների 2-րդ փողոցի 5-րդ տան դիմաց տեղի է ունեցել սպանություն:

Այսինքն՝ ձեռք բերված տվյալներն իրենց մեջ առերևույթ պարունակում են հետաքննության մարմնի պետական ծառայություն իրականացնող անձանց կողմից ենթադրաբար ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացրած՝ իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը: Հարուցված քրեական գործի շրջանակներում լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությամբ կպարզվեն տրված հանձնարարությունների կատարման, ձեռնարկված միջոցառումների անբավարարության պատճառները և կտրվեն համապատասխան իրավական գնահատականներ:

Ոչ պակաս մտահոգիչ են հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց կողմից սպանություն և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը: Նկատի ունենալով այս դեպքերի անհանգստացնող քանակը՝ ուսումնասիրվել է 2018-2019թթ. անմեղսունակության վիճակում կատարված բռնի հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության պրակտիկան:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ այդպիսի հանցագործություններ կատարած անձինք որոշ դեպքերում արդեն իսկ առնչվել են իրավապահ մարմինների հետ՝ կապված իրենց դրսևորած՝ հիմնականում բռնի վարքագծի հետ և նրանցից սպասվող վտանգն իրականում եղել է սպասելի: Ուսումնասիրությունը վեր է հանել, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց կողմից ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարելու դեպքերին առանձնահատուկ ուշադրություն չի դարձվում, նրանց հիվանդության, անցած բուժման հետ կապված հարցերը պատշաճ քննության առարկա չեն դառնում, անտեսվում է նրանցից բխող հավանական վտանգը, նրանց հոգեկան առողջության հետ կապված հարցերը որևէ կերպ, այդ թվում՝ միջնորդագրերի հիմա վրա քրեական դատավարության ընթացակարգերից դուրս քննարկման առարկա չեն դառնում, չեն ձեռնարկվում անհրաժեշտ միջոցներ նրանց հոգեկան վիճակի կարգավորման ուղղությամբ, ինչն էլ պատճառ է դառնում այդ վարքագծի շարունակության:

Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ արձանագրված վիճակի պատճառներից են հոգեբուժական օգնության ոլորտի օրենսդրության բացերն ու թերկարգավորումները, որոնք հատկապես չեն ապահովում հոգեբուժական հաստատությունից դուրսգրված հոգեկան հիվանդների նկատմամբ պատշաճ վերահսկողությունն ու նրանց հոգեկան վիճակի վատթարացման դեպքերի վերհանումը:

Բացի այդ, առանձին դեպքերում պատշաճության առումով կասկածներ է հարուցում հոգեկան հիվանդությամբ տառապող հանցանք կատարած անձանց նախկինում ցուցաբերված բուժօգնության պատշաճությունը:

Այսպես, օրինակ, արձանագրվել է դեպք, երբ անձը 15 օր գտնվել է «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում, որտեղ բուժում ստանալուց հետո դուրս է գրվել լավացումով, սակայն դուրսգրման օրվանից 4 օր անց կատարել է հանցագործություն՝ դիտավորությամբ այլ անձի առողջությանը պատճառել է ծանր վնաս, որն անզգուշությամբ առաջացրել է վերջինիս մահը:

Քրեական գործով հաստատված է, որ «Ավան» հոգեկան առողջության կենտրոնից լավացումով դուրսգրված վերը նշված անձը դուրսգրումից 4 օր անց հանցանք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում՝ կապված իր հոգեկան խանգարման և զառանցական մտքերի հետ, գտնվել է հոգեկան խիստ լարված, հուզական անկայուն, սթրեսային հոգեվիճակում, որն էապես ազդել է նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա:

Նշվածն ինքնին կասկածի տակ է դնում այդ անձին ցուցաբերված բուժօգնության պատշաճությունն ու արդյունավետությունը, արձանագրված լավացման ճշտությունը և դուրսգրման իրավաչափությունը և առերևույթ վկայում, որ դիտավորությամբ ծանր հանցանք կատարելուն նպաստած՝ անձի հոգեկան վիճակը, իր գործողությունների բնույթն ու հետևանքները գիտակցելու անկարողությունը, առերևույթ պատճառ են դեպքից օրեր առաջ վերջինիս ցուցաբերված բժշկական օգնության ոչ պատշաճության և թույլ տրված սխալների:

Նշված դեպքով ՀՀ առողջապահության նախարարին Երևան քաղաքի դատախազի կողմից ներկայացվել է միջնորդագիր, բացի այդ ներկայացվել է օրենսդրական փոփոխություն կատարելու մասին առաջարկություն, որի մասին ավելի մանրամասն նշված է հաջորդ գլխում:

Մարդկանց թրաֆիքինգի արձանագրված դեպքերն աճել են 33.3%-ով /6-8/: Նման ցուցանիշը կարող ենք գնահատել դրական՝ հաշվի առնելով տվյալ տեսակի հանցագործությունների լատենտայնության բարձր աստիճանը:

Բռնաբարության և բռնաբարության փորձի դեպքերը նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 1-ով կամ 4. 2%-ով /24-23/, իսկ սեռական անձեռնամխելիության դեմ ուղղված հանցագործություններն աճել են 20-ով կամ 23,8%-ով /84-104/:

2019 թվականին արձանագրվել է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերի աճ: Եթե 2018 թվականին արձանագրվել է այդպիսի 111, ապա 2019 թվականին՝ 143 դեպք: Աճը կազմել է 32 դեպք կամ 22,4%: Ընդ որում՝ դրանց

կազմում աճել են մահվան ելքով դեպքերը: Եթե 2018 թվականին արձանագրվել է այդպիսի 83, ապա 2019 թվականին՝ 107 դեպք. աճը կազմել է 24 կամ 22,4%:

Սակայն նշված դեպքերի ճնշող մեծամասնությունը գտնվում են նախաքննության փուլում և քննության արդյունքներով է հնարավոր միայն փաստել հանցագործության փաստի առկայությունը:

Կյանքի իրավունքի կոնվենցիոնալ պահանջների պահպանման ուղղությամբ ակտիվացված քայլերի արդյունքում նման առերևույթ փաստերով որպես կանոն մշտապես հարուցվում են քրեական գործեր՝ լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի նախաքննությամբ դեպքի հանգամանքները, հնարավոր հանցավոր պատճառների, մեղավոր անձանց առկայությունը պատշաճ ստուգելու, տուժողների, նրանց իրավահաջորդների իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու նպատակով:

2019 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 461 դեպքով կամ 13.1%-ով աճ (3526-3987), իսկ Երևան քաղաքում դեպքերն աճել են 266-ով կամ 16.0%-ով (1665-1931):

Հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը կազմելով 71,9%, նախորդ տարվա 75,3%-ի դիմաց:

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է խուլիգանության դեպքերի աճ 92-ով կամ 39,3%-ով /2018թ. ՝ 15,8%-ով/:

Վերջին 4 տարվա կտրվածքով՝ 2016-2019թթ., խուլիգանության դեպքերով դրսևորվում է կայուն աճի միտում՝ 195-202-234-326. աճը հաջորդաբար կազմել է 7-32- 92 դեպք կամ 3,6%-15,8%-39,3%:

Առավել մտահոգիչ է, որ արձանագրված աճն ապահովվել է նաև զենքի գործադրմամբ խուլիգանությունների հաշվին: Այսպես, նույն տարիներին այդ հանցագործությունների քանակական ցուցանիշները կազմել են՝ 32-41-53-75. աճը հաջորդաբար կազմել է 9-12-22 դեպք կամ 28,1%-29,3%-41,5%:

Խուլիգանության դեպքերի արձանագրված աճը ոչ միայն և, միգուցե, ոչ այնքան այդ դեպքերի իրական քանակական աճի մասին է վկայում, որքան հաստատում է, որ սրանց նկատմամբ դատավարական մոտեցումը փոփոխվել է՝ նվազեցնելով այն դեպքերը, երբ իրականում հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող արարքները քննարկվում և գնահատվում են մարմնական վնասվածք պատճառելու դեպքի համատեքստում: Նշված փաստարկի օգտին կարող է խոսել հենց ծեծի և այլ բռնի գործողությունների ու սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի դեպքերի՝ վերը նշված զգալի նվազումը: Նշված հանցատեսակների ընդհանուր թիվը նվազել է 724-ով կամ 22,7 %-ով /3188-2464/:

Հաշվետու ժամանակահատվածին նախորդող տարիներին խուլիգանության հանցակազմի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի հայտնի իրավական դիրքորոշումներն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում էին ակնհայտորեն լայն, անձնական փոխհարաբերությունների և կենցաղային վեճի շրջանակները ընկալվում էին չափազանց ընդարձակ՝ երբեմն ներառելով անձի ինքնահաստատման, այլոց հանդեպ առավելություններն ընդգծելու, հասարակությանը հակադրվելու ձգտումներով ակնհայտորեն պայմանավորված դեպքերը: Արդյունքում, դեպքի սկզբնական նկարագրությամբ խուլիգանության հատկանիշներ պարունակող արարքները հանցագործության դեպքի վերաբերյալ ամփոփագրերում վերնագրվում էին որպես ծեծ կամ մարմնական վնասվածքի պատճառում, և վարույթն իրականացնող մարմնի կողմից դիտվում էին որպես այդպիսիք՝ ոչ խուլիգանական դրդմամբ կատարված լինելու կանխավարկածով: Այդ դեպքերին արագ դատավարական արձագանք չէր տրվում՝ հնարավորություն տալով շահագրգիռ անձանց պայմանավորվելու արարքի արհեստական, ոչ խուլիգանական շարժառիթի շուրջ և մատուցելու այն վարույթն իրականացնող մարմնին՝ պատճառ դառնալով հասարակական կարգի կոպիտ խախտման վերաբերյալ ապացույցների կորստի: Ընդ որում, նկատելի էր նաև, որ վիճաբանության ժամանակ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու ոչ հազվադեպ դեպքերում քննությունը կենտրոնանում էր բացառապես վերջինիս վրա, լավագույն դեպքում ուշացած ուշադրություն ցույց տալով խուլիգանության հատկանիշներին:

Այս ուղղությամբ շարունակական ջանքեր են գործադրվել խուլիգանության դեպքերի ստուգման նկատմամբ վերաբերմունքը փոփոխության ենթարկելու ուղղությամբ՝ ենթադրելով ավելի արագ ու օպերատիվ աշխատանք՝ ուղղված հանցանք կատարած անձանց ողջ շրջանակը և հանցակազմի հատկանիշների առկայությունը պարզելուն, այն գիտակցությամբ, որ ինչպես առողջությանը վնաս պատճառելու, այնպես էլ խուլիգանության դեպքերի բացահայտումը և այն կատարած անձանց անվերապահ քրեական պատասխանատվության ենթարկման ապահովումը հնարավոր չէ դիտարկել միայն քրեական դատավարության անմիջական խնդիրների համատեքստում և պետք է փաստել, որ դրանք, շատ հաճախ բերում են ավելի ընդհանուր բնույթի բացասական հետևանքների, մարդկանց մոտ առաջացնում անպաշտպանության զգացում, վախ սեփական անվտանգության համար:

Խուլիգանության դեպքերի աճին զուգահեռ նվազել է դրանց բացահայտման ցուցանիշը: Եթե 2018թ. այն կազմել է 59,2%, ապա 2019թ. ՝ ընդամենը 50,4%:

Այստեղ պետք է փաստել, որ խուլիգանության դեպքերի և դրանք կատարած անձանց բացահայտման ցածր ցուցանիշները շատ հաճախ պայմանավորված են օբյեկտիվ բարդություններով; Բացահայտ կատարված այս հանցագործության հանգամանքները, այն կատարած անձանց պարզելու և նրանց գործողություններն անհատականացնելու նպատակով ապացույցներ ձեռք բերելիս վարույթն իրականացնող մարմինները

հանդիպում են այնպիսի խոչընդոտների, ինչպիսին դեպքին ականատես, բացահայտ անհարգալից վերաբերմունքն իրենց վրա կրած՝ հասարակության անդամների պասսիվ, չհամագործակցող, իսկ շատ հաճախ՝ քննությանը խոչընդոտող վարքագիծն է:

2019 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցվել է ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով անձանց առողջությանն անզգուշությամբ վնաս պատճառելու 1523 դեպք, նախորդ տարվա 1298 դեպքի դիմաց, այսինքն՝ դեպքերն աճել են 225-ով, կամ 17.3%-ով: Մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերը ևս աճել են՝ կազմելով 226 նախորդ տարվա 220-ի դիմաց: Միաժամանակ նվազել է մահվան դեպքերով բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 70.8%, նախորդ տարվա 73.0%-ի դիմաց:

ՀՀ դատախազությունում կատարված ուսումնասիրությամբ արձանագրվել է վերջին տարիներին ՃՏՀ-ների դեպքերի անհանգստացնող արագությամբ աճման միտում: Մասնավորապես՝ եթե 2016 թվականի ընթացքում, հաշվառման է վերցվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության 700 դեպք, 2017թ. ընթացքում՝ 972 դեպք, ապա 2018թ. արդեն՝ 1283: Այսինքն՝ միայն 2017-2018թթ կտրվածքով ՃՏՀ արձանագրված դեպքերն ավելացել են 32%-ով:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների և պայմանների վերհանման արդյունքում պարզ է դարձել, որ դրանց զգալի մասի պատճառ կամ նպաստող պայման են ինչպես տրանսպորտային միջոցների վարորդների և հետիոտների կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը /օրինակ՝ տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, սահմանված առավելագույն արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոց վարելը այդ իրավունք չունեցող անձի կողմից/, այնպես էլ՝ այլ գործոններ: Մասնավորապես՝ միևնույն փողոցներում և խաչմերուկներում կրկնվող ճանապարհատրանսպորտային պատահարներին նպաստող պայմաններ են նաև վերոհիշյալ վայրերում գործող ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կարգավորման միջոցների անարդյունավետությունը, հետևաբար դրանք հետագայում փոփոխելու և վերանայելու անհրաժեշտություն է առաջացել:

Անշուշտ, նպաստող գործոններից է նաև հանրապետությում հաշվառված ավտոմեքենաների՝ մի քանի տարի շարունակվող թվի ավելացումը և, դրանով պայմանավորված, երթևեկության ծանրաբեռնվածության մեծացումը /պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2019թ. ընթացքում Հանրապետություն է ներկրվել 189. 018 ավտոմեքենա, որը երեք անգամ գերազանցել է 2018 թվականի ցուցանիշը/:

Այս առումով պակաս կարևոր չէ հատկապես հանրային տրանսպորտի ոլորտում գերատեսչական վերահսկողության ուժեղացումը. Բանն այն է, որ որոշ դեպքերում հանրային տրանսպորտային միջոցներ կարող են վարել վարորդական իրավունք չունեցող, դրանից զրկված կամ այնպիսի անձինք, որոնց այդ իրավունքը կասեցված է:

Հանրապետությունում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի առթիվ նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և այդ բնագավառում հանցանքի կատարմանը նպաստող վերը նշված հանգամանքների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են միջոցներ, որոնք, սակայն, դեռևս բավարար չեն կարող համարվել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներին հանձնարավել է քարտեզագրել ՃՏՊ-ների համար առավել ռիսկային ճանապարհահատվածները և դատախազական ներգործության միջոցներով նպաստել այդ հատվածների՝ երթևեկության նշաններով հագեցմանը, ավտոմեքենաների արագությունը սահմանափակելուն և վարորդների զգոնությունը բարձրացնելուն ուղղված միջոցների ձեռնարկմանը: Հաշվի առնելով երթևեկության մասնակիցների անվտանգության ապահովման խնդիրը, ինչպես նաև այս բնույթի հանցագործությունների հանրային վտանգավորության բարձր աստիճանը՝ խնդիր է դրվել մեծ ուշադրություն դարձնել ՃՏՀ դեպքերով օպերատիվ-հետախուզական, քննչական անհետաձգելի գործողությունների պլանավորմանը դատախազների անմիջական մասնակցությանը, նրանց կողմից իրենց իրավասության շրջանակներում անհրաժեշտ ցուցումներով ապացուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը նպաստելուն:

Այս հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու առումով էական նշանակություն են ունեցել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով այս ոլորտում նախորդ տարի ձեռնարկված բարեփոխումները, մասնավորապես՝ բալային համակարգի ներդրումը, ինչն ակնհայտորեն բարձրացրել է վարորդների զգոնությունը և ուժեղացրել հսկողությունը:

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել անտառային ֆոնդի կամ դրանից դուրս գտնվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով:

Այսպես, եթե 2018 թվականին արձանագրվել է այդպիսի 180 դեպք, ապա 2019 թվականի ընթացքում արձանագրվել է 282 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 102-ով կամ 56.7 %-ով:

Ապօրինի ծառահատումների դեպքերի նման շարժընթացը դեռևս դրական դինամիկա է համարվում, քանի որ պայմանավորված է այդ տեսակի հանցագործությունների լատենտայնության բարձր մակարդակով և դրան ուղիղ համեմատական՝ հանցագործությունների բացահայտման քանակական ցուցանիշի աճով: Նախկին հաղորդումներում խոսվել է այս ոլորտում վերջին տարիներին պայքարի ակտիվացման, դրանց արդյունքների մասին: Այս ոլորտում տարիներ շարունակ գործած հանցավոր սխեմաների լրջագույն բացահայտումների արդյունքում քրեական պատասխանատվության են ենթարկվել հարյուրավոր ապօրինի անտառահատներ,

անտառի պահպանության պատասխանատու պաշտոնատար անձինք, այլ, այդ թվում՝ իրավապահ մարմինների աշխատակիցներ, որոնք հովանավորել կամ այլ կերպ ընդգրկված են եղել այդ սխեմաներում: Այդուհանդերձ, արձանագրված պատկերը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից այս տեսակի հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ մշտապես և հետևողական պատշաճ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին:

Վերը նշված հանցատեսակների աճին զուգահեռ ընթացիկ տարում զգալիորեն նվազել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերը: Եթե 2018 թվականին արձանագրվել է նման բնույթի 674 դեպք, ապա 2019 թվականի ընթացքում՝ 586 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 88-ով կամ 13.1%-ով:

Այս բնույթի հանցագործությունների դեպքերի նվազումը պայմանավորված է հիմնականում ապօրինի հրազենը կամ ռազմամթերքը կամովին հանձնելու ուղղությամբ իրավապահ մարմինների կողմից ազգաբնակչության հետ տարվող բացատրական աշխատանքով, ինչպես նաև ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությամբ:

Առավել մտահոգիչ է, որ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերի նվազմանը զուգահեռ 14 դեպքով կամ 23.3%-ով /60-74/ աճել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերը:

Պետք է փաստել, որ հրազենի գործադրմամբ կատարված դեպքերի աճ արձանագրվել էր նաև 2018թ. , ինչը մտահոգիչ է հատկապես այն առումով, որ դրան նախորդող 10 տարիներին նկատելիորեն նվազել էին հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ կատարված հանցագործությունների թվերը՝ 2017թ. արձանագրելով այդ տարիների ամենադրական ցուցանիշը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի աճը հակադարձ համեմատական է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների թվի աճին, այսինքն՝ որքան շատ հրազեն, ռազմամթերք է հայտնաբերվում այնքան դրանց գործադրմամբ հանցագործությունների կատարման հավանականությունը նվազում է:

Հետևաբար համոզված ենք, որ այս ցուցանիշով է պայմանավորված եղել այն, որ 2017թ. հրազենի գործադրմամբ հանցագործությունների դեպքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 20%-ով, իսկ 2018թ. արձանագրվել են հետևյալ ցուցանիշները.

- 184-ով կամ 21 . 4%-ով նվազել են հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերը /858-674/,
- 8-ով կամ 15 . 3%-ով աճել է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների թիվը:

Նմանատիպ իրավիճակ է արձանագրվել նաև 2019թ. : Այսպես.

- 88-ով կամ 13. 1%-ով նվազել են հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերը /674-586/,

- 14-ով կամ 23 . 3%-ով աճել է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների թիվը:

Վերջին ցուցանիշները հատկապես մտահոգիչ են համարվում այն առումով, որ աճն ոչ միայն քանակական, այլ նաև որակական առումով է բացասաբար ազդել հանցավորության մակարդակի վրա, այսինքն՝ հատկապես ավելացել են հրազենի գործադրմամբ կատարված սպանության, սպանության փորձերի, դիտավորությամբ առողջությանը ծանր, միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը:

Բերված ցուցանիշները լուրջ ահազանգ են իրավապահ մարմինների համար, քանի որ ակնհայտ է հանցավորության քանակական և որակական ցուցանիշների վրա դրանց բացասական ազդեցությունը:

Վերլուծության արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից, գրությամբ, ՀՀ ոստիկանության պետին հանձնարարվել է ձեռնարկել անհետաձգելի միջոցներ՝ իրավիճակն ուսումնասիրելու, պատճառներն ու նպաստող պայմանները վեր հանելու, գնահատելու, բացահայտման ցուցանիշը բարելավելու, հանցավորության վիճակն առավել վերահսկելի դարձնելու նպատակով:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է 2019թ. կատարված սպանության, սպանության փորձի, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ինչպես նաև հրազենի գործադրմամբ դեպքերով հարուցված քրեական գործերով իրականացնել վերլուծություններ հանցագործությունների ծնող պատճառների, չբացահայտված գործերով բացահայտմանը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ և համապատասխան միջնորդություններ ուղարկել ոստիկանության ստորաբաժանումներ:

2019 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների էական՝ 2143 դեպքով կամ 17.8%-ով աճ (12056-14199), իսկ Երևան քաղաքում դեպքերն աճել են 1635-ով կամ 21.7%-ով (7541-9176):

Հատկանշական է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ունեն դինամիկ աճի միտում: Համեմատության համար նշենք, որ 2009 թվականին հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 5578 դեպք, իսկ հաշվետու տարում՝ 14199 դեպք, այսինքն՝ վերջին 10 տարվա ընթացքում սեփականության դեմ ուղղված հանցագործություններն աճել են գրեթե 3 անգամ:

Թեև, ակնհայտորեն, այս ցուցանիշի համար էական ազդեցություն է ունեցել հատկապես այս բնույթի հանցագործությունների հաշվառման, գրանցման

գործընթացների բարելավումը, այդուհանդերձ, դրանց դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված քայլերը օրվա հրամայական են:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 47,4%, նախորդ տարվա 46,4%-ի դիմաց:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճն արձանագրվել է հիմնականում անձնական գույքի հափշտակությունների, մասնավորապես՝ գողությունների, այդ թվում՝ բնակարանային գողությունների, խարդախությունների, յուրացումների և վատնումների հաշվին: Այսպես, գողության դեպքերը աճել են 1881-ով կամ 21,3%-ով /8851-10732/, բնակարանային գողությունների դեպքերը՝ 257-ով կամ 17,9%-ով /1438-1695/, խարդախության դեպքերը՝ 116-ով կամ 7,6%-ով /1520-1636/, իսկ յուրացման կամ վատնման դեպքերը՝ 84-ով կամ 15,5%-ով /542-626/:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ինչպես ընդհանուր հանցագործությունների, այնպես էլ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զանգվածում, ինչպես և նախորդ տարիներին, զգալի տեսակարար կշիռ են կազմում և որոշակիորեն անհանգստացնող են անձնական գույքի հափշտակությունների, մասնավորապես՝ գողությունների, այդ թվում՝ բնակարանային գողությունների դեպքերը: Հանրապետության տարածքում գրանցված 26. 850 հանցագործության դեպքերի զանգվածում անձնական գույքի հափշտակությունների 12. 737 դեպքերի տեսակարար կշիռը կազմում է 47.4%, իսկ սեփականության դեմ ուղղված հանցագործություններինը՝ 89.7%-ը:

Արձանագրվել է նաև գողության դեպքերի աճ 1881-ով կամ 21. 3%-ով՝ նախորդ տարվա 8851-ի դիմաց, հաշվետու տարում արձանագրվել է այդպիսի 10. 732 դեպք:

2019թ . ընթացքում մանրամասն ուսումնասիրվել են գողության դեպքերի շարժընթացում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես, դրանց զգալի աճի պատճառների բացահայտման նպատակով: Արդյունքում պարզվել է, որ գողության դեպքերը հիմնականում կատարվել են հագուստի խանութներում, հասարակական տրանսպորտում և զվարճանքի վայրերում քաղաքացիների դրամապանակների, բջջային հեռախոսների, ինչպես նաև բակերում և կայանատեղերում կայանված ավտոմեքենաների վրայից, դրանց սրահներից տարբեր տեսակի իրերի գաղտնի հափշտակության ձևով:

Առանձին քննարկման է ենթակա տարածքներում գրպանահատության դեմ տարվող պայքարը: Խնդիրն այն է, որ արձանագրված գողության դեպքերի մեջ բավականին պատկառելի թիվ են կազմում հենց այդ դեպքերը՝ հատկապես Երևան քաղաքում: Ընդ որում, ի տարբերություն գողության այլ տեսակների, դրանց բացահայտումը բավականին բարձր է, սակայն արձանագրված դեպքերից եզակիներն են, որ ունեցել են դատական վախճան, քանզի, որպես կանոն, հափշտակված արժեքները չեն լինում մեծ չափերի և բացահայտվելուց հետո հանցանք կատարած անձինք փոխհատուցում են տուժողին պատճառած վնասը կամ տուժողները, խուսափելով ավելորդ քաշքշուկներից, հրաժարվում

են բողոքներից կամ հաշտվում մեղադրյալների հետ, որպիսի պայմաններում, հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի նախկին կարգավորումները, քրեական գործով վարույթները կարճվել են և հանցանք կատարած անձինք ազատվել են քրեական պատասխանատվությունից, ընդ որում, դրանք, որպես կանոն, նույն անձինք են:

Կարծում ենք, որ 2019 թվականի նոյեմբերի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքում կատարած փոփոխությունները դրական կանդրադառնան այս հանցատեսակի դեմ պայքարի վրա:

Բնակարանային գողության դեպքերը ևս աճել են 257 դեպքով կամ 17. 9%-ով՝ նախորդ տարվա 1438-ի դիմաց, 2019 թվականի ընթացքում արձանագրվել է 1695 դեպք: Բացահայտման ցուցանիշը մնացել է գրեթե անփոփոխ՝ 21. 1%՝ նախորդ տարվա 20. 6%-ի դիմաց:

Ներկայացված թվերը վկայում են, որ բնակարանային գողությունների և դրանց բացահայտման վիճակագրությունը շարունակում է մտահոգիչ լինել: Պետք է նշել, որ հաշվետու տարում բնակարանային գողությունների կանխումն ու դրանց բացահայտումը Հայաստանի Հանրապետության դատախազության համար հայտարարվել էր որպես առաջնահերթություն և այդ կապակցությամբ ձեռնարկվել են որոշակի միջոցներ: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության դատախազության տարածքային ստորաբաժանումները ուսումնասիրել են 2018թ. արձանագրված բնակարանային գողությունների դեպքերը, որի արդյունքում առանձնացվել են բնակարանային գողությունների ռիսկային հատվածները, այդ հատվածները նշագրել են քարտեզների վրա, իրավապահ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ անցկացվել են համատեղ խորհրդակցություններ՝ բնակարանային գողությունների դեպքերի նախականխման, կանխման ու բացահայտման ուղղությամբ գործուն միջոցներ մշակելու և իրականացնելու նպատակով, հատկապես բազմաբնակարան շենքերի մուտքերի անհրաժեշտ կահավորման ուղղությամբ: Այդուհանդերձ, պետք է փաստել, որ այդ աշխատանքները դեռևս բավարար չեն և պետք է հետևողականորեն շարունակվեն նաև 2020թ. ընթացքում, նկատի ունենալով, որ առանձին տարածքներում, որտեղ առավել հետևողականություն է դրսևորվել դատախազության նախաձեռնությամբ անվտանգության տեխնիկական միջոցների տեղադրման հարցում, նկատվել է ինչպես բնակարանային գողությունների նվազման, այնպես էլ բացահայտման ցուցանիշների բարելավման միտում, իսկ արձանագրված բնակարանային գողության դեպքերը ճնշող մեծամասնությամբ արձանագրվել են այն տարածքներում, որտեղ բացակայում են տեսանկարահանող սարքեր, կոդավորված դռներ և, ի վերջո, այն հատվածներում, որտեղ, որպես կանոն, ոստիկանությունը գիշերային ծառայություններ չի իրականացնում: Ասվածից ակնհայտ է,

որ հանցագործները նախընտրում են այն վայրերը, որտեղ լրացուցիչ խոչընդոտները բացակայում են:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են նաև, որ այս հանցագործությունների դեմ պայքարին առանձին դեպքերում խոչընդոտում է հասարակության անդամների վարքագիծը, որը շատ հաճախ վիկտիմիզացիայի դրսևորում է: Ուսումնասիրություններով արձանագրվել են դեպքեր, երբ բազմաբնակարան շենքի բնակիչները ուղղակիորեն ընդդիմանում են շենքերի մուտքերը կահավորելուն, իսկ կահավորելուց, կոդավորված փականներ տեղադրելուց հետո դրանք չեն օգտագործում, կիրառում են դռները բաց պահելուն ուղղված միջոցներ:

Ավազակային հարձակման դեպքերի շարժընթացում ևս 2019 թվականի ընթացքում արձանագրվել են որոշակի փոփոխություններ՝ գրանցվել է ավազակային հարձակման 62 դեպք՝ նախորդ տարվա 47-ի դիմաց, այսինքն դեպքերն աճել են 15-ով կամ 31.9%-ով, որն, ինչ խոսք, մտահոգիչ է: Հուսադրող է այն հանգամանքը, որ այս հանցատեսակի բացահայտման ցուցանիշը բավականին բարձր է՝ 78.8%՝ նախորդ տարվա 66.7%-ի դիմաց:

Հաշվի առնելով նշված հանցատեսակի հանրության համար վտանգավորության բարձր աստիճանը, ինչպես նաև արձանագրված դեպքերի աճը, ՀՀ գլխավոր դատախազության կողմից 2020 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքի ծրագրով նախատեսվել է ամփոփել այս ոլորտում քրեական գործերով նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը և, ըստ անհրաժեշտության, ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Նախնական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ավազակության դեպքերը հիմնականում արձանագրվել են գիշերային ժամերին գործող բենզալցակայաններում և դեղատներում, սակայն արձանագրվել են նաև բնակարաններում կատարված ավազակային հարձակման դեպքեր:

Ներկայիս վերլուծությունն ու վիճակագրական տվյալները հաշվի առնելով, հանրապետության մարզերի և վարչական շրջանների դատախազներին հանձնարարվել է շարունակել ամենօրյա հսկողության տակ պահել այդ բնույթի դեպքերով հարուցված, վարույթը կասեցված քրեական գործերով անհրաժեշտ օպերատիվ-քննչական միջոցառումների հետևողական կատարման ընթացքը և կատարել համապատասխան ուսումնասիրություններ, վերլուծություններ՝ ոստիկանության մարմինների հետ համատեղ, դրանց նախականխման ուղղությամբ արդյունավետ միջոցառումներ մշակելու, այդ բնույթի դեպքերի կատարմանը նպաստող պայմանները վեր հանելու և դատախազական հսկողության համարժեք միջոցներ ձեռնարկելու համար:

Ստորև ներկայացվում է 2009-2019թթ. արձանագրված ավազակությունների և բնակարանային գողությունների դեպքերի վերաբերյալ աղյուսակը.

	Տարեթիվը	Ավազակություն	Բնակարանային գողություններ
1,	2009	151	988
2,	2010	107	1156
3,	2011	106	901
4.	2012	63	1054
5.	2013	73	1323
6.	2014	69	1442
7.	2015	54	1369
8.	2016	53	1250
9.	2017	46	889
10.	2018	47	1438
11.	2019	62	1695

Նախորդ տարվա համեմատությամբ, 2019 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված կողոպուտի դեպքերը նվազել են 53-ով կամ 22. 2%-ով (186-239), նվազել է նաև դրանց բացահայտումը 53. 9%-ով՝ նախորդ տարվա 57. 1%-ի դիմաց:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որպես կողոպուտի կատարման առավել տարածված ձև շարունակում է մնալ բջջային հեռախոսների և անձանց կողմից կրվող ոսկյա զարդերի բացահայտ հափշտակումը, որոնց նախականխման և դեպքերի բացահայտման նպատակով ոստիկանության մարմինների համապատասխան ծառայությունները պետք է ակտիվ միջոցառումներ իրականացնեն մարդաշատ վայրերի, մասնավորապես՝ շուկաների, տոնավաճառների, ավտոկանգառների տարածքներում:

2019 թվականի ընթացքում որոշակի բացասական փոփոխություններ են տեղի ունեցել խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի շարժընթացում՝ արձանագրվել է նման հանցագործությունների աճ 116 դեպքով կամ 7.6%-ով (1636-1520):

Գտնում ենք, որ տվյալ հանցատեսակի աճը պայմանավորված է երեք հանգամանքով:

Նախ՝ վարույթն իրականացնող մարմինները տևական ժամանակ խստորեն պահպանել են խարդախության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման պահանջները, որի շնորհիվ գրեթե վերացել էր ակնհայտ քաղաքացիաիրավական հարաբերությունների պայմաններում խարդախության փաստերով քրեական գործեր հարուցելու արատավոր պրակտիկան: Սակայն, ի զարմանս մեզ, նշված տրամաբանությամբ չեն ղեկավարվում դատարանները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ կամ 290-րդ հոդվածների կարգով այս հանցատեսակի վերաբերյալ բողոքները քննարկելիս: Արդյունքում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ակնհայտ քաղաքացիաիրավական հարաբերությունների առկայության պայմաններում՝ ձևական խախտման կամ այլ պատճառաբանությամբ, դատարանները վերացրել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները կամ արձանագրել են քաղաքացու իրավունքների խախտում: Նշվածի կապակցությամբ մտահոգիչ է հատկապես այն հանգամանքը, որ վերադաս դատարանները ևս պաշտպանել են տվյալ քաղաքականությունը և բեկանված դատական ակտերն եզակի են: Արդյունքում,

հարուցվում են քրեական գործեր, որոնցով տևական ժամանակ նախաքննություն կատարելուց հետո կայացվում են վարույթը կարճելու մասին որոշումներ:

Համեմատության համար նշենք, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում ավարտված 783 խարդախության վերաբերյալ գործերից 356 քրեական գործ կարճվել է արդարացնող հիմքերով, որը կազմում է ավարտված քրեական գործերի 45.5%-ը:

Բացի այդ, շատացել են հեռախոսազանգերի եղանակով «List.am» կայքում քաղաքացիների կողմից վաճառվող տարբեր տեսակի ապրանքներին խարդախությամբ տիրանալու դեպքերը: Ընդ որում, որպես կանոն, հանցանք կատարած անձանց հեռախոսահամարները կրկնվում են, սակայն վերջիններիս բացահայտել չի հաջողվում, քանզի նշված հեռախոսահամարները հիմնականում գրանցված են լինում օտարերկրյա քաղաքացիների անունով և տվյալ հեռախոսահամարները, բացի հափշտակություն կատարելուց, այլ նպատակներով չեն օգտագործվում: Մեծ թիվ են կազմում հատկապես քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կողմից նման հանցանքներ կատարելու դեպքերը: Հատկանշական է այն հանգամանքը, որ վերջին դեպքերով հարուցված քրեական գործերի վերստուգման գործառույթն իրականացնելիս պարզվել է, որ մի շարք քրեական գործերով հիմնավորվել է հանցանքը ՔԿՀ տարածքում պատիժ կրող անձի կողմից կատարելու հանգամանքը, ավելին, առանձին դեպքերում խցերում հայտնաբերվել են նաև բջջային հեռախոսներ, սակայն վարույթն իրականացնող մարմինները ոչ բոլոր դեպքերում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով դիմել ՔԿՀ ղեկավարությանը՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու միջնորդությամբ:

Եվ, ի վերջո, արձանագրվել են նոր եղանակով խարդախություն կատարելու դեպքեր:

Տարբեր ֆիզիկական անձինք կամ անհատ ձեռներեցներ սոցիալական ցանցերում հայտարարություն են տարածում արագ վարկեր տրամադրելու վերաբերյալ: Այնուհետև, նշված նպատակով գրասենյակներ ներկայացած քաղաքացիներին, որպես կանոն, առաջարկվում է ապառիկ կարգով ձեռք բերել կենցաղային տեխնիկա, բջջային հեռախոսներ, դրանք հանձնել իրենց, որի դիմաց խոստանում են վճարել ապրանքի 60-70 տոկոսի արժեքը: Ընդ որում, քաղաքացիների հետ կնքվում են տվյալ ապրանքների ձեռքբերման պայմանագրեր, սակայն հետագայում խոստացված գումարները չեն տրամադրվում:

2019 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 288 դեպքով կամ 45.3%-ով աճ (636-924), իսկ Երևան քաղաքում դեպքերն աճել են 232-ով կամ 51.7%-ով (449-681), ինչը դրական ցուցանիշ է՝ հաշվի առնելով այդ հանցատեսակների մեծամասնության լատենտային բնույթը, ինչպես նաև այդպիսիք պատշաճ վարչարարության և վերահսկողական գործառույթների արդյունքում բացահայտելը:

Միաժամանակ մտահոգիչ է, որ, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի էական աճին զուգահեռ, էական նվազել է այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 23,3%, նախորդ տարվա 42,2% դիմաց:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճն արձանագրվել է հիմնականում կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու, ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերի հաշվին: Այսպես, կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու դեպքերը աճել են 234-ով կամ 113,6%-ով /206-404/, իսկ ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերը՝ 20-ով կամ 62,5%-ով /32-52/:

Միաժամանակ 2019թ. ընթացքում 13 դեպքով կամ *7,1%-ով /183-170/* նվազել են հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը: Այսպես, եթե 2018թ. արձանագրվել էր նման 183 դեպք, ապա 2019թ. ընթացքում ընդամենը 170 դեպք:

ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում ամփոփվել են 2018թ. համեմատությամբ 2019թ. ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր միտումների, դրանց բացահայտման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների իրականացրած աշխատանքների, այս բնույթի հանցագործությունների նախնական և դատական քննությունների ընթացքում դատախազական գործառույթների իրականացման արդյունքները:

Ըստ ամփոփման արդյունքների՝ ՀՀ իրավասու մարմինների վարույթում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված նյութերով հարուցվել է 931 քրեական գործ (այդ թվում՝ 279-ը՝ ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում), ինչը մոտ 37%-ով ավելի է 2018թ. համեմատ: Բացի հարուցված քրեական գործերից, վարույթ է ընդունվել 269 քրեական գործ (2018թ.՝ 177): Վերջինս պայմանավորված է ինչպես իրավապահ մարմինների նկատմամբ հանրային շրջանակների վստահության մակարդակի բարձրացմամբ և վերջինների հետ ակտիվ համագործակցությամբ, այնպես էլ արդյունավետ օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացմամբ:

Ընդհանուր առմամբ 2019թ. վարությունում քննվել է նշված բնույթի 1200 քրեական գործ (580-ը ՀՀ ՊԵԿ քննչական վարչության) 2018թ. 857-ի դիմաց: Այսինքն՝ 2019թ. նախաքննական մարմինների և դատախազության ծանրաբեռնվածությունը միայն տնտեսական բնույթի գործերի առումով ավելացել է 40 տոկոսով: Այդ պայմաններում, սակայն, հաջողվել է տարվա ընթացքում ավարտել 2018թ. համեմատ 8.5%-ով ավելի քրեական գործերի քննություն, այսինքն՝ այդ չափով ավելի քիչ անավարտ գործեր են փոխանցվել հաջորդ տարի:

Վարույթն ավարտված 31 քրեական գործ՝ 39 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Ընդ որում՝ 2018թ. համեմատ (22 գործ՝ 29 անձի վերաբերյալ) հաշվետու տարվա ընթացքում դատարան ուղարկված գործերն ավելացել են 8-ով կամ 36%-ով, իսկ դատի տրված անձանց թիվը՝ 10-ով կամ 34.5%-ով:

Դատարաններում քննված տնտեսական բնույթի գործերից 16-ով 18 անձ դատապարտվել է, որից 14-ը՝ ազատազրկման: Ընդ որում՝ մեղադրական դատավճռով ավարտված գործերը 2018թ. համեմատ ավելի են եղել 23%-ով, իսկ դատապարտված անձինք՝ 29%-ով:

2019թ. ընթացքում միայն տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախաքննության, դատաքննության ընթացքում ավարտված վարույթներով, տարվա ընթացքում քննվող քրեական գործերով հայտնաբերված՝ պետությանը պատճառված վնասը կազմել է 21.1 մլրդ ՀՀ դրամ (որից միայն ՊԵԿ քննչական վարչության կողմից՝ 15.9մլրդ): Դրանից վերականգնվել է 9.5 մլրդ դրամը (որից միայն ՊԵԿ քննչական վարչության կողմից՝ 8.6մլրդ ՀՀ դրամ): Համեմատության համար նշենք, որ 2018թ. այս բնույթի հանցագործություններով պետությանը պատճառված՝ բացահայտված վնասը կազմել էր 19.4մլրդ դրամ կամ 8.8 տոկոսով պակաս, որից վերականգնվել է 8.6մլրդ ՀՀ դրամը, կամ 10.5 տոկոսով պակաս:

Պետությանը պատճառված վնասը վերականգնելու նպատակով 2019թ. ընթացքում տարբեր գործերով ընդհանուր 2.6մլրդ ՀՀ դրամի չափով արգելանքներ են դրվել մեղադրյալների գույքի և դրամական միջոցների վրա:

Բացի վերոնշյալը, քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասի վերականգնման նպատակով դատախազության ստորաբաժանումների կողմից քրեադատավարական կարգով դատարան են ներկայացվել հայցադիմումներ՝ ընդհանուր մոտ 160 մլն ՀՀ դրամ հօգուտ պետբյուջե բռնագանձելու պահանջով, որոնք բավարարվել են:

Տնտեսական հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի վերոնշյալ արդյունքները մեծապես պայմանավորված են եղել մի կողմից ստվերային տնտեսության դեմ տարվող պետական քաղաքականությամբ, մյուս կողմից՝ քրեական հետապնդման մարմինների հետևողական, պլանավորված և համագործակցված գործողություններով:

Հատկանշական է, որ հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու հանցագործության հատկանիշներով վարույթում քննվել է 382 գործ, ինչը 188-ով կամ 33%-ով պակաս է 2018թ. ցուցանիշներից: Նվազումը պայմանավորված է իրականացվող արդյունավետ քրեական քաղաքականության, տնտեսվարող սուբյեկտների համար տնտեսավարման առավել բարենպաստ պայմանների ստեղծման, դրանով պայմանավորված՝ նաև հանցավոր ճանապարհով հարկերի, տուրքերի կամ այլ վճարների վճարումից խուսափելուց ձեռնպահ մնալու հանգամանքով: Դրան նպաստել են նաև

հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները, որոնց արդյունքում վերացել են որոշ հարկատեսակներ և պարտադիր այլ վճարներ, կամ ֆիզիկական անձինք ազատվել են նախկինում հարկման ենթակա որոշակի գործարքներից: Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունում մշակվել են հստակ չափորոշիչներ վերոնշյալ հանցատեսակով վարույթ նախաձեռնելու հիմքերի մասով, որոնց հաղթահարման դեպքում միայն նախապատրաստվել են նյութեր:

Անչափահասների կողմից և նրանց մասնակցությամբ կատարվող հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարը, այս բնույթի հանցագործությունների նախականխումն ու կանխումը, ինչպես նաև դրանց նպաստող պայմանների, պատճառների վերհանումն ու վերացումը մնում են ՀՀ դատախազության հիմնական անփոփոխ առաջնահերթություններից մեկը:

ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ նախորդող տարվա համեմատ 2019թ. անչափահասների հանցավորության ցուցանիշը որոշակիորեն աճել է: Եթե 2018թ. արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 359 դեպք, ապա 2019թ. արձանագրվել է նման 400 դեպք, այսինքն աճը եղել է 41 դեպքով կամ 11. 4%-ով:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ 2019թ. դատախազության ծրագրային հիմնական խնդիրներից մեկը համարվել է անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ հանցագործությունների կանխարգելմանը, անչափահասներին հանցավոր արարքներից զերծ պահելուն և այդ նպատակով շահագրգիռ իրավասու մարմինների հետ համագործակցությունն ակտիվացնելուն միտված միջոցառումների իրականացումը:

Այդ նպատակով մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների կողմից պլանավորվել և կազմակերպվել են դատախազների այցելություններ հանրակրթական ուսումնական հաստատություններ, որտեղ հանդիպումներ և քննարկումներ են կայացել աշակերտների, մանկավարժական կոլեկտիվների մասնացկությամբ:

Հանդիպումների ընթացքում աշակերտներին մատչելի բացատրվել է անչափահասներին իրավախախտման մղելուն նպաստող ապօրինի կերպով գազային, սառը կամ նետողական զենք կրելուց զերծ մնալու անհրաժեշտությունը, ներկայացվել են դրանց քրեաիրավական հետևանքները: Խոսվել է անչափահասի կողմից ալկոհոլ և ծխախոտ գնելու արգելքի, դրանցից բխող անբարենպաստ հետևանքների առաջացման անխուսափելիության, ինչպես նաև դրանց վաճառքի համար նախատեսված պատասխանատվության մասին: Հանդիպումների ընթացքում դատախազներն աշակերտներին նաև իրազեկում են անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունների, նրանց իրավունքների պաշտպանության երաշխիքների մասին:

Ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ հանդիպումներում շեշտը դրվում է անձնային հատկանիշների, դաստիարակության և զարգացման սոցիալական,

ընտանեկան, կրթական առանձնահատկությունների հաշվառմամբ երեխաներին հանցավորության մղող գործոնների նկատմամբ հսկողությունը չթուլացնելու վրա: Հատուկ ուշադրություն է հրավիրվում ծնողների անմիջական մասնակցությամբ սոցիալական ցանցերից անչափահասների օգտվելու նվազագույն կանոնների պահպանման անհրաժեշտությանը՝ հատկապես անծանոթ անձանց հետ նամակագրական կապի մեջ մտնելու, անչափահասների ներգրավմամբ գայթակղիչ աշխատանք և նույնաբնույթ այլ առաջարկներ ընդունելու, անչափահասների գիտակցության և վարքագծի վրա ազդող հանցածին տեղեկատվության վտանգների տեսանկյունից: Առաջարկվել է լուրջ հսկողություն սահմանել շեղվող վարքագիծ դրսևորող, դասերից պարբերաբար և առանց հարգելի պատճառների բացակայող աշակերտների նկատմամբ:

Դատախազության տարածքային ստորաբաժանումների մասնակցությամբ կամ անմիջական նախաձեռնությամբ հանդիպումներ են կազմակերպվում նաև շահագրգիռ այլ կառույցների՝ ոստիկանության ստորաբաժանումների անչափահասների գծով ծառայության աշխատակիցների, տեղական ինքնակառավարման մարմիններում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների հետ: Դրանց ընթացքում դատախազների կողմից նախանշվում են այս օղակների միջև համագործակցության կոնկրետ խնդիրներն ու ուղղությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խոցելի և անբերանպաստ պայմաններում, անհաշտ ընտանիքներում ապրող, հակահիրավական վարքագիծ դրսևորող և հանցավոր ենթամշակույթների կանոններին հարող անչափահասների, նրանց ընտանիքի անդամների հետ անհատական աշխատանքներին:

Բացի վերոնշյալը, ՀՀ դատախազությունը նաև որդեգրել է առանձին ուղղություններով անչափահասների առնչությամբ քրեական քաղաքականությունը վերանայելու ուղեգիծ: Մասնավորապես, դատախազության կողմից խստացվել է անչափահասի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն ներկայացնելու քրեադատավարական պրակտիկան: Դատախազներին հանձնարարվել է անչափահաս մեղադրյալների նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելիս առաջնահերթ քննարկել «հսկողության հանձնել» խափանման միջոցը կիրառելու հարցը: Համաձայն նոր քաղաքականության՝ առաջին անգամ միջին ծանրության և ծանր հանցագործություն կատարած անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կարող է ընտրվել բացառապես այն դեպքերում, երբ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները փաստում են մեղադրյալի կողմից ազատության մեջ մնալու հետ կապված խափանման միջոցների պայմանները խախտելու մասին: Այս մոտեցման արդյունքում գործնականում գրեթե բացառվել են անչափահասների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը:

Դատախազության նախաձեռնությամբ հանցագործություն կատարած անչափահասների նկատմամբ պատժողական քաղաքականությունը փոխվում է դեպի ազատազրկման ձևով պատժի նվազեցումը, հանցանք կատարած անչափահասներին ուղղելու առավել արդյունավետ քրեաիրավական գործիքակազմի կիրառումը: Պետք է փաստել, որ 2019թ. ընթացքում որևէ անչափահաս ազատազրկման չի դատապարտվել: Մասնավորապես ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է, որպեսզի անչափահասների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում դատախազները հատուկ ուշադրություն դարձնեն նրանց ուղղմանը նպաստող լրացուցիչ պարտականությունների սահմանմանը, պատժի փոխարեն քրեաիրավական ներգործության այլ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմանը:

2020թ. ընթացքում ՀՀ դատախազությունը շարունակում է նշված ուղղություններով քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված գործունեությունը:

Ամփոփելով պետք է նշել, որ հանցավորությունը որպես սոցիալական երևույթ, արձագանքում է հասարակական հարաբերությունների համընդհանուր զարգացմանը, դրան զուգահեռ ենթարկվում քանակական և որակական փոփոխությունների: Գիտության և տեխնիկայի ձեռքբերումները, շատ հաճախ ավելի արագ յուրացվելով և կիրառվելով հանցավոր վարքագծում, այն դարձնում են ավելի ու ավելի կատարելագործված: Հանցավորության զարգացումն ու կատարելագործումը նկատելի են ինչպես հանցագործությունների կատարման, այնպես էլ դրանց լատենտայնացման, քողարկման նոր մեխանիզմների կիրառման շնորհիվ:

Հանցավորության վիճակի, կառուցվածքի, շարժընթացի և հանցագործությունների բացահայտման վերաբերյալ վերջին տարիների վիճակագրական տվյալները ևս ասվածի վկայությունն են: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև հանցագործությունների առանձին տեսակների թիվը նվազել է, ընդհուպ դրսևորելով վերջին տասնամյակների նվազագույն ցուցանիշը, այդուհանդերձ, մի շարք հանցագործություններ, ինչպես, օրինակ, հափշտակությունները, էականորեն ավելացել են, դրանց բացահայտման ցուցանիշները նվազել:

Հանցավորության դեմ պայքարին հատկացվող նյութական և տեխնիկական միջոցների, դրանց բավարարության վերաբերյալ հարցերը գրեթե երբեք չեն դիտարկվել հանցավորության վիճակի և դրա շարժընթացի վերաբերյալ տվյալների, հանցավորության որակական փոփոխությունների համատեքստում, չեն դարձել այդ ոլորտում շահագրգիռ սուբյեկտների ընդհանուր քննարկման առարկա: Արդյունքում, բազմաթիվ հանցատեսակների բացահայտման ոչ բավարար վիճակը պայմանավորված է նաև նրանով, որ տեխնիկայի համաշխարհային ձեռքբերումներն ավելի արդյունավետ օգտագործվում են հանցավոր վարքագծում, քան դրա դեմ պայքարում: Տեղին է փաստել, որ, օրինակ, «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-

հետախուզական միջոցառման և «հեռախոսային խոսակցությունները լսելը» քննչական գործողության արդյունավետությունը գնալով ավելի ու ավելի է նվազում, քանի որ խոսակցությունները, որպես կանոն, վարվում են ոչ թե բջջային կապով, այլ հեռախոսների բջջային հավելվածներով, որոնցով իրականացվող խոսակցությունները լսելու և ձայնագրելու տեխնիկական միջոցները գրեթե բացակայում են:

Հանցավորության համընդհանուր որակական և քանակական փոփոխությունները, որոնք արտահայտվում են առանձին հանցատեսակների զգալի քանակական աճով, կազմակերպվածության աստիճանի բարձրացմամբ, հանցավոր գործունեության եղանակների և միջոցների կատարելագործմամբ և դրանց դեմ պայքարի ցուցանիշների բացասական միտումով, աստիճանաբար ավելի ու ավելի շատ են վնասում մասնավոր, հասարակական և պետական շահերը: Իսկ առանձին հանցատեսակների նաև անդրազգային տարածումը լուրջ սպառնալիք է ցանկացած պետության անվտանգությանը: Հանցավորության գրեթե բոլոր դրսևորումների կրիմինալոգիական և քրեաիրավական ուսումնասիրությունները վկայում են, որ դրանց դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված փոփոխություններն անվիճելի անհրաժեշտություն են:

Հանցավորության առանձին բաղադրիչների, հանցագործությունների տարբեր տեսակների միջև փոխադարձ կապը պահանջում է այդ երևույթի դեմ պայքարի միասնական և այդ կապերը հաշվի առնող հայեցակարգի գոյություն: Հանցավորության դեմ պայքարը, հանդիսանալով հանցագործությունների բոլոր տեսակների նախականխմանը, կանխմանը, խափանմանը, հայտնաբերմանը, բացահայտմանը, դրանց վերաբերյալ գործերի քննությանը, հանցանք կատարած անձանց քրեական հետապնդմանն ու քրեական պատասխանատվության ապահովմանն ուղղված և իրավապահ բոլոր մարմինների կողմից հասարակության անդամների, հասարակական կառույցների, պետական այլ մարմինների մասնակցությամբ կամ օժանդակությամբ իրականացվող բազմաշերտ գործունեություն, պետք է լինի պատշաճ մշակված, փոխհամաձայնեցված և համակարգված: Հանցավորության դեմ պայքարը պետք է իրականացվի պաշտոնապես ճանաչված և հաստատված, հստակ հայեցակարգի վրա հիմնված երկարաժամկետ ռազմավարության և դրա իրականացման ծրագրի հիման վրա, որում հստակեցված են դրա բոլոր դերակատարների ծրագրային անելիքները՝ տարրական կրթություն ապահովող դպրոցից մինչև պատժի կատարումն ու հանցանք կատարած անձի վերադաստիարակումն ապահովող մարմիններ:

Հայաստանի Հանրապետության դատախազության նախաձեռնությամբ հանցավորության դեմ պայքարի ռազմավարական ծրագրի կազմման աշխատանքները շարունակվում են, արդեն իսկ հստակ են դրա հիմքը կազմող սկզբունքները, որոնց շարքում կարևորագույն տեղ է ունենալու հանցավորության դեմ պայքարի համակարգվածությունը:

Հանցավորության պատճառների, պայմանների, հանցագործությունների բացահայտման, մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ապահովման

աշխատանքների վերլուծությունն աներկբա վկայում է, որ Հանրապետությունում, ընդհանուր առմամբ, հանցավորության դեմ պայքարին էական խոչընդոտ է հանդիսանում բավականաչափ տարածում ունեցող հանցածին, քրեական ենթամշակույթին բնորոշ բարքերի գոյությունը, ինչը լուրջ խոչընդոտ է զարգացող և անվտանգ հասարակության, պետության համար:

Այս արատավոր երևույթի հստակ և հանրային լայն աջակցություն ունեցող թիրախավորումը, այդ թվում՝ այդպիսի դրսևորումների քրեականացումը, դրանց դեմ քրեաիրավական պայքարի վճռականությունը, մեր երկրում լրջագույն իրավական և գաղափարական հենք է ստեղծում հանցավորության հակազդման, ամենաբարձր մակարդակի հանրային անվտանգության ապահովման համար:

Բերված վիճակագրական տվյալները, ինչպես նաև առանձին կոնկրետ ակնառու դեպքերը, ակնհայտ վկայություն են քրեական հետապնդման մարմինների կողմից հանցավորության հակազդման, կանխարգելման, բացահայտման ուղղությամբ կատարված մեծ ծավալի աշխատանքի:

Հանրապետությունում նախաձեռնված լայնածավալ բարեփոխումները՝ ընդգրկելով անհրաժեշտ իրավակարգավորումների կատարելագործման, քրեական հետապնդման մարմինների կառուցվածքային, կազմակերպական գործունեության, վերջիններիս անհրաժեշտ գործիքակազմի և ռեսուրսների, նյութաապահովման և այլ ոլորտները, հանցածին երևույթների հստակ թիրախավորման, դրանց նկատմամբ անհանդուրժելիության արմատավորման պետություն-հասարակություն տանդեմի աճող համագործակցությունը առավել քան բավարար հիմք են տալիս հանցավորության դեմ պայքարի արդյունավետության աճի ակնկալիքներ ունենալու համար:

2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

2019թ. ընթացքում հանրապետությունում նախապատրաստվել է 58.290 նյութ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 54.245-ի դիմաց: Փաստորեն՝ նախապատրաստված նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 4045-ով:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստված 58.290 ավարտված նյութից 35.647-ով կամ 61.1%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 28.043-ը կամ 78.7%-ը՝ արդարացման, 7604-ը կամ 21.3%-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Համեմատության համար նշենք, որ 2018թ. նախապատրաստված 54.245 ավարտված նյութից 33.929-ով կամ 62.5%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 26.499-ը կամ 78.1%-ը՝ արդարացման, 7430-ը կամ 21.9%-ը՝ ոչ արդարացման հիմքով:

2019թ. ընթացքում նախապատրաստված 58.290 նյութից 20.927-ով կամ 36.0%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 335-ը կամ 1.6%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 335 քրեական գործից 19-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի կողմից, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից:

2018թ. համեմատ, 2019թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշումների քանակը աճել է 2405-ով (18.522-20.927) կամ 13.0%-ով: 30-ով կամ 8.2%-ով նվազել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերը (365-335), 1718-ով կամ 5.1%-ով (33.929-35.647)՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվը:

2019թ. ընթացքում հանրապետության նախաքննության մարմինների կողմից քննվել է 35.168 քրեական գործ (2017թ.՝ 27.684): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը աճել է 7484-ով կամ 27.0%-ով:

2019թ. ՀՀ նախաքննության մարմինների քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 63.3 քրեական գործ, նախորդ տարվա 51.5 քրեական գործի դիմաց, իսկ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 130.7 քրեական գործ, նախորդ տարվա 102.9 քրեական գործի դիմաց:

2019թ. քննված 35.168 քրեական գործից 5294-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2018թ.՝ 2984), որը 2310-ով կամ 77.4%-ով ավել է, քան 2018 թվականին, իսկ 29.874-ը վարույթ է ընդունվել 2019թ. ընթացքում (2018թ.՝ 24.700), որը 5174-ով կամ 21.0%-ով ավելի է, քան 2018 թվականին:

2019թ. վարույթ ընդունված 29.874 քրեական գործից 20.685-ը հարուցվել է հաշվետու ժամանակաշրջանում (2018թ.՝ 18.438). այդ թվում՝ 6153-ը հարուցվել է նախաքննության մարմինների (2018թ.՝ 6680), 13.508-ը՝ հետաքննության մարմինների (2018թ.՝ 10.496), իսկ 1024-ը՝ դատախազների կողմից (2018թ.՝ 1262):

2019թ. ավարտվել է 13.453 քրեական գործի վարույթ (2018թ. ՝10.121), այդ թվում՝ 3291-ը՝ 4321 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2018թ. ՝ 2787 քրեական գործ 3773 անձի վերաբերյալ)[4], 58-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2018թ.՝ 74), 10104-ը կարճվել է (2018թ.՝ 7260), որոնցից 3952-ը՝ արդարացնող (2018թ.՝ 3183), 6152-ը՝ ոչ արդարացնող հիմքով (2018թ. ՝ 4077) :

Հաշվետու ժամանակաշրջանում 11163 քրեական գործով վարույթները կասեցվել են (2018թ.՝ 8237), որոնցից 9172-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2018թ. ՝6523), 1926-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2018թ՝ 1644), իսկ 65-ը՝ այլ հիմքերով (2018թ. ՝ 70):

2019թ. 1999 քրեական գործ ուղարկվել է ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններ (2018թ. ՝1145), 3408 քրեական գործ միացվել է (2018թ.՝ 2615), քրեական գործ հարուցելու մասին 9 որոշում վերացվել է դատախազի կողմից (2018թ.՝ 15):

2019թ. վերջին անավարտ է մնացել 5136 քրեական գործ (2018թ. ՝5551), ինչը 415-ով կամ 7.4%-ով պակաս է, քան 2018 թվականին:

2019թ. ընթացքում դատախազների կողմից ստուգվել է վարույթը կարճելու մասին 14.957 որոշման օրինականություն: 2019 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 328 որոշում կամ ստուգված որոշումների 2.2%-ը, որոնցից 25-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 52 որոշում՝ 77 անձի նկատմամբ, որոնցից 2-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 31 որոշում՝ 29 կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որոնցից 5-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 10323 որոշման օրինականությունը: 2018 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 254 որոշում կամ ստուգված որոշումների 2,5%-ը, որոնցից 22-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

---

[4]Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի և անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները վերաբերում են առանց կրկնակիի դատարան ուղարկված վիճակագրական տվյալներին, որոնք արտացոլում են «Քննչական աշխատանքի մասին» (ՁԵ1 Մ) հաշվետվության (**այսուհետ՝ հաշվետվություն**) 1-ին բաժնի 1-ին աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակների 52-րդ տողում նշված վիճակագրական տվյալները: Մատնանշված տողում արտացոլված թվերն են հաշվարկվել հաշվետու ժամանակաշրջանում վարույթ ընդունված թվերին, որոնք էլ համապատասխանեցվել են վարույթում քննված քրեական գործերի բաշխման բանաձևին (հաշվետվության 1-ին բաժնի 2-րդ աղյուսակի 2-րդ տող, 1-ին և 2-րդ տողերի գումարի բաշխում):

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 41 որոշում, 56 անձանց նկատմամբ, որոնցից 1-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 21 որոշում, 19 կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որոնցից 1-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 438 բողոք (2018թ.՝ 235), որոնցից բավարարվել է 44-ը (2018թ.՝ 18) կամ 10.0%-ը (2018թ.՝ 7.6%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 27 բողոք (2018թ.՝ 63): Նշված բողոքներից բավարարվել է 5-ը (2018թ.՝ 5):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բերվել է 14 բողոք (2018թ.՝ 32), որոնցից 1-ը բավարարվել է (2018թ.՝ 6):

Փաստենք, որ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2019թ. ավել է 149-ով կամ 45.1%-ով՝ կազմելով 479 բողոք՝ նախորդ տարվա 330-ի դիմաց: Բերված բողոքներից բավարավել է 50-ը կամ 10.4%-ը (2018թ.՝ 29 կամ 9.0 %):

Փաստորեն, 2019թ. ստուգվել է վարույթը կարճելու մասին 4634 որոշում ավելի, քան 2018թ., իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը նվազել է 74-ով:

2019թ. ստուգվել է վարույթը կասեցնելու մասին 18.767 որոշման օրինականություն, ինչը 5044-ով կամ 36.7%-ով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից (2018թ.՝ 13.723):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 132 բողոք, որոնցից 23-ը բավարարվել է: Նախորդ տարի բերվել է նման 46 բողոք, որոնք մերժվել են: Նախորդ տարվա համեմատ բողոքների թիվը աճել է 81-ով կամ 158.8%-ով:

2019 թվականին վարույթը կասեցնելու մասին ստուգված 18.767 որոշումից 386-ը կամ 2.0%-ը վերացվել է (2018թ.՝ 13.723-ից վերացվել է 260-ը կամ 2.0%-ը):

2019թ. ընթացքում դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 2182 ցուցում, նախորդ տարվա 2243 ցուցումի դիմաց, այսինքն ցուցումների թիվը նվազել է 61-ով կամ 2.7%-ով:

2019թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 399 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 91 անձ ենթարկվել է կարգապահական տույժի:

Համեմատության համար նշենք, որ 2018թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների

փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 320 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 136 անձ, իսկ 1-ը՝ ենթարկվել է քրեական պատասխանատվության:

2019թ. ընթացքում ձերբակալվել է 935 անձ, նախորդ տարվա 1019-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը նվազել է 84-ով կամ 8.2%-ով: Ձերբակալումից ազատվել է 325 անձ՝ 2018թ. 346-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվը նվազել է 21-ով կամ 6.0%-ով:

2019թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1092 միջնորդություն (այս ցուցանիշը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները), որոնցից բավարարվել է 968-ը կամ 88.6%-ը, մերժվել՝ 124-ը կամ 11.3%-ը: Ներկայացված միջնորդություններից 180-ի կամ 16.4%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Համեմատության համար նշենք, որ 2018թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 870 միջնորդություն, որոնցից բավարարվել է 804-ը կամ 92.4%-ը, մերժվել՝ 66-ը կամ 7.6%-ը: Ներկայացված միջնորդություններից 211-ի կամ 26.2%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2018 թ. համեմատ, 2019 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը աճել է 222-ով կամ 25.5%-ով:

2019թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերն նվազել է 31-ով կամ 14.6%-ով:

Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ 2019 թվականին, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ համեմատած, առկա է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների թվի աճ: Այդուհանդերձ, նշված աճը պայմանավորված է բացառապես որոշ օբյեկտիվ հանգամանքներով, մասնավորապես հանցագործության շարժընթացում առկա փոփոխություններով և դրանով պայմանավորված՝ քրեական գործերով քննության պատշաճ ընթացքն ապահովելու նկատառումներից ելնելով: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների թվի աճը պայմանավորող հանգամանքների շարքում առաջին հերթին հարկ է առանձնացնել քրեական գործերով վարույթների ընթացքում որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի աճը, ինչն էլ անխուսափելիորեն հանգեցրել է կիրառված դատավարական հարկադրանքի տվյալ միջոցի թվի աճին: Այսպես, 2019թ. որպես մեղադրյալ է ներգրավել 6014 անձ, նախորդ տարվա 5065 մեղադրյալի դիմաց: Այսինքն մեղադրյալների թիվն ավելացել է 949-ով կամ 18 . 7%-ով: Բացի այդ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու

միջնորդությունների թվի աճը պայմանավորված է նաև հանցագործությունների ընդհանուր թվաքանակի մեջ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշռի ավելացմամբ, ինչն օբյեկտիվորեն հանգեցրել էնախնական քննության շահերից ելնելով, նման հանցագործություններ կատարած անձանց պատշաճ վարքագիծը, օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր կլիներ ապահովել բացառապես կալանավորում խափանման միջոցի կիրառմամբ:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ ուսումնասիրությամբ փաստվել է, որ քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների կողմից ներկայացվող միջնորդությունները դարձել են ավելի փաստարկված և հիմնականում բավարարել են ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վերաբերելի որոշումների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների պահանջներին: Այսպես, որպես կանոն, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություններում մեղադրյալին մեղսագրվող արարքի հստակ ձևակերպումից զատ ներկայացվում են այն փաստական տվյալները (մինչ այդ պահը ձեռք բերված ապացույցներ, օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներ), որոնք առերևույթ հաստատում են մեղադրյալի առնչությունը (կապը) իրեն մեղսագրված հանցագործությանը: Ընդ որում, վերագրվող հանցագործությանը մեղադրյալի առնչությունը հիմնավորող փաստական տվյալները ոչ միայն կցվում են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությանը և ներկայացվում դատարան, այլև հնարավորինս մանրամասն վերլուծության են ենթարկվում նաև միջնորդության մեջ՝ ցույց տալու համար հիմնավոր կասկածի առկայությունը հիմնավորելիս դրանց ապացուցողական արժեքը: Բացի այդ, որպես կանոն, բացառվում են այն իրավիճակները, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը, հիմնավոր կասկածի առկայությունը ներկայացնելուց բացի, փաստարկվում է բացառապես մեղսագրվող արարքի ծանրությամբ, սպասվող պատժի խստությամբ կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված՝ խափանման միջոցի կիրառման հիմքերի օրենսդրական ձևակերպումների մեխանիկական մեջբերմամբ: Ավելին, մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդության մեջ հանգամանալից վերլուծության են ենթարկվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված հիմքերը հիմնավորող հանգամանքները՝ հստակ հղում կատարելով դրանց հիմքում ընկած փաստական տվյալներին և մատնանշելով, թե կոնկրետ որ փաստական տվյալը կալանավորման կիրառման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որ հիմքն է հաստատում: Նշվածից զատ, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ ներառվում է գործի քննությունն ապահովելու ուղղությամբ քննության մարմնի դրսևորած պատշաճ ջանասիրությունը հիմնավորելու համար անհրաժեշտ

տեղեկատվություն՝ ցույց տալով արդեն իսկ կատարված դատավարական գործողությունների ծավալը, ինչպես նաև ներկայացվում են կատարվելիք գործողությունների մասին տվյալներ այն ծավալով, որը մարտավարական նկատառումների հաշվառմամբ չի խոչընդոտի քննության նորմալ ընթացքը: Ընդ որում, միջնորդությունների մեջ սովորաբար առկա են նաև հիմնավորումներ առ այն, թե նշված դատավարական գործողություններն ինչու ավելի վաղ կամ մինչ այդ պահը չէին կարող կատարվել, ինչպես նաև տեղեկություններ պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդությունների բավարարման արդյունքում կատարված դատավարական գործողությունների վերաբերյալ:

Ամփոփելով պետք է փաստել, որ գործնականում վերջին 2-3 տարում ձեռնարկված քայլերը արմատավորում են այն սկզբունքը, որ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը մեղադրյալի նկատմամբ պատժի, քրեական պատասխանատվության ենթարկելու միջոց չէ և հետապնդում է բացառապես վարույթի ընթացքում քրեական հետապնդման ենթարկվող անձի պատշաճ վարքագիծն ապահովելու, քննության բնականոն ընթացքը երաշխավորելու նպատակ:

Նշվածի ապացույցն էլ այն է, որ 2019թ. ազատազրկման դատապարտված 957 անձանցից 609-ը կամ 63. 6%-ը չեն գտնվել նախնական կալանքի տակ:

Այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման որոշումների նվազման միտումը բխում է անազատության հետ չկապված խափանման միջոցների կիրառման պրակտիկայի ընդլայնմանը նպաստելու՝ ՀՀ գլխավոր դատախազության որդեգրած քրեական քաղաքականությունից: 2018թ. հուլիսի 12-ին կայացած ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է խափանման միջոց ընտրելու հարցի քննարկման յուրաքանչյուր դեպքում պարտադիր դիտարկել անազատության հետ չկապված խափանման միջոցների կիրառման հնարավորության հարցը:

Այդուհանդերձ՝ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ 2019թ. ընթացքում դատարանների կողմից մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը, մանավանդ քննության նախնական փուլերում, շատ դեպքերում թույլատրելի է համարվել անհիմն և ոչ բավարար պատճառաբանություններով՝ չընդունելով մեղադրող կողմի ներկայացրած առարկությունները: Մասնավորապես՝ արձանագրվել է դեպք, երբ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ մեղադրվող անձի նկատմամբ գրավի կիրառության թույլատրելիությունը հիմնավորել է նրանով, որ նախկինում զբաղեցրած պաշտոնների համար պահանջվող իրավագիտակցության մակարդակը բավարար հիմք է տալիս ենթադրելու, որ մեղադրյալը, ունենալով անհրաժեշտ իրավագիտակցություն, ողջամտորեն պատկերացնում է վարույթի ընթացքում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում իր համար հնարավոր բացասական հետևանքների առաջացման

հավանականությունը: Գտնում ենք, որ նման դեպքերում գրավի կիրառումն իրավաչափ լինել չի կարող և դատախազությունն իր ողջ գործիքակազմով միջոցներ է ձեռնարկում նման դեպքերը բացառելու ուղղությամբ:

Բացի այդ, շարունակում են արձանագրվել դեպքեր, երբ գրավի կիրառումը թույլատրելի է համարվել նաև այն դեպքերում, երբ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց է ընտրվել քրեական դատավարության մասնակիցների վրա ապօրինի ազդեցություն գործադրելու կամ մեղադրյալի կողմից նոր հանցանք կատարելու բարձր հավանականության առկայությամբ: Նման դեպքում գրավի կիրառումն իրավաչափ լինել չի կարող, քանի որ գրավը, որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց, չի կարող երաշխավորել դրանց հնարավոր կատարման բացառումը:

Նման մոտեցման հետևանքներն արդեն իսկ զգալի են: Մասնավորապես, 2019թ. արձանագրվել է 9 դեպք /2018թ.՝ 1/, երբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու դատական ակտի հիման վրա մնալով ազատության մեջ՝ անձը դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, այն է դիմել է փախուստի կամ կատարել է նոր հանցանք:

2019 թվականի ընթացքում հետախուզվել է 15.350 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2354-ը կամ 15.3 %-ը:

2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին հետախուզվողների թիվը պակասել է 574-ով կամ 3.6 %-ով: Հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշը նվազել է 56-ով, իսկ տոկոսայինը՝ 2.3 %-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

2018 թվականին հետախուզվել է 3733 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1159-ը կամ 31.04 %-ը:

2019 թվականին հետախուզվել է 3639 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1109-ը կամ 30,47 %-ը:

Փաստորեն՝ 2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին հետախուզվողների թիվը պակասել է 94-ով կամ 2.51 %-ով:

2018 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվել է 12191 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1251-ը կամ 10.26 %-ը:

2019 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 11711 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1245-ը կամ 10.6 %-ը:

Փաստորեն՝ 2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների թիվը պակասել է 480-ով կամ 3.9%-ով, հայտնաբերման քանակական ցուցանիշը պակասել է 6-ով, իսկ տոկոսային ցուցանիշը բարելավվել է 4.5%-ով:

Տարի	Հետախուզվել են			Հայտնաբերվել են			
	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ. տարվա ընթացքում	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ.	Հայտն. %-ը
2018	12191	3733	15924	1251	1159	2410	15.1
2019	11711	3639	15350	1245	1109	2354	15.3

Հետախուզական աշխատանքների մասին խոսելիս հարկ է նշել, որ արձանագրվել են դեպքեր, երբ քննությունից թաքնվող անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու և տվյալ անձին հայտնաբերելու միջև ընկած ժամկետը շատ կարճ է եղել, ինչը ողջամիտ կասկածներ է առաջացրել հետախուզական աշխատանքների արհեստական արդյունքներ ապահովելու վերաբերյալ: Նման իրավիճակները բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազներին հանձնարարվել է նման դեպքերում պարտադիր քննության առարկա դարձնել մինչև հետախուզում հայտարարելը տվյալին անձին բերման ենթարկելու որոշումը չկատարելու, քննությունից թաքնվող անձի գտնվելու վայրը իրավասու պաշտոնատար անձանց նախապես՝ մինչև հետախուզում հայտարարելը հայտնի լինելու հանգամանքների շուրջ և այդպիսիք հայտնաբերելու դեպքում կիրառել դատախազական ներգործության միջոցներ:

2019թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 57.8%-ը (2018թ.՝ 55.4%) քննվել է մինչև 2 ամիս, 17.4%-ը (2018թ.՝ 20.5%)՝ մինչև 4 ամիս, 9.8%-ը (2018թ.՝ 12.0%)՝ մինչև 6 ամիս, 11.5%-ը (2018թ.՝ 10.0%)՝ մինչև 1 տարի, 3.5%-ը (2018թ.՝ 2.1%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

Նշվածից հետևում է, որ 2019թ. ընթացքում քննված քրեական գործերի 12.1% -ի նախաքննությունը տևել է 6 ամսից ավելի: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քրեական գործերի նախաքննության ժամկետների ձգձգումները հիմնականում պայմանավորված են օբյեկտիվ պատճառներով, մասնավորապես քննիչների գերծանռաբերոնվածությամբ: Այդուհանդերձ, 6 ամսից ավելի տևող քրեական գործերով իրականացվող քննության ընթացքի նկատմամբ դատախազական հսկողության վիճակը բարելավվելու, անձանց՝ ողջամիտ ժամկետում իրենց գործի քննության իրավունքը ապահովելու, քրեական գործերով իրականացվող քննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունն երաշխավորելու նկատառումներից ելնելով ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ՀՀ գլխավոր դատախազությունում քննարկել 6 ամսից ավել քննվող քրեական գործերը, պարզել նախաքննության ժամկետների ձգձգման

պատճառները, քրեական գործերի ընթացքը լուծելու նպատակով տալ կոնկրետ հանձնարարություններ կատարման հստակ ժամկետներով:

Այստեղ հարկ է նշել, որ նախնական քննության ժամկետների ձգձգումների պատճառների մեջ, ի թիվս այլնի, շարունակում է արդիական մնալ քրեական վարույթի ընթացքում նշանակվող փորձաքննությունների կատարման տևական ժամանակահատվածը, ինչն իր հերթին հանգեցնում է նաև նախնական քննության ժամկետների էական ձգձգումների: ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել են քրեական վարույթների շրջանակներում փորձաքննությունների նշանակման և անցկացման ընթացքում առաջացող համակարգային խնդիրները, որի արդյունքները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազությունում 2019 թվականի մայիսի 22-ին ՀՀ բոլոր նախաքննական մարմինների, փորձագիտական հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ, որի ընթացքում արձանագրվել է, որ փորձաքննությունների ձգձգումները, որոնք ազդում են նաև նախաքննության ժամկետների, դրանով պայմանավորված նաև քրեական վարույթի մասնակիցների իրավունքների պատշաճ ապահովման վրա, պայմանավորված են հիմնականում մի քանի գործոնով: Դրանցից են փորձագիտական հիմնարկների գերծանրաբեռնվածությունը, ինչի վրա նաև ազդում է քրեական վարույթների թվի աճը, փորձագիտական կենտրոնների՝ ժամանակակից գիտական, տեխնիկական և մեթոդական համալրվածության զգալի պակասը, փորձագիտական կենտրոններում մասնագետների սակավությունը, որի հիմնական պատճառներից մեկն էլ, իր հերթին ցածր վարձատրությունն է, սոցիալական թույլ երաշխիքները, և որը դժվարացնում է փորձաքննությունների կատարումը: Նման բացասական գործոններից են նաև վարույթն իրականացնող մարմինների կողմից փորձագետներին ոչ նպատակային և անորոշ հարցերի առաջադրումը, դրան հակառակ՝ եզրակացությամբ առաջադրված ոչ բոլոր հարցերին փորձագետի կողմից տրվող լիարժեք ու գիտականորեն հիմնավորված պատասխանները, ինչն առաջացնում է լրացուցիչ, կրկնակի փորձաքննություններ նշանակելու խնդիր: Էական ազդեցություն ունի նաև փորձաքննության կատարման ժամկետների՝ նորմատիվ իրավական ակտով կարգավորված չլինելու հանգամանքը: Խնդիրներ է առաջացնում նաև դատական-փորձագիտական գործունեությունը կարգավորող առանձին համապարփակ օրենքի բացակայությունը, ինչի հետևանքով ոլորտը կարգավորող միասնական ու համակողմանի իրավական ակտ չկա՝ դրանից բխող բազմաթիվ խնդրահարույց տեղային, տարբերվող մոտեցումների առկայությամբ:

Խորհրդակցության արդյունքներով ՀՀ դատախազության ստորաբաժանումներին տրվել են մի շարք հանձնարարականներ: Մասնավորապես հանձնարվել է.

1) բացառել հետազոտման համար ոչ բավարար կամ ոչ պիտանի նմուշներով, ոչ լիարժեք ելակետային տվյալներով, անորոշ հարցադրումներով փորձաքննությունների նշանակումը, ինչպես նաև ինքնանպատակ փորձաքննություններ նշանակելու դեպքերը,

փորձագետների կողմից փորձաքննությունների կատարման ժամկետները անհարկի ձգձգելու, ակնհայտ չհիմնավորված եզրակացություններ տալու դեպքերի վերաբերյալ անհապաղ զեկուցագրեր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին կամ նրա՝ ոլորտը համակարգող տեղակալին:

2) Բացառել փորձաքննություն նշանակելու մասին որոշումների ձևական բնույթը և ապահովել, որ փորձագետին առաջադրվեն թիրախային, ապացուցման առարկան կազմող հանգամանքները պարզելուն ուղղված և փորձագետի իրավասության մեջ մտնող հարցեր, այդ թվում՝ նախքան փորձաքննություն նշանակելը համապատասխան ոլորտի մասնագետների հետ տրվելիք հարցերի շրջանակի, բովանդակության և ձևակերպումների վերաբերյալ խորհրդակցելով:

3) Բացառել քրեական գործերով այնպիսի փորձաքննությունների նշանակումը, որոնց միջոցով հաստատվելիք հանգամանքները էական նշանակություն չունեն գործի համար կամ անհերքելի այլ ապացույցներով արդեն իսկ հաստատված են:

4) Բացառել առանց տեսանյութը նախապես զննելու դրանցով տեսաձայնային փորձաքննություններ նշանակելու դեպքերը: Անհրաժեշտ է նախապես ճշտել տեսանյութում առկա անձի կամ անձանց ճանաչողների հնարավոր շրջանակը, նրանց մասնակցությամբ իրականացնել տեսանյութի զննություն՝ դրանում պատկերված անձանց անհատականացնելու նպատակով, որից հետո միայն անհրաժեշտության և այդ անձանց փորձաքննությամբ անհատականացնելու իրական հնարավորության դեպքում նշանակել դատատեսաձայնային փորձաքննություն:

5) Բացառել ինքնասպանության դեպքերով հետմահու դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ համալիր դատահոգեբանական-դատահոգեբուժական փորձաքննություններ պարտադիր նշանակելու դեպքերը: Հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակել միայն այն դեպքերում, երբ գործով ձեռք բերված փաստական տվյալները կվկայեն նման փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության մասին, այն է՝ առկա կլինեն փաստական տվյալներ՝ դեպքից առաջ անձի հոգեբանական վիճակի և դրա՝ առերևույթ դեպքի հետ առնչության վերաբերյալ:

6) Փորձագետների կողմից փորձաքննության կատարման անհրաժեշտությամբ չպայմանավորված միջնորդություններ ներկայացվելու դեպքերում ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացնել համապատասխան փորձագիտական հիմնարկի ղեկավարին:

7) Բոլոր այն դեպքերում, երբ փորձագետն առաջադրված ոչ բոլոր հարցերին է պատասխանում՝ այդպիսով անհրաժեշտություն առաջացնելով նշանակելու լրացուցիչ փորձաքննություն և արդյունքում ձգձգելով քննությունը, ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացնել համապատասխան փորձագիտական հիմնարկի ղեկավարին:

Միաժամանակ փորձագիտական հիմնարկների ղեկավարներին առաջարկվել է.

1) Իրականացնել խնդիրների գույքագրում և ներկայացնել տվյալ հիմնարկին անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայի, նոր հաստիքների, ինչպես նաև ակնկալվող ողջամիտ վարձատրության վերաբերյալ ամփոփ տեղեկանք:

2) Փորձագետների կողմից քննիչին միջնորդություններ ներկայացնելու դեպքում կամ փորձաքննության ավարտից հետո այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում ուղեկցական գրությամբ հայտնել նախաքննական մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին, իսկ գրության պատճենը ուղարկել դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

3) Բոլոր այն դեպքերում, երբ փորձագետը գտնում է, որ փորձաքննության անհրաժեշտությունը հիմնավորված չէ, դրանք նշանակվել են հետազոտման համար ոչ բավարար կամ ոչ պիտանի նմուշներով, ոչ լիարժեք ելակետային տվյալներով, անորոշ հարցադրումներով, այդ մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն:

4) Ապահովել, որ բոլոր այն դեպքերում, երբ փորձաքննության ընթացքում առաջանում է համալիր փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն, այդ մասին հնարավոր սեղմ ժամկետում տեղյակ պահվի այդպիսի փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

5) Ապահովել, որ համապատասխան փորձագիտական հիմնարկում իրենց տեխնիկական և կադրային հնարավորություններին համահունչ կատարվող փորձաքննությունների տեսակները, փորձաքննության ընթացքում պարզաբանվող հարցերի ձևանմուշները հնարավորինս սեղմ ժամկետում տեղադրվեն տվյալ հիմնարկների պաշտոնական կայք էջերում:

Փորձագիտական հիմնարկների ղեկավարների կողմից 1-ին կետում նշված հանգամանքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ամփոփվել է և ներկայացվել ՀՀ Կառավարություն:

Դատական-փորձագիտական ոլորտին առնչվող խնդիրները և հնարավոր լուծումներն իրենց արտացոլումն են գտել նաև ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի 1441-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության մեջ, որով որպես առաջնահերթություններ են սահմանվել անհրաժեշտ փորձագիտական ներուժով օժտված միասնական փորձագիտական հաստատության ստեղծումը, ինչպես նաև դատական փորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող առանձին օրենքի ընդունումը:

ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է նաև, որ մեկ փորձաքննության կատարման նորմատիվային ժամանակները խիստ տարբերվում են գործնականում մեկ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամանակներից, որից ելնելով ներկայիս գործող եղանակով յուրաքանչյուր տեսակի փորձաքննության համար սահմանված արժեքը ևս չի համապատասխանում փորձաքննության կատարման համար իրականացվող անհրաժեշտ

ծախսերին: Այս անհամապատասխանությունն առկա է առնվազն վերջին հինգ տարիներին: Խնդիրը յուրաքանչյուր տարի արձանագրվել է բյուջետային հայտերում, բայց լուծումն անընդհատ հետաձգվել է ֆինանսական միջոցների սղության կամ բացակայության պատճառաբանությամբ: Փորձաքննությունների կատարման արժեքների ցածր լինելու պատճառով յուրաքանչյուր տարի պետական բյուջեյով ոլորտին հատկացվող ծախսերը հաշվարկվում և ֆինանսավորվում են անհամաչափ ցածր: Խնդրի լուծման հետաձգումը բացասական է ազդում ինչպես որակյալ մասնագետներով ոլորտի համալրումն ապահովելու, այնպես էլ տեխնիկական միջոցների սպասարկման և համալրման ապահովման վրա՝ որպես արդյունք ուղղակիորեն ազդելով փորձաքննությունների որակի և կատարման ժամկետների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն են ուղարկվել «Դատական փորձաքննությունների տեսակները, ենթատեսակները, յուրաքանչյուր մեկ առանձին օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամածախսը, փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները և դրա փորձաքննության արժեքը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 79-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը և կից փաստաթղթերը՝ սահմանված կարգով նախագծերին ընթացք տալու և դրանք ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

2019թ. ընթացքում դատարան ուղարկված 1061 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 28.753.010.172 ՀՀ դրամի գույքային վնաս (2018թ.՝ 22.411.076.195), որից պետությանը՝ 5.121.345.746 ՀՀ դրամի (2018թ.՝ 12.598.174.706), իրավաբանական անձանց՝ 21.949.284.932 ՀՀ դրամի (2018թ.՝ 8.240.568.158), ֆիզիկական անձանց՝ 1.682.379.494 ՀՀ դրամի (2018թ.՝ 1.572.333.331):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 2.721.661.682 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2018թ.՝ 5.545.836.166), որից պետությանը՝ 1.461.863.845 ՀՀ դրամի (2018թ.՝ 4.794.787.662), իրավաբանական անձանց՝ 938.715.709 ՀՀ դրամի (2018թ.՝ 359.735.129), ֆիզիկական անձանց՝ 321.082.128 ՀՀ դրամի չափով (2018թ.՝ 391.313.375):

2019թ. ընթացքում ոչ արդարացնող հիմքերով կարճված քրեական գործերով և նույն հիմքերով մերժված նյութերով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 2.728.669.389 ՀՀ դրամի գույքային վնաս, որից պետությանը՝ 2.439.751.904 ՀՀ դրամի, իրավաբանական անձանց՝ 83.273.830 ՀՀ դրամի, ֆիզիկական անձանց՝ 205.643.655 ՀՀ դրամի:

Նյութերի նախապատրաստման և նախաքննության ընթացքում վերականգնվել է 2.945.477.087 ՀՀ դրամի չափով գույքային վնաս, որից պետությանը՝ 2.820.985.512 ՀՀ դրամի, իրավաբանական անձանց՝ 29.496.155 ՀՀ դրամի, ֆիզիկական անձանց՝ 94.995.420 ՀՀ դրամի չափով:

2019թ. ընթացքում քննված քրեական գործերով դատարան է ներկայացվել 4321 խուզարկության միջնորդություն (2018թ.՝ 4938), որոնցից 4146-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 175-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 4321 միջնորդությունից բավարարվել է 4117-ը կամ 95.3%-ը (2018թ.՝ 4758-ը կամ 95.3%-ը), մերժվել է 204-ը կամ 4.7%-ը (2018թ.՝ 180-ը կամ 4.7%-ը), որոնցից 192-ը՝ բնակարանի խուզարկության, իսկ 12-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման:

ՀՀ գլխավոր դատախազությունում ամփոփվել են 2019թ. ընթացքում խոշտանգումների դեմ քրեաիրավական պայքարի արդյունքները:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից հսկողություն է իրականացվել խոշտանգումների վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված 40 նյութերի նկատմամբ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 36 նյութերի դիմաց: Նախապատրաստված նյութերից 7-ով կայացվել են որոշումներ հանցակազմի կամ հանցագործության դեպքի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին (նախորդ տարվա 2 նյութի դիմաց), 33 նյութերով հարուցվել են քրեական գործեր (նախորդ տարվա 34 հարուցված քրեական գործերի դիմաց), 2 նյութի նախապատրաստումն ընթացքի մեջ է:

2019 թվականի ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների այլ ենթադրյալ խախտումների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ, 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 341-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 146 քրեական գործ՝ նախորդ տարվա 134 քրեական գործերի դիմաց:

Ընդ որում, այս բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերից 33-ը փոխանցվել է 2018 թվականից, 87-ը հարուցվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից, 2-ը հարուցվել է դատախազների կողմից, 5-ի վարույթը վերսկսվել է, 3-ը անջատվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործերից, 16-ը ստացվել է քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններից:

Քննված քրեական գործերից 5-ը՝ ըստ մեղադրանքի 8 անձի, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան [5] (2018թ. մեղադրական եզրակացությամբ

[5] Դատարան ուղարկված գործերից 3-ը 6 անձի վերաբերյալ եղել է ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով, 2-ը 2 անձի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

դատարան է ուղարկվել 3 քրեական գործ 4 անձի վերաբերյալ), 83 քրեական գործի վարույթը կարճվել է (2018թ.՝ 63), 18-ի վարույթը կասեցվել է որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով (2018թ.՝ 16), 16 քրեական գործ միացվել է այլ քրեական գործի, (2018թ.՝ 18), 7-ն ուղարկվել է նախաքննական այլ մարմին, այն բանից հետո, երբ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում (2018թ.՝ 4), 17 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է 2020թ.:

Ինչպես նախորդ տարի, հաշվետու տարում ևս նման բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերով մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի նկատմամբ կարճվածների գերակշռող հարաբերակցության պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ կարճումների թվաքանակի աճին էականորեն նպաստել են անձանց կողմից իրավունքի չարաշահման դեպքերը, երբ տարբեր հանցագործություններ կատարած անձինք իրենց մեղադրանքից պաշտպանվելու, նախաքննության ընթացքում տված խոստովանական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու, հաճախ նաև իրավապահ մարմնի այս կամ այն աշխատակցից վրեժ լուծելու նպատակով ՀՀ դատախազությանը, ՀՀ հատուկ քննչական ծառայությանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, իշխանության տարբեր մարմիններին բազմաթիվ դիմում-բողոքներ են ներկայացնում իրենց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու մասին: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ հաշվետու ժամանակահատվածում խոշտանգման փաստով քննված քրեական գործերի նախաքննության արդյունքներով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի տարբեր մասերի հատկանիշներով հարուցվել է 12 քրեական գործ (2018թ.՝ 26 քրեական գործ):

Քիչ չեն դեպքերը, երբ քրեական գործով դատավարության մասնակիցները իրենց խոշտանգելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող հայտարարություններ անում են տարբեր ատյանի դատարաններում:

Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս խոշտանգումների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքների պարզման որոշ բարդություններ: Մասնավորապես՝ մի շարք դեպքերում հանցագործության մասին հաղորդում տված անձի հայտնած հանգամանքներն իրենց հաստատումը չեն ստանում այլ ապացույցներով, օրինակ, դիմողի մոտ բացակայում են մարմնական վնասվածքները, կամ դրանց առկայության պայմաններում հնարավոր չի լինում ապացույցների բավարար համակցությամբ հաստատված համարել, որ դրանք առաջացել են բռնության հետևանքով և ոչ թե այլ հանգամանքներում, օրինակ, բերման ենթարկելիս ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու պատճառով ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում կամ ենթադրյալ խոշտանգմանը նախորդած իրադարձությունների ժամանակ և այլ հանգամանքներում:

Խոշտանգումների դեպքերի ապացուցման կամ դրանց լիարժեք հերքման բարդությունը շատ դեպքերում պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում

հազվադեպ է տեսաձայնագրվում կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող քննչական այլ գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը:

Նկատի ունենալով, որ խոշտանգումների մասին հաղորդումների հիմնական մասը վերաբերում է խոշտանգման կիրառմամբ խոստովանական ցուցմունքներ կորզելուն, ուստի կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող) հարցաքննությունների տեսաձայնագրումը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու, թե խոստովանական ցուցմունք տվող անձը ցուցմունքը տվել է իր կամքո՞վ, թե՞ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ազդեցության տակ, ինչպես նաև պարզելու այդ պահին հարցաքննվող անձի դեմքի և մարմնի տեսանելի այլ մասերի վրա հնարավոր խոշտանգման հետքերի առկայության հանգամանքը: Կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունների այդօրինակ ամրագրումը հնարավորություն կտա նաև հստակ պարզելու այն հաղորդումների հավաստիությունը, որոնցով կասկածյալները և մեղադրյալները հայտնում են ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց խոշտանգելու մասին քննիչին հարցաքննության ժամանակ հայտնելու, սակայն վերջինիս կողմից այդ հանգամանքը չարձանագրելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ Խոշտանումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի ձևերի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջների կատարման մասին Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն, վերահաստատելով իր նախորդ հանձնարարականը, նշել է, որ. «Մասնակից պետությունը պետք է նախաձեռնի օրենսդրական ու այլ անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու համար քրեական գործերով բոլոր հարցաքննությունների պարտադիր տեսաձայնագրումը, և զինի ոստիկանական բաժանմունքներում ու անազատության մեջ պահելու համար նախատեսված այլ վայրերում հարցաքննության համար նախատեսված բոլոր սենյակները տեսաձայնագրման սարքերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մինչև օրենսդրական մակարդակով հարցի լուծումը 2017 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցած ՀՀ դատախազության կոլեգիայի նիստի որոշման (այսուհետ՝ կոլեգիայի որոշում) համաձայն՝ ամփոփման արդյունքներով ՀՀ նախաքննական մարմինների ղեկավարներին ուղարկվել են հաղորդումներ՝ առաջարկելով համապատասխան միջոցներ ձեռնարկել (օրինակ՝ տալ հանձնարարականներ, հրամաններ ցուցումներ), որպեսզի քննչական պրակտիկայում կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող) հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող այլ քննչական գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, անձնական խուզարկությունը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը, տեսագրվի բոլոր այն

դեպքերում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չունի պաշտպան, միևնույն ժամանակ, քննչական գործողության ընթացքում տեսագրում կիրառելու հնարավորության մասին պարզաբանում ստանալուց հետո նման ցանկություն է հայտնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննումը զուգորդվում է անձին մերկացնելու, իսկ հետազոտման համար նմուշներ ստանալը կապված է անձի մարմնի ինտիմ մասերից այդպիսիք ստանալու հետ:

Ընդ որում, այս տեսանկյունից իրավասու մարմինների կողմից որոշակի քայլեր արդեն իսկ ձեռնարկվել են: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության զարգացման 2020-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում որպես ռազմավարական ուղղություն նախատեսված է խոշտանգումների կանխարգելման նպատակով ոստիկանության շենքերի մուտքերն ու ելքերը, հարցաքննությունների և օպերատիվ հարցումների համար օգտագործվող սենյակները կկահավորել համապատասխանաբար տեսագրող ու տեսաձայնագրող համակարգերով: Ի դեպ, առաջարկվում է նախատեսել այնպիսի կառուցակարգեր, որը կսահմանի նաև տեսագրությունների և տեսաձայնագրությունների պահպանման ժամկետները և երրորդ անձանց փոխանցելու դեպքերը:

Թեև ինչպես վերը նշվաց խոշտանգումների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքների պարզումը ունի որոշակի բարդություն, այդուհանդերձ, հաշվետու տարում ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում գտնվող այդ բնույթի գործերով դատախազական պատշաճ հսկողության պայմաններում ապահովվել է գործերի քննության լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը:

Ուսումնասիրությունները վկայում են նաև ենթադրյալ խոշտանգման դեպքերի կապակցությամբ հաղորդումներին Է. Կարապետյանի և Կ. Նիազյանի վերաբերյալ թիվ ՎԲ-133/07 և ԵԿԴ/0118/11/13 գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայված իրավական դիրքորոշումների հիմնավորմամբ գրությամբ պատասխանելու որոշ դրսևորումներ:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումներով արձանագրված դրույթները խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ ներկայացված հաղորդումների վրա պետք է տարածվեն վերապահումներով, քանի որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն՝ բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի յուրաքանչյուր դեպքի առնչությամբ: Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումները հնարավոր է՝ պարունակեն ընդհանրական բնույթի տեղեկություններ, սակայն նույնիսկ այդ դեպքում պետք է վարույթն իրականացնող մարմինները պարտավորություն ստանձնեն իրականացնելու համապատասխան քննչական և դատավարական այն բոլոր գործողությունները, որոնք տվյալ փուլում հնարավոր է՝ պարզելու համար քրեական գործ

հարուցելու առիթն օրինակա՞ն է, և հիմքեր առկա՞ են, թե՞ ոչ: Միայն օրենսդրությամբ սահմանված քննչական և դատավարական գործողություններ կատարելու դեպքում հնարավոր կլինի հանգել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևիցե մեկի կայացմանը:

Նշվածով պայմանավորված ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումներին գրությամբ պատասխանելու կամ այլ կերպ անհետևանք թողնելու պրակտիկան . յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է բոլոր միջոցները գործադրել՝ պարզելու համար հաղորդումներում առկա բովանդակության հավաստիությունը և արժանահավատությունը:

ՀՀ դատախազությունում ուսումնասիրություն է կատարվել նաև ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2019 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 458 քրեական գործ, որոնք, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների, ներկայացվում է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը	Տվյալ հոդվածով հարուցված քրեական գործերի քանակը
1	34-104	1
2	104	8
3	109	1
4	110	4
5	112	8
6	113	11
7	117	41
8	118	280
9	119	8
10	120	1
11	121	1
12	137	41
13	138	2
14	140	2
15	141	9
16	142	3
17	144	1
18	167	2
19	167.1	6
20	169.1	1
21	170	2
22	173	5
23	185	1

24	261	1
25	353.1	18
26	ընդամենը	458

2020թ. հունվարի դրությամբ նշված քրեական գործերից 108-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 6-ը դատարան են ուղարկվել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

Նշված քրեական գործերից 269-ով վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական հետապնդում չի իրականացվել, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ 3-ը, 2-րդ կետով՝ 94-ը, 4-րդ կետով՝ 62-ը, 5-րդ կետով՝ 104-ը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված կարգով՝ 6-ը:

Նշված քրեական գործերից 14-ով վարույթը կասեցվել է, որից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ 5-ը, 2-րդ կետով՝ 9- ը:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազների համար մշակվել է ուղեցույց, որում մանրամասն կանոնակարգվել է ընտանեկան բռնության դեպքերով դատախազական լիազորությունների իրացման շրջանակը: Ուղեցույցով ի թիվս այլնի սահմանվել է, որ դատախազները սեփական նախաձեռնությամբ պետք է ընդունեն ընտանիքում ենթադրաբար բռնության ենթարկված յուրաքնաչյուր անձի և վերջինիս անօգնական վիճակում կամ բռնության կիրառած անձից կախվածության մեջ գտնվելու հանգամանքը պազրելու դեպքում ՀՀ քր. դատ. օր-ի 183-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով հարուցեն քրեական գործ:

Հարկ է նշել, որ ընտանեկան բռնության դեպքերով իրականացվող մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը և դատավարական ղեկավարումը պատշաճ չիրականացնելու, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի կիրարկման ուղեցույցի պահանջները չպահպանելու համար, 1 դատախազ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Բացի այդ, ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել ընտանիքում բռնության դեպքերի ստուգման, այդ դեպքերով հարուցված քրեական գործերի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս գործնական և տեսական մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի տառացի մեկնաբանությունից ակնհայտ է, որ վարույթը հանրային կարգով իրականացնելու դատախազի բացառիկ լիազորությունը կարող է իրացվել միայն քրեական գործի հարուցման փուլում, իսկ հարուցված քրեական գործով նույն հոդվածում սահմանված պայմաններն ի հայտ գալու դեպքում այդ հնարավորությունը իրացվել չի կարող: Օրենսդիրը չի սահմանում հարուցված մասնավոր մեղադրանքի վարույթը հանրային

դարձնելու որևէ դատավարական ձև: Խնդիրն առաջ է գալիս այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման դեպքով տվյալներ առկա չեն անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով իր իրավաչափ շահերը պաշտպանելու՝ հանցագործությունից տուժած անձի անկարողության մասին, վերջինս բողոք է ներկայացնում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, և քրեական գործը հարուցվում է սովորական մասնավոր հետապնդման կարգով: Հետագա վարույթի ընթացքում տուժողը հաշտվում է հանցանք կատարած անձի հետ, բայց միաժամանակ, ի հայտ են գալիս վարույթը հանրային կարգով շարունակելու հիմքեր: Մեր կարծիքով խնդրի վերջնական լուծումը կարող է ապահովվել համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում, իսկ մինչ այդ որպես իրավակիրառական լուծում, հիմք ընդունելով ընտանիքում բռնության դեպքերով վարույթի հիմքում դրված հայեցակարգը, այդպիսի դեպքերում քրեական հետապնդումը շարունակվում է դատախազի ցուցումի վրա:

Իրավասու բոլոր մարմինները պարտավոր են խիստ հետևողական մոտեցում դրսևորել նման բնույթի դեպքերի նկատմամբ, բացառելով ձևական, առանց պատշաճ խորությամբ խնդիրը վերլուծելու իրավական գնահատականների արժանացնելու մոտեցումները: Նշվածի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ ընտանիքում անհաշտ, կոնֆլիկտային իրավիճակների ոչ պատշաճ արձագանքը հետագայում, կոնֆլիկտների զարգացման արդյունքում հանգեցնում է առավել ծանր հետևանքների:

Այսպես.

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 19164017 քրեական գործով Վ.Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(…) նա կնոջից՝ Լուսինե Վիրաբյանից ամուսնալուծվելուց հետո՝ 2017 թվականին, վերջինիս ու մոր՝ Սուսաննա Մարգարյանի բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, ինչպես նաև Լուսինե Վիրաբյանին ծեծի ենթարկելու համար դատապարտվելու պատճառով Լ.Վիրաբյանի հետ ունենալով թշնամական հարաբերություններ, 2017 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:15-ի սահմաններում, գտնվելով Լոռու մարզի Արևաշող գյուղում, զանգահարել է Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա 68/1 հասցեում բնակվող Լուսինե Վիրաբյանին և իրենց երեխային մշտապես տեսակցելն արգելելու և այդ հարցը դատական կարգով լուծելու առաջարկից զայրացած՝ սպառնացել է նույն օրը «խփել»՝ սպանել Լուսինե Վիրաբյանին, իսկ հաջորդ օրը՝ Վանաձոր քաղաքի հրապարակում, կտրել մոր՝ Սուսաննա Մարգարյանի կոկորդը՝ սպանել նաև նրան, ապա 2017 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, երբ Վահիկ Մխիթարյանը ժամանել է Լուսինե Վիրաբյանի բնակության վայր և սկսել թակել դուռն ու պահանջել բացել այն՝ ստեղծելով սպառնալիքներն իրականացնելու իրական վտանգ, այդ սպառնալիքները՝ կապված

վերոգրյալ հանգամանքների հետ, Լուսինե Վիրաբյանի մոտ ընկալվել են իրական՝ առաջացրել վախ, տագնապ, իր անվտանգության համար անհանգստության զգացում և նա ահազանգել է ոստիկանություն, որից հետո Վահիկ Մխիթարյանը դադարեցրել է իր գործողությունները (...)»:

2018 թվականի փետրվարի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճռով Վ.Մխիթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի կանոններով՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Վ.Մխիթարյանի նկատմամբ նույն դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճռով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նշանակված 160.000 ՀՀ դրամ տուգանքի չվճարված՝ 144.000 ՀՀ դրամից 100.000 ՀՀ դրամը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Ամբաստանյալ Վ.Մխիթարյանի վերը նշված դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճիռը բեկանել է և Վ.Մխիթարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և տուժողի կողմից բերվել են բողոքներ, որոնք բավարարվել են մասնակիորեն և Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 23-ի որոշումը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սակայն այս ընթացքում, Վահիկ Մխիթարյանը օգտվելով ազատության մեջ լինելու հանգամանքից, առերևույթ կատարել է նոր հանցագործություն, այն է, 2019 թվականի մարտի 20-ին, ժամը 17:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա 68 շենքի շքամուտքի մոտ մոտեցել է զոքանչին՝ Սուսաննա Մարգարյանին, դիտավորությամբ ձեռքերով հարվածելով նրան՝ վայր գցել գետնին, այնուհետև քարշ տալով տարել շքամուտք, որտեղ Սուսաննա Մարգարյանի գլուխը հարվածել է պատերին, դանակը պահելով վերջինիս որովայնի ուղղությամբ՝ սպառնացել և պահանջել է բացել նույն շենքի 1-ին հասցեում գտնվող, նրան պատկանող բնակարանի դուռը, ապա Սուսաննա Մարգարյանի պայուսակից վերցնելով բնակարանի բանալին՝ բացել է հիշյալ բնակարանի դուռը, ուրիշի գույքին տիրանալու դիտավորությամբ, ապօրինի մուտք գործել բնակարան՝ իր հետ քարշ տալով Սուսաննա Մարգարյանին, որտեղ վերջինիս կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ ոտքերով և ձեռքերով, ինչպես նաև որպես զենք

օգտագործված դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Սուսաննա Մարգարյանի մարմնի տարբեր մասերին՝ նրա առողջությանը պատճառել թեթև վնաս, դանակը պահել է նրա պարանոցին և պահանջել ոսկեղեն ու գումար, ապա քաշել-ձգելով՝ պոկել Սուսաննա Մարգարյանի պարանոցի ոսկյա շղթան՝ կախազարդով և ականջօղերն ու ավազակային հարձակմամբ նրանից հափշտակել զգալի չափերով՝ 104.800 դրամ ընդհանուր արժողությամբ հիշյալ ոսկյա զարդերը:

Բնապահպանական իրավախախտումների, այդ թվում՝ ապօրինի ծառահատումների դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի նախաքննության օրինականության, ինչպես նաև այդ բնույթի հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքները շարունակել են մնալ ՀՀ դատախազության ուշադրության կենտրոնում:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաշվետու ժամանակահատվածում աճել է ապօրինի անտառահատման դեպքերի առթիվ ոչ միայն հարուցված, այլ նաև դատարան ուղարկված քրեական գործերի թիվը, ինչն առաջին հերթին պայմանավորված է այդ բնույթի դեպքերի հայտնաբերման և բացահայտման հարցում իրավապահ մարմինների կատարած մեծ ծավալի և անզիջում աշխատանքով, քննությունների լիարժեքության և օրինականության ապահովման գործընացում դատախազության հետևողականության հանգամանքով:

Հանրապետությունում ամենամեծ անտառային ֆոնդ ունեցող 2 մարզերում էապես ակտիվացել է անհատհատումների դեմ տարվող պայքարը:

Այսպես, 2019թ. ընթացքում Տավուշի մարզում քննվել է ապօրինի ծառահատման դեպքերի առթիվ հարուցված 127 քրեական գործ՝ որը 2018թ. համեմատ ավելի է 18-ով կամ 16.5%-ով: Դատարան է ուղարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի տարբեր մասերի հատկանիշներով քննված 26 քրեական գործ՝ 28 անձի վերաբերյալ կամ 2018թ. համեմատ 53%-ավելի քրեական գործ՝ 27.3%-ով ավելի անձանց վերաբերյալ: Ընդ որում՝ Տավուշի մարզի դատախազության դատախազների կողմից 2019թ. ընթացքում նշված հոդվածի հատկանիշներով հետաքննության մարմնի կողմից նախապատրաստված նյութերից 6-ով վերացվել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները և նույն հոդվածի տարբեր մասերով հարուցել են քրեական գործեր:

Ապօրինի ծառահատումներին առնչվող պաշտոնական հանցագործությունների հատկանիշներով 2019թ. ընթացքում Տավուշի մարզային դատախազության դատախազների դատավարական ղեկավարման կամ հսկողության ներքո քննվել է 21 քրեական գործ, որոնցից առանձնապես խոշոր չափերով վնասի պատճառմամբ կատարված ապօրինի անտառահատման հետ պաշտոնեական անփութության համակցության հատկանիշներով՝ 17 քրեական գործ, պաշտոնեական լիազորությունների չարաշահման հետ համակցության հատկանիշներով՝ 3 քրեական գործ, առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու հետ համակցությամբ՝ 1 քրեական գործ: Նշված

քրեական գործերով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 9 պաշտոնատար անձանց մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական անփութություն կատարելու համար և 4 քրեական գործ 4 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի մասնաճյուղում 2018թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած չարաշահումների փաստի առթիվ 2019թ. հարուցված մեկ քրեական գործով կոռուպցիոն չարաշահումներում այս կամ այն կերպ ներգրավվածության համար այս պահի դրությամբ մեղադրանք է առաջադրվել 5 անձի՝ որոնցից 3-ը՝ նշված մասնաճյուղի աշխատակիցներ: Նշված քրեական գործը գտնվում է նախաքննության փուլում:

Ապօրինի ծառահատումների և դրանց առնչվող պաշտոնական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը նպաստում է այս ոլորտում վարվող քրեական քաղաքականության փոփոխությունը, որի շրջանակում փոփոխություններ կատարվեցին ՀՀ քրեական օրենսգրքում: Բացի այդ, դատքննության փուլում գտնվող այս բնույթի քրեական գործերով մարզի դատախազությունն իրականացնում է խիստ պատժողական քաղաքականություն՝ հիմնական պատիժներին զուգահեռ մեղադրողների կողմից միջնորդելով նշանակել նաև լրացուցիչ պատիժներ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու տեսքով:

2019թ. միայն Տավուշի մարզի դատախազության դատախազների դատավարական ղեկավարման կամ հսկողության ներքո նախաքննության և դատաքննության փուլում գտնվող քրեական գործերով հայտնաբերվել է բնությանը և պետությանը պատճառված շուրջ 623մլն ՀՀ դրամի վնաս, որը 2018թ. ցուցանիշը գերազանցում է 2.3 անգամ (269մլն դրամ): Վերականգնվել է մոտ 30մլն ՀՀ դրամի չափով վնաս, որը 2018թ. համեմատ (7.8մլն դրամ) ավելի է շուրջ 3.8 անգամ: Չվերականգնված գումարի մի մասով արդեն իսկ կալանք է դրվել մեղադրյալների ինչպես շարժական, այնպես էլ՝ անշարժ գույքի վրա, մյուս մասով նախաքննությունը դեռևս շարունակվում է:

Բացի այդ, 2019թ. ընթացքում հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով ապօրինի ծառահատումների այն դեպքերում, երբ բավարար չեն եղել քրեական գործ հարուցելու հիմքերը, 237 անձինք ենթարկվել են վարչական տույժի: Դրանցով վնասի ընդհանուր չափը կազմել է 26մլն ՀՀ դրամ, որից վերականգնվել է 10.5մլն ՀՀ դրամ, իսկ մնացած գումարի մասով գործերը ներկայացվել են ԴԱՀԿ:

Ուսումնասիրությունը նաև ցույց է տվել, որ 2019թ. հուլիսից արձանագրվել է ապօրինի ծառահատումների դեպքերի նվազում, ինչը առավելապես պայմանավորված է իրավապահ մարմինների ձեռնարկած միջոցառումներով և մարզի տարածքում ԲԸՏՄ-ի հետ համատեղ ոստիկանության հսկիչ անցագրային հենակետերի տեղակայմամբ: Սակայն այդ միջոցառումները բավարար արդյունավետ չեն կարող լինել առանց ապօրինի

ծառահատումները կանխարգելող առաջնային օղակի՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի՝ անտառպահպանության համար պատասխանատու պաշտոններում (մասնաճյուղի տնօրեն, անտապապահ և անտառապետ) նշանակված անձանց կողմից ապօրինի ծառահատումների և բնափայտի ապօրինի մթերմանը նպաստող գործոնները վերացնելու:

Մասնավորապես, եզակի չեն դեպքերը, երբ այդ պատասխանատու պաշտոններում նշանակվում են անձինք, որոնք ոչ միայն անտառահատումների առնչությամբ տարաբնույթ կոռուպցիոն չարաշահումներ կատարելու համար ենթարկվել են քրեական հետապնդումների, այլ նաև նրանց վերաբերյալ առկա են մեղադրական դատավճիռներ: Օրինակ «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի 2019թ. օգոստոսի 8-ի հրամանով որպես անտառապահ է նշանակվել անձ, ում դեռևս 2018թ. հունվարին մեղադրանք է առաջադրվել «Իջևանի անտառպետության» պահաբաժնի անտառապահի պաշտոնում պաշտոնեական դիրքի չարաշահում թույլ տալու համար և դատավճռով դատապարտվել 2 տարի ժամկետով պայմանական ազատազրկման:

Կամ՝ այլ քրեական գործով մեկ այլ պահաբաժնի անտառապահի պաշտոնն զբաղեցնող անձին մեղադրանք է առաջադրվել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ ցուցաբերած անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի համար, որի արդյունքում բնակիչը հնարավորություն է ունեցել տևական ժամանակ այդ պահաբաժնի տարածքում կատարել ապօրինի ծառահատումներ և առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառել պետությանը: Չնայած նշված գործով 2019թ. սեպտեմբերին կայացվել է մեղադրական դատավճիռ, սակայն նա շարունակել է պաշտոնավարել՝ տեղափոխվելով Խաչարձանի անտառպետության պահաբաժին:

Մեկ այլ դեպքում անտառապահը բնակիչներին անվճար թափուկ վառելափայտ տրամադրելու պատրվակով թույլ է տվել իր հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող անձին իր պահաբաժնից ապօրինի պատրաստել և դուրս բերել վառելափայտ, ինչի համար 2018թ. ապրիլի 16-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի: Նշված քրեական գործի քննության ընթացքում նա ազատվել է հիշյալ պաշտոնից, սակայն հետագայում նշանակվել է Այգեհովիտի անտառպետության պահաբաժնի անտառապահ:

Նշված հարցերի վերաբերյալ դատախազները ներկայացրել են միջնորդագրեր, որոնցում անհրաժեշտ են համարել քննարկման առարկա դարձնել հիշյալ անտառապահների հետագա պաշտոնավարման նպատակահարմարության հարցը, այդ պաշտոններում կատարվող նշանակումների ժամանակ ընտրություն կատարելիս դրսևորել բծախնդրություն:

Ապօրինի անտառահատումների դեպքերի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ շարունակում են կոռուպցիոն սխեմաներ գործել նաև ոչ արտադրական նպատակներով օգտագործվող թափուկ վառելափայտի մթերման գործընթացում: Արձանագրվել են

դեպքեր, երբ անտառապետերը, անտառապահները, հանցավոր համաձայնության գալով փայտանյութի առք ու վաճառքով զբաղվող անձանց հետ, տարբեր քաղաքացիների անվամբ լրացված անվճար տրամադրվող թափուկ փայտանյութի տոմսով անտառից մթերում և իրացում են իրականացնում՝ նպաստելով փայտանյութի ապօրինի շրջանառությանը:

Տավուշի մարզի դատախազի պաշտոնակատարը միջնորդագրով բարձրացրել է նաև «Հայանտառ» ՊՈԱԿ մասնաճյուղերի ղեկավարների կողմից նշված գործընթացն անմիջական և ամենօրյա հսկողության տակ վերցնելու, ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու, կարգապահական ներգործության միջոցներ կիրառելու հարցերը:

2019թ. ընթացքում Լոռու մարզի տարաքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 243 դեպք, որոնցից 94-ով հարուցվել են քրեական գործեր: Համեմատության համար նշենք, որ 2018թ. ընթացքում այս բնույթի դեպքերով հարուցվել է 63 քրեական գործ, այսինքն՝ 31-ով կամ 49,2 %ով պակաս:

Բարելավվել է այս բնույթի դեպքերով հարուցված քրեական գործերի նախաքննության որակը: Միայն 2019թ. ընթացքում դատարան է ուղարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի տարբեր մասերի հատկանիշներով քննված 38 քրեական գործ՝ 40 անձի վերաբերյալ, այն դեպքում, երբ 2018թ. ընթացքում դատարան է ուղարկվել 10 քրեական գործ՝ 10 անձի վերաբերյալ: Այսինքն դատարան ուղարկված քրեական գործերի թիվն աճել է 28-ով կամ 280%-ով, իսկ անձանց թիվը՝ 30-ով կամ 300%-ով:

Ավելին, հաշվետու ժամանակահատվածում զգալիորեն աճել է նաև դատարանում ավարտված քրեական գործերի թիվը: Մասնավորապես՝ նշված ժամանակահատվածում դատարանում քննված քրեական գործերից մեղադրական դատավճիռներով ավարտվել է 27 քրեական գործ՝ 29 անձի վերաբերյալ, այն դեպքում, երբ 2018թ. ընթացքում դատարանում քննվել և ավարտվել են 7 քրեական գործ 7 անձի վերաբերյալ: Այսինքն աճը կազմել է մոտ 4 անգամ:

Հարկ է նշել, որ 2019թ. ընթացքում միայն Լոռու մարզի դատախազության դատախազների դատավարական ղեկավարման կամ հսկողության ներքո նախաքննության և դատաքննության փուլում գտնվող քրեական գործերով հայտնաբերվել է բնությանը պատճառված շուրջ 322 մլն ՀՀ դրամի վնաս, որը 2018թ. ցուցանիշը գերազանցում 12.5%-ով: Վերականգնվել է 3մլն ՀՀ դրամ, որը 2018թ. համեմատ կրկնակի ավելի է: Չվերականգնված գումարի մի մասով կալանք է դրվել մեղադրյալների շարժական, անշարժ գույքի վրա, մյուս մասով նախաքննությունը դեռևս շարունակվում է:

Բնապահպանական իրավախախտումների վերաբերյալ դեպքերի բացահայտման դրական ցուցանիշը պայմանավորված է նաև քննությունների համակողմանիության ապահովման հացրում դատախազական գործառույթների հետևողականությամբ: Ապօրինի ծառահատումների դեպքերով հարուցվող յուրաքանչյուր քրեական գործով

դատավարական ղեկավարում իրականացնող դատախազներն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում առերևույթ հանցավոր արարքներին անտառային տնտեսություն վարող պատասխանատու պաշտոնատար անձանց՝ այս կամ այն կերպ հնարավոր ներգրավվածությանը:

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով քննվող 2 քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը պարզել է, որ մի դեպքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Լալվարի անտառտնտեսություն» մասնաճյուղի, մյուս դեպքում «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անփույթ և անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով ինքնությունը չպարզված անձինք իրականացրել են մեծածավալ ապօրինի հատումներ, որոնց հետևանքով բուսական աշխարհին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ առաջինի դեպքում 5. 6մլն ՀՀ դրամի, երկրորդի դեպքում 23 մլն ՀՀ դրամի վնաս: ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել են քրեական գործեր, ընթանում է նախաքննություն:

Մեջբերված օրինակները եզակի բնույթ չեն կրել: Ընդհանուր առմամբ նշված ժամանակահատվածում ապօրինի անտառահատումների շրջանակներում կոռուպցիոն չարաշահումների փաստերով հարուցվել է 6 քրեական գործ, որոնց մեծ մասը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ և 308-րդ հոդվածների հատկանիշներով: Մեղադրանքներ են առաջադրվել, մասնավորապես, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Եղեգնուտի անտառտնտեսություն» մասնաճյուղի Փամբակի անտառպետության անտառապետին, նույն անտառպետության անտառապահին, «Լալվարի անտառտնտեսություն» մասնաճյուղի Շնողի անտառպետության 4-րդ պահաբաժնի անտառապահին:

Դատարան է ուղարկվել ապօրինի անտառահատումների հետ կապված կոռուպցիոն բնույթի 2 գործ՝ 3 անձանց նկատմամբ, որոնցով դատաքննությունն ընթացքի մեջ է:

Անտառային տնտեսություն վարող պաշտոնատար անձանց մասով դատարանում մեղադրողների կողմից միջնորդվում է հիմնական պատիժներին զուգահեռ նշանակել նաև լրացուցիչ պատիժներ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու տեսքով:

Ամփոփելով 2019թ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված քննության, քրեական հետապնդման արդյունքները՝ կարող ենք փաստել, որ Հանրապետության քրեական հետապնդման մարմինների կողմից կատարվել է հսկայածավալ աշխատանք:

2019 թվականին շարունակել է աճել քննված քրեական գործերի թիվը, ինչը, իր հերթին, հանգեցրել է ինչպես Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների քննիչների, այնպես էլ քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների ծանրաբեռնվածության աճի:

Այսպես, եթե 2017թ. Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների քննիչների կողմից քննվել է 22.007, ապա 2018թ. արդեն 27.684 քրեական գործ, իսկ 2019թ.՝ 35.168 քրեական գործ, այսինքն՝ 13161 ով կամ 59. 8%-ով ավելի քան 2017թ. և 7484-ով կամ 27.0%-ով ավելի քան 2018թ . : Եթե 2017թ. քննիչիների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 42. 3 քրեական գործ, ապա 2018թ. արդեն 51.5 քրեական գործ, իսկ 2019թ.՝ 63.4 քրեական գործ: Եթե 2017թ. քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 81.8 քրեական գործ, ապա 2018թ. արդեն՝ 102.9 քրեական գործ, իսկ 2019թ.՝ 130.7 քրեական գործ:

Էականորեն աճել է նաև քրեական հետապնդման մարմինների աշխատանքների արդյունավետությունը, ինչ մասին է վկայում ավարտված քրեական գործերի, մասնավորապես դատարան ուղարկված գործերի թվի աճը: Մասնավորապես, 3332-ով կամ 32. 9%-ով աճել է ավարտված գործերի թիվը /10121-13453/, 504-ով կամ 18. 1%-ով դատարան ուղարկված գործերի թիվը /2787-3291/:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ դատախազությունում հընթացս իրականացվող բարեփոխումների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունում նախաձեռնվել են կառուցվածքային բարեփոխումներ, որոնց առանցքում դրվել է ՀՀ գլխավոր դատախազության ստորաբաժանումների՝ ըստ հանցատեսակների մասնագիտացումն առավելագույնս խորացնելու և դրանով պայմանավորված՝ դատախազական գործառույթների արդյունավետությունը ավելի բարձրացնելու սկզբունքը: Հարկ է արձանագրել, որ դատախազության՝ որպես պետական մարմնի գործունեությանը վերաբերող միջազգային-իրավական փաստաթղթերում ևս դատախազների մասնագիտացման անհրաժեշտությունը մշտապես նշվել է որպես դատախազության գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման: Մասնավորապես, Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհրդի (Consultative Council of European Prosecutors) 2014թ. դեկտեմբերի 17-ի՝ «Դատախազների վերաբերյալ եվրոպական նորմերը և սկզբունքները» թիվ 9 խորհրդատվական կարծիքի 119-րդ կետում, 2016թ. նոյեմբերի 18-ի՝ «Դատախազական աշխատանքի որակի և արդյունավետության վերաբերյալ, ներառյալ ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը» թիվ 11 կարծիքի 27-րդ և 54-րդ կետերում հստակ մատնանշված է, որ դատախազների մասնագիտացման անհրաժեշտությունը, նաև դատախազության կազմակերպական կառուցվածքում, անհրաժեշտ է դիտարկել որպես առաջնահերթություն՝ դատախազների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև հանցավորության տարբեր դրսևորումներին պատշաճ արձագանքելու համար: Միաժամանակ, ՀՀ-ում հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է առանձին հանցատեսակների աճի տենդենցների, բացահայտման, նախականխման

աշխատանքների բարելավման անհրաժեշտության մասին՝ հիմքում դնելով պատճառների, պայմանների, օրինաչափությունների մասնագիտացված խորը ուսումնասիրությունների արդյունքները: Բացի այդ, էապես կարևորվել է նաև քրեական հետապնդման բոլոր մարմինների կողմից առանձին հանցատեսակներով քրեաիրավական միասնական մոտեցումների ամրապնդումը:

Այս ամենով պայմանավորված՝ ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում քննարկված և համաձայնեցված սկզբունքներից, նպատակներից և խնդիրներից ելնելով՝ ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով հաստատվել է ՀՀ դատախազության մասնագիտական ստորաբաժանումների նոր կառուցվածքը, դրան համապատասխանեցված ՀՀ դատախազության նոր կանոնադրությունը, հաստիքացուցակը, ինչպես նաև հստակեցվել են դատախազության ստորաբաժանումների գործառույթները:

Ըստ այդմ՝ ՀՀ գլխավոր դատախազության մասնագիտական ստորաբաժանումների նոր կառուցվածքում նախկին 9 վարչությունների փոխարեն ստեղծվել է 12-ը, որոնց մի մասը, ինչպես մինչև այս, մասնագիտացված է ըստ դատախազության սահմանադրական գործառույթների, մյուս մասը՝ ըստ հանցագործությունների տեսակների:

Ներկայումս ՀՀ գխավոր դատախազությունում գործում են հետևյալ մասնագիտական վարչությունները՝

1. Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն,

2. Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

3. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

4. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

5. Հասարակական անվտանգության դեմ ուղղված հացնագործությունների գործերով վարչություն,

6. Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,

7. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,

8. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,

9. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,

10. Պետական շահերի պաշտպանության վարչություն,

11. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն,

12. Միջազգային-իրավական համագործակցության վարչություն:

Նման կառուցվածքային մոդելի ընտրությունը պայմանավորված է դատախազության լիազորությունների առավելագույնս արդյունավետ իրականացման, դատախազության ստորաբաժանումներին վերապահված գործառույթների առավել հստակեցման, ըստ հանցատեսակների դատախազության ստորաբաժանումների մասնագիտացումը խորացնելու և դատախազական հսկողության որակն առավել բարձրացնելու անհրաժեշտությամբ: Խնդիր է դրվել կառուցվածքային նման մոդելը լավագույնս ծառայեցնել հանցավորության դեմ պայքարի միասնական քրեական քաղաքակության իրականացմանը, ինչը պայմանավորված է այս ոլորտում Հանրապետության առջև ծառացած արդի մարտահրավերներին դիմակայելու հրամայականով:

2019թ. ընթացքում ՀՀ քննչական մարմինների կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել նաև հասարակական հնչեղություն ունեցող մի շարք քրեական գործերով:

Այսպես.

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների փաստի առթիվ քննվող թիվ 62202608 քրեական գործով:

Նշված քրեական գործից մեղադրյալներ Ռոբերտ Քոչարյանի, Սեյրան Օհանյանի, Յուրի Խաչատուրովի և Արմեն Գևորգյանի նկատմամբ անջատված քրեական գործը, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից հաստատված, շուրջ 1200 էջից բաղկացած մեղադրական եզրակացությամբ, 2019թ. ապրիլի 29-ին ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու համար: Դատաքննությունը շարունակվում է:

2019թ. սեպտեմբերի 24-ին նշված քրեական գործին է միացվել պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, նախապես չխոստացված պարտակում կազմակերպելու, պաշտոնեական կեղծիք կատարելուն և ապացույցները կեղծելուն դրդելու, ինչպես նաև պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նույն օրը հարուցված քրեական գործը, որի նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ պետական մարմիններում մշտապես կազմակերպչական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք, ի պաշտոնե տեղեկացված լինելով ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, 2008 թվականի փետրվարի 23-ից մինչև մարտի 20-ն ընկած ժամանակահատվածում կատարված առանձնապես ծանր հանցագործության՝

սահմանադրական կարգի տապալման մասին, դրա կատարման գործիքների և միջոցների նախապես չխոստացված պարտակումը կազմակերպելու դիտավորությամբ, իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, համոզելու, խոչընդոտներ վերացնելու և ցուցումներ տալու եղանակով դրդել են ՀՀ ոստիկանության մի խումբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և սույն քրեական գործով նշված ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնին չարաշահել պաշտոնեական լիազորությունները, կատարել պաշտոնեական կեղծիքներ, ինչպես նաև վերացնել քրեական գործում առկա, հանցագործության հետքեր պարունակող, ապացույց հանդիսացող առարկաներ:

Ինչպես նաև, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը, հիշյալ իրադարձությունների կապակցությամբ ՀՀ կառավարության և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի միջև կատարված գրագրության ընթացքում, օգտագործելով մի շարք պաշտոնատար անձանց կողմից կազմված կեղծ տեղեկություններ և գրառումներ պարունակող պաշտոնեական փաստաթղթերը և սույն քրեական գործում առկա կեղծ բովանդակությամբ նյութերը, կազմել է պաշտոնեական կեղծ փաստաթուղթ հանդիսացող ՀՀ Կառավարության դիրքորոշում և այն ներկայացրել Եվրոպական դատարանին:

Նախաքննության ընթացքում որպես մեղադրյալ են ներգրավվել՝

1. Գեղամ Արտուշի Պետրոսյանը - ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով,
2. Ալիկ Սարգսի Սարգսյանը - ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 2-րդ մասով և 334-րդ հոդվածի 1-ին մասով,
3. Սաշա Միքայելի Աֆյանը - ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով,
4. Հովհաննես Ղուկասի Թամամյանը - ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 2-րդ մասով և 334-րդ հոդվածի 1-ին մասով,
5. Հայկ Սուրենի Միլիտոնյանը - ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 2-րդ մասով և 334-րդ հոդվածի 1-ին մասով,
6. Գևորգ Սուրիկի Կոստանյանը - ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու, մեղավոր անձանց շրջանակը պարզելու և նրանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2019 թվականի ընթացքում ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ:

Քննչական խմբի կողմից կատարվել են մեծածավալ քննչական և դատավարական գործողություններ՝ որպես վկա հարցաքննվել են 250-ից ավելի անձինք, նշանակվել է 100-

ից ավելի փորձաքննություն, փորձաքննության է ներկայացվել ավելի քան 1000 միավոր հրազեն և մեծ քանակությամբ ռազմամթերք, կատարվել է 30-ից ավելի խուզարկություն, քաղաքացիներից և պետական տարբեր հիմնարկներից կատարվել է 20 առգրավում:

Բացի այդ, 2019թ. դեկտեմբերի 18-ին ստացվել է Անահիտ Բախշյանի և նրա ներկայացուցիչ Զարուհի Մեջլումյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրած բողոքը, որով վերջիններս խնդրել են վերացնել թիվ 62207199/1 քրեական գործի վարույթը կարճելու մասին ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետի տեղակալ Մ.Մաթևոսյանի 2004թ. նոյեմբերի 11-ի որոշումը:

Բողոքի և նշված քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին՝ ժամը 17:05-ի սահմաններում Նաիրի Հունանյանի և զինված մի խումբ այլ անձանց կողմից տեռորիստական ակտ կատարելու՝ ՀՀ ԱԺ նիստերի դահլիճ ներխուժելու, հրազենից արձակված կրակոցներով ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանին, ՀՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանին, փոխնախագահներ Յու. Բախշյանին և Ռ. Միրոյանին, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանին սպանելու դեպքի առթիվ նույն օրը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62207199 քրեական գործը:

2000թ. հուլիսի 11-ի որոշմամբ քրեական գործից անջատվել է հանցավոր գործողություններին հնարավոր այլ մասնակիցների, ինչպես նաև հանցագործության նախապատրաստական փուլում և կատարմանն անմիջապես նախորդող պահին այն կանխելու հնարավորություն ու պարտականություն ունեցած այլ պաշտոնատար անձանց կողմից անփութություն դրսևորելու և հանցագործության կատարման ժամանակ օգտագործված զենքերի ու զինամթերքի հետ առընչություն ունեցած՝ Գարեգին Մկրտչյանի և Յուրա Եղիազարյանի վերաբերյալ թիվ 62207199/1 քրեական գործը՝ հայրենիքի դավաճանությանը, տեռորիստական ակտին հանցակցելու, զենքի, ռազմամթերքի ապօրին շրջանառության և անփութության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 17-61-րդ, 17-59-րդ, 232-րդ հոդվածների 1-ին մասերով, 184-րդ հոդվածով:

2000թ. նոյեմբերի 30-ին հաստատված մեղադրական եզրակացությամբ Նաիրի և Կարեն Հունանյանների, Էդուարդ Գրիգորյանի, Դերենիկ Բեջանովի, Վռամ Գալստյանի, Աշոտ Կնյազյանի, Համլետ Ստեփանյանի, պետական հանցագործության մասին չհայտնելու համար մեղադրվող Արմեն Հարությունյանի, անփութության համար մեղադրվող Արմեն Գասպարյանի և Ավետիք Մինասյանի, զենքի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության համար մեղադրվող Սարգիս Եթիմյանի, Սաշիկ Ղլեչյանի և Միսակ Մկրտչյանի վերաբերյալ թիվ 62207199 քրեական գործն ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 02. 12. 2003թ. դատավճռով Նաիրի և Կարեն Հունանյանները, Էդուարդ Գրիգորյանը, Վռամ Գալստյանը,

Դերենիկ Բեջանյանը և Աշոտ Կնյազյանն իշխանությունը յուրացնելու, ահաբեկչության, պետական, քաղաքական գործիչների սպանության և դրա փորձի, անձանց ապօրինի ազատությունից զրկելու, հրազենի, ռազմամթերքի ապօրին շրջանառության համար մեղավոր են ճանաչվել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով, 305-րդ հոդվածով, 34-305-րդ հոդվածով, 217-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 133-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ցմահ ազատազրկման, իսկ Համլետ Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել նույն հոդվածներով և դատապարտվել 14 տարի ժամանակով ազատազրկման:

Թիվ 62207199/1 քրեական գործի նախաքննության արդյունքում վարույթն իրականացնող մարմնի կողմից արձանագրվել է, որ դատապարտված անձանցից բացի, հանցագործության այլ մասնակիցներ՝ կազմակերպիչներ, կատարողներ, դրդիչներ և օժանդակողներ չեն հայտնաբերվել, իսկ Գարեգին Մկրտչյանին ու Յուրա Եղիազարյանին հարցաքննել հնարավորություն չի եղել, քանի որ վերջիններս բացակայել են ՀՀ-ից:

Նշված հիմնավորումներով 2004թ. նոյեմբերի 11-ին որոշում է կայացվել թիվ 62207199/1 քրեական գործի վարույթը կարճել՝ Նաիրի Հունանյանի և հանցավոր խմբի մյուս անդամների կողմից կատարված հանցագործություններին այլ հանցակիցների մասնակցության դրվագով՝ հանցագործության դեպքի բացակայության, Գարեգին Մկրտչյանի և Յուրա Եղիազարյանի կողմից ապօրինի կերպով զենք ու զինամթերք ձեռք բերելու և գործածելու դրվագով՝ ապացույցների անբավարարության, հանցագործության նախապատրաստական փուլում և կատարմանն անմիջապես նախորդող պահին այն կանխելու հնարավորություն ու պարտականություն ունեցած այլ պաշտոնատար անձանց կողմից անփութություն դրսևորելու դրվագով՝ հանցակազմի բացակայության հիմքերով:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույն օրը հիշյալ որոշումն ուղարկվել է գործով շահագրգիռ անձանց, սակայն այն ստանալու մասին վկայող տվյալ (փոստային առաքման ծանուցում, ստացական) գործում առկա չէ: Այդ պատճառով Անահիտ Բախշյանի ներկայացված միջնորդությունները բավարարվել են՝ նախ տրամադրվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին 2004թ. նոյեմբերի 11-ին կայացված որոշման պատճենը, ապա՝ 2019թ. նոյեմբերի 19-ին, քրեական գործի նյութերի սկանավորված տարբերակը:

Բողոքի քննարկման արդյունքում արձանագրվել է, որ տուժողի իրավահաջորդ Անահիտ Բախշյանն, ըստ էության, հնարավորություն չի ունեցել քրեական գործի նախաքննության ընթացքում ամբողջ ծավալով իրականացնել իր իրավունքները, ժամանակին չի ծանոթացել գործի նյութերին և զրկված է եղել նախաքննությունը լրացնելու, իր կարծիքով անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից, ինչի արդյունքում սահմանափակվել են նրա իրավունքները:

Նշված հիմնավորումներով 2019թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 2004թ. նոյեմբերի 11-ի որոշումը վերացնելու մասին:

Քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտին:

Քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետին և ՀՀ քննչական կոմիտեի նախագահին տրված ցուցումով ստեղծվել է քննչական խումբ՝ կազմված 8 քննիչներից, իսկ տվյալ վարույթով դատախազության լիազորությունների իրականացումը հանձնարարվել է 3 դատախազից կազմված դատախազական խմբին:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու մասին հանձնարարություն, որում մանրամասն վերլուծության են ենթարկվել 57 հատորից բաղկացած քրեական գործում առկա փաստական տվյալները, նախանշվել են հանցագործության համակողմանի բացահայտման համար անհրաժեշտ միջոցառումների հիմնական ուղղությունները:

Արձանագրված դրական ցուցանիշների հետ մեկտեղ պետք է փաստել, որ հանրապետությունում մինչդատական վարույթը դեռևս որոշ ուղղություններով բարելավվելու անհրաժեշտություն ունի, դեռևս առկա են խնդիրներ և բացթողումներ, որոնք բացասաբար են անդրադառնում քրեադատավարական խնդիրների արդյունավետ լուծման վրա:

Այսպես.

1. Նախնական քննության փուլի խնդրահարույց հարցերից մեկը անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ վարույթը հանրային կարգով իրականացնելու իրավակիրառ պրակտիկան է: Այս առումով դատախազության որդեգրած ու դատական պրակտիկայում ընդունելի մոտեցումները, ինչպես ցույց տվեց պրակտիկան, չհամընկան և 14 տարին չլրացած անձանց նկատմամբ կատարված՝ հատկապես ՃԵԿ խախտումների վերաբերյալ տասնյակ քրեական գործեր, դատարանների որոշմամբ կարճվել են այն հիմնավորմամբ, որ դրանցով տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի բողոքը բացակայում է:

Անհրաժեշտ չհամարելով առավել խորքային անդրադառնալ անչափահասների օրինական ներկայացուցիչների՝ այդ գործերով բողոք ներկայացնելու կամ հանցանք կատարած անձի հետ հաշտվելու իրավունքի բացակայությանը, նշենք, որ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խնդիրը ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ.

դեկտեմբերի 20-ի ՍԴՈ 1333 որոշմամբ սահմանված կարևորագույն չափանիշներից մեկի՝ երեխայի լավագույն շահի մեկնաբանության մեջ է:

ՀՀ սահմանադրական դատարանը, նշված որոշմամբ առաջ է քաշել մասնավոր մեղադրանքի գործերով անչափահաս տուժողի շահերի պաշտպանության հիմնական երկու չափանիշներ՝ **Անչափահաս տուժողի լսվելու իրավունք և Երեխայի լավագույն շահ:** Անչափահասի նկատմամբ կատարված՝ մասնավոր հետապնդման ենթակա հանցագործության վերաբերյալ վարույթը հանրային կամ մասնավոր կարգով իրականացնելու հարցը լուծելիս գլխավոր չափանիշը երեխայի լավագույն շահն է: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշի՝ կոնկրետ դեպքում անչափահասի նկատմամբ կատարված հանցագործության վերաբերյալ վարույթը մասնավո՞ր, թե՝ հանրային կարգով իրականացնելը, այն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկե՞լը, թե՝ չենթարկելն է բխում երեխայի լավագույն շահից: Թեև երեխայի տարիքը կենտրոնական տեղ է զբաղեցնում այդ հանգամանքը գնահատելիս, ավելին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն ուղղակիորեն է շեշտում հենց տասնչորս տարին չլրացած անձանց տարիքի անհամապատասխանությունը կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը, սակայն այն չի կարող միակ չափանիշը լինել երեխայի լավագույն շահը որոշելու հարցում:

Մեջբերված իրավակիրառ դատական պրակտիկան, սակայն, վկայում է, որ առկա իրավակարգավորումների և իրավամեկնաբանությունների բազմազանության և դրանցում հայեցակարգային տարբերությունների պատճառով վերը նշված երկու չափանիշները գործնականում իրացված չեն կամ իրացված են խիստ տարբերակված: Այս հանգամանքը ոչ միայն չլուծված է թողնում նշված գործնական խնդիրը, այլև վտանգում է անչափահաս տուժողների ու նրանց նկատմամբ հանցանք կատարած անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հետևաբար, առկա խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել տարիքային անօգնականության գաղափարը, դրա տարիքային սահմանները՝ նախատեսելով այդ դեպքերում անչափահասների նկատմամբ կատարված մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունների դեպքերով անկախ նրանց կողմից բողոք ներկայացնելուց դատախազի կողմից վարույթը հանրային մեղադրանքի կարգով սկսելու և շարունակելու իրավասություն: Մասնավոր մեղադրանքից հանրային մեղադրանքի անցման հարցը լուծելիս որպես չափանիշ պետք է սահմանել «երեխայի լավագույն շահը»՝ սահմանելով դրա չափորոշիչները, որպես այդպիսիք դիտարկելով, ի թիվ այլնի՝

- երեխայի տարիքը,
- երեխայի կամքը, դրա բովանդակության և այն արտահայտելու եղանակի առանձնահատկությունները, գիտակցված լինելու աստիճանը, ծնողի կամ շրջապատի կողմից երեխայի կամքի վրա ազդելու հնարավորությունը,
- երեխայի օրինական ներկայացուցչի, ծնողի դիրքորոշումը,

• երեխայի նկատմամբ կատարված հանցանքի բնույթը, հանրային վտանգավորության աստիճանը, դրա հետևանքները՝ հանցագործությամբ պատճառված կոնկրետ վնասը, դրա չեզոքացման, այսինքն՝ վնասի ամբողջական վերականգնման հնարավորությունը, դրա համար անհրաժեշտ միջոցները,

• հանցագործությամբ պատճառված վնասի հնարավոր հետագա, երկրորդային կամ ածանցյալ հետևանքների հնարավորությունը (օրինակ՝ առողջությանը պատճառված վնասի դեպքում՝ հետագայում հնարավոր բարդությունների առաջացման հնարավորությունը, անչափահասի կողմից այդ բարդությունների առաջացման հնարավորության գիտակցումը),

• հանցանք կատարած անձի վարքագիծը, վերջինիս կողմից պատճառված վնասի հատուցմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը,

• հանցանք կատարած անձի և անչափահաս տուժողի միջև գոյություն ունեցող կապը (ազգակցական, ընկերական), նրանց միջև հարաբերությունները հանցագործությունից առաջ և դրանից հետո,

• անկախ տուժողի կամքից հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավոր ազդեցությունը նրանց հարաբերությունների վրա և այլն:

Համակցության մեջ գնահատման ենթակա նշված հանգամանքները ճշգրիտ պարզելու լրջագույն երաշխիք կարող է լինել նաև անչափահասի հարցաքննությունը, հոգեբանի մասնակցությամբ կատարելու պարտադիր պահանջ սահմանելը:

2. Քրեական գործերով մինչդատական վարույթի ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ դեպքերում առերևույթ հանցագործություն կատարած անձանց քրեական հետապնդման ենթարկելու գործընթացին շարունակում է խոչընդոտել քրեական օրենսգրքի՝ բլակետային դիսպոզիցիաներ պարունակող մի շարք հոդվածներից բխող՝ համապատասխան իրավակարգավորումների բացակայությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով քրեադատավարական պրակտիկան վկայում է, որ նշված նորմի դիսպոզիցիան ՀՀ օրենսդրության մեջ նկարագրված չէ որոշակիորեն, մասնավորապես, աշխատանքի պաշտպանության կանոնները չեն բավարարում իրավական որոշակիության բաղադրիչը հանդիսացող՝ հասանելիության չափանիշին, այն է՝ վերոհիշյալ կանոնները սահմանող՝ թիվ 12.3 009-76, թիվ 12.0.004-90, թիվ 12.0.004-2015 ԳՕՍՏ-երը և «Նորմատիվա-տեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարության 2001թ. N 82 հրամանով հաստատված՝ «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» ՍՆիՊ III-4-80 կանոնը պաշտոնական որևէ աղբյուրում հրապարակված չեն, այդ կանոնները կարելի է գտնել միայն համացանցային տիրույթում առկա ոչ պաշտոնական կայք-էջերում, ինչը չի երաշխավորում այդ կանոնների համապատասխանությունը բնօրինակին, հետևաբար ողջամիտ կասկած է առաջացնում սահմանված կանոնների արժանահավատության վերաբերյալ: Ընդ որում,

ավելորդ չէ ընդգծել, որ այդ կանոնները սահմանված են օտար լեզվով, իսկ հայերենով պաշտոնական թարգմանություն առկա չէ:

Փաստորեն, աշխատանքի պաշտպանության կանոնների վերը նշված անհասանելիությունն ուղղակիորեն հանգեցնում է նաև այդ կանոնների անկանխատեսելիությանը, քանի որ սուբյեկտը հնարավորություն չի ունենում հստակ գիտակցելու, թե կոնկրետ որ գործողությունը կատարելու կամ ինչպիսի անգործություն դրսևորելու համար կենթարկվի քրեական պատասխանատվության, ինչն, իր հերթին, էապես դժվարեցնում, իսկ որոշ դեպքերում անհնարին է դարձնում կատարած արարքի մեջ անձի մեղավորությունն ապացուցելը և նրան քրեական պատասխանատվության ենթարկելը:

ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ, ինչպես նաև բլանկետային դիսպոզիցիաներ պարունակող մի շարք այլ հոդվածներով քրեական հետապնդում իրականացնելու՝ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրների վերաբերյալ, որոնք հանգեցնում են հարուցված քրեական գործերով վարույթը կարճելու մասին որոշումներ կայացնելուն կամ դատական քննության փուլում գտնվող գործերով արդարացման դատավճիռներ կայացնելուն, համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն՝ խնդրին կրկին անդրադառնալու և լուծումներ առաջարկելու ուղղությամբ:

3. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս շարունակվում է այն պրակտիկան, երբ գործնականում տարբերություն չի դրվում մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու և այլ պատճառներով նրա գտնվելու վայրը պարզված չլինելու միջև: Ավելին, որոշ գործերով վարույթը կասեցնելու որոշումներում միաժամանակ վկայակոչվում է թե մեղադրյալների քննությունից թաքնվելու, և թե նրանց գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չլինելու մասին, իսկ երբեմն՝ հետախուզում հայտարարելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումներում այդ հիմքը նշվում է տարբեր:

Նկատի ունենալով, որ նշված երկու հիմքերն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, սակայն դրանք քրեական գործով վարույթի կասեցման ինքնուրույն հիմքեր են հանդիսանում, ինչպես նաև դրանց տարանջատումն ունի կարևոր քրեաիրավական և քրեադատավարական նշանակություն, ուստի այդ բոլոր քրեական գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականությունն ստուգվել է միայն նշված խախտումները վերացվելուց հետո:

4. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով լրջագույն և հանցագործության բացահայտմանը խոչընդոտող խնդիր է այն, որ հաճախ դրան առնչություն ունեցող անձանց հեռախոսներում առկա տեղեկատվությունը զննության չի ենթարկվում, թեև թմրամիջոցներ ապօրինի իրացնելու ներկայումս առավել տարածված եղանակի,

մասնավորապես՝ թմրամիջոցների իրացմամբ զբաղվող անձանց կողմից համացանցի տարբեր սոցիալական ցանցերում գրանցված էջերի միջոցով թմրամիջոց ձեռք բերող անձի հետ կապ հաստատելու պայմաններում, նշված քննչական գործողության կատարումը կարող է գործի համար էական նշանակություն ունենալ: Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է ապահովել, որպեսզի հանցագործության կատարմանն առնչություն ունեցող անձանց մոտ օրենքով սահմանված հիմքերով կատարվեն անձնական խուզարկություններ, որոնց արդյունքում կամ դատավարական այլ գործողությունների արդյունքում հայտնաբերված բջջային հեռախոսներում առկա տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով պարտադիր ենթարկվի զննության: Մասնավորապես, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով ապահովել դրանց կատարմանն առնչություն ունեցող անձանց հեռախոսներում առկա տեղեկատվության զննությունը՝ թմրամիջոցներ ապօրինի իրացնելու առավել տարածված եղանակի, այն է՝ թմրամիջոցների իրացմամբ զբաղվող անձանց կողմից բջջային հավելվածների /Viber, WhatsApp և այլն/, համացանցի տարբեր սոցիալական ցանցերում գրանցված էջերի միջոցով թմրամիջոց ձեռք բերող անձի հետ կապ հաստատելու հանգամանքները ստուգելու նպատակով:

5. Չեն վերացել դատավարության մասնակիցներին քննչական գործողության ժամանակ նրանց իրավունքներն ու պարտականությունները չբացատրելու, քրեական գործի նյութերը կամ համապատասխան դատավարական փաստաթղթերը նրանց տրամադրելու կամ ծանոթացնելու պարտականությունը չկատարելու, անհրաժեշտ կամ պարտադիր կատարման ենթակա գործողությունները չկատարելու, գործով պարզված առերևույթ հանցագործության ոչ բոլոր դեպքերին գնահատական տալու, կամ դրանց սխալ քրեաիրավական գնահատականներ տալու, կիրառված խափանման միջոցի վերաբերյալ տվյալները ՍԷԿՏ համակարգ չփոխանցելու կամ դրանք չհանելու դեպքերը, արձանագրվել է դեպք, երբ քրեական գործի վարույթը կարճվելուց հետո խափանման միջոցը չի վերացվել: Նման յուրաքանչյուր դեպք քննարկման առարկա է դառնում դատախազների կողմից և թերացած պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվում են դատախազական ներգործության միջոցներ, իսկ եթե նման խախտումների համար հիմնավորվում է դատախազների մեղավորությունը, ապա նրանք ևս պարտադիր ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

6. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն առանցքային նշանակություն ունի հանցավորության դեմ պայքարում, հանցագործությունների կանխման, խափանման և բացահայտման գործում:

Նշված գործունեության արդյունավետության բարձրացման հրամայականին զուգահեռ աճում է նաև դրա իրականացման ընթացքում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորությունը: Օպերատիվ-հետախուզական

գործունեության օրինականության ապահովման կարևորագույն երաշխիքներից են դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները հիմնականում կարգավորվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով, որով սահմանված են օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը:

Անդրադառնալով օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողությանը՝ հարկ է նշել, որ ինչպես «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընդհանրական, ոչ հստակ իրավակարգավորումները, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հակասական իրավանորմերն էապես խոչընդոտում են դատախազության հսկողական այս լիազորության իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները:

Նշված լիազորություններն իրականացնելիս դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարները պարտավոր են նրան ներկայացնել այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Դատախազը պարտավոր է ապահովել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ իրեն ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների գաղտնիությունը:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի

սահմանափակման հետ: Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածով, որի համաձայն՝ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն է տալիս այդպիսի միջոցառումների իրականացման կամ դրանց իրականացման համար միջնորդող մարմնի գտնվելու վայրի դատարանը: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու համար հիմք է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի պատճառաբանված որոշումը, որում պարունակվում է միջնորդություն՝ այդ միջոցառումների իրականացման թույլտվություն ստանալու վերաբերյալ: Որոշման մեջ նշվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը և ժամկետը, ինչպես նաև այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են դատարանին՝ որոշում կայացնելու համար: Որոշմանը կցվում են բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը: Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից:

Միջնորդությունը քննարկում է դատավորը միանձնյա: Միջնորդության քննարկմանը միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձը կամ նրա ներկայացուցիչը մասնակցում է դատարանի պահանջով կամ միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձի նախաձեռնությամբ: Միջնորդությունը պետք է քննարկվի, և որոշում կայացվի այն ստացվելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում:

Դատավորի պահանջով նրան են ներկայացվում նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կա պետական կամ ծառայողական գաղտնիքի խախտման վտանգ կամ, երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու հիմքերի բավարար լինելն ստուգելու նպատակով դատավորը կարող է համապատասխան պաշտոնատար անձից պահանջել բացատրություններ և լրացուցիչ նյութեր:

Հարցի քննարկման արդյունքներով դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու թույլտվություն տալու կամ միջնորդությունը մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը: Համապատասխան նյութերը դատարանը վերադարձնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու, ինչպես նաև դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը կատարվում են օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ նշված դատական ակտերի բողոքարկման և բերված բողոքների քննությանը մասնակցելու լիազորությունը վերապահված է դատախազին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում: Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԼԴ/0008/11/10 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) օրենքով նախատեսված դեպքերում դատարանը լիազորված է քննել և լուծել քննիչի որոշումների և գործողությունների դեմ բողոքները, սակայն դատական պաշտպանության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որպեսզի բավարարվի օրենքով սահմանված «...եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը: Ընդ որում, նշված որոշումների և գործողությունների դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան, եթե տեղեկություն է ստացվել դատախազի կողմից բողոքը մերժելու մասին, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, սահմանելով հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի,

դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների, իրավաչափորեն ներառում է նաև իրավունքների պաշտպանության արտադատական միջոցն սպառելու պայման: Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականությունը վիճարկելու տվյալ կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, հստակ սահմանված է օրենքով, որևէ բացառություն չի նախատեսում և նպատակ է հետապնդում քրեական դատավարության մասնակիցների և շահագրգիռ այլ անձանց համար առավել արդյունավետ ձևով ապահովել դատական պաշտպանության իրավունքի անխափան իրականացումը:

Որպես մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման նախապայման՝ դատախազական հսկողության սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում և արդյունավետ վերացնելու օրենսդրի կամքով: Բացի այդ, մինչդատական վարույթի օրինականության երաշխավորմանն ուղղված հսկողական և վերահսկողական տվյալ միջոցների զուգակցումը հետապնդում է մեկ այլ իրավաչափ նպատակ. անձանց շահերի քրեաիրավական պաշտպանությունն իրականացնելով արտադատական կառուցակարգի գործադրմամբ՝ հնարավորինս սահմանափակել դատական գործիքակազմի ներգրավումը և զերծ մնալ ավելորդ հանրային-իրավական միջոցների վատնումից:

ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից ուղղակիորեն հետևում է, որ իրավունքների պաշտպանության արտադատական միջոցը սպառելու որոշումը հավասարապես վերաբերելի է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների գործողությունների բողոքարկման կարգին:

Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ մի կողմից դատախազին վերապահված են օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու մասին դատական ակտերի բողոքարկման, բերված բողոքների քննությանը մասնակցելու, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների կամ գործողությունների դեմ բերված բողոքները քննարկելու լիազորություն, սակայն նշված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման /իրազեկվածություն դատարան ներկայացված միջնորդությունների և դրանց քննարկման արդյունքում կայացված դատական ակտերի վերաբերյալ/, քննարկման, հայտնաբերված խախտումների արձանագրման, դրանք թույլ տված անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումն ապահովելու, խախտումները վերացնելու հստակ կառուցակարգեր, բողոքների քննության արդյունքում ընդունվող որոշումների շրջանակ նախատեսված չէ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողության ոլորտում դատախազի ամբողջական, մանրամասն կանոնակարգված լիազորությունների բացակայությունը, հսկողության առարկայի սահմանների անհստակությունը հանգեցնում են նշված ոլորտում դատախազական հսկողության միասնական համակարգի, դատախազության գործունեության գնահատման հստակ չափանիշների բացակայության:

Թեև գերատեսչական նորմատիվ ակտերի ընդունմամբ հնարավոր է լինում իրավիճակային, ժամանակավոր լուծումներ տալ օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ոլորտում առկա բացերին, այդուամենայնիվ, կարծում ենք, որ բարձրացված խնդիրների համակողմանի լուծման համար անհրաժեշտ են օպերատիվ-հետախուզական գործունեության և դրա օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկությունների խորը ուսումնասիրության վրա հիմնված օրենսդրական փոփոխություններ, որոնցով կհստակեցվեն տվյալ ոլորտում հսկողության առարկան, դրա սահմանները, խնդիրներն ու նպատակները, դատախազի լիազորությունները:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ

2019 թվականին ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 2083 (2018թ. -1988) նյութ, որից 1399-ով (2018թ. –1469) հարուցվել են քրեական գործեր, 655-ով (2018թ. -451)՝ քրեական գործ հարուցելը մերժվել է, որից 603-ը (2018թ. -410)՝ արդարացման, 52-ը (2018թ. -41)՝ ոչ արդարացման հիմքով:

Այսպիսով, 2018թ. համեմատ 2019թ. 95-ով կամ 4,7%-ով աճել է կոռուպցիոն բնույթի դեպքերով ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստված նյութերի քանակը, որին հակառակ, նույն՝ 4,7%-ով կամ 70-ով նվազել է հարուցված քրեական գործերի քանակը՝ կազմելով 1399:

Այս ցուցանիշները փաստում են, որ շարունակվում է բարձր մնալ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման հարցում իրավապահ մարմիններին ցուցաբերվող հանրային աջակցության և վստահության մակարակը: Դրան զուգահեռ, էականորեն ավելացել են կոռուպցիոն հնարավոր դրսևորումների վերաբերյալ ՁԼՄ-ների հաղորդումների, ինչպես նաև հակակոռուպցիոն պայքարում իրավապահ մարմինների նախաձեռնողականության ակտիվությունը: Մասնավորապես՝ եթե 2018թ. ՁԼՄ-ների նմանատիպ 25 հրապարակման էր ընթացք տրվել, ապա 2019թ.՝ 47, կամ 88%-ով ավելի: Եթե 2018թ. արձանագրվել էր հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման 532 դեպք, ապա 2019թ՝ 1020, կամ շուրջ 92%-ով ավելի:

Բացի հարուցված 1399 (2018թ . -1469) քրեական գործից՝ հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 535 (2018թ. -337) քրեական գործ, որից 116-ը (2018թ. -101)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 354-ը (2018թ. -206)՝ այլ մարմնից ստացված, 1-ը (2018թ . -0)՝ այլ պետությունների քրեական հետապնդման մարմիններից ստացված, 15-ը (2018թ. -4)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 49-ը (2018թ. -26)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 691 (2018թ. -266) քրեական գործ:

Կտրուկ աճ է արձանագրվել իրավասու մարմինների վարույթում քննվող կոռուպցիոն քրեական գործերի քանակում: 2019թ. այդ ցուցանիշը կազմել է 2625, ինչը 553-ով կամ 26,6%-ով ավելի 2018թ. համեմատ:

Ընդ որում՝ նման զգալի աճի և դրանով պայմանավորված քրեական հետապնդման մարմինների ծանրաբեռնվածության ավելացման պայմաններում հաջողվել է 2019թ. ավարտել կոռուպցիոն բնույթի 1006 քրեական գործի վարույթ, որը նախորդող տարվա արդյունքը գերազանցում է 34,3%-ով:

Ավարտված քրեական գործերից 576-ի (2018թ. -472) վարույթը կարճվել է արդարացման, իսկ 190-ինը (2018թ. -126)՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթը ավարտված մնացած 240 (2018թ. -151) քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 2625 (2018թ. -2072) քրեական գործից 138-ի (2018թ. -88) վարույթը կասեցվել է, որից 102-ինը (2018թ. -64) անձը հայտնի չլինելու, 31-ինը (2018թ. -23)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 5-ինը (2018թ. -1)՝ այլ հիմքերով: 319 (2018թ. -142) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 343 (2018թ. -415) գործ միացվել է, 819 (2018թ. -678) գործի նախաքննություն փոխանցվել է 2020թ.:

2019 թվականի ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի 2625 (2018թ. -2072) քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուր 1264 (2018թ. -960) անձինք: Այսինքն, 2019թ. ընթացքում քրեական հետապնդման է ենթարկվել 31.4%-ով ավելի անձ, քան նախորդ տարվա ընթացքում:

Քրեական հետապնդման ենթարկված 1264 (2018թ. -960) անձանցից 95-ը (2018թ. -113) ձերբակալվել են, որից 41-ը (2018թ. -69) ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 1073-ի (2018թ. -819) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 1018 (2018թ. -746) անձի մեղադրանք է առաջադրվել: 98 (2018թ. -90) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 13-ը (2018թ. -6) մերժվել է, 85-ը (2018թ. -84)՝ բավարարվել, 46 (2018թ. -33) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 9 (2018թ. -31) մեղադրյալ ազատվել է կալանքից, որից 6-ը՝ դատախազի կողմից (2018թ. -15), 3-ը՝ դատարանի կողմից (2018թ. -16):

Առանձնահատուկ կարևորություն է տրվել առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձանց հետագա պաշտոնավարումը առնվազն վարույթի ընթացքում ժամանակավորապես դադարեցնելու հարկադրանքի միջոցի կիրառմանը: Մասնավորապես, եթե 2018թ. դատախազի կամ նախաքննության մարմնի որոշմամբ ժամանակավորապես դադարեցվել է 54 մեղադրյալի պաշտոնավարում, ապա 2019թ.՝ 10-ով կամ 18.5%-ով ավելի անձի:

Այս առումով հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի քննությանը խոչընդոտող հանգամանք են շարունակում մնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված՝ կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ գործող իրավակարգավորումները, որոնց պայմաններում հնարավոր չի լինում ապահովել առերևույթ կոռուպցիոն հանցագործություններ կատարած բոլոր անձանց պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը, ինչպես նաև որոշ դեպքերում չեն սահմանվում պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման հստակ մեխանիզմները:

Այսպես.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի՝ դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել **հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի** պաշտոնավարությունը, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ: Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումն ուղարկվում է նրա **աշխատավայրի վարչակազմի ղեկավարին**, որն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է կատարել այն և դրա մասին տեղյակ պահել համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին:

«Դատախազության մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ դատախազի օրինական պահանջները ենթակա են պարտադիր կատարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային ծառայողների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Նշված հոդվածների իմաստով հանրային ծառայող է հանդիսանում «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը թեև իրավունք է վերապահում դատախազին, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչին կայացնելու համայնքի ղեկավար հանդիսացող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարումը ժամանակավոր դադարեցնելու մասին որոշում, սակայն իրավական առումով բացակայում են վերը նշված իրավունքը կիրառելու մեխանիզմները:

Պրակտիկայում նման խնդրահարույց օրինակներ հանդիսացան Արարատի մարզի Մասիս, Տավուշի մարզի Ազատամուտ, Շիրակի մազրի Անի և Արմավիրի մարզի Արշալույս համայնքների ղեկավարների լիազորությունների ժամանակավորապես դադարեցման /կասեցումը/ վերաբերյալ համապատասխան որոշումները, որոնք իրավական մեխանիզմների բացակայության պատճառող չիրագործվեցին:

Բացի այդ, նշված նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ դատախազի կամ քննիչի որոշմամբ կարող է դադարեցվել միայն հանրային ծառայողների պաշտոնավարումը, մինչդեռ կոռուպցիոն հանցագործություններով քննվող քրեական գործերով շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում նաև ժամանակավորապես դադարեցնել հանրային ծառայության մեջ չգտնվող պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնավարումը:

Նշված խնդիրները լուծելու նպատակով ՀՀ դատախազության կողմից դեռևս 2018 թվականին մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով նախատեսվում է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 152-րդ հոդվածում՝ առաջարկելով հոդվածի 1-ին մասից հանել «հանրային ծառայության մեջ գտնվող» բառերը՝ պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման ինստիտուտը ինչպես հանրային ծառայության մեջ գտնվող, այնպես էլ հանրային ծառայության մեջ չգտնվող պաշտոններ զբաղեցնող անձանց (նկատի ունենալով նաև իրավաբանական անձի ղեկավար-կարգադրիչ կամ ֆինանսատնտեսական գործառույթներ իրականացնող անձանց և այլն, օրինակ՝ փողերի լվացման համար մեղադրվող առևտրային բանկում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձին) նկատմամբ կիրառելու հնարավորություն ընձեռելու համար, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ վերջիններս կխոչընդոտեն մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվեն հանցավոր գործունեությամբ: Միաժամանակ, նախագծով առաջարկվել էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ պաշտոնավարման դադարեցման ինստիտուտի կիրառելիության առավել հստակ մեխանիզմ սահմանելու համար: Մասնավորապես, առաջարկվել էր որպես պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման որոշումը կատարող սուբյեկտ նախատեսել այն ի կատար ածելու իրավասություն ունեցող անձին, իսկ այդպիսին չլինելու դեպքում անձամբ մեղադրյալին:

Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության հարցը հաշվետու ժամանակահատվածում բարձրացվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից, այնուամենայնիվ, համապատասխան օրենսդրական փոփոխությունները դեռևս չեն կատարվել:

375 (2018թ. -296) անձի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 109-ինը (2018թ. -61)՝ արդարացման, 266-ինը (2018թ. -235)՝ ոչ արդարացման հիմքով: Դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 1 (2018թ. -3) որոշում: Դատի է տրվել 390 (2018թ. -288) անձ, որից 21-ը (2018թ. -40) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 500 (2018թ. -386) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ., նշված անձանցից 18-ը (2018թ. -9) գտնվել են կալանքի տակ:

Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների՝ հաշվետու տարում նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի շարժը ունեցել է հետևյալ պատկերը.

2019թ. ընթացքում **պաշտոնեական դիրքն օգտագործելով մարդու թրաֆիքինգի կամ շահագործման (ՀՀ քր. օր 132-րդ հոդված)** վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2018թ. -0) նյութ, որով հարուցվել է քրեական գործ (2018թ. -0) և ուղարկվել ըստ ենթակայության:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելու (ՀՀ քր. օր 143-րդ հոդված) վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու (ՀՀ քր. օր 147-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 149-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցված քրեական գործը կարճվել է արդարացման հիմքով:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 164-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ նախապատրաստվել է 1 նյութ, որով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով: Նույն ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթ է ընդունվել 2 քրեական գործ՝ 1-ը՝ ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ մարմնից ստացված, 1-ը՝ քրեական գործից անջատված մաս: Քննված 2 քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 2 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 3 անձ, որոնց վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու (ՀՀ քր. օր 167-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2018թ. -0) նյութ, որով հարուցվել է (2018թ . -0) քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 3 (2018թ. -0) քրեական գործ, որից 1-ը միացվել է, իսկ 2 քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 3 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 6 անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 6 անձինք ձերբակալվել են: Նշված 6 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջիններին առաջադրվել է մեղադրանք: 6 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, 5-ը՝ բավարարվել, 3 անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: Քրեական հետապնդման ենթարկված 6 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ., որից 2-ը գտնվում են կալանքի տակ:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի (ՀՀ քր. օր 168-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2018թ. -0) նյութ, որով հարուցվել է (2018թ . -0) քրեական գործ, որով նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 1 քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ:

Քրեական հետապնդման ենթարկված անձը ձերբակալվել է, վերջինիս վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան առաջադրվել է մեղադրանք: 1 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որը բավարարվել է, սակայն նրա նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: Քրեական հետապնդման ենթարկված 1 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների (ՀՀ քր. օր 178-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 123 (2018թ. -189) նյութ, որից 115-ով (2018թ. -145) հարուցվել է քրեական գործ, 8-ով (2018թ.- 30)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է (2018թ.- 29) արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 236 (2018թ. -206) քրեական գործ, որից ավարտվել է 67 (2018թ. -36) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 31 (2018թ. -21) գործի վարույթ կարճվել է արդարացման, 16 քրեական գործի վարույթ (2018թ. -10)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 20 (2018թ. -5) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 23 (2018թ. -8) գործի վարույթ կասեցվել է, որից 18-ինը (2018թ.- 1)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 5-ինը (2018թ.- 7)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 53 (2018թ. -10) գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 38 (2018թ. -99) գործ միացվել է, իսկ 55 (2018թ . -53) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 236 (2018թ. -206) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 86 (2018թ. -63) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 86 (2018թ. -63) անձանցից 5-ը (2018թ. -13) ձերբակալվել է, որից 4-ը (2018թ. -5) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 82-ի (2018թ. -62) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 80 (2018թ. -56) անձի մեղադրանք է առաջադրվել: 4 (2018թ. -11) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը (2018թ. -1) մերժվել է, 3-ը (2018թ. -10)՝ բավարարվել, 1 (2018թ. -4) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 3 (2018թ. -6) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 0 (2018թ. -2) մեղադրյալ ազատվել է կալանքից՝ դատախազի կողմից: 8 (2018թ. -5) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 4-ինը (2018թ. -1)՝ արդարացման, 4-ինը (2018թ. -4)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի են տրվել 42 (2018թ. -13) անձ, որից 1-ը (2018թ. -3) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 36 (2018թ. -42) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ՀՀ քր. օր 179-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 471 (2018թ. -447) նյութ, որից 377-ով (2018թ. -383) հարուցվել է քրեական գործ, 93-ով (2018թ. -60)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 76-ը (2018թ. -52)՝ արդարացման, իսկ 17-ը (2018թ. -8)՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 748 (2018թ. -487) քրեական գործ, որից ավարտվել է 277 (2018թ. -168) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 106 (2018թ. -66) գործի վարույթ կարճվել է արդարացման, 83 քրեական գործի վարույթ (2018թ. -61)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 88 (2018թ. -41) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 36 (2018թ. -15) գործի վարույթ կասեցվել է, որից 18-ինը (2018թ. -9)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 15-ինը (2018թ. -6)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով: 77 (2018թ. -18) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 66 (2018թ. -69) գործ միացվել է, իսկ 292 (2018թ. -217) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 748 (2018թ. -487) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 314 (2018թ. -171) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 314 (2018թ. -171) անձանցից 10-ը (2018թ. -24) ձերբակալվել է, որից 5-ը (2018թ. -17) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 271-ի (2018թ. -152) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 265 (2018թ. -171) անձի մեղադրանք է առաջադրվել: 10 (2018թ. -10) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են (2018թ. -1-ը մերժվել է, 9-ը՝ բավարարվել), 4 (2018թ. -2) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց

կիրառվել է գրավ: 6 (2018թ. -9) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 (2018թ. -2) մեղադրյալ ազատվել է կալանքից դատախազի կողմից (2018թ. -1-ը՝ դատախազի, 1-ը՝ դատարանի կողմից): 91 (2018թ . -52) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 11-ինը (2018թ. -8)՝ արդարացման, 80-ինը (2018թ. -44)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 117 (2018թ. -53) անձ, որից 2-ը (2018թ. -5) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 106 (2018թ. -66) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ., նշված անձանցից 1-ը (2018թ. -1) գտնվել է կալանքի տակ:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու (ՀՀ քր. օր 184-րդ հոդված) վերաբերյալ 2019թ.-ի ընթացքում նախապատրաստվել է 9 (2018թ. -0) նյութ, որից 3-ով (2018թ. -0) հարուցվել է քրեական գործ, 6-ով (2018թ. -0)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակաշրջանում վարույթում քննվել է 10 (2018թ. -12) քրեական գործ, որից 3-ի վարույթը կարճվել է արդարացման հիմքով (2018թ. -4՝ ոչ արդարացման հիմքով), 2 (2018թ. -1) գործի վարույթ կասեցվել է անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, իսկ 5 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ (2018թ. -7 գործ միացվել է):

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 10 (2018թ. -12) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 5 (2018թ. -3) անձ, որոնց (2018թ. -13) մեղադրանք է առաջադրվել: Քրեական հետապնդման ենթարկված 5 (2018թ. -3) անձանց վերաբերյալ էլ որոշումներ են կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ ոչ արդարացման հիմքով:

Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 187-րդ հոդված) վերաբերյալ քննվել է նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված 1 (2018թ.-0) քրեական գործ, որի վարույթը կարճվել է ոչ արդարացման հիմքով:

Փողերի լվացման (ՀՀ քր. օր 190-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 7 (2018թ. -7) նյութ, որից 6-ով (2018թ. -7) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 15 (2018թ.- 12) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 3 (2018թ.-1) քրեական գործի վարույթ, որից 1-ը կարճվել է արդարացման, 1-ը՝ ոչ արդարացման հիմքերով, 1-ը՝ (2018թ.-1) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 3 (2018թ.-4) գործի վարույթ կասեցվել է, որից 2-ը (2018թ.- 3)՝ անձը հայտնի չլինելու, 1-ը (2018թ.-1) անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 3 (2018թ. -0) գործ միացվել է, իսկ 6 (2018թ. -7) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 2 (2018թ. -6) անձ:

2019թ. քրեական հետապնդման ենթարկված 2 (2018թ. -6) անձանցից 2-ն էլ (2018թ . -4) ձերբակալվել են: 4 (2018թ. -6) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 4 (2018թ. -5) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 (2018թ. -4) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են: Դատի է տրվել 3 (2018թ. -1) անձ, որից 2-ը (2018թ. -1) գտնվել են կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 1 (2018թ. -4) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման (ՀՀ քր. օր 190.1-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 2 (2018թ. -0) նյութ, որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է՝ արդարացման հիմքով:

Առևտրային կաշառքի (ՀՀ քր. օր 200-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 18 (2018թ. -22) նյութ, որոնցով (2018թ. -14) հարուցվել է քրեական գործ (2018թ. - 6-ով՝ մերժվել է արդարացման, 1-ով՝ ոչ արդարացման հիմքերով): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 27 (2018թ. -23) քրեական գործ, որից ավարտվել է 10 (2018թ. -12) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 6 (2018թ. -8) գործի վարույթ կարճվել է արդարացման, 4-ինը (2018թ. -2)՝ ոչ արդարացման հիմքերով (2018թ. -2 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան): 5 (2018թ. -5) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 2 (2018թ. -0) գործ միացվել է, իսկ 9 (2018թ. -6) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 27 (2018թ. -23) քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 3 (2018թ. -3) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 2 (2018թ. -3) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 2 (2018թ. -3) անձի մեղադրանք է առաջադրվել, 1 (2018թ . -0) անձի քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով, իսկ 2 (2018թ . -0) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ. (2018թ. -դատի է տրվել 3 անձ):

Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու (ՀՀ քր. օր 201-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 2 նյութ (2018թ. -3), որոնցով հարուցվել են քրեական գործեր(2018թ . -3): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 (2018թ. -7) քրեական գործ, որից 1-ը միացվել է, իսկ 1 գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

2018թ. ընթացքում քննված քրեական գործերից 1 գործի վարույթ կարճվել է արդարացման, իսկ 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: 2 գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 3 գործ ուղարկվել է ըստ ենթակայության:

Ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 214-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 154 (2018թ. -76) նյութ, որից 78-ով (2018թ. -54) հարուցվել է քրեական գործ, 72-ով (2018թ. -20) քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման, 4-ինը (2018թ. -2)՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 149 (2018թ. -98) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 47 (2018թ. -38) քրեական գործի վարույթ, այդ թվում 30 (2018թ. -31) գործի վարույթ կարճվել է արդարացման, 15-ինը (2018թ. -5)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 2 (2018թ. -2) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 12 (2018թ. -3) գործի վարույթ կասեցվել է, որից 10-ինը (2018թ. -1)՝ անձը հայտնի չլինելու, 2-ինը (2018թ. -2)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 20 (2018թ. -5) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 13 (2018թ. -10) գործ միացվել է, իսկ 57 (2018թ. -42) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 149 (2018թ. -98) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 39 (2018թ. -23) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 39 (2018թ. -23) անձանցից 35-ի (2018թ. -15) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 34 (2018թ. -16) անձի մեղադրանք է առաջադրվել: 3 (2018թ. -1) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք (2018թ. -1) բավարարվել են, 2 (2018թ. -0) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 10 (2018թ. -7) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 0 (2018թ. -1)՝ արդարացման, 10-ինը (2018թ. -6)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 2 (2018թ. -2) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 26 (2018թ. -14) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգություն կատարելու (ՀՀ քր. օր 215.1-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ: Վարույթում քննվել է 2 քրեական գործ, որից 1-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 քրեական գործի վարույթ կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով:

Վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ, որի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելու (ՀՀ քր. օր 223-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում քննվել է նախորդ տարվանից փոխանցված 1 քրեական գործ, որի վարույթը կասեցվել է այլ հիմքով:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգության (ՀՀ քր. օր 235.1-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նախապատրաստվել է 2 նյութ, հարուցվել է 2 քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 քրեական գործ, որոնք ուղարկվել են ըստ քննչական ենթակայության:

Նշված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր հափշտակելու կամ շորթելու (ՀՀ քր. օր 238-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 1 նյութ (2018թ.-1), հարուցվել և վարույթում քննվել է 1 քրեական գործ (2018թ.-1), որի նախաքննությունը փոխանցվել է 2020թ. (2018թ.-քննված քրեական գործի վարույթը կարճվել է արդարացման հիմքով):

Քննված քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 8 անձ, որից 2-ը ձերբակալվել են, 8 անձի մեղադրանք է առաջադրվել, 2 անձի վերաբերյալ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են և 2 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 անձանց նկատմամբ ընտրված խափանման միջոցները վերացվել են դատարանի կողմից: 5 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, իսկ 3 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնական դիրքի օգտագործմամբ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության (ՀՀ քր. օր 267.1-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նախապատրաստվել է 1 նյութ, հարուցվել է 1 քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 քրեական գործ, որոնցից 1-ը ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, իսկ երկրորդի նախաքննությունը 2019թ. ընթացքում չի ավարտվել:

Քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Պաշտոնական դիրքի օգտագործմամբ ապօրինի որսի (ՀՀ քր. օր 294-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 քրեական գործ, որի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Քննված քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 5 անձ, որոնց մեղադրանք է առաջադրվել, նրանցից 2-ի նկատմամբ կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, իսկ մյուսը՝ բավարարվել և միաժամանակ վերջինիս նկատմամբ կիրառվել է գրավ: Նշված 5 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնական դիրքն օգտագործելով ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման (ՀՀ քր. օր 296-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 6 (2018թ. -1) նյութ, որոնցով հարուցվել է քրեական գործ (2018թ. -1): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 8 (2018թ. -2) քրեական գործ, որից 1-ի վարույթը կարճվել է արդարացման հիմքով, 1-ը (2018թ. -1) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 4 քրեական գործի վարույթ կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով, 2-ի (2018թ . -1)՝ նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հոդվածով քննված քրեական գործով քրեական հետապնդման են ենթարկվել 12 (2018թ. -5) անձինք, որոնց մեղադրանք է առաջադրվել, նրանցից 3-ի նկատմամբ կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը մերժվել է, իսկ 2՝ բավարարվել և միաժամանակ 2-ի նկատմամբ կիրառվել է գրավ: Նշված 12 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

2018թ. քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված 5 անձանցից 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3-ը դատի են տրվել, նրանցից 1-ը գտնվել է կալանքի տակ, իսկ 2 անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ. :

Պաշտոնական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 308-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 571 (2018թ. -396) նյութ, որից 284-ով (2018թ. -214) հարուցվել է քրեական գործ, 271-ով (2018թ. -170)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 260-ը (2018թ. -160)՝ արդարացման, իսկ 11-ը (2018թ. -10)՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 496 (2018թ. -311) քրեական գործ, որից ավարտվել է 150 (2018թ. -133) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 119 (2018թ. -103) գործի վարույթ կարճվել է արդարացման, 15-ինը (2018թ. -14)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 16 (2018թ. -16) քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 16 (2018թ. -13) գործի վարույթ կասեցվել է, որից 12-ինը (2018թ. -12)՝ անձը հայտնի չլինելու, 3-ինը (2018թ. -1)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 1-ինը (2018թ. -0)՝ այլ հիմքերով: 84 (2018թ. -22) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 87 (2018թ. -28) գործ միացվել է, իսկ 159 (2018թ. -115) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 496 (2018թ. -311) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 124 (2018թ. -78) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 124 (2018թ. -78) անձանցից 17-ը (2018թ. -9) ձերբակալվել է, որից 8-ը (2018թ. -1)՝ ազատվել ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 109-ի (2018թ. -72) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 109 (2018թ. -73) անձի մեղադրանք է առաջադրվել: 10 (2018թ. -8) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 0-ն (2018թ. -1)՝ մերժվել է, 10-ը (2018թ. -7)՝ բավարարվել, 3 (2018թ. -2) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 19 (2018թ. -17) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 (2018թ. -2) մեղադրյալ կալանքից ազատվել է դատախազի կողմից: 21 (2018թ. -26) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 5-ինը (2018թ. -7)՝ արդարացման, 16-ինը (2018թ. -19)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 45 (2018թ. -28) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 58 (2018թ. -39) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ., նշված անձանցից 7-ը (2018թ. -1) գտնվել է կալանքի տակ:

Պաշտոնական լիազորություններն անցնելու (ՀՀ քր. օր 309-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 165 (2018թ. -164) նյութ, որից 97-ով (2018թ. -115) հարուցվել է քրեական գործ, 58-ով (2018թ. -41) քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով, 3-ինը (2018թ. -1)՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 179 (2018թ. -163) քրեական գործ, որից ավարտվել է 86 (2018թ. -77) քրեական գործի վարույթ,

որից 78 (2018թ. -73) քրեական գործի վարույթ կարճվել է արդարացման, 2-ի վարույթ (2018թ . -1)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 6 (2018թ . -3) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 16 (2018թ. -17) գործի վարույթ կասեցվել է, որից 16-ինը (2018թ. -16) անձը հայտնի չլինելու, 0-ինը (2018թ. -1)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 24 (2018թ. -19) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 27 (2018թ. -26) գործ միացվել է, իսկ 26 (2018թ. -21) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 179 (2018թ. -163) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 21 (2018թ. -23) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 16 (2018թ. -23) անձանց վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 13 (2018թ. -23) անձի մեղադրանք է առաջադրվել: 4 (2018թ. -1) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: 6 (2018թ. -6) անձ դատի է տրվել: 11 (2018թ. -15) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու (ՀՀ քր. օր 310-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

Նույն ժամանակահատվածում մեկ այլ հոդվածով քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում 310-րդ հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ՝ որին առաջադրվել է մեղադրանք և նրա վերաբերյալ քննվող քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ նախապատրաստվել է 3 նյութ, որից 2-ով հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով: Վարույթում քննվել է 2 քրեական գործ: 1 քրեական գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 1 գործի նախաքննություն մնացել է անավարտ:

2018թ. ընթացքում նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձ չի եղել:

Ապօրինի հարստանալու (ՀՀ քր. օր 310.1-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 4 քրեական գործ, որոնցից ավարտվել է ընդամենը 1-ը՝ քրեական գործով վարույթը կարճվել է արդարացնող հիմքով: 1 քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, իսկ 2 քրեական գործով նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 6 անձ, որոնց մեղադրանք է առաջադրվել, նրանցից 1-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, իսկ մնացած 5-ի վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Կաշառք ստանալու (ՀՀ քր. օր 311-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 162 (2018թ. -147) նյութ, որից 133-ով (2018թ. -114) հարուցվել է քրեական գործ, 26-ով (2018թ. -21)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, 2-ով (2018թ. -2)՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 256 (2018թ. -193) քրեական գործ, որից ավարտվել է 95 (2018թ. -67) քրեական գործի վարույթ, այդ թվում 55 (2018թ. -43) գործի վարույթ կարճվել է արդարացման, 3-ինը (2018թ. -4)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 37 (2018թ. -20) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 13 (2018թ. -11) գործի վարույթ կասեցվել է, որից 11-ինը (2018թ. -9)՝ անձը հայտնի չլինելու, 1-ինը (2018թ. -2)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 1-ինը (2018թ. -0)՝ այլ հիմքերով: 21 (2018թ. -26) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 56 (2018թ. -25) գործ միացվել է, իսկ 71 (2018թ. -64) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 256 (2018թ. -193) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 136 (2018թ. -87) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 136 (2018թ. -87) անձանցից 34-ը (2018թ. -23) ձերբակալվել է, որից 14-ը (2018թ. -2) ազատվել է ձերբակալումից: 119-ի (2018թ. -81) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 115 (2018թ. -67) անձի մեղադրանք է առաջադրվել: 33 (2018թ. -28) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 5-ը (2018թ. -1) մերժվել է, 28-ը (2018թ . -27) բավարարվել է, 14 (2018թ . -9) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 16 (2018թ. -10) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 մեղադրյալ (2018թ. -3) ազատվել է կալանքից դատախազի կողմից: 11 (2018թ. -3) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման 1 (2018թ. -8) անձի՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 52 (2018թ. -43) անձ, որից 12-ը (2018թ. -18) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 72 (2018թ. -12) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ., նշված անձանցից 6-ը (2018թ. -10) գտնվել են կալանքի տակ:

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քր. օր 311[1]-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 30 (2018թ. -166) նյութ, որոնցով հարուցվել է 24 (2018թ. -143) քրեական գործ, 5-ով (2018թ.- 11) քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով, իսկ 1 նյութ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 53 (2018թ. -160) քրեական գործ, որից ավարտվել է 39 (2018թ. -34) քրեական գործի վարույթ, այդ թվում 19 (2018թ. -28) գործի վարույթ կարճվել է արդարացման, 3-ինը (2018թ. -2)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 17 (2018թ . -4) գործ մեղադրական եզրակացությամբ

ուղարկվել է դատարան: 2 (2018թ. -1) գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, 1 (2018թ. -3) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 11 (2018թ. -24) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 53 (2018թ. -160) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 82 (2018թ. -58) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 82 (2018թ. -58) անձանցից 4-ը (2018թ. -12) ձերբակալվել է, 3-ը (2018թ. -4) ազատվել է ձերբակալումից: 54-ի (2018թ. -10) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 51 (2018թ. -44) անձի մեղադրանք է առաջադրվել: 7 (2018թ. -10) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան որոնք բավարարվել են, 6 (2018թ. -2) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 11 (2018թ. -7) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 մեղադրյալ կալանքից ազատվել է, որից 2-ը դատախազի, 1-ը՝ դատարանի կողմից: 14 (2018թ. -11) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 31-ինը (2018թ. -14)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 26 (2018թ. -17) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 11 (2018թ. -2) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելու (ՀՀ քր. օր 311[2]-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2018թ. -1) նյութ, որով հարուցվել է քրեական գործ (2018թ. -1): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 (2018թ. -5) քրեական գործ, որից 1 (2018թ. -1) գործի վարույթ կարճվել է արդարացման հիմքով, 1 (2018թ. -1) գործ միացվել է (2018թ. -3 գործի նախաքննություն մնացել է անավարտ):

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 2 (2018թ. -5), ինչպես նաև այլ հոդվածներով քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 11 (2018թ. -1 որի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով) անձ: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 8-ին մեղադրանք է առաջադրվել, 1 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 4-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 2 անձ, իսկ քրեական հետապնդման ենթարկված 4 անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Կաշառք տալու (ՀՀ քր. օր 312-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 18 (2018թ. -47) նյութ, որից 14-ով (2018թ.- 39) հարուցվել է քրեական գործ, 4-ով (2018թ.- 4) քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացնող հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 42 (2018թ. -65) քրեական գործ, որից ավարտվել է 22 (2018թ. -26) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 7 (2018թ. -5) գործի վարույթ կարճվել է արդարացման, 1-ինը (2018թ. -5)՝ ոչ

արդարացման հիմքերով, իսկ 14 (2018թ. -16) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 3 (2018թ.- 3) գործի վարույթ կասեցվել է, այդ թվում՝ 1-ը (2018թ.- 1)՝ անձը հայտնի չլինելու, 2-ը (2018թ.- 2)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքերով: 5 (2018թ. -6) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 5 (2018թ. -10) գործ միացվել է, իսկ 7 (2018թ. -20) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 152 (2018թ. -137) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 152 (2018թ. -137) անձանցից 10-ը (2018թ. -20) ձերբակալվել է, որից 4-ը (2018թ. -10) ազատվել է ձերբակալումից: 117 անձի (2018թ. -79) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 89 (2018թ. -93) անձի մեղադրանք է առաջադրվել: 10 (2018թ. -13) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 3-ը (2018թ. -2) մերժվել է, 7-ը (2018թ. -11)՝ բավարարվել, 5 (2018թ. -7) անձի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ: 2 (2018թ. -0) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 27 (2018թ. -31) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 12-ինը (2018թ. -2)՝ արդարացման, 15-ինը (2018թ. -29)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 43 (2018թ. -60) անձ, որից 3-ը (2018թ. -7) գտնվել է կալանքի տակ: Քրեական հետապնդման ենթարկված 82 (2018թ. -23) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ., նշված անձանցից 1-ը (2018թ. -4) գտնվել է կալանքի տակ:

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը (ՀՀ քր. օր 312[1]-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 2 (2018թ.- 14) նյութ, որից 1-ով (2018թ.- 11) հարուցվել է քրեական գործ, իսկ մյուսով (2018թ.- 0) քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացնող հիմքով: Վարույթում քննվել է 6 (2018թ.- 12) քրեական գործ, որից ավարտվել է 5 (2018թ.-4) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 5 (2018թ.- 2) գործով վարույթ կարճվել է, որից 4-ը (2018թ.-1)՝ արդարացման, 1-ը (2018թ.-1)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 1 (2018թ.-6) քրեական գործով նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 93 (2018թ. -120) անձ: 81 (2018թ. -101) անձի մեղադրանք է առաջադրվել: 24 (2018թ. -16) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 47-ինը (2018թ. -47)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 2 (2018թ. -2) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 13 (2018թ. -55) անձանց վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2020թ. :

Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու (ՀՀ քր. օր 312.2-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

Հաշվետու ժամանակահատվածում քննված քրեական գործերով նշված հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ, ում մեղադրանք է առաջադրվել և վերջինս դատի է տրվել, ընդ որում վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է եղել կալանավորումը:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ հարուցվել է 1 քրեական գործ, որը միացվել է այլ քրեական գործի:

Նույն ժամանակաշրջանում նշված հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 3 անձ, որոնց վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ. :

Կաշառքի միջնորդության (ՀՀ քր. օր 313-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2018թ.- 3) նյութ, որով (2018թ.-1) հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 2 (2018թ.-1) քրեական գործ, որից 1-ը միացվել է, 1-ի (2018թ.-1) նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 16 (2018թ. -17) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 16 (2018թ. -17) անձանցից 11-ի (2018թ. -13) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 9 (2018թ. -4) անձի մեղադրանք է առաջադրվել: 3 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով (2018թ. -1 անձի՝ արդարացման, 2-ինը՝ ոչ արդարացման): Դատի է տրվել 4 (2018թ. -5) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 9 (2018թ. -9) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնեական կեղծիքի (ՀՀ քր. օր 314-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 164 (2018թ. -143) նյութ, որից 114-ով (2018թ. -100) հարուցվել է քրեական գործ, 36-ով (2018թ. -31) քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, իսկ 12-ով (2018թ. -11)՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 181 (2018թ. -139) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 87 (2018թ. -69) քրեական գործի վարույթ, այդ թվում 46 (2018թ. -41) գործի վարույթ կարճվել է արդարացման, 26-ինը (2018թ. -10)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 15 (2018թ. -18) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 5 (2018թ. -7) գործի վարույթ կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով: 15 (2018թ. -8) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 21 (2018թ. -19) գործ միացվել է, իսկ 53 (2018թ. -63) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել 71 (2018թ. -117) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 71 (2018թ. -117) անձանցից 1-ը (2018թ. -8) ձերբակալվել է: 62 անձի (2018թ. -93) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 64 (2018թ. -95) անձի մեղադրանք է առաջադրվել: 3 (2018թ. -5) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որից 1-ը (2018թ. -0) մերժվել է, 2-ը (2018թ. -5) բավարարվել, 1-ի (2018թ. -5) նկատմամբ կիրառվել է գրավ: 27 (2018թ. -50) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 5-ինը (2018թ. -1)՝ արդարացման, 22-ինը (2018թ. -49)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 19 (2018թ. -32) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 25 (2018թ. -29) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Հայտարարագրերը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու (ՀՀ քր. օր 314.2-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նախապատրաստվել է 6 նյութ, որից 3-ով հարուցվել է քրեական գործ, 3-ով քրեական գործ հարուցելը մերժվել է, որից 2-ը՝ արդարացման, 1-ը՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 3 քրեական գործ, որոնցով վարույթը կարճվել է արդարացնող հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում քննված քրեական գործերով նշված հոդվածով քրեական հետապնդման է ենթարկվել 2 անձ, որոնց մեղադրանք է առաջադրվել: Վերջիններիս նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով:

Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու (ՀՀ քր. օր 314.3-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նախապատրաստվել է 2 նյութ, որից 1-ով հարուցվել է քրեական գործ, 1-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 քրեական գործ, որի վարույթը կարճվել է արդարացման հիմքով:

Նշված հոդվածով հաշվետու ժամանակահատվածում քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու (ՀՀ քր. օր 315²-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 49 (2018թ.- 13) նյութ, որից 29-ով (2018թ.-7) հարուցվել է քրեական գործ, 20-ով (2018թ.- 6)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, այդ թվում 19-ը (2018թ.- 6)՝ արդարացման, 1-ը (2018թ.- 0)՝ ոչ արդարացման հիմքերով: Հաշվետու ժամանակահատվածում նշված

հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 36 (2018թ.- 10) քրեական գործ, որից ավարտվել է 11 (2018թ.- 4) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 9 (2018թ.- 4) գործի վարույթ կարճվել է, որից՝ 8-ը (2018թ.- 3)՝ արդարացման, 1-ը (2018թ.- 1)՝ ոչ արդարացման հիմքերով: 2 քրեական գործ (2018թ.- 0) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 (2018թ.- 0) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 8-ը (2018թ.- 3)՝ միացվել է, իսկ 16 (2018թ.-2) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 9 (2018թ.- 0) անձ: 7 անձի մեղադրանք է առաջադրվել: 1 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 1-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 5 անձ: 2 անձի վերաբերյալ քննվող քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ անօրինական միգրացիայի կազմակերպման (ՀՀ քր. օր 329.1-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նախապատրաստվել է 4 նյութ, որից 1-ով հարուցվել է քրեական գործ, իսկ 3-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 քրեական գործ, որը միացվել է այլ քրեական գործի:

Քննված քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 1 անձ, որի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը և վերջինիս վերաբերյալ քննվող քրեական գործի նախաքննությունը հաշվետու ժամանակահատվածում մնացել է անավարտ:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու (ՀՀ քր. օր 332-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 2 (2018թ.- 3) նյութ, որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով (2018թ.-3-ով հարուցվել է քրեական գործ): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քրեական գործ չի քննվել (2018թ.- 3 քրեական գործերից 2-ը միացվել են 3-րդ գործին, որի նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ):

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու (ՀՀ քր. օր 341-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2018թ.- 5) նյութ, որով հարուցվել է քրեական գործ (2018թ.- 5): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 քրեական գործ (2018թ.-6), որը արդարացնող հիմքով կարճվել է (2018թ.- 5) :

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին ապօրինի միջամտելու (ՀՀ քր. օր 342.1-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նախապատրաստվել է 2 նյութ, որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացնող հիմքով:

Ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու (ՀՀ քր. օր 348-րդ հոդված) վերաբերյալ 2019թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ նախապատրաստվել է 3 նյութ, որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Ապացույցները կեղծելու (ՀՀ քր. օր 349-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 9 (2018թ.- 13) նյութ, որից 7-ով (2018թ.- 3) հարուցվել է քրեական գործ, 2-ով (2018թ.- 10) քրեական գործ հարուցելը մերժվել է: Հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննվել է 7 (2018թ.- 8) քրեական գործ, որից ընդամենը ավարտվել է 4-ը (2018թ.- 7), այդ թվում՝ 3 (2018թ.- 7) քրեական գործով վարույթ կարճվել է արդարացման հիմքով, 1 (2018թ.- 0) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 (2018թ.-1) գործ միացվել է, 2-ի նախաքննությունը 2019թ. ընթացքում մնացել է անավարտ:

Նշված հոդվածով քննված քրեական գործերով քրեական հետապնդում է իրականացվել 1 (2018թ . -1) անձի նկատմամբ, որի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2018թ. -1):

Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը (ՀՀ քր. օր 352-րդ հոդված) վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել քրեական գործեր չեն քննվել:

2018թ. ընթացքում նախապատրաստվել է 2 նյութ, որոնցով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Պաշտոնատար անձի կողմից դատական ակտը դիտավորությամբ չկատարելը (ՀՀ քր. օր 353-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 27 (2018թ.- 22) նյութ, որից 11-ով (2018թ.- 11) հարուցվել է քրեական գործ, 16-ով (2018թ.-10) քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով (2018թ.- 1-ով՝ ոչ արդարացման հիմքով): Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 20 (2018թ.- 16) քրեական գործ, որից ավարտվել է 11 (2018թ.- 9) քրեական գործ, այդ թվում՝ 11-ը (2018թ.- 9) կարճվել է, որից 10-ը (2018թ.- 8)՝ արդարացման, 1-ը (2018թ.- 1)՝ ոչ արդարացման հիմքերով: 3 քրեական գործ (2018թ.- 1) ուղարկվել է ըստ քննչական

ենթակայության, 1 գործ միացվել է, իսկ 5 գործի (2018թ.- 6) նախաքննությունը 2019թ. ընթացքում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել ընդհանուրը 3 (2018թ. -1) անձ: նշված անձանցից 1-ին մեղադրանք է առաջադրվել և վերջինս դատի է տրվել, իսկ 2 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով (2018թ. -1 անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2019թ.) :

Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության (ՀՀ քր. օր 375-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 68 (2018թ.-87) նյութ, որից 65-ով (2018թ.-83) հարուցվել է քրեական գործ, 2-ով քրեական գործ հարուցելը մերժվել է (2018թ.- 4), այդ թվում՝ 1-ը (2018թ.- 2)՝ արդարացման, 1-ը (2018թ.- 2)՝ ոչ արդարացման հիմքով: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 123 (2018թ.- 132) քրեական գործ, որից ընդամենն ավարտվել է 77 (2018թ.- 53) գործ, այդ թվում՝ 58-ով (2018թ.- 36) վարույթը կարճվել է, որից 42-ը (2018թ.- 28)՝ արդարացման, 16-ը (2018թ.- 8)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 19 (2018թ.- 17) գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 1 (2018թ.- 1) գործով վարույթը կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, 4 (2018թ.- 13) գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 10 (2018թ.-15) գործ միացվել է, իսկ 31 (2018թ.- 50) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդման են ենթարկվել 61 (2018թ. -59) անձինք:

Քրեական հետապնդման ենթարկված 54 (2018թ. -41) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 46 (2018թ. -24) անձի մեղադրանք է առաջադրվել: 1 (2018թ. -0) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 29 (2018թ. -16) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից 10-ինը (2018թ. -8)՝ արդարացման, 19-ինը (2018թ. -8)՝ ոչ արդարացման հիմքերով: Դատի է տրվել 19 (2018թ. -35) անձ: Քրեական հետապնդման ենթարկված 13 (2018թ. -14) անձանց վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Ամփոփելով նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի ընդհանուր ցուցանիշները հարկ է արձանագրել, որ.

2019թ. հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է **95-ով կամ 4.7%-ով ավել** նյութ, քան 2018թ. ընթացքում (2019թ.-2083 նյութ-2018թ.-1988 նյութ): Սակայն նշվածին հակառակ՝ **70-ով կամ 4.7%-ով նվազել է** հարուցված քրեական գործերի թիվը (2019թ.-1399 գործ-2018թ.-1469 գործ):

2019թ. ընթացքում վարույթում քննվել է **553-ով կամ 26.6%-ով ավել** քրեական գործ քան 2018թ. ընթացքում (2019թ.-2625 գործ-2018թ.-2072 գործ):

Դրական ցուցանիշներ են արձանագրվել ընդհանուր ավարտված գործերի թվաքանակում: Այսպես. 2019թ. ընթացքում վարույթում քննված քրեական գործերից ավարտվել է **257-ով կամ 34.3%-ով ավել** քրեական գործի վարույթ, քան՝ 2018թ.-ին (2019թ.-1006 գործ-2018թ.-749 գործ): **104-ով կամ 22.03%-ով աճել** է արդարացման հիմքով վարույթը կարճված գործերի քանակը (2019թ.-576 գործ-2018թ.-472 գործ): **64-ով կամ 50.7%-ով ավել** քրեական գործով վարույթ է կարճվել ոչ արդարացման հիմքով, քան 2018թ. ընթացքում (2019թ.-190 գործ-2018թ.-126 գործ): Կտրուկ աճ է արձանագրվել նաև մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի ցուցանիշներում: Մասնավորապես՝ 2019թ. ընթացքում **89-ով կամ 58.9%-ով ավել** քրեական գործ է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան քան 2018թ.-ին (2019թ.-240 գործ-2018թ.-151 գործ):

38-ով կամ 59.3%-ով ավել (2019թ.-102 գործ-2018թ.-64 գործ) քրեական գործի վարույթ է կասեցվել անձը հայտնի չլինելու հիմքով, **8-ով կամ 34.7%-ով ավել** (2019թ.-31 գործ-2018թ.-23 գործ)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու և **4-ով ավել** (2019թ.-5 գործ-2018թ.-1 գործ)՝ այլ հիմքերով:

Թեև զգալի աճ է արձանագրվել 2019թ. ընթացքում վարույթը չավարտված գործերի ցուցանիշներում՝ հաշվետու ժամանակաշրջանում վարույթը չավարտված և հաջորդ տարի փոխանցված գործերի քանակը **աճել է 141-ով կամ 20.7%-ով** (2019թ.-819 գործ-2018թ.-678 գործ), սակայն նկատի ունենալով, այն, որ նույն ժամանակահատվածում նախաքննական մարմինների վարույթում ընդհանուրը **553-ով կամ 26.6%-ով ավել** (2019թ.-2625 գործ-2018թ.-2072 գործ) քրեական գործ է քննվել, քան 2018թ. ընթացքում, ուստի կարելի է արձանագրել, որ նման պայմաններում վարույթը չավարտված գործերի քանակում արձանագրված աճը բացասական չէ, քանի որ ինչպես քննված գործերի քանակն է զգալի ավել եղել, այնպես էլ ոչ արդարացման հիմքով կարճված և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի քանակը, ինչը խոսում է այն մասին, որ 2019թ. ընթացքում ընդհանուր առմամբ կատարվել է առավել արդյունավետ և նպատակային քննություն:

Ամփոփելով քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանց ընդհանուր ցուցանիշները հարկ է արձանագրել, որ.

2019թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով **302-ով կամ 31.4%-ով ավել** անձ է ենթարկվել քրեական հետապնդման, քան 2018թ. ընթացքում (2019թ.-1262 անձ-2018թ.-960 անձ):

Քրեական հետապնդման ենթարկված անձանց ցուցանիշներում **18-ով կամ 15.9%-ով նվազել է** (2019թ.-95 անձ-2018թ.-113 անձ) ձերբակալվածների թիվը, ինչը դրական ցուցանիշ է, քանի որ զուգահեռ 28-ով **կամ 40.5%-ով** նվազել է (2019թ.-41 անձ-2018թ.-69

անձ) նաև ձերբակալումից ազատված անձանց թիվը, ինչը վկայում է այն մասին, որ 2019թ. զգալի նվազել է անհիմն ձերբակալումների և ձերբակալումից ազատման դեպքերը:

Դրական աճ է արձանագրվել մեղադրանք առաջադրված անձանց թվում, մասնավորապես՝ 2019թ. ընթացքում **262-ով կամ 35.1%-ով ավել** (2019թ.-1018 անձ-2018թ.-746 անձ) անձի է մեղադրանք առաջադրվել քան 2018թ.ին:

Համեմատական աճ է արձանագրվել մեղադրյալների նկատմամբ կալանավորման վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների թվում, այն է՝ 2019թ.-ին **8-ով կամ 8.8%-ով ավել** (2019թ.-98 անձ-2018թ.-90 անձ) անձի վերաբերյալ է նման միջնորդություն ներկայացվել դատարաններ, քան 2018թ.-ին, սակայն մեղադրյալների ընդհանուր թվաքանակում կալանքի ներկայացվածների տեսակարար կշիռը էական նվազում է արձանագրել: Այսպես՝ 2019 թվականին 1018 մեղադրյալներից 98-ի կամ 9,6%-ի նկատմամբ է կալանավորման միջնորդություն ներկայացվել, մինչդեռ 1018 թվականին՝ 746 մեղադրյալներից 90-ի կամ 12%-ի:

2019թ. ընթացքում դատարան ներկայացված միջնորդություններից **7-ով կամ 116.6%-ով ավել** անձանց (2019թ.-13 անձ-2018թ.-6 անձ) վերաբերյալ մերժվել և **1-ով կամ 1.19%-ով ավել** անձանց (2019թ.-85 անձ-2018թ.-84 անձ) վերաբերյալ բավարարվել են, ինչպես նաև **13-ով կամ 39.3%-ով ավել** անձանց (2019թ.-46 անձ-2018թ.-33 անձ) նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավ:

Դրական ցուցանիշ է արձանագրվել կալանքից ազատված անձանց թվաքանակում: Մասնավորապես 2019 թվականի ընթացքում **22-ով կամ 66.6%-ով պակաս** մեղադրյալ է (2019թ.-9 անձ-2018թ.-31 անձ) կալանքից ազատվել: Նշված ցուցանիշները վկայում են այն մասին, որ դատարանների կողմից բավարարված միջնորդությունները եղել են հիմնավոր ու պատճառաբանված, ինչի արդյունքում անգամ նախաքննության հետագա փուլերում անձինք կալանքից չեն ազատվել:

2019 թվականի ընթացքում **79-ով կամ 26.6%-ով ավել** անձի (2019թ.-375 անձ-2018թ.-296 անձ) նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որից **48-ով կամ 78.6%-ով ավել** (2019թ.-109 անձ-2018թ.-61 անձ)՝ արդարացման, **31-ով կամ 13.1%-ով ավել** (2019թ.-266 անձ-2018թ.-235 անձ)՝ ոչ արդարացման հիմքով:

Կտրուկ դրական աճ է արձանագրվել դատի տրված անձանց ցուցանիշում, մասնավորապես՝ 2019 թվականի ընթացքում **100-ով կամ 34.7%-ով ավել անձ** է (2019թ.-388 անձ-2018թ.-288 անձ) դատի տրվել:

114-ով **կամ 29.5%-ով** ավել (2019թ.-500 անձ-2018թ.-386 անձ) քրեական հետապնդման ենթարկված անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը 2019 թվականի ընթացքում մնացել է անավարտ: Նման աճը ինքնին չի կարող դիտվել բացասական, քանի որ այն պայմանավորված է ինչպես վարույթում քննված գործերի կտրուկ աճով (2019թ.-2625 գործ-2018թ.-2072 գործ), այնպես էլ քրեական հետապնդման ենթարկված անձանց թվի աճով (2019թ.-1262 անձ-2018թ.-960 անձ):

Համեմատելով և վերլուծելով կոռուպցիոն բնույթի առավել տարածված և ուշադրության արժանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ, 178-րդ, 179-րդ, 190-րդ, 200-րդ, 214-րդ, 308-րդ, 310-րդ, 310.1-րդ, 311-րդ, 311[1]-րդ 312-րդ, 312[1]-րդ, 313-րդ, 314-րդ և 315[2]-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ վարույթում քննված և դատարան ուղարկված գործերի և դրանցով դատի տրված անձանց ցուցանիշները, պարզ է դառնում, որ.

2019թ. ընթացքում **պաշտոնեական դիրքն օգտագործելով ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու (ՀՀ քր. օր 167-րդ հոդված)** վերաբերյալ վարույթում քննվել է **3 քրեական գործ** և **քրեական հետապնդման է ենթարկվել 6 անձ,** այն դեպքում, երբ նախորդ տարի այդ փաստերով գործեր և քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Նույն ժամանակահատվածում **պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների (ՀՀ քր. օր 178-րդ հոդված)** վերաբերյալ վարույթում քննվել է **30-ով կամ 14.5%-ով ավել քրեական** գործ (2018թ.-206 գործ, 2019թ.-236 գործ), **15-ով կամ 300%-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-5 գործ, 2019թ.-20 գործ) և **դատի է տրվել 29-ով կամ 223%-ով ավել անձ** (2018թ.-13 անձ, 2019թ.-42 անձ):

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ՀՀ քր. օր 179-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **261-ով կամ 53.5%-ով ավել քրեական** գործ (2018թ.-487 գործ, 2019թ.-748 գործ), **47-ով կամ 114.6%-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-41 գործ, 2019թ.-88 գործ) և **դատի է տրվել 64-ով կամ 120.7%-ով ավել անձ** (2018թ.-53 անձ, 2019թ.-117 անձ):

Փողերի լվացման (ՀՀ քր. օր 190-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **3-ով կամ 25%-ով ավել քրեական** գործ (2018թ.-12 գործ, 2019թ.-15 գործ), նույնքան՝ 1-ական **քրեական գործ է ուղարկվել դատարան** (2018թ.-1 գործ, 2019թ.-1 գործ), բայց **դատի է տրվել 2-ով կամ 200%-ով ավել անձ** (2018թ.-1 անձ, 2019թ.-3 անձ):

Առևտրային կաշառքի (ՀՀ քր. օր 200-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **4-ով կամ 17.3%-ով ավել քրեական** գործ (2018թ.-23 գործ, 2019թ.-27 գործ), սակայն 2-**ով կամ 100%-ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-2 գործ, 2019թ.-0 գործ) և **դատի է տրվել 3-ով կամ 100%-ով պակաս անձ** (2018թ.-3 անձ, 2019թ.-0 անձ):

Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 214-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **51-ով կամ 52%-ով ավել քրեական** գործ (2018թ.-98 գործ, 2019թ.-149 գործ), նույնքան՝ 2-ական **քրեական գործ է ուղարկվել դատարան** (2018թ.-2 գործ, 2019թ.-2 գործ) և **դատի է տրվել 2-ական անձ** (2018թ.-2 անձ, 2019թ.-2 անձ):

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր 308-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **185-ով կամ 59.4%-ով ավել քրեական** գործ (2018թ.-311 գործ, 2019թ.-496 գործ), նույնքան՝ 16-**ական քրեական գործ է ուղարկվել դատարան** (2018թ.-16 գործ, 2019թ.-16 գործ), բայց **դատի է տրվել 17-ով կամ 60.7%-ով ավել անձ** (2018թ.-28 անձ, 2019թ.-45 անձ):

Ապօրինի հարստանալու (ՀՀ քր. օր 310.1-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **4-ով կամ 100%-ով ավել քրեական** գործ (2018թ.-0 գործ, 2019թ.-4 գործ) և քրեական հետապնդման է ենթարկվել 6 անձ, նրանցից 1-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, իսկ մնացած 5-ի վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը փոխանցվել է 2020թ.:

Կաշառք ստանալու (ՀՀ քր. օր 311-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **63-ով կամ 32.6%-ով ավել քրեական** գործ (2018թ.-193 գործ, 2019թ.-256 գործ), 17-**ով կամ 85%-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-20 գործ, 2019թ.-37 գործ) և **դատի է տրվել 9-ով կամ 20.9%-ով ավել անձ** (2018թ.-43 անձ, 2019թ.-52 անձ):

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քր. օր 311[1]-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **107-ով կամ 66.8%-ով պակաս քրեական** գործ (2018թ.-160 գործ, 2019թ.-53 գործ), սակայն 13-**ով կամ 325%-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-4 գործ, 2019թ.-17 գործ) և **դատի է տրվել 9-ով կամ 52.9%-ով ավել անձ** (2018թ.-17 անձ, 2019թ.-26 անձ):

Կաշառք տալու (ՀՀ քր. օր 312-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **23-ով կամ 54.7%-ով պակաս քրեական** գործ (2018թ.-42 գործ, 2019թ.-65 գործ), 2-**ով կամ 12.5%-ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-16 գործ, 2019թ.-14 գործ) և **դատի է տրվել 17-ով կամ 28.3%-ով պակաս անձ** (2018թ.-60 անձ, 2019թ.-43 անձ):

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը (ՀՀ քր. օր 312[1]-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **6-ով կամ 50%-ով պակաս քրեական** գործ (2018թ.-12 գործ, 2019թ.-6 գործ), ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ. **քրեական գործեր դատարան չեն ուղարկվել**, սակայն այլ հոդվածներով քննվող քրեական գործերով և 2018թ. և 2019թ. **դատի է տրվել 2-ական անձ** (2018թ.-2 անձ, 2019թ.-2 անձ):

Կաշառքի միջնորդության (ՀՀ քր. օր 313-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **1-ով կամ 100%-ով ավել քրեական** գործ (2018թ.-1 գործ, 2019թ.-2 գործ), ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ. **քրեական գործեր դատարան չեն ուղարկվել**, սակայն այլ հոդվածներով քննվող քրեական գործերով 2019թ. **դատի է տրվել 1-ով կամ 20%-ով պակաս անձ** (2018թ.-5 անձ, 2019թ.-4 անձ):

Պաշտոնեական կեղծիքի (ՀՀ քր. օր 314-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **42-ով կամ 30.2%-ով ավել քրեական** գործ (2018թ.-139 գործ, 2019թ.-181 գործ), **3-ով կամ 16.6%-ով պակաս քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-18 գործ, 2019թ.-15 գործ) և **դատի է տրվել 13-ով կամ 40.6%-ով պակաս անձ** (2018թ.-32 անձ, 2019թ.-19 անձ):

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու (ՀՀ քր. օր 315[2]-րդ հոդված) վերաբերյալ վարույթում քննվել է **26-ով կամ 260%-ով ավել քրեական** գործ (2018թ.-10 գործ, 2019թ.-36 գործ), **2-ով կամ 100%-ով ավել քրեական գործ է ուղարկվել դատարան քան 2018թ.-ին** (2018թ.-0 գործ, 2019թ.-2 գործ) և **դատի է տրվել 5-ով կամ 100%-ով ավել անձ** (2018թ.-0 անձ, 2019թ.-5 անձ):

Ամփոփելով վերը նշված հանցագործությունների վերաբերյալ արձանագրված ցուցանիշները՝ հարկ է փաստել, որ գրեթե բոլոր հանցատեսակներով կտրուկ աճ է արձանագրվել թե վարույթում քննված, թե դատարան ուղարկված գործերի քանակում, ինչը վկայում է 2019 թվականի ընթացքում քննչական մարմինների կողմից կատարված առավել արդյունավետ, մեծածավալ աշխատանքի, ինչպես նաև քրեական հետապնդման մարմինների և հասարակության հետ արդյունավետ համագործակցության մասին:

Չնայած այն հանգամանքին, որ որոշ հանցատեսակներով դիտվել է որոշակի նվազում, մասնավորապես դատարան ուղարկված գործերի քանակի և դատի տրված անձանց ցուցանիշներում, բայց նշված հանգամանքը պայմանավորված է 2018 թվականին ընդունված համաներման մասին ակտով, ինչպես նաև իրավապահ համակարգի որդեգրած այն քաղաքականությամբ, որ ոչ մեծ կամ միջին ծանրության կոռուպցիոն գործերով պետությանը պատճառված վնասը վերականգնելու, ինչպես նաև օրենքի պահանջների լիարժեք առկայության դեպքում կիրառվում է լայն խրախուսական գործիքակազմ և գործուն զղջալու ու այլ ոչ արդարացնող հիմքերով կայացվում են բազմաթիվ որոշումներ քրեական գործի վարույթը կարճելու մասին: Նշված նվազման հետ մեկտեղ կրկին անգամ փաստում ենք, որ գրեթե բոլոր հանցատեսակներում, մասնավորապես ավելի ծանր հանցագործությունների մասով արձանագրվել բացահայտումների կտրուկ աճ:

2019թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի թվով 100 նախապատրաստված և ավարտված նյութերով ու քննված և ավարտված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կազմել է 2.011.559.889 (2018թ. - 4.629.549.320) ՀՀ դրամ: Պատճառված ընդհանուր վնասից վերականգնվել է 1.003.689.227 (2018թ. - 3.938.873.757) ՀՀ դրամը:

Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականից սկսած հանրային ակտիվ նախաձեռնողականության, համագործակցության արդյունքում տեղի ունեցած լայնածավալ բացահայտումներով հարուցված հատկապես ծանր և առանձնապես ծանր

հանցագործություններով վարույթները դեռևս չեն ավարտվել: Առանձին դեպքերում նաև քննության ձգձգումներին հանգեցնող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից զատ՝ դատախազության կողմից խնդիր է դրվել նաև կոռուպցիոն գործերով ենթադրյալ հանցանք կատարած անձանց առերևույթ ապօրինի ծագում ունեցող գույքը (այդ թվում նաև ՀՀ-ից դուրս գտնվող) բացահայտելու, դրանց իրական պատկանելությունը ստուգելու ուղղությամբ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն կատարելու, ինչպես նաև նշված գույքերը պետությանը վերադարձնելու կամ պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ ձեռնարկելու ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված ողջ գործիքակազմը:

Այդուհանդերձ, նշված ժամանակահատվածում քննված քրեական գործերով, որոնց ճնշող մեծամասնությունը՝ կոռուպցիոն բնույթի գործերն են, հանցագործությամբ պետությանը կամ համայնքներին պատճառված վնասը նախնական հաշվարկով (նկատի ունենալով, որ քննության ընթացքում գտնվող գործերով կարող է փոփոխվել) կազմել է շուրջ 105.7մլրդ ՀՀ դրամ՝ 2018թ. արձանագրված շուրջ 85 մլրդ ՀՀ դրամի դիմաց: Վերականգնվել է 12.4 մլրդ ՀՀ դրամի վնաս:

2019թ. քննված քրեական գործերով պետությանը, համայնքներին պատճառված նյութական վնասների վերականգնման նպատակով 10.2մլրդ դրամի չափով արգելանք է դրվել մեղադրյալների կամ ամբաստանյալների հաշիվների, շարժական կամ անշարժ գույքի վրա, ինչը 2018թ. (մոտ 7մլրդ) համեմատ ավելի է 45.7%-ով:

Հատկանշական է, որ 2018-2019թթ քննված քրեական գործերի շրջանակներում բացահայտված՝ պետությանը կամ համայնքներին պատճառված ընդհանուր վնասի չափը՝ 190.7մլրդ դրամ, ավելի քան 5.2 անգամ գերազանում է 2009-2017թթ. հայտնաբերված վնասի չափը միասն վերցրած, որը կազմում է 36.5մլրդ դրամ: Իսկ վերականգնված վնասը՝ 40.2մլրդ դրամ, նախորդող 9 տարիների ընդհանուր արդյունքը գերազանցում է 19մլրդ դրամով կամ շուրջ 90%-ով:

2019թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում 1982 (2018թ. -1545) **նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի համար առիթ են հանդիսացել՝** 915 դեպքում (2018թ. -988)՝ **ֆիզիկական և իրավաբանական անձանց** հաղորդումները, 47 դեպքում (2018թ. -25)՝ ՀԼՄ-ների հաղորդումները և 1020 դեպքում (2018թ. -532)՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատավորի կողմից իրենց լիազորությունները իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը:

2019թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանցից 530-ը (2018թ . -470) հանդիսացել են պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ:

Նշված պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներն ըստ գործունեության ոլորտների և պաշտոնների դասակարգվում են.

1. ՀՀ պաշտոնաթող նախագահ - 2 (2018թ. -0) անձ,

2. ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար - 1 (2018թ. -0) անձ,

3. Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր - 2 (2018թ. -0) անձ,

4. Դատախազ – 1, նախկին գլխավոր դատախազ - 1 (2018թ. -0) անձ,

5. Ոստիկանության աշխատակիցներ՝ 27 (2018թ. -17) անձ, այդ թվում՝

ա) ՀՀ ոստիկանության նախկին պետ և տեղակալ – 3 անձ,

բ) բաժնի պետ և տեղակալ – 2 անձ,

գ) դասակի և ջոկի հրամանատարներ – 5 անձ,

դ) անձնագրային ծառայության պետ – 1 անձ,

ե) ՔՀԲ օպերլիազոր – 2 անձ,

զ) ՀՈԲ տեսուչ (ավագ տեսուչ) – 2 անձ,

է) ՃՈ բաժանմունքի պետ և տեսուչներ (ավագ տեսուչ) – 4 անձ,

ը) հերթապահ մասի պետ – 1 անձ,

թ) ոստիկան – 7 անձ,

6. ՀՀ գյուղատնտեսության նախարարության ՍԱՊԾ աշխատակիցներ - 9 (2018թ. - 0) անձ, այդ թվում՝

ա) ՍԱՊԾ տեսչության պետ – 1 անձ,

բ) ՍԱՊԾ տարածքային պետ – 2 անձ,

գ) ՍԱՊԾ տարածքային գլխավոր մասնագետներ – 6 անձ,

7. ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք - 10 (2018թ. -12) անձ, այդ թվում՝

ա) ՊԵԿ նախկին նախագահ – 1 անձ,

բ) ՊԵԿ ներքին անվտանգության վարչության նախկին պետ – 1 անձ,

գ) ՊԵԿ փոքր հարկ վճարողների ՀՏ-վարչության բաժնի պետի տեղակալ և գլխավոր տեսուչներ– 3 անձ,

դ) հարկային տեսուչ – 1 անձ,

ե) մաքսակետի պետի տեղակալ – 1 անձ,

զ) մաքսային տեսուչ – 3 անձ,

8. Նախկին մարզպետ – 1 անձ,

9. ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցներ – 8 (2018թ. -9) անձ, այդ թվում՝

ա) մարզային քննչական վարչության բաժնի պետ – 1 անձ,

բ) քննիչներ – 7 անձ,

10. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակիցներ – 2 (2018թ. -0) անձ, այդ թվում՝

ա) նախարարի տեղակալ – 1 անձ,

բ) <<Հակատուբերկուլյոզային դիսպանսեր>> ՓԲԸ տնօրեն – 1 անձ,

11. ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ – 1 (2018թ. -0) անձ,

12. ՀՀ ՊՆ աշխատակիցներ - 4 (2018թ. -0) անձ, այդ թվում՝

ա) ՌՈ պետ – 1 անձ,

բ) զորամասի հրամանատար և տեղակալ – 2 անձ,

գ) զինկոմիսարիատի աշխատակից – 1 անձ,

13. ԱԱԾ աշխատակիցներ - 3 (2018թ. -4) անձ, այդ թվում՝

ա) բաժնի պետ – 1 անձ,

բ) օպերլիազոր – 1 անձ,

գ) աշխատակից – 1 անձ,

14. ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցներ - 10 (2018թ. -15) անձ, այդ թվում՝

ա) ՔԿՀ պետ – 2 անձ,

բ) ՔԿՀ բաժանմունքի պետ – 1 անձ,

գ) ՔԿՀ բուժակ – 1 անձ,

դ) ՔԿԾ բաժնի պետի տեղակալ – 1 անձ,

ե) կադրերի խմբի ղեկավար և մասնագետներ – 6 անձ,

15. ՀՀ ՊՎԾ աշխատակիցներ - 3 (2018թ. -0) անձ, այդ թվում՝

ա) ՊՎԾ պետ – 1 անձ,

բ) ՊՎԾ վարչության պետ և գլխավոր մասնագետ – 2 անձ,

16. ՀՀ ԱԻՆ վարչության պետի տեղակալ - 1 (2018թ. -0) անձ,

17. Մարզպետարանի վարչության պետ - 1 (2018թ. -0) անձ,

18. ՀՀ քաղաքաշինության նախարարության տարածքային բաժնի տեսուչ – 1 (2018թ . -0) անձ,

19. ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչության տարածքային բաժնի տեսուչ – 2 անձ,

20. <<ՀՀ ԱԷԿ>> ՓԲԸ տնօրեն, գլխավոր ինժեներ, բաժնի պետ – 3 անձ,

Առողջապահության ոլորտ-36 (2018թ. -14) անձ

Փոխնախարար-1

Պոլիկլինիկայի տնօրեն-3

Պոլիկլինիկայի նախկին տնօրեն-1

Բժշկական կենտրոնի տնօրեն-6

Բժշկական կենտրոնի նախկին տնօրեն-3

Բժշկական կենտրոնի տնօրենի տեղակալ-5

Ամբուլատորիայի տնօրեն-1

ՊՈԱԿ տնօրեններ-10

ՀՀ ԱՆ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի տնօրեն-1

«Գյումրու պաթոլոգիանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ տնօրեն-1

Ամբուլատորիայի տնօրեն-1

ԲԿ բաժանմունքի վարիչի տեղակալ-1

Պոլիկլինիկայի հաշվապահ-2

Կրթության ոլորտ-95 (2018թ. -35) անձ

Ինստիտուտի ռեկտոր-1
Ինստիտուտի պրոռեկտոր-1
Մարզպետարանի կրթության վարչության նախկին պետ-1
Քաղաքապետարանի աշխատակազմի վարչության պետ-1
Դպրոցի տնօրեններ-62
Դպրոցի նախկին տնօրեն-1
Դպրոցի փոխտնօրեն-2
Հատուկ դպրոցի տնօրեն-2
Հատուկ դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալ-1
Մշակույթի տան տնօրեն-1
Համալսարանի պրոռեկտոր-1
Կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն-1
Քոլեջի տնօրեններ-2
Մանկապարտեզի տնօրեններ-6
Երաժշտական դպրոցի տնօրեններ-2
Ուսումնարանի տնօրեններ-2
Ուսումնարանի նախկին տնօրեն-1
Մարզադպրոցի տնօրեններ-5
Մարզամշակութային կենտրոնի տնօրեն-1
Պատանեկության և ստեղծագործական կենտրոնի տնօրեն-1

Սոցիալական ապահովության-63 (2018թ. -56) անձ

Սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ-3
Տարածքային բաժնի պետ-2
Տարածքային բաժնի նախկին պետ-2
Տարածքային սոց. ծառայության մասնագետ-49
ԲՍՓ հանձնաժողովի նախագահ-1
Գլխավոր հաշվապահ-2
Մոնիթորինգի վարչության պետ-1
Ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության պետ-1
Վարչության պետ-2

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտ-57 (2018թ. -6) անձ

Պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ-1
Անտառտնտեսության պետ-26

Անտառապետ-5
Անտառապահներ-23
Գլխավոր հաշվապահ-1
Սևան ազգային պարկի նախկին տնօրեն-1

Տեղական ինքնակառավարման ոլորտ-113 (2018թ. -73) անձ
Վարչական շրջանի ղեկավար-3
Վարչական շրջանի ղեկավարի տեղակալ-2
Համայնքապետարանի հաշվապահ-3
Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր քարտուղար-1
Քաղաքապետ-1
Համայնքի ղեկավար-74
Համայնքի նախկին ղեկավար-20
Համայնքի ղեկավարի տեղակալ-1
Համայնքի ֆինանսական բաժնի պետ-1
Համայնքի կոմունալ բաժնի պետ-2
Քաղաքապետարանի բաժնի առաջատար մասնագետ-3
Գլխավոր մասնագետ-1
Բաժնի պետ-1

Զինված ուժեր - 164 (2018թ. -131) անձ
Զորամասի հրամանատար-11
Զորամասի նախկին հրամանատար-2
Հրամանատարի տեղակալ-17
Դասակի հրամանատար-9
Ջոկի հրամանատար-3
Դիվիզիոնի հրամանատար-4
Վաշտի հրամանատար-14
Մարտկոցի հրամանատար-4
Ծառայության պետ-26
Գումարտակի շտաբի պետ-1
Զորամասի հրետանու շտաբի պետ-1
Գումարտակի հրամանատար-5
Սպառազինության գծով տեղակալ-1
Զորամասի շտաբի պետի տեղակալ-2
ՎՔՆ ծառայության պետ-1
Կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ-2
Կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման բաժնի նախկին պետ-2

Ռազմաբժշկական հանձնաժողովի նախագահի տեղակալ-1
Կադրերի բաժնի պետ-3
Բաժնի հերթապահ-2
Պահեստի պետ-6
Նախկին զինկոմիսար-2
Զինկոմիսար-2
Զինկոմիսարի տեղակալ-1
Բժիշկ-5
Վիրաբուժական կլինիկայի ղեկավար-1
Ավտոմոբիլային ծառայության պետ-3
Գաղտնի մասի պետ-1
Էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ-1
Զորամասի ուսումնական կենտրոնի պետ-1
Զորահավաքային բաժանմունքի պետ-3
Զորակոչի բաժանմունքի տեսուչ-1
Հսկողության պետ-1
Տեխնիկական մասի պետ-3
Տեխնիկական մասի տեխնիկ-1
Համալրման բաժանմունքի տեսուչ-1
ՌՈ ՌՈԲ պետ-2
ՀՕՊ զորքերի վարչության նախկին պետ-1
ՊՆ տեղակալ-ՆՏԱԴ պետ-1
ԶԿ զորահավաքային բաժնի պահեստազորի սպայական կազմի հաշվարկման բաժնի պետ-1
ՊԲ ֆին բաժնի գանձապահ-1
Հրետանային դասակի ավագ սպա-1
Նյութատեխնիկական սպառազինության գծով տեղակալ-1
ՌՈ սպա-1
Պարենային ծառայության պետ-1
Դիվիզիոնի ավագ-1
Հրետանու պետ—1
ՌՈ բաժնի քրեական հետախուզության բաժնի պետ-1
Անցագրային բաժնի պետ-1
Զորամասի 1-ին կենտրոնի պետ-1
Զորամասի սպա-3
ՊՆ ուսումնական վաշտի պետի տեղակալ-1,
ՊՆ ինժեներական ծառայության պետ-1

Այլ ոլորտ-75 (2018թ. -91) անձ

Կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակի մասնագետ-4

ՀՀ ԱՆ գլոբալ հիմնադրամի ծրագրեր համակարգող խմբի ղեկավար-1

Գրադարանի տնօրեն-1

Անտառապետ-2

Անտառապահ-2

ՀՈԱԿ տնօրեններ-6

ՍՊԸ տնօրենի տեղակալ-1

ՊՈԱԿ մասնագետ-14,

ՍՊԸ տնօրեն-16

ՊՈԱԿ տնօրեն-4

ՊՈԱԿ տնօրենի տեղակալ-2

Բանկի վարկային բաժնի պետ-2

ՊՈԱԿ բաժնի պետ-4

Հաշվապահ-4

Այլ կազմակերպությունների ծառայողներ-12

2019թ. առանձնացել է հատկապես քրեական հետապնդման մարմինների համագործակցության արդյունքում մի քանի ոլորտներում սխեմատիկ բնույթ կրող կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ուղղությամբ տարված մեծածավալ արդյունավետ աշխատանքով: Այսպես.

Պետական (քաղաքացիական) և համայնքային ծառայության ոլորտ

2019 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունը առանձնահատուկ ուշադրության է դարձրել հանրապետության ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ընդհանուր առմամբ ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, նրանց ենթակայության կամ մասնակցությամբ կազմակերպություններում աշխատանքային հարաբերությունների հետ կապված կոռուպցիոն սխեմաների և դրանցում ներգրավված անձանց շրջանակի բացահայտմանն ուղղված միջոցառումներին:

Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում կատարված վերլուծությամբ փաստվել է, որ 2018-2019թ.թ. ՀՀ պետական կառավարման և ՏԻՄ մարմիններում, նրանց ենթակա կամ մասնակցությամբ կազմակերպություններում գրանցված, սակայն աշխատանքի չհաճախած կամ փաստացի աշխատանք չկատարած աշխատողների և նրանց անվամբ ձևակերպված աշխատավարձերի արձանագրված հափշտակության կամ կոռուպցիոն այլ

դեպքերի վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների, այդ թվում նաև դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից հարուցվել է 254 քրեական գործ: Դրանցից 129-ը, կամ մոտ 51 տոկոսը վերաբերել են կրթական, հիմնականում հանրակրթական հաստատություններում գրանցված աշխատողներին:

Քննված քրեական այդ գործերից 51-ի վարույթը կարճվել է ոչ արդարացման հիմքով, որից 35-ը վերաբերվել են կրթական հաստատություններին: 43 անձի վերաբերյալ 29 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 13 անձի վերաբերյալ 11 գործ առնչվել է կրթական հաստատություններին:

Ուսումնասիրությունը փաստել է, որ սխեմատիկ կոռուպցիան հիմնականում արտահայտվել է նրանում, որ որպես կանոն, հաստատությունների տեխնիկական, օժանդակող գործառույթներով օժտված հաստիքներում ամբողջ կամ կես դրույքներով նշանակվում են տարբեր, այդ թվում նաև տվյալ կազմակերպությունների ղեկավարների հետ փոխկապակցված կամ ընկերական, բարեկամական այլ հարաբերությունների մեջ գտնվող անձինք: Վերջիններս փաստացի տևականորեն կամ չեն հաճախում աշխատանքի, կամ չեն կատարում իրենց վերապահված աշխատանքային պարտականությունները: Քիչ չեն դեպքերը, երբ աշխատանքի են ընդունվում անձինք, որոնց շատ կարճ ժամանակ անց, ընդ որում՝ այդ ընթացքում աշխատանքի չներկայանալու պայմաններում, տրամադրվում է նախածննդյան և հետծննդյան արձակուրդ: Ապա այդ մարմինների, հաստատությունների ղեկավարների կողմից, համապատասխան գործառույթներով օժտված աշխատակիցների օժանդակությամբ, աշխատաժամանակի տեղեկագրերում պաշտոնեական կեղծիքի կատարմամբ մտցվում են նրանց կողմից այդ ընթացքում կանոնավոր աշխատանքի ներկայացած լինելու և իրենց աշխատանքային պարտականությունները կատարած լինելու մասին կեղծ տվյալներ, որոնց հիման վրա նրանց անվամբ հաշվարկվում և դուրս են գրվում աշխատավարձի կամ այլ վճարումների գումարներ, որոնք հափշտակվում են վատնման կամ յուրացման եղանակով:

Մասնավորապես, հարուցված նշված 254 քրեական գործերով պարզվել են գրանցված, սակայն աշխատանքի չհաճախած կամ փաստացի աշխատանքը չկատարած 543 անձինք: Նրանցից 222-ը կամ 41 տոկոսը, հանդիսացել են կրթական հաստատություններում գրանցված աշխատողներ:

Քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասը նախնական հաշվարկով կազմել է մոտ 1.390.329.391 ՀՀ դրամ, որից պետությանը պատճառված վնասը՝ 1.035.253.643 ՀՀ դրամ, իսկ համայնքներինը՝ 355.075.748 ՀՀ դրամ:

Պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 415.555.554 ՀՀ դրամը, իսկ համայնքներին պատճառված վնասից՝ 93.233.387 ՀՀ դրամը: Ընդ որում՝ ընդհանուր վնասից 356 մլն դրամը եղել է կրթական հաստատություններում գրանցված աշխատողների մասով, որից վերականգնվել է 101.4մլն ՀՀ դրամը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է դատախազության գործառույթների շրջանակներում ակտիվացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների աշխատանքները՝ հանրապետության ողջ տարածքի ընդգրկմամբ վերոնշյալ հաստատությունների հաստիքացուցակների և իրական աշխատակիցների համապատասխանությունը պարզելու, խնդիրների առկայության դեպքում դրանց և վերաբերելի այլ փաստաթղթերում հնարավոր կեղծիքների առկայությունը ստուգելու, առերևույթ հանցավոր արարքների հատկանիշների դեպքում պատասխանատուների շրջանակը բացահայտելու, քրեադատավարական ընթացակարգեր ապահովելու նպատակով: Հանձնարարվել է նաև լայնորեն կիրառել այս բնույթի հանցագործությունների պատճառների և նպաստող պայմանների վերացմանը միտված դատախազական ներգործության միջոցներ:

Նախանշված ուղղություններով արդյունքների ապահովման միջոցով ՀՀ դատախազությունը շարունակելու է արմատացած և համատարած բնույթ ստացած վերոնշյալ արատավոր պրակտիկան, կոռուպցիոն մեխանիզմները վերացնելու հարցում դրսևորվող հետևողականությունը:

Ճանապարհաշինարարության ոլորտ

ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրության արդյունքում 04.09.2018թ. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ 2009-2018թթ. ընթացքում Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիոն չարաշահումների փաստերի առթիվ: Պետությանը պատճառված նախնական հաշվարկված վնասը կազմել է շուրջ 23.7մլրդ ՀՀ դրամ:

Քրեական գործով առկա տվյալներն առերևույթ վկայում են իրավասու պաշտոնատար և ծրագրի հետ առնչություն ունեցող անձանց կողմից մրցույթների իրականացման գործընթացում խախտումներ թույլ տալու, Ծրագրի անարդյունավետ ղեկավարման, աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության բացակայության, պայմանագրերի գնի և բովանդակության, նախագծերի մեջ անհարկի ու անհիմն փոփոխություններ կատարելու արդյունքում նախատեսված ժամկետների խախտմամբ, շուրջ 10 տարվա ընթացքում չեն ավարտվել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման աշխատանքները, չեն իրականացվել Ծրագրով քաղաքացիների, հասարակության և պետության համար ակնկալվող նպատակներն ու արդյունքները՝ երթևեկության ժամկետի կրճատումը, Հայաստանի հարավը անվտանգ, որակյալ և արագընթաց ճանապարհով հյուսիսի հետ կապելը, տնտեսության ու բիզնես կապերի զարգացմանը խթանելը և այլն:

Այսպես՝

- Ինչպես գլխավոր կապալառուի ընտրության, այնպես էլ մյուս մրցույթներում սահմանված կանոնների կոպիտ խախտման արդյունքում հաղթող են ճանաչվել հավասար պայմաններում ավելի բարձր գին առաջարկած կազմակերպությունները, որոնք անարդյունավետ հսկողության և պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական հանցանքների կատարման պայմաններում ամբողջությամբ ձախողել են Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման Ծրագիրը, խախտել բոլոր ժամկետներն ու պայմանագրային պարտավորությունները՝ անարդյունավետ ծախսելով 300մլն ԱՄՆ դոլարից ավելի վարկային գումարներ և պետական բյուջեի միջոցներ:

-Ծրագրի իրականացման ընթացքում տեխնիկական առաջադրանքի շրջանակներում նախապես կատարված հետազոտության հիման վրա Երևան-Արարատ հատվածում ճանապարհի բարվոք լինելու և միայն գծանշման, ջրատարների վերանորոգման աշխատանքների կատարման եզրակացության առկայության պայմաններում անհիմն որոշվել է դրա Երևան-Արտաշատ հատվածը բետոնապատել, իսկ նախապես որոշված ասֆալտե ծածկն առանց որևէ հիմնավորման փոխվել է բետոնե ծածկով: Դա այն պայմաններում, որ ՀՀ-ում չի արտադրվել ավտոճանապարհային հատուկ ցեմենտ, իսկ բետոնե ծածկույթում օգտագործվել է տեղական արտադրության համաշինարարական ցեմենտ: Արդյունքում ծրագրի Տրանշ-1-ի ճանապարհների բետոնե ծածկույթը չի համապատասխանել սահմանված տեխնիկական պայմաններին ու չափորոշիչներին և առաջացած անորակություններն ու անհարթությունները վերացնելու համար անհիմն կատարվել են չնախատեսված լրացուցիչ աշխատանքներ՝ ճանապարհի ֆրեզավորում և այլն: Այդ լրացուցիչ աշխատանքները չեն շտկել վիճակը, սակայն բոլոր դեպքերում Տրանշ-1-ի անորակ ճանապարհներն ընդունվել են շահագործման:

Գլխավոր կապալառուների, ենթակապալառուների, խորհրդատու ընկերությունների կողմից շինարարական աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերով սահմանված ժամկետների խախտման, անորակ աշխատանքների կատարման և ընդունման, այլ խախտումների համար նրանց նկատմամբ պատաս-խանատվության միջոցներ կիրառելու փոխարեն իրավասու պաշտոնատար անձինք ստորագրել են համաձայնագրեր, որոնցով պատասխանատվությունն անհիմն ստանձնել է պատվիրատու հանդիսացող պետությունը և վճարել միլիոնավոր դոլարների անհիմն տուգանքներ:

ՀՀ քննչական կոմիտեում ստեղծված քննչական խումբը, դատախազական պատշաճ ղեկավարման ներքո, իրականացրել է բազմադրվագ ու մեծածավալ քննչական և դատավարական գործողություններ: Արդյունքում պարզվել են անապրանք գործարքների, փողերի լվացման, հարկերից խուսափելու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահա-դիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտա-գործելու, հափշտակությունների, դրանց հանցակցության բազմաթիվ սխեմաներ, որոնց առթիվ մինչ օրս հարուցվել է ևս 10 քրեական գործ, որոնք միացվել են հիմնական գործին:

Առերևույթ հանցավոր մեխանիզմներում ներգրավված են տասնյակ ինչպես հիմնական կապալառու, այնպես էլ ենթակապալառու ընկերություններ, նրանց ներկայացուցիչների հետ փոխկապակցված տեղական ու արտերկրյա առևտրային կազմակերպություններ, վերջիններիս ղեկավարներ, սեփականատերեր, աշխատակիցներ, պետական պաշտոնյաներ, նրանց ազգականներ և այլն:

Նախաքննության ընթացքում որպես մեղադրյալներ են ներգրավվել շինաշխատանքներում անմիջական ընդգրկված ընկերությունների, այդ թվում նաև՝ չինական, տնօրեններ, աշխատակիցներ, խորհրդատու արտասահմանյան կազմակերպության խմբի ղեկավարը, նախկին բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ ընդհանուր թվով 18 անձ: Նրանցից 9-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, 3-ի նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառվել է գրավ, 6-ի դեպքում՝ ստորագրություն չհեռանալու մասին:

Քննությամբ պարզվել է, որ տարբեր դրվագներով կապալառու և ենթակապալառու մի շարք ընկերությունների աշխատակիցների, նրանց գործունեությունը փաստացի ղեկավարող անձանց կողմից առանձնապես խոշոր չափերի հարկերից խուսափելու, նաև փողերի լվացման նպատակով առանց աշխատանքների փաստացի կատարման կամ ծառայությունների մատուցման կազմվել և տրամադրվել են կեղծ հաշվապահական փաստաթղթեր, կատարվել են կեղծ հաշվապահական գրանցումներ, ինչի հետևանքով պետությանը պատճառվել է ընդհանուր առմամբ 2.848.946.479 ՀՀ դրամ գումարի առանձնապես խոշոր չափերի վնաս, որը հաշվարկված տույժ-տուգանքներով կազմում է 3.893.317.723 ՀՀ դրամ:

Բացի այդ, գործով անցնող մեղադրյալների կողմից խարդախությամբ, այն է՝ շինաշխատանքների վերաբերյալ վճարման վկայագրերում հավելագրումներ կատարելու, կատարողական, հանձնման-ընդունման ակտերում կեղծիքներ կատարելու միջոցով պայմանագրով նախատեսված չափանիշներին չհամապատասխանող, անորակ ասֆալտապատման աշխատանքներ հանձնելու եղանակներով, կատարվել են հափշտակություններ՝ ինչի հետևանքով հափշտակվել է ընդհանուր առմամբ 1.086.120.000 ՀՀ դրամ առանձնապես խոշոր չափերի գումար:

Ընդհանուր առմամբ ներկա պահին գործով անցնող 18 մեղադրյալներին մեղսագրվող հանցանքներով արձանագրված նյութական, գույքային վնասից վերականգնվել է 225.718.575 ՀՀ դրամը, 1 մլրդ ՀՀ դրամ մուտքագրված է ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշվին: Բացի այդ, կալանք է դրված մեղադրյալների շուրջ 50 միավոր անշարժ և 114 միավոր շարժական գույքի, բանկային հաշիվների և կանխիկ 82.328.800 ՀՀ դրամի վրա:

Նախաքննության ընթացքում առաջ քաշված և պլանավորված 6 հիմնական դրվագներով նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2019թ. առաջին 9 ամիսներին ճանապարհաշինության ծրագրերի իրականացման ընթացքում թույլ տրված առերևույթ հանցագործությունների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթում հարուցվել է 12 քրեական գործ:

Վարույթում գտնվող քրեական գործերով 14 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որոնցից 9-ին առաջադրվել է մեղադրանք, իսկ 5 անձ գտնվում է հետախուզման մեջ և վերջիններիս վերաբերյալ կալանավորումը ընտրելու մասին որոշումներ են կայացվել: Նշված քրեական գործերով կալանավորումը որպես խափանման միջոց է կիրառվել ընդհանուր առմամբ 8 անձի նկատմամբ:

Համեմատության համար նշենք, որ 2018թ. նույն ժամանակահատվածում այս ոլորտում արձանագրված առերևույթ հանցավոր դրսևորումների հատկանիշներով ՀՀ իրավասու մարմինների վարույթում հարուցվել է 6 քրեական գործ, որոնցով 1 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Ընդհանուր առմամբ 2018 և 2019 թվականների 9 ամիսների ընթացքում հարուցված քրեական գործերով հանցագործությամբ պետությանը պատճառված վնասը նախնական հաշվարկով կազմել է 23մլրդ 671մլն ՀՀ դրամ, իսկ համայնքներին՝ 18մլն ՀՀ դրամ: Պատճառված վնասից վերականգնվել է շուրջ 227մլն ՀՀ դրամը, իսկ շուրջ 2մլրդ դրամի չափով փաստացի դրամական միջոցներ ամրագրված են դատավարական երաշխիքներով:

Առանձին դեպքերում շինարարություն իրականացրած կազմակերպությունների կողմից արդեն իսկ ձեռնարկվել կամ ձեռնարկվում են միջոցներ՝ թույլ տրված խախտումները վերացնելու, չկատարված կամ ոչ պատշաճ կատարված աշխատանքները սահմանված պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ 2018 և 2019թթ. հարուցված այս 18 գործերից 9-ը հարուցվել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում հայտնաբերված առերևույթ չարաշահումների փաստերի առթիվ ՀՀ գլխավոր դատախազությունում հարուցված քրեական գործով քննության ընթացքում, և այդ կոռուպցիոն սխեմաներում ներգրավված են եղել մի շարք պետական գերատեսչությունների պաշտոնատար անձինք, բազմաթիվ տեղական և արտասահմանյան առևտրային կազմակերպությունների ղեկավարներ, սեփականատերեր և այլ աշխատակիցներ, ՀՀ ում գործող բարեգործական հիմնադրամի նախագահ և այլն: Հայտնաբերված, ինչպես նաև վերականգնված՝ պետությանը պատճառված վերոնշյալ վնասի զգալի մասը, քրեական հետապնդման ենթարկված անձինք ևս այս քրեական գործերի շրջանակներում են:

Ընդհանուր առմամբ ճանապարհաշինական ծրագրերին վերաբերող կոռուպցիոն չարաշահումների դեպքերով բոլոր գործերի փաստական հանգամանքների վերլուծությամբ ի հայտ են բերվել առավել տարածված և սխեմատիկ բնույթ կրող մեխանիզմները: Ըստ

այդմ՝ առանձին դեպքերում հատկացված միջոցները խաբեության, յուրացման կամ վատնման եղանակներով հափշտակել են կապալառու կամ ենթակապալառու կազմակերպությունների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից կեղծ կատարողական ակտեր, կատարված աշխատանքների հավելագրումներ կատարելու կամ չկատարված աշխատանքները կեղծ փաստաթղթերով կատարված ցույց տալու միջոցով:

Կամ՝ կապալառու և ենթակապալառու կազմակերպությունները, փաստացի պատկանելով միևնույն կամ փոխկապակցված անձանց, առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման, կեղծ փաստաթղթեր տրամադրելով, ինչպես նաև ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր ներկայացնելով միմյանց հնարավորություն են ընձեռել շահութահարկի, ավելացված արժեքի հարկի գծով ծախսագրումներ և նվազեցումներ կատարել: Այդ կերպ վերջիններիս համար պայմաններ են ստեղծվել հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող փաստաթղթում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելու միջոցով խուսափել հարկերը վճարելուց:

Մեկ այլ դեպքում՝ ինչպես օրինակ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի իրականացման գործընթացում, բարեգործական հիմնադրամի նախագահն իր իրական ազդեցությունն է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործել ի նպաստ իր հետ փոխկապակցված կազմակերպությունների, որի արդյունքում նշված կազմակերպությունների հետ կնքվել են կապալի կամ ենթակապալի պայմանագրեր:

Արձանագրվել են դեպքեր, երբ ճանապարհաշինական գործող նորմերին ակնհայտորեն հակասող ճանապարհաշինական, վերանորոգման աշխատանքների նախագիծը երաշխավորվել է որպես ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանող և դրանց հիման վրա կատարվել են պետական գնումներ, կնքվել պայմանագրեր, կատարվել ասֆալտապատման, բետոնապատման՝ սահմանված նորմերին չհամապատասխանող աշխատանքներ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս ոլորտում չարաշահումների ժամանակին չբացահայտման հիմնական պատճառն այն է, որ այդ գործընթացի նկատմամբ հսկողական կամ վերահսկողական լիազորություններ ունեցող պետական համապատասխան գերատեսչությունների պաշտոնատար անձինք չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել իրենց պարտականությունները:

Նշված քրեական գործերով իրականացվող քննությունների ընթացքում միջոցներ ձեռնարկվել և ձեռնարկվում են ինչպես չարաշահումներ կատարած և իրենց պարտականությունների կատարման մեջ հանցավոր թերացումներ թույլ տված անձանց հայտնաբերելու և նրանց արարքներին իրավական գնահատականներ տալու, այնպես էլ պետությանը և համայնքներին հասցված վնասները լիարժեք բացահայտելու և վերականգնելու ուղղությամբ:

Ճանապարհաշինության ոլորտում տարիներ շարունակ ձևավորված կոռուպցիոն սխեմաների բացահայտման ուղղությամբ սկսված քրեաիրավական պայքարը, պատժի անխուսափելիության ապահովումը ոչ միայն պետական միջոցների վատնումներից, յուրացումներից և փոշիացումից երաշխավորելու, այլև ներկայումս լայն թափով իրականացվող աշխատանքները սահմանված չափորոշիչներին համապատասխան իրականացնելու, այդ ծրագրերի իրականացման նկատմամբ պետական պատշաճ վերահսկողություն ապահովելու հիմնական երաշխիքներից է: Վերջինս շարունակելու է գտնվել ՀՀ գլխավոր դատախազության ուշադրության կենտրոնում:

Ջրօգտագործողների ընկերությունների գործունեության ընթացքում արձանագրված չարաշահումներ

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործության գործերով վարչությունում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ջրօգտագործող ընկերությունների գործունեության ոլորտում վերջիններիս իրավասու պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունները կազմակերպության շահերին հակառակ և իրենց կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու, լիազորությունները չարաշահելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու և օգտագործելու, աշխատակիցների կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերի գումարներ վատնելու կամ յուրացնելու, պաշտոնեական անփութության հատկանիշներով 2018-2019 թթ. ընթացքում հարուցվել և ներկայումս քննվում է ընդհանուր առմամբ 13 քրեական գործ: Վերջիններիս վերաբերում են Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերում գործող «Արարատ», «Արտաշատ», «Թալին», «Արագածոտն», «Կոտայք», «Լոռի», «Մարտունի», «Շենիկ», «Երևան», «Էջմիածին» և «Արմավիր» ՋՕԸ-ներին:

Քրեական գործերով նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համադրված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տարիներ շարունակ գործել են ՋՕԸ-ների մասնակցությամբ ձևավորված չարաշահումների կոռուպցիոն սխեմաներ, որոնք դրսևորվել են ջրօգտագործման մատուցման ծառայությունների, մատակարարված ջրաքանակների, կրած վնասների վերաբերյալ տվյալների կեղծմամբ, պետական բյուջեից ստացված սուբսիդավորման գումարների յուրացմամբ: Մասնավորապես՝ որոշ դեպքերում 2016-2018թթ. ընթացքում ՋՕԸ-ի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք, օգտագործելով իրենց պաշտոնեական դիրքը, խախտել են բաժանորդների հետ կնքված ջրամատակարարման ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրերի ելակետային պահանջները, առանց ջրաչափեր տեղադրելու՝ մատակարարված ջրի ծավալները գրանցել են ոչ թե խորանարդ/մետրով, այլ՝ հեկտարներով: Վերջինիս պատճառով բաժանորդները փաստացի զրկվել են

մատակարարված ոռոգման ջրի ծավալները վերահսկելու հնարավորությունից: Բացի այդ՝ կատարվել են հավելագրումներ, որից հետո այդ տվյալները ներառել են էլեկտրոնային մատյաններում իբրև մատակարարված ջրի, ծառայությունների և բաժանորդներից գանձվող գումարային պարտքերի տվյալներ, փաստացի ուռճացվել մատուցված ծառայությունների ծավալները:

Արհեստական այս եղանակներով գոյացած ջրօգտագործողների պարտքերը մարելու և կարկտահարումների հետևանքով առաջացած վնասները վերականգնելու համար 2016-2017թթ. ՀՀ բյուջեից սուբսիդավորված, ընկերությունների հաշվեկշռին մուտքագրված ֆինանսական միջոցները հաշվապահորեն ձևակերպվել են որպես բաժանորդների անվամբ կուտակված պարտքերի մարում: Առանձին դեպքերում կնքվել են վարձակալության և տարաբնույթ ծառայությունների ձեռք բերման վերաբերյալ ձևական պայմանագրեր, որոնցով նախատեսված ծառայությունները մատուցվել են ոչ ամբողջ ծավալներով կամ ընդհանրապես չեն մատուցվել: Այս սխեմաները կիրառվել են ապօրինի ջրամատակարարման և ջրօգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրենց պարտականությունները ՀՀ ԷԵԲՊ նախարարության ջրային կոմիտեի իրավասու աշխատակիցների կողմից ոչ պատշաճ կատարելու, իրենց ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելու պայմաններում: Առանձին ՋՕԸ-ների պարագայում արձանագրվել են դեպքեր, երբ ՀՀ-ից քաղաքացիների բացակայելու պայմաններում, նրանց հետ կազմվել են կեղծ աշխատանքային պայմանագրեր, որոնց հիման վրա վերջիններս հրամանագրվել են որպես ջրբաշխներ: Իսկ նրանց փաստացի չկատարած աշխատանքի դիմաց դուրս գրված առանձնապես խոշոր չափերի գումարները յուրացվել են:

Նշված չարաշահումների պատճառով նախաքննության ընթացքում կատարված նախնական հաշվարկով պետությանը պատճառված վնասը կազմել է ընդհանուր առմամբ շուրջ 5,7 միլիարդ դրամ: Քրեական գործերով լրիվ օբյեկտիվ և բազմակողմանի քննությունն ապահովելու նպատակով իրականացվող քննչական և դատավարական գործողություններով միջոցներ են ձեռնարկվում հանցավոր սխեմաներում ներգրավված անձանց շրջանակներն ամբողջականացնելու, նրանցից յուրաքանչյուրի գործողություններին իրավական գնահատականներ տալու, չարաշահումներով պետությանը հասցված նյութական վնասի չափը հստակեցնելու և վերականգնելու ուղղությամբ:

«Էջմիածին» և «Արմավիր» ՋՕԸ-ների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու և օգտագործելու, ծանր հետևանքներ առաջացրած պաշտոնական անփութության դեպքերի առթիվ հարուցված քրեական գործով, որով միայն նախնական հաշվարկված՝ պետությանը պատճառված վնասը գերազանցում է 1մլրդ ՀՀ դրամը, ՀՀ

քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել 2016-2017թթ. «Արմավիր» ՋՕԸ-ի տնօրենի պաշտոնն զբաղեցրած անձին:

Սոցիալական ապահովության ոլորտ

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում ամփոփվել է 2018թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական ապահովության ոլորտում (սոցիաալապես անապահովության նպաստների տրամադրման, կենսաթոշակներ ստանալու, ԲՍՓ հանձնաժողովների գործունեության) արձանագրված կոռուպցիոն երևույթների վերաբերյալ քրեական գործերը:

Ուշադրությամբ պարզվել է, որ. տվյալ ժամանակահատվածում սոցիալական ապահովության նշված ենթաոլորտներում արձանագրված կոռուպցիոն չարաշահումների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի, 178-րդ հոդվածի, 311[1]-րդ և 312[1]-րդ հոդվածների հատկանիշներով հարուցվել է ընդհանուրը 166 քրեական գործ: Դրանցից 151-ը կապված են եղել սոցիալապես անապահովության նպաստների տրամադրման, 6-ը՝ կենսաթոշակների տրամադրման և 9-ը՝ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների գործունեության ոլորտներում հայտնաբերված կոռուպցիոն դեպքերի հետ:

Ընդ որում՝ հանցավոր դրսևորումներ են բացահայտվել հանրապետության բոլոր մարզերում և մայրաքաղաք Երևանում, այսինքն դրանք կրել են համատարած բնույթ: Ավելին, քրեական գործերի փաստական հանգամանքների վերլուծությամբ վեր հանված օրինաչափությունները փաստում են, որ հատկապես անապահովության նպաստների տրամադրման ոլորտում հանցավոր գործողություններն ունեցել են կազմակերպական հստակ մեխանիզմներով արմատավորված սխեմատիկ բնույթ: Մասնավորապես՝ պաշտոնատար անձինք չհանդիսացող հանրային ծառայողներն ու տարբեր աշխատակիցներ ընտանիքի կազմի մասին ներկայացված դիմում-հայտարարագրում նշված տվյալների հավաստիության վերաբերյալ ընտանեկան նպաստ նշանակելու առաջարկություն կատարելու, այդ կապակցությամբ դրական եզրակացություն տալու, ծրագրային մեթոդով ընտանիքի անապահովության միավորը որոշելու, նպաստառուների ցուցակում ընդգրկելու, ապա հաջորդող տարիների ընթացքում նպաստի վճարումը չդադարեցնելու դիմաց տարիներ շարունակ պահանջել և ստացել են տարբեր չափերի ապօրինի վարձատրություններ: Բացի այդ, հարյուրավոր քաղաքացիներ, առանց վերջիններիս գիտության, ընդգրկվել են նպաստառուների ցուցակներում, և վերջիններիս անվամբ պետությունից հատկացված նպաստի գումարները հափշտակվել են սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների պետերի և այլ աշխատակիցների կողմից: Այսինքն հանցավոր ոտնձգությունները մեծամասամբ կատարվել են առավել

խոցելի խմբերի՝ ընտանեկան անապահովության համակարգում ընդգրկված և նյութական ծանր պայմաններում գտնվող անձանց նկատմամբ:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կոռուպցիոն սխեմայում ներգրավված են եղել մարզպետարանների կամ քաղաքապետարանների աշխատակազմերի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների պետեր, գործակալությունների կրտսեր, ավագ և առաջատար մասնագետներ, <<Հայփոստ>> ՓԲԸ-ի տարածքային մասնաճյուղերի տնօրեններ, փոստատարներ ու օպերատորներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցներ, ԲՍՓ գործակալության տարածքային հանձնաժողովների նախագահներ և անդամներ:

Մասնավորապես՝ հարուցված քրեական գործերով տարբեր բնույթի հանցավոր արարքների կատարման համար մեղադրանք է առաջադրվել 249 անձի, որից 88-ը սոցիալական աջակցության գործակալության տարածքային բաժնի մասնագետ կամ տեսուչ, 8-ը՝ նույն գործակալության տարածքային բաժնի պետ և տեղակալ, 25-ը՝ <<Հայփոստ>> ՓԲԸ-ի մասնաճյուղի տնօրեն, փոստատար և աշխատակից, 2-ը՝ ԲՍՓ հանձնաժողովի նախագահ, 4-ը՝ ԲՍՓ հանձնաժողովի անդամ բժիշկ-փորձագետ, 1-ը՝ ԲՍՓ բուժվիճակագիր, 8-ը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակից, 1-ը՝ համայնքի նախկին ղեկավար, 113-ը՝ քաղաքացի: Նշվածներից միայն 17-ի կամ ընդամենը 7 տոկոսի նկատմամբ է որպես խափանման միջոց կիրառվել կալանավորումը, որոնցից 12-ի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց գրավ:

Նշված ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 12 քրեական գործ՝ 41 անձի վերաբերյալ: Վերջիններիցս 14-ը սոցիալական աջակցության գործակալության տարածքային բաժնի մասնագետ կամ տեսուչ է, 3-ը՝ տարածքային բաժնի պետ և տեղակալ, 22-ը՝ <<Հայփոստ>> ՓԲԸ-ի մասնաճյուղի տնօրեն, փոստատար և աշխատակից, 1 համայնքի նախկին ղեկավար և 1 քաղաքացի: Դատարան ուղարկված քրեական գործերով 33 անձ դատապարտվել է:

Նշված հանցագործություններով պետությանը պատճառված վնասը կազմել է 772.5 մլն ՀՀ դրամ, որից վերականգնվել է մոտ 139 մլն ՀՀ դրամը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարություն է հասցեագրել ՀՀ ոստիկանության պետին՝ նմանատիպ դեպքեր բացահայտելու, սխեմատիկ և շղթայական կոռուպցիոն գործընթացներում ընդգրկված բոլոր անձանց ի հայտ բերելու ուղղությամբ համակարգված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել դրանց ընթացքը լուծելու համար:

Բացի այդ, 2019 թվականի փետրվարի 18-ին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի Ստեփանավանի, Թումանյանի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի

առանձնացված ստորաբաժանման սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային բաժնում տեղ գտած թերությունների, դրանց պատճառների և նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու մասին ՀՀ դատախազության կողմից միջնորդագիր է ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին:

Պետական գույքի կառավարման ոլորտ

2019 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեից ստացված՝ պետական սեփականություն հանդիսացած գույքի՝ նախկինում իրականացված օտարման գործընթացների վերաբերյալ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց ընթացքում պարզվել են միևնույն հանցավոր սխեմայով առերևույթ թույլ տրված հանցավոր չարաշահումներ:

Մասնավորապես, պարզվել է, որ ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պաշտոնատար անձինք, խախտելով «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ առանց իրավական հիմքի և պայմանագիր կնքելու, 2016թ. ՍՊԸ-ին առաջարկել են իրականացնել գույքերի գնահատման աշխատանքներ:

Նշված առաջարկների հիման վրա ՍՊԸ-ն իրականացրել է տարբեր գույքերի գնահատումներ և վերջինիս գնահատված արժեքների հիման վրա պետական մի շարք գույքեր օտարվել են:

Հետագայում կատարվել է վերը նշված գույքերի՝ գնահատման և օտարման ժամանակահատվածի դրությամբ շուկայական արժեքների վերլուծություն, ինչի արդյունքում պարզվել է, որ օտարված գույքերի շուկայական արժեքը նշված ժամանակահատվածի դրությամբ սկզբնական գնահատված արժեքից եղել են մի քանի անգամ ավել:

Պարզվել է նաև, որ ՍՊԸ-ի կողմից նշված անշարժ գույքերի գնահատման գործընթացում խախտվել են գնահատման ստանդարտի պահանջները, մասնավորապես, հաշվի չի առնվել դրանց նպատակային նշանակությունը, մակերեսը:

Կատարված ուսումնասիրություններով փաստվել է, որ ՀՀ պետական գույքի կառավարման վարչության պատասխանատու պաշտոնատար անձինք, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, խախտելով «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ առանց իրավական հիմքի և պայմանագիր կնքելու, 2016թ. ՍՊԸ-ին առաջարկել են իրականացնել պետական սեփականություն հանդիսացող նշված գույքերի գնահատում, ինչի արդյունքում ՍՊԸ-ի մասնագետը, խախտելով գնահատման ստանդարտի պահանջները, մասնավորապես՝

հաշվի չառնելով գնահատվող գույքի նպատակային նշանակությունը, մակերեսը, կազմել է կեղծ եզրակացություն, որով 2 կամ 2.5 անգամ նվազեցվել են դրանց իրական արժեքները: Արդյունքում համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք հիմք են դարձվել նշված անշարժ գույքերի օտարման մրցույթի համար և դրանք օտարվել են հավանական շուկայական արժեքից մի քանի անգամ պակաս գնով՝ պետությանը պատճառելով էական վնաս:

2019 թվականի ընթացքում ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության իրականացրած ուսումնասիրությունների արդյունքներով նշված փաստերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 214-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է 10 քրեական գործ, որոնց նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեին:

Այս ոլորտում էապես ակտիվացել են հանցավոր ճանապարհով վաճառված պետական կամ համայնքային գույքն իրական սեփականատերերին վերադարձնելու իրավական գործընթացները:

Մասնավորապես, 2 քրեական գործով նշված հանգամանքերը հաստատվելու արդյունքում ՀՀ դատախազության կողմից 4 հայցեր են ներկայացվել դատարաններ՝ 48,5 հա հողատարածքի գործարքներն առոչինչ ճանաչելու պահանջով:

3 դեպքով էլ հաղորդումներ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ առաջարկելով նախաձեռնել համայնքներին պատկանող և օրենքի խախտմամբ օտարված հողատարածքների գործարքներն առոչինչ ճանաչելու և գույքային միավորները համայնքների հաշվեկշիռ վերադարձնելու գործընթաց:

Մասնավորապես, ՀՀ ՀՔԾ-ում Մանվել Գրիգորյանի վերաբերյալ քննվող քրեական գործով ՀՀ տարածքային կառավարման նախարարին ներկայացվել է հաղորդում՝ մի շարք համայնքների ղեկավարների կողմից համայնքներին պատկանող և օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալությամբ տրված անշարժ գույքի միավորներով թվով 40 գործարքներն առոչինչ ճանաչելու և գույքային միավորները համայնքային հաշվեկշիռ վերադարձնելու գործընթաց սկսելու վերաբերյալ:

2019 թվականի ընթացքում կարևորվել է հատկապես կոռուպցիոն գործերով քննությունների արագ հանգուցալուծմանն ուղղված դատախազական ներգործության միջոցների՝ նախաքննական մարմիններին նպատակային ցուցումներ, իսկ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմիններին կոնկրետ հանձնարարություններ տալու անհրաժեշտությունը՝ նկատի ունենալով, որ դրանք չպետք է կրեն ձևական բնույթ և դրանցով առարկայական արդյունքների չապահովման դեպքում պետք է դիտարկվի իրավական հետևանքների առաջացման հարցը:

Կոռուպցիոն հանցագործությունների քննության ընթացքում առանցքային նշանակություն պետք է ունենան պետությանը պատճառված վնասի հայտնաբերման և

վերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքները: Այս առումով ՀՀ դատախազության ստորաբաժանումների հանձնարարվել է ապահովել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն պետությանը պատճառված վնասի ամբողջական ծավալների բացահայտման և մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ: Քրեական գործով վարույթի ընթացքում ենթադրյալ հանցագործություն կատարած անձի կողմից ապօրինի ճանապարհով ստացված եկամուտներ կամ այլ գույք ունենալու և դրանք քողարկելու վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու դեպքում պարտադիր տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություններ ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների կամ այլ գույքի վերհանման, քողարկման մեխանիզմների բացահայտման նպատակով:

Դատախազության կողմից 2019թ. կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարի համատեքստում առանցքային է համարվել կոռուպցիոն գործերով ենթադրյալ հանցանք կատարած անձանց առերևույթ ապօրինի ծագում ունեցող գույքը (այդ թվում նաև ՀՀ-ից դուրս գտնվող) բացահայտելու, դրանց իրական պատկանելությունը ստուգելու ուղղությամբ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն կատարելու, ինչպես նաև նշված գույքերը պետությանը վերադարձնելու կամ պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված ողջ գործիքակազմի ձեռնարկումը, ինչը երբեմն հանդիսացել է քննությունների որոշակի ձգձգման օբյեկտիվ պատճառ:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ 2019թ. աճել է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ցուցանիշը: Կոռուպցիոն հանցագործությունները ավանդաբար համարվում են լատենտայնության բարձր աստիճան ունեցող հանցագործություններ և նման հանցագործությունների բացահայտման համար մեծ դեր ունի նաև քաղաքացիական հասարակությունը՝ ընդհանրապես և մասնավորապես՝ քաղաքացիների և անձանց ակտիվությունը, ինչպես նաև իրավապահ համակարգի հետ համագործակցելու պատրաստակամությունը:

Գաղտնիք չէ, որ կոռուպցիոն հանցագործություններն առավել բարդ բացահայտվող և քննվող հանցագործություններից է, քանի որ դրանք հիմնականում կատարվում են վկաների բացակայությամբ և տվյալ գործընթացի բոլոր մասնակիցներն էլ սեփական շահերն են հետապնդում և խիստ շահագրգռված են համապատասխան «գործարքի» գաղտնիության ապահովման մեջ: Այս հանցանքի կատարման եղանակը իրենից ներկայացնում է գործողությունների փոխկապակցված և քողարկված համակարգ՝ ուղղված հանցագործության նախապատրաստմանը և կատարմանը:

Այս տեսակի հանցագործությունների բացահայտումն էլ ավելի է դժվարանում, քանի որ դրանք, որպես կանոն, կատարվում են հատուկ սուբյեկտների՝ հիմնականում իրավաբանական կրթություն ունեցող կամ նեղ մասնագիտություն ունեցող անձանց կողմից, ովքեր առավել քան պատկերացնում են քողարկված եղանակով գործողություններ կատարելը:

Նշվածով էլ պայմանավորված, այս հանցագործության բացահայտումը, ինչպես նաև հանցագործի մեղավորության հիմնավորումը հաճախ մեծ բարդություն է ներկայացնում և պահանջում է վարույթն իրականացնող մարմինների կողմից հետևողական, գրագետ պլանավորված, արդյունավետ և համագործակցված գործողությունների իրականացում:

Այդ իսկ պատճառով, այս հանցատեսակների թվի աճը, ի տարբերություն այլ հանցանքների, դրական է գնահատվում. այդպիսի դինամիկան խոսում է ոչ թե իրականում այդ հանցանքների ծավալների ընդլայնման, այլ դրանց դեմ տարվող հատկապես քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման ու դրանով պայմանավորված քաղաքացիական հասարակության՝ իրավապահ մարմինների նկատմամբ ունեցած վստահության մակարդակի բարձրացման մասին:

Նկատի ունենալով, որ կոռուպցիոն բնույթի որոշ հանցագործությունների, որոնց արդյունավետ քննության և բացահայտման համար պահանջվում են նաև գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի հատուկ կամ մասնագիտական գիտելիքներ, 2019թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների, նախաքննություն իրականացնող քննիչների, ՀՀ փորձագիտական հիմնարկների, ջրային կոմիտեի և այլ շահագրգիռ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ պարբերաբար անցկացվել են քննարկումներ:

Չնայած կոռուպցիայի դեմ պայքարի քրեաիրավական ոլորտում նախորդ տարվա ընթացքում արձանագրվել է աննախադեպ արդյունավետություն, որին մեծապես նպաստում է ակտիվ, նախաձեռնող և պահանջատեր հասարակության օժանդակությունը, սակայն, գործող իրավակարգավորումները որոշակի արգելքներ են ստեղծում հատկապես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման և երկրից ապօրինի դուրս բերված ակտիվների վերադարձման համար:

Այդ նպատակով, ՀՀ դատախազության ակտիվ ներգրավվածությամբ մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնց ընդունումը էապես կբարձրացնի կոռուպցիոն համապատասխան գործերով քննությունների արդյունավետությունը և հնարավորություն կտա պետությանը և հասարակությանը վերադարձնել նրանցից գողացված ռեսուրսները, վերականգնել սոցիալական արդարությունը: Այստեղ կարևոր է, որ օրենսդրական փոփոխությունները հիմնված լինեն մի կողմից սեփականության անձեռնմխելիության և մարդու սեփականության իրավունքների հստակ երաշխավորման, մյուս կողմից սոցիալական արդարության վերականգնման հանրային շահի հավասարակշռման սկզբունքի վրա:

Այստեղ անհրաժեշտ է այնպիսի լուծումներ գտնել, որոնք կերաշխավորեն ներքին հակակշռման և հավասարակշռման մեխանիզմը և կնպաստեն կենտրոնացված ձևով կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված համակարգային կառուցակարգերի ուժեղացմանը, վերլուծական, կոնկրետ ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման,

խնդիրների բացահայտման և իրավապահ մարմիններին ներկայացման կարողությունների զարգացմանը:

Այս համատեքստում առանցքային է պետական կառավարման համակարգում այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք թույլ կտան պաշտոնատար անձանց հայտարարագրելու ոչ միայն իրենց գույքի և եկամուտների տարեկան շարժերը, այլ նաև նրանց բոլոր շահերը՝ հակակոռուպցիոն մարմնին հնարավորություն տալով ցանկացած պահի ստուգման առարկա դարձնելու ներկայացված տեղեկատվության իսկությունը, լիարժեքությունը և ձեռնարկելու դրանից բխող ընթացակարգեր:

Ինչպես կոռուպցիայի դեմ պայքարի, այնպես էլ դատահիրավական ոլորտի բարեփոխումները պետք է բխեն իշխանության թևերի տարանջատման և հավասարակշռման, մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներից և պետք է լիարժեք համապատասխանեն Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների իրավական չափանիշներին, հատկապես եվրոպական չափանիշներին և ՀՀ սահմանադրությանը:

Այս առումով կարևոր է նաև միջազգային համագործակցության ակտիվացումը, գործող համապարփակ տեղեկատվական բազաների հասանելիությունը, կոռուպցիոն գործերով փորձաքննությունների տեխնոլոգիական, մեթոդական, և մասնագիտական ռեսուրսների արդիականացումը և կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության մեջ ներգրավված օպերատիվ-հետախուզական մարմինների, քննիչների, դատախազների և դատավորների համար հասցեական վերապատրաստումների անցկացումը: Շատ կարևոր է միջազգային կազմակերպությունների սերտ համագործակցությամբ և փորձագետների ներգրավմամբ տարբեր երկրների կուտակած փորձի ուսումնասիրումը՝ հատկապես հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մոդելների ընտրության և տեղայնացման ոլորտում:

Այս նպատակով ՀՀ գլխավոր դատախազը մի շարք հանդիպումներ է ունեցել միջազգային կառույցների ներկայացուցիչների, պատվիրակությունների, մասնավորապես Եվրոպայի խորհրդի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերով գլխավոր տնօրենի գլխավորած բարձրաստիճան պատվիրակության, Եվրոպական հանձնաժողովի հարևանության հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավարի գլխավորած պատվիրակության, Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի կողմից համատեղ հիմնված Հափշտակված գույքի վերադարձման նախաձեռնության փորձագետների, «Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների ամրապնդում» ծրագրի շրջանակներում Հայաստանում գտնվող ԵԱՀԿ փորձագիտական խմբի հետ:

Պետք է փաստել, որ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ևս փաստվում են կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից արձանագրած բարձր արդյունքները:

Մասնավարոպես Եվրոպայի խորհրդի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակումոպուլոսը ՀՀ գլխավոր դատախազի հետ հանդիպման ժամանակ գոհունակությամբ ընդգծել է ՀՀ կողմից, մասնավորապես դատախազության վերաբերյալ GRECO-ի հանձնարարականները գրեթե լիարժեքորեն կատարված լինելու հանգամանքը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների պետդեպարտամենտի կողմից հրապարակած մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված հերթական տարեկան զեկույցում անդրադարձ է կատարվել կոռուպցիայի դեմ պայքարին և նշվում է, որ Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո իշխանությունները հետաքննություններ սկսեցին՝ բացահայտելով համակարգային կոռուպցիան, որը ներառել է հասարակական և մասնավոր կյանքի մեծ մասը: Նշվում է նաև, որ բազմաթիվ քրեական գործեր են հարուցվել նախկին պաշտոնյաների, նրանց հարազատների, խորհրդարանականների, որոշ դեպքերում՝ դատական մարմինների ներկայացուցիչների և նրանց հարազատների նկատմամբ: Ընդ որում նմանատիպ գործեր են հարուցվել նաև մի խումբ ներկա պաշտոնյաների նկատմամբ:

Կոռուպցիայի դեմ պայքարի մասին խոսելիս պետք է նշել, որ 2019թ. ընթացքում արդյունավետորեն գործել է նաև ազդարարման համակարգը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է 188 ազդարարում, որոնք բոլորը վերաբերել են առերևույթ կոռուպցիոն բնույթի դեպքերին: Նշված 188 ազդարարումներից 153-ը եղել են անանուն: 97-ով հարուցվել է ազդարարման վարույթ, 91-ով մերժվել է վարույթի հարուցումը: Հարուցված ազդարարման վարույթներից 21-ով վարույթը կարճվել է, 59-ը ուղարկվել է օպերատիվ-հետախուզական մարմին՝ ազդարարումը ստուգելու համար, 17-ն ուղարկվել է ըստ ենթակայության: 5 ազդարարման դեպքով հարուցվել է քրեական գործ:

4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

2019թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 2845 գործ՝ 3926 անձի վերաբերյալ (2018թ.՝ 2272 գործ՝ 2931 անձի վերաբերյալ), որոնցից 2788-ը 3569 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 57-ը 57 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Դատարաններում քննվել և ավարտվել է 2004 քրեական գործ՝ 2483 անձի նկատմամբ (2018թ.՝ 2336 գործ՝ 2876 անձի վերաբերյալ, 2017թ.՝ 2394 քրեական գործ՝ 2949 անձի նկատմամբ): Նշված քրեական գործերից 1511-ով դատապարտվել է 1838 անձ (2018թ.՝ 1663 գործով՝ 2069 անձ, 2017թ.՝ 2047 գործով 2509 անձ): 59 քրեական գործով 60 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2018թ.՝ 61 քրեական գործով՝ 62 անձի նկատմամբ, 2017թ.՝ 50 քրեական գործով՝ 50 անձի նկատմամբ):

2019թ. դատարաններում քննված և ավարտված՝ 2483 անձի վերաբերյալ 2004 քրեական գործից 629-ը կամ 31.3%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 775 անձի նկատմամբ (28.8%), 772-ը՝ միջին ծանրության (38.5%)՝ 1005 անձի նկատմամբ (40.5%), 550-ը՝ ծանր (27.4%)՝ 693 անձի նկատմամբ (27.9%) և 53-ը՝ առանձնապես ծանր (2.6%)՝ 70 անձի նկատմամբ (2.8%):

2018թ. դատարաններում քննված և ավարտված՝ 2876 անձի վերաբերյալ 2336 քրեական գործից 886-ը կամ 31.0%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 994 անձի նկատմամբ (34.5%), 839-ը՝ միջին ծանրության (36.0%)՝ 1079 անձի նկատմամբ (37.5%), 550-ը՝ ծանր (23.5%)՝ 712 անձի նկատմամբ (24.7%) և 61-ը՝ առանձնապես ծանր (2.6%)՝ 91 անձի նկատմամբ (3.1%):

2019թ. ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 28%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը նվազել է 6.8%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է՝ 2.7%-ով, առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 23%-ով:

Դատապարտված անձանցից 53-ը եղել են անչափահասներ (2018թ.՝ 75 անձ, 2017թ.՝ 93 անձ), 149-ը՝ կին (2018թ.՝ 165 կին, 2017թ.՝ 233 կին), 222-ը՝ նախկինում դատված (2018թ.՝ 249 անձ, 2017թ.՝ 301 անձ), 47-ը՝ օտարերկրացի (2018թ.՝ 53 անձ, 2017թ.՝ 49 անձ): 8 գործով 8 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2018թ.՝ 20 գործ՝ 22 անչափահաս, 2017թ.՝ 18 գործ՝ 24 անչափահաս):

2019թ. դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 29.3%-ով, դատապարտված կանանց թիվը՝ 9.7%-ով, իսկ նախկինում հանցանք կատարած անձանց թիվը՝ 10.8%-ով:

2019թ. ընթացքում 53 գործով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից արդարացվել է 85 անձ /2018թ. ՝ 89 գործով 130 անձ/, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 13 գործով 13 անձ /2018թ. ՝ 16 գործով 16 անձ/:

2019թ. ՀՀ դատարանների կողմից մասնակի արդարացվել է 3 անձ /2018թ. ՝ 4 անձ/, իսկ մեկ կամ մի քանի դրվագով՝ 8 անձ /2018թ. ՝ 9 անձ/[6]:

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են միջին ծանրության և ծանր հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը, մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 13 անձ (15.3%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 28 անձ (33%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 41 անձ (48.2%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 3 անձ (3.5%):

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններն ունեն հետևյալ պատկերը. մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 14 գործով արդարացվել է 17 անձ, սեփականության դեմ ուղղված հանցագործություններով 13 գործով՝ 22 անձ, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններով 2 գործով՝ 2 անձ, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով 12 գործով՝ 21 անձ, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններով 7 գործով՝ 14 անձ, կոռուպցիոն հանցագործություններով 5 գործով՝ 9 անձ:

2019թ. 375 քրեական գործ՝ 492 անձի վերաբերյալ կարճվել է (2018թ.՝ 503 քրեական գործ՝ 593 անձի նկատմամբ), որոնցից 117-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 279-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 13-րդ կետով, 11-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 52-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 33-ը՝ այլ հիմքով:

2019թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 5.182.828.550 ՀՀ դրամ (2018թ.՝ 1.862.731.779 ՀՀ դրամ), որից 2.195.136.716 (2018թ.՝ 792.361.680 ՀՀ դրամ) ՀՀ դրամը՝ պետությանը պատճառված, 2.987.691.834 ՀՀ դրամը (2018թ.՝ 1.070.370.099 ՀՀ դրամ)՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնաս:

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 672.901.633 ՀՀ դրամ (2018թ.՝ 527.374.159 ՀՀ դրամ), որից 260.728.226 ՀՀ դրամը (2018թ.՝ 70.340.488 ՀՀ դրամ)՝ պետությանը, 412.173.407 ՀՀ դրամը (2018թ.՝ 605.572.671 ՀՀ դրամ)՝ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

---

[6] Սույն հաղորդման մեջ արդարացման դատավճիռների վերաբերյալ տվյալները, ի տարբերություն նախորդ տարվա հաղորդման, որտեղ տվյալները նշված էին ըստ ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած թվերի, ներկայացվել են՝ ըստ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվություններում եղած թվերի:

2019թ. դատարաններում քննված քրեական գործերից 850 գործով 1037 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 42.4%-ը (2018թ.՝ 843 գործով, որը կազմում է քննված գործերի 36.1%-ը):

2019թ. դատապարտված 1838 անձից 957-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 52%-ը: 2018թ. 2069 անձից ազատազրկման է դատապարտվել 891-ը կամ 43.1%-ը: Ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 16 անձ (2018թ.՝ 28 անձ): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 0.9%:

Տուգանքի է դատապարտվել 525 անձ (2018թ.՝ 661 անձ): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 28.5%:

338 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 18.4%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2018թ.՝ 487 անձի կամ 23.5%-ի նկատմամբ): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 99-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 119-ը՝ միջին ծանրության, 120-ը՝ ծանր հանցագործության համար:

2019թ. դատապարտված 7 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2018թ.՝ 8 անձի, 2017թ.՝ 13 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2019թ. դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 10 անձ (2018թ.՝ 39), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից: Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 609 անձ դատապարտվել է ազատազրկման (2018թ.՝ 402):

2019 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 326 վերաքննիչ բողոք, որոնցից 8-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 1-ը՝ վարույթ չի ընդունվել: Բերված բողոքներից 70-ը կամ 21.5%-ը եղել են արդարացման (2018թ.՝ 98 կամ 30.5%), 7-ը կամ 2.1%-ը՝ կարճման (2018թ.՝ 9 կամ 2.8%), 262-ը կամ 80.3%-ը՝ պատժի մեղմության (2018թ.՝ 229 կամ 71.3%), 5-ը կամ 1.5%-ը՝ պատժի խստության (2018թ.՝ 2 կամ 0.6%), 19-ը կամ 5.8%-ը՝ արարքի վերաորակման դեմ (2018թ.՝ 22 կամ 5.8%), իսկ 75-ը կամ 23%-ը (2018թ.՝ 35-ը կամ 10.9%)՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 70-ը կամ 21.4%-ը բավարարվել է, 210-ը կամ 64.4%-ը՝ մերժվել է, 7-ով կամ 2.1%-ով կայացվել է այլ որոշում, 118-ով կամ 36.2%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 511-ն են, որոնցից որևէ մեկը հետ չի վերցվել, 1-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 3-ը կամ 0.6%-ը եղել է արդարացման, 9-ը կամ 1.8%-ը՝ պատժի մեղմության դեմ, 386-ը կամ 75.5%-ը պատժի խստության դեմ, 8-ը կամ 1.6%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 104-ը կամ 20.3%-ը՝ այլ հիմքով, 3-ը կամ 0.6%-ը, քաղաքացիական հայցի մասով, ինչպես նաև կարճման դեմ՝ 0:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 76-ը կամ 14.9%-ը, 42-ը կամ 8.2%-ը բավարարվել է մասնակի, 273-ը կամ 53.4%-ը մերժվել է, 7-ով կամ 1.4%-ով կայացվել է այլ որոշում, 112-ով կամ 21.9%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2019 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 131 (2018թ.՝ 90) վճռաբեկ բողոքից և նախորդ տարվանից փոխանցված 15 (2018թ.՝ 27) բողոքից 38-ով (2018թ.՝ 21) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 88-ով (2018թ.՝ 84) որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 20-ն (2018թ.՝ 12) ընդունվել է վարույթ, որոնցից 7-ը (2018թ.՝ 6) բավարարվել է, 11-ի (2018թ.՝ 6) քննությունն ընթացքի մեջ է, իսկ 2-ը՝ մերժվել է (2018թ.՝ 0):

Պետք է նշել, որ 2019թ. ընթացքում ևս ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից վճռաբեկ բողոքներով, ըստ էության, բարձրացվել են ոչ միայն կոնկրետ գործերով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումների հարցերը, այլ, առավելապես նպատակ է հետապնդվել ապահովել զարգացնել նախադեպային իրավունքը՝ գործնականում իրավունքի միատեսակ կիրառության, իրավական որոշակիության ու կանխատեսելիության սկզբունքների համատեքստում:

Ցավոք, Վճռաբեկ դատարանը ոչ բոլոր դեպքերում է, մեր գնահատմամբ, նույն մտահոգությամբ արձագանքել՝ կոնկրետ բողոքների հիման վրա գործնականում առկա իրավական անորոշությանը, իրավական նորմերի տարընթերցումները վերացնելը լիարժեք չապահովելով: Այդուհանդերձ մեր բողոքների հիման վրա կայացված բազմաթիվ նախադեպային որոշումներ լուծել են այդ խնդիրները՝ ապահովելով իրավական որոշակիությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է մի շարք որոշումներ, որոնք ունեն նախադեպային, ուղղորդող նշանակություն իրավակիրառ պրակտիկայի ձևավորման հարցում:

Մասնավորապես,

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի և գործով տուժողի բողոքների հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/0002/01/18 քրեական գործով 2019թ. ապրիլի 11-ին կայացրած որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք ընկած են եղել նաև ՀՀ դատախազության ներկայացրած բողոքի հիմքում: Այսպես.

Նշյալ գործով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով Վ. Մխիթարյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա իր նախկին կնոջ՝ Լ.

Վիրաբյանի հետ ունենալով թշնամական հարաբերություններ, 2017թ. նոյեմբերին զանգահարել է վերջինիս և երեխաների տեսակցության հետ կապված անհամաձայնությունների առթիվ սպառնացել սպանել ինչպես նրան, այնպես էլ վերջինիս մորը: Իսկ հաջորդ օրը եկել է Լ. Վիրաբյանի բնակության վայր, սկսել թակել դուռն ու սպառնալիքներ տեղալով պահանջել բացել այն՝ ստեղծելով սպառնալիքներն իրականացնելու իրական վտանգ: Եվ միայն Լ. Վիրաբյանի կողմից երկրորդ անգամ ոստիկանություն ահազանգելուց հետո նա դադարեցրել է իր գործողությունները:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018թ. փետրվարի 21-ի դատավճռով Վ. Մխիթարյանը մեղավոր է ճանաչվել իրենց մեղասագրված հանցանքի կատարման մեջ, և նրա նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ: Որոշման հիմքում որպես ապացույց դրվել են տուժողի, վկայի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, Լ. Վիրաբյանի և Վ. Մխիթարյանի առերես հարցաքննության արձանագրությունը և այլ փաստաթուղթ ճանաչված սկավառակի զննության արձանագրությունը, որը վերաբերել է Լ. Վիրաբյանի կողմից հեռախոսի միջոցով արված իր և նախկին ամուսնու միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրառմանը:

Ամբաստանյալի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, սակայն, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018թ. մայիսի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը և հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ Վ. Մխիթարյանին իրեն առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ: Վերաքննիչ դատարանն իր որոշումը հիմնավորել է նրանով, որ քրեական գործում առկա՝ այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված սկավառակի զննության արձանագրությունը պետք է ճանաչել որպես անթույլատրելի ապացույց, քանի որ Վ. Մխիթարյանի հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կատարվել է օրենքի խախտմամբ, առանց դատարանի թույլտվության, ոչ իրավասու անձի կողմից, այսինքն՝ խախտվել է անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը: Ելնելով դրանից՝ դատարանը փաստել է, որ առանց այդ ապացույցի միայն գործի ելքով շահագրգռված անձանց՝ տվյալ դեպքում տուժողի և նրա մոր ցուցմունքները, առանց դրանք հաստատող օբյեկտիվ ապացույցների առկայության, բավարար չեն հանգելու հետևության, որ հանցագործության դեպք տեղի է ունեցել:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը և տուժողը բերել են վճռաբեկ բողոքներ՝ բեկանելու ՀՀ Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալու առաջին ատյանի դատարանի դատավճռին: Որպես հիմնավորում է ներկայացվել այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մի շարք վճիռներով արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը, մի շարք պայմանների պարագայում, քրեական դատավարությունում թույլատրելի է համարվում որպես ապացույց օգտագործել անձի կողմից կատարված ձայնագրությունը:

Քննության արդյունքնում ՀՀ վճռաբեկ դատարանը մասնակիորեն բավարարել է բողոքները՝ բեկանելով Վ.Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերանայելով և զարգացնելով ավելի վաղ թիվ ԵԿԴ/0081/01/11 գործով կայացված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, գտել է, որ մասնավոր անձի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է ճանաչվել որպես ապացույց, ենթարկվել իրավական գնահատման, հիմք հանդիսանալ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման համար: Միաժամանակ, սակայն, Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ սահմանել է հստակ չափորոշիչներ, որոնք պետք է իրավակիրառողների կողմից հաշվի առնվեն մասնավոր անձի կողմից օրենքով չկանոնակարգված եղանակով կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցը քննարկելիս: Մասնավորապես՝ այդ հարցը գնահատելիս պետք է հաշվի առնվեն, թե արդյոք ձայնագրառման կատարումը հետապնդե՞լ է իրավաչափ նպատակ, արդյոք բացակայե՞լ է անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտության միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակին հասնելու այլընտրանքային հնարավորություն, անձը գործե՞լ է բարեխղճորեն, թե չարամիտ դիտավորությամբ, ձայնագրառումը կատարվել է հեռախոսային խոսակցության անմիջական մասնակցի՞, թե՞ երրորդ անձի կողմից, ձայնագրառումը կատարվել է մինչև քրեական վարույթ սկսե՞լը, թե՞ դրանից հետո և այլն: Իսկ քրեական դատավարության արդարացիության տեսանկյունից, ըստ Վճռաբեկ դատարանի, պետք է հաշվի առնել նաև, թե որքանո՞վ է անձը հնարավորություն ունեցել մրցակցային դատավարության պայմաններում վիճարկելու հեռախոսային խոսակցության ձայնագրության բովանդակությունը, դրա իսկությունը և հարցման ենթարկել ձայնագրառողին, ինչպես նաև՝ որքանո՞վ է ձայնագրությունն անձի մեղավորությունը ենթադրյալ հանցանքի կատարման մեջ հիմնավորող միակ կամ վճռորոշ ապացույցը:

2. ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն հարցին, թե արդյոք քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարող մատնանշելն ինքնին չի հանգեցնում անձի իրավունքների խախտման, և, վերահաստատելով *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով արտահայտած իրավական դիրքորոշումը (*տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Լևիկ Պողոսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշման 23-31-րդ կետերը*), զարգացրել է այն՝ նշելով հետևյալը.

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարող մատնանշելն ինքնին չի հանգեցնի անձի իրավունքների խախտման, եթե վերջինս պատշաճ կարգով տեղեկացվում է պաշտպանության իրավունքի մասին և նրա համար ապահովվում են դրա բովանդակությունը կազմող նվազագույն իրավունքների իրացման համար անհրաժեշտ դատավարական երաշխիքները: Ըստ այդմ էլ քրեական գործ հարուցելու մասին որոշման

նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում պետք է քննարկման առարկա դառնա այն հարցը, թե արդյոք նշված որոշման մեջ կոնկրետ անձին որպես հանցանք կատարող մատնանշած լինելու, այսինքն՝ փաստացի քրեական հետապնդում հարուցելու պարագայում պահպանվել են վերջինիս՝ որպես ենթադրյալ հանցանք կատարած անձի համար երաշխավորված դատավարական իրավունքները: Քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձի անունը մատնանշելը, ինքնին դեռևս չի վկայում վերջինիս պաշտպանության իրավունքի խախտման մասին և դատարանը կարող է որոշում կայացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին, եթե անձին հնարավորություն չի տրվել օգտվելու համապատասխան դատավարական իրավունքներից» (*տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Կարապետյանի վերաբերյալ գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԿԴ/0201/11/17 որոշման 20-րդ կետը*):

3. Դատական ծախսերի գանձման դատավարական կարգի մեկնաբանման, մասնավորապես, դատական ծախսերի գանձումը մեղադրողի կողմից քաղաքացիական հայցի ներկայացմամբ պայմանավորելու մասով ՀՀ վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՏԴ2/0083/01/17 որոշմամբ արձանագրել է, որ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է.

«Դատական ծախսերն այն նյութական ռեսուրսներն են, որոնք օգտագործվում են գործի պատշաճ քննությունն ապահովելու և/կամ տուժողի խախտված իրավունքները վերականգնելու համար: Մասնավորապես, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու անհրաժեշտությամբ գործին ներգրավված մասնագետի, թարգմանչի, փորձագետի մատուցած ծառայությունների և այլ միջոցառումների իրականացման համար ծախսված գումարները քրեական դատավարությունում ներառված են դատական ծախսերի մեջ: Միևնույն ժամանակ, օրենսդիրը դատական ծախսերի շարքին է դասել նաև տուժողին հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման գումարները՝ որպես վերջինիս խախտված իրավունքների վերականգնման միջոց:

Սակայն քրեական դատավարությունում վերոնշյալ դատական ծախսերի գանձման կառուցակարգերը չեն նույնանում: Այսպես, եթե տուժողին պատճառված վնասի հատուցման վերականգնումը որպես կանոն պայմանավորվում է նրա կողմից քաղաքացիական հայցի ներկայացման հետ, ապա մյուս դատական ծախսերի դեպքում օրենսդիրն այդպիսի պահանջ չի նախատեսել: Մասնավորապես, եթե հանցագործության հետևանքով տուժողին անմիջականորեն պատճառված վնասը հատուցվում է վերջինիս կողմից ներկայացված քաղաքացիական հայցի քննության արդյունքում, ապա գործի քննության համար ծախսված նյութական միջոցները հատուցվում են ամբաստանյալի կողմից առանց այդպիսի ընթացակարգի, դատարանի կողմից *proprio motu* (սեփական նախաձեռնությամբ): Վերջինս բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ

հոդվածի 1-ին մասից, որտեղ մի կողմից դատական ծախսերի լուծման հարցը տարանջատված է քաղաքացիական հայցի լուծման հարցից և ձևակերպված է առանձին կետով, մյուս կողմից դատական ծախսերի լուծումը պայմանավորված չէ դատավարության մասնակցի կողմից դրանց գանձման վերաբերյալ ներկայացվող պահանջով: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-169-րդ հոդվածներում օրենսդրի կողմից օգտագործվող «*դատական ծախսերը կարող են դատարանի կողմից դրվել դատապարտյալի վրա*», «*դատարանն իրավունք ունի (...) ազատել որպես պետության եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց*», «*դատական ծախսերը գանձվում է (...) ըստ դատարանի կողմից որոշված բաժնի*» ձևակերպումները ևս վկայում են այն մասին, որ դատարանի կողմից դատական ծախսերի գանձման վերաբերյալ հարցը լուծվում է *proprio motu*՝ առանց քաղաքացիական հայցի ներկայացման:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ դատական ծախսերի գումարը չի կարող հանդիսանալ քաղաքացիական հայցի առարկա: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան է կազմում հանցագործության հետևանքով անմիջականորեն պատճառված վնասը[7]: Մինչդեռ, դատական ծախսերի գումարը չի հանդիսանում հանցագործության հետևանքով անմիջականորեն պատճառված վնաս: Դատական ծախսերն առաջանում են քրեական գործի հարուցման և քննության, այլ ոչ թե հանցագործության կատարման արդյունքում: Ուստի, դատական ծախսերի գումարը չի կարող ներառվել քրեական դատավարությունում քննվող քաղաքացիական հայցի առարկայի մեջ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտ կայացնելիս դատարանը սեփական նախաձեռնությամբ որոշում է, թե ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը՝ առանց այն պայմանավորելու մեղադրողի կողմից քաղաքացիական հայցի ներկայացման հետ»:

Այդուհանդերձ, բազում խնդիրներ, որոնք ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ներկայացվել և մանրամասն վերլուծության են ենթարկվել վճռաբեկ բողոքներում և միտված են եղել հակասական իրավակիրառական պրակտիկայի վերացմանը, օրենքի միատեսակ կիրառման, իրավական որոշակիության և կանխատեսելիության ապահովմանը, իրավունքի զարգացմանը, վճռաբեկ դատարանի կողմից քննարկման առարկա չեն դարձել /բերված բողոքները վարույթ չեն ընդունվել/ և դեռևս շարունակում են մնալ չլուծված: Մասնավորապես,

1. Վիճելի է և իրավունքի զարգացման առումով առնվազն վերլուծության կարիք ունի հետևյալ հանգամանքը՝ դատավորի կողմից առերևույթ հանցագործություն կատարելու

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արկադի Վարդանյանի գործով 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ՇԴ2/0013/01/11 որոշման 14-15-րդ կետերը:

փաստի վերաբերյալ վարույթ հարուցելիս, մինչև վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար բավարար փաստական տվյալներ ձեռք բերվելը, արդյոք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելուն ուղղված գործողությունները գործող օրենսդրության իրավակարգավորումների համատեքստում պետք է դիտարկել որպես դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցում՝ այդչափ նեղացնելով /բացառելով/ հարուցված քրեական գործով ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները:

Ակնհայտ է այս իրավական հարցի կապակցությամբ բացը, հակասական պրակտիկան: Առնվազն, մեկ գործով առաջին և վերաքննիչ ատյանի դատարանները տրամագծորեն հակառակ մոտեցումներ են ցուցաբերել, իսկ որպես բացառիկ իրավիճակ խնդրին առնչություն է ունեցել նաև Բարձրագույն դատական խորհուրդը՝ իր համապատասխան՝ վիճարկվող դատական ակտին հակառակ դիրքորոշմամբ /նշված գործով դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի միջնորդությունը քննարկելիս Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների և դատավորների անկախության երաշխավոր, դատավորի անձեռնմխելիության խախտման փաստ չի արձանագրել/:

2. Առկա է մեկ այլ իրավական խնդիր՝ կապված «Համաներման մասին» օրենքի հիման վրա պատժից ազատելու կանոնների և հիմնավոր կիրառման հետ: Առկա են դեպքեր, երբ քրեական գործերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով չեն միացվել մեկ վարույթում, ինչի արդյունքում անձի նկատմամբ անհիմն կերպով կիրառվել է «Համաներման մասին» օրենքը: Այսպես.

«Համաներման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմանելուց հետո»:

Վերոգրյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ «Համաներման մասին» օրենքի կիրառմամբ պատժից ազատելու կանոնների կիրառման համար անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և/կամ 67-րդ հոդվածներով սահմանված կանոններով նշանակել վերջնական պատիժ, որից հետո, եթե պատժաչափն այնպիսին կլինի, որի նկատմամբ համաներումը կիրառելի է, ապա ամբաստանյալը համաներման կիրառմամբ կարող է ազատվել պատժից: Ըստ էության, նշված կանոններից որևէ բացառություն օրենքով չի սահմանվել:

Դատական քննության ընթացքում ամբաստանյալի նկատմամբ համաներում կիրառելու հարցը քննարկելիս դատարանները պարտադիր կերպով անդրադարձ են կատարում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված՝ տվյալ ամբաստանյալի վերաբերյալ կազմված «Ձև 8» տեղեկանքին՝ համաներման կիրառման համար սահմանափակումների առկայությունը պարզելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ «... դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող ... մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը ...»:

Նշված հոդվածի համեմատական վերլուծության արդյունքում առաջին հայացքից կարող է առավել համոզիչ լինել այն մեկնաբանությունը, թե մեկ վարույթում նույն ամբաստանյալի վերաբերյալ տարբեր քրեական գործերի միացումը դատարանի հայեցողական լիազորությունն է, քանզի քննարկվող հոդվածով այդպիսի իմպերատիվ պահանջ չի սահմանվում, այլ օգտագործվում է «կարող են միացվել» արտահայտությունը, ինչն արդեն երկընտրելի իրավազորություն ենթադրող տերմին է:

Վերոնշյալ մեկնաբանությունը սովորական պայմաններում ինքնին սխալ չէ, մինչդեռ այն դեպքերում, երբ մեկ այլ օրենքի՝ տվյալ դեպքում «Համաներման մասին» օրենքի կիրառման պարտադիր պայման է դառնում հանցագործությունների համակցության կանոնը, զուտ այդ օրենքի իրավաչափ կիրառման տեսանկյունից այն մեխանիկորեն դատարանների համար պարտադիր է դարձնում նաև քրեական գործերի միացման պահանջը, հակառակ պարագայում՝ քրեական գործերը չմիացնելու դեպքում, «Համաներման մասին» օրենքի նշված դրույթը կիմաստազրկվի և կխախտվի անձի նկատմամբ համաներման ակտը կիրառելու և այդ կապակցությամբ հենց այդ պահին նրա կողմից կատարված բոլոր հանցագործությունների համատեքստում վերջնական գնահատական տալու բովանդակային տրամաբանությունը:

Քննարկվող իրավիճակում զուտ տեխնիկական խնդիրը, որ ինչ-ինչ հանգամանքներում՝ միմյանցից անկախ պայմաններում, նույն ամբաստանյալի վերաբերյալ քրեական գործերը քննվում են տարբեր դատարաններում, որևէ խոչընդոտ չպետք է հանդիսանա դրանք միացնելու և Համաներման մասին օրենքի ընդհանուր տրամաբանությունը պահպանելու համար՝ **չստեղծելով անհիմն բարենպաստ իրավիճակ ամբաստանյալի համար:**

Նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության արդյունքում եղել է դեպք, երբ ընդհուպ առողջությանը ծանր վնաս պատճառած և պահեստարանից կողոպուտի փորձ կատարած անձն ազատվել է իրական պատիժ կրելուց, ինչը հակասում է քրեական պատասխանատվության անխուսափելիության, պատժի նշանակման սկզբունքներին ու նպատակներին: Այնինչ. քրեական գործերի միացման դեպքում հանցանքների համակցության կանոններով կարող էր կիրառվել այլ՝ նշանակված պատժից ավելի խիստ պատիժ, որի արդյունքում համաներումը կիրառելի չէր լինի:

Այս խնդրին առնչվող մեկ տասնյակից ավել վճռաբեկ բողոքներ են բերվել, որոնք վարույթ չեն ընդունվել:

3. Իրավական խնդիր է առկա նաև գողությունը կողոպուտի վերաճելու դեպքերի սահմանազատման հարցի մասով: Այսպես, քրեական իրավունքի գիտության մեջ կայուն դիրքորոշում է ձևավորված այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է որակել անձի արարքը,

երբ գողություն կատարելու ընթացքում վերջինս անմիջապես մերկացվում է, և արարքը վերաճում է կողոպուտի: Օրինակ՝ հանցավորը ապօրինի մուտք է գործում բնակարան՝ գույքը գաղտնի հափշտակելու նպատակով, սակայն գույքը վերցնելուց հետո հայտնաբերվում է բնակարանի սեփականատիրոջ կամ այլ անձի կողմից: Մոտեցումն այնպիսին է, որ եթե հանցավորը շարունակում է արարքը և տանտիրոջ (կամ այլ անձանց) ներայությամբ բացահայտ հափշտակություն է իրականացնում, ապա նրա արարքը որակվում է որպես կողոպուտ (եթե հանցավորը թողնում է գույքը ու փախչում, արարքը պետք է որակել որպես գողության փորձ):

Կողոպուտի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ հափշտակությունը բացահայտ է կատարում, և որ իր կողմից գույքի հափշտակությունը նկատում են սեփականատերերը կամ այլ անձինք: Սուբյեկտիվ կողմից այս առանձնահատկություններից հետևում է, որ հափշտակությունը կողոպուտ որակելու համար նշանակություն չունի այն հանգամանքը, թե արդյոք հափշտակություն կատարողի գործողության ականատեսը գիտակցե՞լ է դրա էությունը, թե՞ ոչ, կարևոր է, որ ինքը՝ հանցավորը գիտակցի, թե բացահայտ է գործում: Ընդ որում, եթե նույնիսկ ականատեսները չեն գիտակցում կատարվող գործողությունների իմաստը, սակայն հանցավորը կարծում է թե վերջիններս գիտակցում են իր արարքի էությունը, արարքը որակվում է որպես կողոպուտ: Օրինակ, սեփականատերը կամ այլ անձինք չեն նկատում հանցավորի արարքը, սակայն վերջինիս թվում է, թե իրեն տեսնում են և իր արարքը նկատում են: Փաստորեն բացահայտությունը, որը կողոպուտի բնութագրիչ հատկանիշն է, որոշվում է ոչ միայն և ոչ այնքան օբյեկտիվ, **որքան սուբյեկտիվ չափանիշով՝ թե ինչ է կարծել ինքը՝ հանցավորը: Այն բոլոր դեպքերում, երբ հանցավորը կարծել է, թե բացահայտ է գործում, արարքը որակվում է որպես կողոպուտ:**

Նշված մոտեցումը դատական պրակտիկայում դեռևս լիարժեք չի իրացվել, ինչի արդյունքում անձինք շարունակում են մեղավոր ճանաչվել այլ, և ոչ թե իրենց կողմից իրականում կատարած հանցագործության համար:

Այս խնդրի հանգուցալուծման նպատակով բերված վճռաբեկ բողոքը ևս վարույթ չի ընդունվել:

4. Կարևոր է նաև կեղծ փաստաթուղթ օգտագործելով պետական սահմանը հատելու արարքի որակման խնդիրը: ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայից ակնհայտ է, որ կեղծ փաստաթուղթ օգտագործելը ձևական հանցակազմ է, այսինքն արարքն ավարտվում է կեղծ փաստաթուղթ օգտագործելու պահից՝ առանց նյութական հետևանքների առաջացման: Այսինքն, տեսականորեն, նույնիսկ հնարավոր է, երբ անձը կեղծ փաստաթուղթ ներկայացնի սահմանային պահպանությունն իրականացնող աշխատակցին, վերջինս որևէ կասկած չունենալով դրա կեղծված լինելու մեջ, այն համապատասխան կերպով ընդունի և գրանցի, թույլատրելի համարի անձի կողմից սահմանն անցնելը, այնուհետև կեղծ փաստաթուղթը վերադարձնի տվյալ անձին, սակայն վերջինս ինչ-ինչ պատճառներով կամովին հրաժարվի սահմանն

ապօրինի հատելուց: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա են երկու տարբեր՝ քրեաիրավական որակումներ ենթադրող արարքներ, որոնցից մի դեպքում առկա է կեղծ փաստաթուղթ օգտագործելու հանցագործությունը, քանի որ այն ուղղակի ավարտվեց հենց օգտագործելու պահից՝ անկախ նրանից, որ անձը չհատեց սահմանը, մյուս դեպքում ապօրինի սահմանատման հանցակազմը բացակայում է, քանի որ առկա է հանցագործությունից կամովին հրաժարում: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի դիսպոզիցայից պարզ է դառնում, որ կեղծ փաստաթղթեր օգտագործելը, որպես տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի առանձին գործողություն, նախատեսված չէ: Այլ կերպ ասած՝ իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ օգտագործելը մեկ այլ հանցակազմի՝ տվյալ դեպքում պետական սահմանն ապօրինի հատելու բաղկացուցիչ մաս չէ և ընդգրկված չէ հիշատակված հանցագործության հատկանիշների նկարագրության մեջ: Ապօրինի սահմանատումը կարող է կատարվել ինչպես կեղծ փաստաթուղթ օգտագործելով, այնպես էլ առանց դրա: Առաջին դեպքում, բնականաբար, կեղծ փաստաթուղթ օգտագործելու մասին խոսք չի կարող լինել, ինչ վերաբերում է երկրորդ դեպքին, ապա ակնհայտ է, որ նշված իրավիճակում առկա են միմյանցից իրենց էությամբ ու տրամաբանությամբ, ինչպես նաև նպատակային նշանակությամբ տարբեր քրեաիրավական արարքներ:

Պարզ է, որ մեկ այլ հանցանքի կատարման համար օգտագործվող միջոցը կամ եղանակը չի կարող առանձին քրեաիրավական որակման արժանանալ, բացառությամբ այն դեպքերի, երբ հենց այդ միջոցը կամ եղանակը ևս համարվում է ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով նախատեսված հանցագործություն: Հետևաբար, այն դեպքում, երբ անձը կեղծ փաստաթուղթ օգտագործելով ապօրինի հատում է սահմանը, ապա նրա արարքը պետք է որակել ոչ թե իդեալական, այլ հենց իրական համակցությամբ: Այսինքն, հանցավորը ոչ թե մեկ գործողությամբ կատարում է քրեական օրենքով չթույլատրված երկու առանձին արարք, ինչպիսին իդեալական համակցությունն է, այլ հենց տարբեր՝ միմյանցից անկախ երկու տարբեր գործողություններ՝ կեղծ փաստաթուղթ օգտագործելուց հետո, երբ առաջին հանցանքն ավարտվեց, ապօրինի հատում է սահմանը՝ կատարելով քրեական օրենքով արգելված երկրորդ չթույլատրված արարքը:

Մինչդեռ, դատական պրակտիկան հաճախ առաջնորդվում է այլ մոտեցմամբ, ինչի կապակցությամբ ներկայացվել են մի շարք վճռաբեկ բողոքներ, որոնք, սակայն, վարույթ չեն ընդունվել:

5. Դատական պրակտիկայում միասնական մոտեցում առկա չէ նաև այն հարցի վերաբերյալ, թե արդյոք առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը լիազորություն ունի վերանայելու դատապարտյալի նկատմամբ համաներում կիրառելու մասին քրեակատարողական հիմնարկի պետի որոշումը:

Մասնավորապես, մի դեպքում դատարանները գտնում են, որ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված որոշումը՝ համաներման ակտի

կիրառման հետ կապված, բխում է ՀՀ քրեական օրենսգրքով կարգավորվող հարաբերություններից, հետևաբար՝ դրա դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեաիրավական նորմերի կիրառմամբ: Սակայն, նման դեպքերում, դատարանները չեն պատճառաբանել, որ նման գործերն առաջին ատյանի դատարանի կողմից քննելիս դատավարական ինչպիսի ընթացակարգ է սահմանված, որ իրավանորմերով պետք է ղեկավարվի դատարանը, ինչ լիազորություն ունի կամ պետք է ունենա դատարանը, ինչ ժամկետներում, ինչ կարգով պետք է քննի տվյալ գործը, ինչպիսի հայեցողական որոշումներ կայացնելու իրավունք ունի դատարանը: Վերը թվարկված հանգամանքների իրավական անորոշությունների առկայությամբ պայմանավորված՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1439 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել, որ մինչև Ազգային ժողովի կողմից իր որոշմամբ արտահայտված՝ համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, մինչդեռ դատարանները շատ դեպքերում դատական ակտում չեն պատճառաբանում, թե ինչու ՀՀ սահմանադրական դատարանի վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները տվյալ կոնկրետ գործերով կիրառելի չեն, իսկ իրենց հիմնավորումները կիրառելի են:

Նպատակ ունենալով ապահովել օրենքի միատեսակ կիրառություն և իրավական կանխատեսելիություն՝ այս իրավական հիմնավորումներով ներկայացվել է վճռաբեկ բողոք, սակայն այն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չի ընդունվել:

6. Մեկ այլ վճռաբեկ բողոքով, որը նույնպես վարույթ չի ընդունվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, բարձրացվել է այն խնդիրը, թե արդյոք բոլոր դեպքերում քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է հեռախոսային խոսակցությունները լսելու ու ձայնագրառելու (հեռախոսազանգերի վերծանումները ստանալու) հիմքերի բավարարություն, թե՝ ոչ, եթե ոչ, ապա, ինչպիսի լրացուցիչ հատկանիշներ են անհրաժեշտ, որպեսզի հեռախոսային խոսակցությունները լսելու ու ձայնագրառելու (հեռախոսազանգերի վերծանումները ստանալու) հիմքերի բավարարությունը տարբերվի քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունից: Այսինքն՝ արդյոք հանցանք կատարած լինելու մասին ողջամիտ ենթադրությունից արդեն իսկ հետևում է մյուս ողջամիտ ենթադրությունն այն մասին, որ առկա են կոնկրետ անձի հեռախոսազանգերի վերծանումները ստանալու բավարար հիմքեր:

Մուտքային և ելքային զանգերի վերծանումները ստանալը թույլատրելու համար միջնորդությամբ ներկայացված հիմքերի բավարարության հարցը գնահատելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ տարբերություն չի դառնում հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերը վերծանումները ստանալու անհրաժեշտության մասին վկայող տվյալի և քրեական գործ հարուցելու հիմքի մասին վկայող տվյալի միջև, այլ խոսքով՝ հեռախոսահամարի մուտքային և ելքային զանգերի

վերծանումները ստանալու անհրաժեշտության մասին վկայող տվյալին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չեն առաջադրվում արժանահավատության կամ վերաբերելիության առավել բարձր չափանիշներ, քան քրեական գործ հարուցելու հիմքի մասին վկայող տվյալին:

Հետևաբար, քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է նաև հեռախոսային խոսակցությունները լսելու ու ձայնագրառելու (հեռախոսազանգերի վերծանումները ստանալու) հիմքերի բավարարություն, այլ խոսքով՝ այս դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասում և 241-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ «բավարար հիմքեր» եզրույթները նույնանում են:

7. ՀՀ վճռաբեկ դատարանը վարույթ չի ընդունել նաև քրեական գործերով ներկայացված վճռաբեկ բողոքները, որոնցում բարձրացվել են հետևյալ հարցերը.

ա) Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու որոշման դատական ստուգման ընթացքում վերաքննիչ դատարանն իրավասու է արդյոք պահանջել կամ կողմերի միջնորդությամբ գործին կցել անհրաժեշտ նյութեր, եթե դրանք առաջին ատյանի դատարանում չեն ներկայացվել: Գտնում ենք, որ եթե «հիմնավոր կասկածը» հաստատող նյութերի հնարավոր անբավարարության խնդիրն առաջացել է վերաքննիչ դատարանում, ուստի վարույթն իրականացնող մարմինը պետք է զրկված չլինի լրացուցիչ նյութեր ներկայացնելու հնարավորությունից: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման (եթե միջնորդությունը բավարարվել է) դատական ստուգման ընթացքում քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է հնարավորություն ունենա դատարան ներկայացնել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր:

բ) Արդյոք անհրաժեշտ չէ միասնական մոտեցում այն դեպքերի համար, երբ առաջին ատյանի դատարանը և՛ խափանման միջոց ընտրելիս, և՛ դրա ժամկետը երկարացնելիս հաստատված է համարում «հիմնավոր կասկածի» առկայությունը, իսկ վերաքննիչ դատարանը կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը բավարարելու դեմ բերված բողոքի քննության շրջանակներում ներկայացված փաստական տվյալները գնահատում է «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով և արձանագրում «հիմնավոր կասկածի» բացակայությունը: Փաստորեն, ստացվում է, որ ստորադաս դատարանի երկու տարբեր ակտերում՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի որոշումներում փաստական տվյալները գնահատվել են միմյանց հակասող բովանդակությամբ:

Հետևաբար, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու տեսանկյունից:

2019 թվականի ընթացքում վարույթ ընդունված 20 բողոքից 3-ը կամ 15%-ը եղել է արդարացման, 2-ը կամ 10%-ը՝ կարճման դեմ, 5-ը կամ 25%-ը՝ պատժի մեղմության դեմ, 4-ը կամ 20%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 6-ը կամ 30%-ը՝ այլ հիմքով:

Միաժամանակ, հարկ է նշել, որ մեղադրանքի պաշտպանության ոլորտում աշխատանքների ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք հրատապ քննարկման և համարժեք լուծումների կարիք ունեն: Այսպես.

1. Պատժի նպատակների՝ սոցիալական արդարության վերականգնման, հանցանք կատարած անձի ուղղման, նոր հանցագործությունների կանխման, ապահովումը արդարադատության գործառույթի գերխնդիրն է: Հետևաբար և իրավակարգավորումները և ձևավորված պրակտիկան պետք է անշեղորեն միտված լինեն, առանց բացառության, յուրաքանչյուր դեպքում դատարանի կողմից նշանակված պատժի անխուսափելի ապահովմանը:

Վիճակագրությունը վկայում է, որ յուրաքանչյուր տարի դատապարտվածների շուրջ 20%-ի /նախորդ տարի՝ 18,4%/ նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում:

Քրեաիրավական այս ինստիտուտն ինքնանպատակ չէ, և դրա ինչպես կիրառումը դատարանի կողմից, այնպես էլ կատարումը պետք ծառայի վերը նշված նպատակներին: Առավել ևս, ինչպես նշվեց, այդ ինստիտուտի կիրառման մեծ ծավալները պահանջում են դրա նշանակման, կատարման նկատմամբ ծայրաստիճան լուրջ և հետևողական վերաբերմունք բոլոր իրավասու մարմինների կողմից:

Սակայն պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այդ ոլորտում ունենք լուրջ խնդիր, ինչն արժանի է պատշաճ ուշադրության:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել որոշակի պարտականություններ՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք:

Նույնաբովանդակ նորմ նախատեսում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանն անձի վրա կարող է դնել սույն օրենսգրքի 70-րդ հոդվածի հինգերորդ մասով նախատեսված պարտականությունները, որոնք անձը պետք է կատարի պատժի չկրած մասի ընթացքում: Եթե դատապարտյալը դեռևս չի հատուցել կամ այլ կերպ հարթել

տուժողին պատճառված իրական վնասը, ապա դատարանը դատապարտյալի վրա նման պարտականություն է դնում:

Նշված նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելու դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ, և գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում, կապված գործի հանգամանքներից, դատարանը **կարող է** դատապարտյալի նկատմամբ փորձաշրջանի ընթացքում սահմանել որոշակի պարտականություններ կամ զերծ մնալ որոշակի պարտականություններ սահմանելուց:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտների բովանդակությունը ոչ միայն նշանակված պատիժը կամ դրա մի մասն անձի կողմից ռեալ չկրելն է, այլև այն ենթադրում է անձի համար այնպիսի պարտականություններ, որոնց կատարումը նպաստում է հանցագործության պատճառի և դրան նպաստող հանգամանքների վերացմանը, դատապարտյալի ուղղմանը, այդ թվում՝ նրա հասարակական կապերի ամրապնդմանը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեջբերված իրավական նորմերը գործնականում չեն կիրառվում, և դատարանները, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելիս, վերջիններիս նկատմամբ պարտականություն սահմանելու հարցը չեն քննարկում և այդպիսիք չեն սահմանում, ինչի արդյունքում սահմանվող փորձաշրջանը վեր է ածվում բացառապես ժամանակի պարզ ընթացքի՝ առանց դատապարտյալի ուղղմանը, նրա կողմից նոր հանցանք կատարելը կանխելուն նպաստող որևէ գործողության: Արդյունքում՝ հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումը վտանգվում է:

Հայաստանի Հանրապետությունում դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քրեական գործով ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառված լինելու պայմաններում, երբ ամբաստանյալի նկատմամբ լրացուցիչ պարատականություն դրված չի եղել, ի հայտ է եկել ՀՀ գործող օրենսդրությամբ չկարգավորված խնդրահարույց իրավիճակ: Մասնավորապես,

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 24.03.2017թ. կայացրած թիվ ԵՄԴ/0152/01/16 դատավճռի համաձայն՝ Արթուր Միքայելի Սարուխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քր.օր-ի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 6 վեց ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոնով վերջնական պատիժ է նշանակվել վեց ամիս ժամկետով ազատազրկում և 880.000 ՀՀ դրամ տուգանք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 09.06.2017թ. որոշմամբ Արթուր Սարուխանյանի նկատմամբ դատավճռով նշանակված վեց ամիս ժամկետով ազատազրկումը ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է երկու տարի ժամկետով փորձաշրջան: Դատական ակտով Արթուր Սարուխանյանի նկատմամբ լրացուցիչ պարտականություն չի սահմանվել:

Թիվ ԵՄԴ/0152/01/16 դատավճիռը ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության Երևանի երկրորդ բաժին է ստացվել 15.08.2017թ. և ընդունվել ի կատար ածման:

2017թ. օգոստոսի 18-ին նույն բաժնում Արթուր Սարուխանյանը վերցվել է հաշվառման, նրան պարզաբանվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները:

2017թ. օգոտսոսի 28-ին Ա.Սարուխանյանը դիմել է դատարան՝ իր նկատմամբ նշանակված տուգանքի գումարի վճարումը տարաժամկետելու համար:

Արթուր Սարուխանյանի դիմումը բավարարվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 12.02.2018թ. կայացված որոշմամբ, և 880.000 ՀՀ դրամ տուգանքի չվճարած մասի՝ 830.000 ՀՀ դրամի վճարումը տարաժամկետվել է մեկ տարի ժամկետով՝ մինչև 13.02.2019թ.՝ յուրաքանչյուր ամսվա 20-ին 69.170 ՀՀ դրամ գումար վճարելու պայմանով:

Հետագայում պարզվել է, որ դատապարտյալն առանց պատշաճ տեղեկացնելու բացակայել է երկրից և խուսափել է պատժի կրումից:

ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության Երևանի 2-րդ բաժնի կողմից 2018թ. մարտի 29-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել միջնորդություն՝ Արթուր Սարուխանյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնել ու նրան ուղարկելու կրելու 2017թ. մարտի 24-ի կայացված թիվ ԵՄԴ/0152/01/16 դատավճռով սահմանված պատիժը՝ վեց ամիս ժամկետով ազատազրկումը, սակայն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. օգոստոսի 13-ի որոշմամբ վերը նշված միջնորդությունը մերժվել է: Դատարանը ՀՀ ԱՆ պրոբացիոն ծառայության միջնորդությունը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դատարանի կողմից Արթուր Սարուխանյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմաններում, վերջինիս նկատմամբ լրացուցիչ պարտականություն դրված չի եղել, հետևաբար, գործող օրենսդրության համաձայն, նա զրկված չի եղել բնակության վայրը փոխելու, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու իրավունքից: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը դատախազության կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:

Փաստորեն ստեղծվել է մի իրավիճակ, երբ պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմաններում, դատապարտյալի նկատմամբ լրացուցիչ պարտականություն դրված չլինելու պատճառով, ըստ էության ՀՀ ԱՆ պրոբացիոն ծառայությունը զրկված է եղել իրականացնելու օրենքով իրեն վերապահված գործառույթը՝ մասնավորապես հսկողություն

իրականացնել ամբաստանյալի վարքի, ինչպես նաև՝ փորձաշրջանի ընթացքում նրա ուղղման դինամիկայի նկատմամբ: Արդյունքում, ամբաստանյալը, որի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ըստ էության դուրս է մնացել պրոբացիոն ծառայության վերահսկողությունից, իսկ ավելի կոկրետ՝ պետական հարկադրանքը ձևական բնույթ է կրել: Նման դեպքերն եզակի չեն:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե փորձաշրջանի ընթացքում դատապարտյալը չարամտորեն խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, ապա դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին:

Վերոգրյալից ակնհայտ է, որ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը դատապարտյալի նկատմամբ կիրառված պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին միջնորդություն կարող է ներկայացնել միայն այն դեպքում, երբ անձը չարամտորեն խուսափում է **դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց:**

Այսինքն, եթե դատարանը որոշում է կայացնում դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ և միևնույն ժամանակ վերջինիս նկատմամբ փորձաշրջանի ընթացքում **որևէ պարտականություն չի սահմանում**, ապա զրկում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնին ներկայացնել դատապարտյալի նկատմամբ կիրառված պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին միջնորդություն: Հետևաբար, դատարանի կողմից դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս՝ դատարանը **պարտավոր է** համապատասխան որոշմամբ դատապարտյալի նկատմամբ փորձաշրջանի ընթացքում սահմանել որոշակի պարտականություն, որպեսզի հետագայում **դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները** կատարելուց հրաժարվելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը ռեալ հնարավորություն ունենա ներկայացնել համապատասխան միջնորդություն:

Բարձրացված հիմնախնդրի առնչությամբ գտնում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ դատարանները հանգում են այն եզրակացության, որ կոնկրետ դեպքով ենթակա է կիրառման ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 76-րդ հոդվածները, ապա պատժի նպատակներից և իրավական որոշակության սկզբունքից ելնելով պետք է ամբաստանյալի համար սահմանեն որոշակի պարտականություններ:

Սակայն, եթե դատարանները գտնում են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 76-րդ հոդվածներով սահմանված «**կարող է դնել որոշակի պարտականություններ**» եզրույթը

կարելի է մեկնաբանել այնպես, որ երբեմն բացառիկ դեպքերում դատարանը օգտվելով նշված ձևակերպմամբ ընձեռնվող հայեցողական լիազորությունից կարող է նաև որևէ պարտականություն չսահմանել ամբաստանյալի համար, ապա, տվյալ դեպքում դատարանները պարտավոր են պատճառաբանված որոշմամբ հիմնավորել, թե ինչու է կանկրետ դեպքով պարտականություն սահմանելու անհրաժեշտությունը բացակայում:

Նշված հարցը համալիր քննարկման առարկա դարձնելու և հիմնովին կարգավորելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազը դիմել է Բարձրագույն դատական խորհրդի նախագահին:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազներին հանձնարարվել է ապահովել, որպեսզի ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու կամ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեմ չառարկելու դեպքում քննարկեն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կամ դատապարտյալի ուղղմանը նպաստող այլ պարտականություններ դնելու անհրաժեշտության հարցը՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում մեղադրական ճառով համապատասխան միջնորդություն ներկայացնելու դատարան: Միաժամանակ, հանձնարարվել է ապահովել այն դատական ակտերի բողոքարկումը, որոնցով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ դատապարտյալի նկատմամբ պատիժը պայմանական վաղաժամկետ ազատելիս նրանց վրա անհիմն չեն դրվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կամ դատապարտյալի ուղղմանը նպաստող այլ պարտականություններ:

2. Հաջորդ կարևոր և անհանգստացնող խնդիրը գործերով դատական քննության ձգձգումներն են, ինչը բացի այն, որ հանգեցնում է դատավարության մասնակիցների իրավունքների խախտման, արդարադատության գործընթացի անարդյունավետության, նաև առաջացնում է հանրային արդարացի դժգոհություն:

ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել են Երևան քաղաքի և մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների վարույթում քննվող քրեական գործերի տևականության խնդիրը: Ըստ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ դեպքերում դատավորների վարույթում գտնվող գործերի քննությունը չի համապատասխանում ողջամիտ ժամկետներում դատաքննության այն չափանիշներին, որոնք սահմանվել են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող՝ առանձնապես խոշոր

չափերով հափշտակության վերաբերյալ մի գործով պարզվել է, որ 2017թ. մայիսի սկզբին դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից այն մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկվելուց հետո գործը հաջորդաբար վարույթ ընդունած 3 դատավորների՝ այլ դատարաններում նշանակվելու հանգամանքով պայմանավորված՝ դատական քննությունը ներկայումս դեռևս գտնվում է նախապատրաստական փուլում:

Նույն իրավիճակն է 2017թ. դեկտեմբերի սկզբին մեղադրական եզրակացությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված քրեական գործի պարագայում: Շուրջ երկու տարի գտնվելով դատարանի վարույթում՝ սույն գործով ոչ միայն չի կայացվել վերջնական դատական ակտ, այլ գործընթացը դեռևս դատաքննության նախապատրաստական փուլում է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում տևական ժամանակ դատարանում գործերի քննության պայմաններում լրանում են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, ինչն առաջացնում է դատավարության մասնակիցների արդարացի դժգոհությունը: Մասնավորապես, 2017թ. փետրվարին քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, դատավորի կողմից ընդունվել վարույթ, սակայն այս գործով նշանակված 36 դատական նիստերից կեսը՝ 18-ը, չի կայացել, ընդ որում՝ հիմնականում դատարանի ծանրաբեռնվածության կամ արձակուրդում գտնվելու պատճառով: Դատական քննության ձգձգումն ի վերջո հանգեցրել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների լրացման, ինչով պայմանավորված՝ քրեական գործի վարույթը կարճվել և ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Նկատի ունենալով, որ նման պրակտիկայի հետևանքով խախտվում է յուրաքանչյուր անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքը, ինչպես նաև հնարավորություն չի ստեղծվում անձանց մեղավորության հաստատման դեպքում իրականացնել պատժի նպատակները, վտանգվում է սոցիալական արդարության վերականգնման սկզբունքի իրագործումը, ՀՀ գլխավոր դատախազը դիմել է Բարձրագույն դատական խորհրդին: ՀՀ գլխավոր դատախազը խնդրել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով Բարձրագույն դատական խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակներում պարզել նման ձգձգվող գործերը, միջոցներ ձեռնարկել դատարանների վարույթում քննվող քրեական գործերով դրանց քննության ժամկետների ողջամտությունն ապահովելու ուղղությամբ և ձեռնարկված միջոցների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն:

Ընդ որում, պետք է նշել, որ ողջամիտ ժամկետում գործերի քննության հարցին վերջերս անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը (*տե՛ս ԵԱՔԴ/0016/01/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2019թ. սեպտեմբերի 18-ի որոշումը*), որի շրջանակներում քննության առարկա գործով առկա էր հետևյալ պատկերը.

Գործի քննության ընդհանուր տևողության ժամկետում՝ սկսած՝ 2013 թվականի հուլիսի 9-ից, մինչդատական վարույթի ժամկետի հաշվառմամբ, առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում քրեական գործի քննությունն ավարտվել է 2016 թվականի հունիսի 24-ին: Այսինքն՝ քրեական գործի ըստ էության քննության ընդհանուր ժամկետը տևել է երկու տարի տասնմեկ ամիս տասնհինգ օր: Այնուհետև, Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի որոշմամբ գործով դատական ակտերը բեկանելուց և լրացուցիչ պատժի մասով գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելուց հետո, լրացուցիչ պատժի նշանակման հարցի քննությունն առաջին ատյանի դատարանում տևել է մեկ տարի տասնմեկ ամիս (գործն առաջին ատյանի դատարանում ստացվել է 2016 թվականի հոկտեմբերի 24-ին և ավարտվել 2018 թվականի սեպտեմբերի 24-ին՝ դատական ակտի հրապարակմամբ): Այս առնչությամբ հիշյալ որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «Նշված ժամկետն ակնհայտ արդարացված չէր՝ հաշվի առնելով ինչպես դատական ակտի հրապարակման օրվա դրությամբ գործի քննության ընդհանուր ժամկետը, այնպես էլ գործի փաստական և իրավական հանգամանքները: Ընդ որում, հարկ է նկատել, որ առաջին ատյանի դատարանում լրացուցիչ պատժի նշանակման հարցի քննությունը տևել է ավելի, քան առաջին ատյանի դատարանում քրեական գործի ըստ էության քննությունը (ինչը տևել է մեկ տարի երեք ամիս քսանվեց օր) (52):»:

Նշվածից հետևում է, որ նման որոշման պայմաններում բարձրացված խնդրի լուծումն ավելի արդիական է:

Այս առումով անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին ապահովել, որպեսզի բացառվի առանց ծայրահեղ և հարգելի անհրաժեշտության՝ դատարաններում մեղադրանքը պաշտպանող դատախազների կողմից դատական նիստերին չներկայանալը:

Նշվածի վերաբերյալ բոլոր ահազանգերը, ինչպես նաև մեր վերահսկողական մեխանիզմներով բացահայտումները լուրջ ստուգման են ենթարկվում, խախտում թույլ տված դատախազների նկատմամբ կիրառվում են կարգապահական ներգործության միջոցներ:

3. Լրջագույն խնդիր է նաև երկրում կայուն և արդարացի պատժողական պրակտիկայի արմատավորումը: Թեև պատիժը խիստ անհատական քրեաիրավական ներգործության միջոց է՝ պայմանավորված ինչես հանցագործության, այնպես էլ հանցանք կատարած անձի՝ օրենքով մատնանշված բազմաթիվ բնութագրիչներով, այդուհանդերձ հանցագործության տեսակով, յուրաքնաչյուր երկրում կոնկրետ ժամանակահատվածում արձանագրված դրա ծավալներով, հասարակական հարաբերությունների վտանգման քանակական, որակական աստիճանով, որոշակի հանցատեսակների դեմ համակողմանի պայքարի հրամայականով և նմանատիպ գործոններով պայմանավորված պատժողական

միասնական քաղաքականությունը /որպես կանոն/ էական ազդեցություն ու նշանակություն ունի երկրում հանցավորության դեմ պայքարի, արդարադատության արդյունավետության ապահովման համար:

Նկատի ունենալով տևական ժամանակ մեր երկրում հանցավորության ընդհանուր զանգվածում բնակարանային գողությունների մեծ ծավալները, աճի տեմպերը և գործնականում հանդիպող ահազանգող դեպքերը, մեր կողմից վերլուծվել է այդ հանցատեսակի պատժողական պրակտիկան:

Այսպես, 2018 թվականի ընթացքում բնակարանային գողության համար դատապարտված 127 անձանցից 43-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ինչը կազմում է 33.8%, իսկ 2019 թվականի ընթացքում բնակարանային գողության համար դատապարտված 147 անձանցից պատիժը պայմանականորեն չի կիրառվել 39 անձի նկատմամբ, ինչը կազմում է 26.5%: Մեր մշտական և հետևողական ջանքերը տարեց տարի որոշակի դրական արդյունք են ապահովում, սակայն այդ տեմպերը բավարար չենք համարում: Ակնհայտ է, որ բնակարանային գողության դեպքերով պատժողական քաղաքականությունը հաշվետու տարում խստացվել է՝ պայմանավորված ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի որոշման պահանջներով, այս հանցատեսակի դեմ հետևողական և անզիջում պայքար մղելու տրամաբանությամբ: Սակայն, դարձյալ արձանագրվում են բնակարանային գողություններ կատարած ամբաստանյալների նկատմամբ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելու դեպքեր, ընդ որում, նման պատիժներ նշանակելու համար դատարանների կողմից երբեմն արհեստականորեն մեկ մեղմացնող հանգամանքը մեկնաբանվում է մի քանի ձևով՝ նշելով՝ ամբաստանյալը տվել է խոստովանական ցուցմունք, ընդունել է մեղքը, առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել, զղջացել է կատարածի համար և այլն, տպավորություն ստեղծելով, թե այդպիսի հանգամանքները շատ են, մինչդեռ ակնհայտ է, որ թվարկված հանգամանքները վկայում են պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող մեկ հանգամանքի մասին:

Մասնավորապես, թիվ ԱՐԱԴ/0028/01/19 քրեական գործով դատարանը 2019թ. օգոստոսի 16-ին կայացրել է դատավճիռ, որով որպես ամբաստանյալի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ նշել է. «… նա … **(1)** հանցավոր արարքը կատարելուց հետո ինքնակամ ներկայացել է ոստիկանություն և հայտնել, որ տուժողի բնակարանից ինքն է կատարել գողությունը, **(2)** քրեական գործի նախաքննության ընթաքցում տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, **(3)** աջակցել է հանցագործության բացահայտմանը, …, **(4)** առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչում և **(5)** զղջում է կատարածի համար, … :» *(թվակալումով ընդգծումը մերն է):* Մեկ այլ՝ թիվ ԵԴ/0913/01/19/ քրեական գործով դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 20-ի դատավճռով որպես պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դիտարկել է, ի թիվս այլնի, ամբաստանյալի՝ խնամքին անչափահաս երեխա ունենալու հանգամանքը, որի վերաբերյալ անհարկի կրկնողությամբ արձանագրել է. «… **(1)**

խնամքին ունի անչափահաս մեկ երեխա, ... **(2)** որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք ... դատարանը համարում է պատիժ նշանակելու պահին նրա խնամքի տակ մինչև 14 տարեկան մեկ երեխայի առկայությունը» *(թվակալումով ընդգծումը մերն է):*

Նման կարգի դատական ակտերի դեմ, որպես կանոն, դատախազների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, իսկ ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալի կողմից նաև 16 վճռաբեկ բողոք, սակայն, դատական վերադաս ատյանների կողմից դրանք չեն բավարարվել, այդ կերպ ծանր հանցանք կատարած անձինք փաստացի ազատվել են պատժից, ինչը հակասում է այս հանցատեսակի դեմ պայքարի պետական քաղաքականության տրամաբանությանը:

Ընդ որում, այդ քաղաքականության ակնհայտ վկայությունն է նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածում դեռևս 2011թ. կատարված փոփոխություններով բնակարանային գողությունը հոդվածի 2-րդ մասից հանվեց և տեղ գտավ 3-րդ մասում՝ միջին ծանրության հանցագործությունից /որի համար պատիժ էր նախատեսվում մինչև 5 տարի ազատազրկում/ դարձավ ծանր հանցագործություն /պատիժը՝ 4-8 տարի ազատազրկում/, սակայն դատական պրակտիկան համահունչ չէ տարվող համակողմանի պետական քաղաքականությանը:

4. Հրատապ խնդիր է նաև առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման նստավայրերի հարցը, քանի որ քրեական հետապնդման մարմինների ժամանակի և հանրային ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, նյութական) խնայողության, լիազորությունների պատշաճ իրականացման, աշխատանքի արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների, ամբաստանյալների, վկաների՝ դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքների պատշաճ իրականացման կարևոր պայման է հանդիսանում: Հաճախ է պատահում, որ քրեական մասնագիտացման գծով դատավորի թափուր տեղի կամ մոտակա համապատասխան նստավայր չունենալու պատճառով դատախազները մեկ ամսվա ընթացքում ավելի քան տաս օր մեկ այլ մարզի տարածքում մասնակցում են դատական նիստերի: Բացի այդ, մարզերում քննվող քրեական գործերով շատ դեպքերում տուժողները, վկաները, ամբաստանյալները, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության շահառուները մարզի բնակիչներ են, որոնց դատարան ներկայանալու հետ կապված նույնպես առաջանում են օբյեկտիվ դժվարություններ, ինչն իր հերթին դատական նիստերի անհարկի հետաձգումների պատճառ է հանդիսանում:

Այսպիսի խնդիրը պատշաճ ուշադրության, համակողմանի ուսումնասիրման և կարգավորման անհրաժեշտություն ունի: ՀՀ գլխավոր դատախազը նշված խնդրի լուծման նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկելու հարցով դիմել է Բարձրագույն դատական խորհրդին:

Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտում ՀՀ դատախազության 2019 թվականի աշխատանքներին անդրադառնալիս հարկ ենք համարում նշել նաև, որ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրությունների հետընտրական շրջանում տեղի ունեցած իրադարձություններին առնչվող քրեական գործերի վերանայման գործընթացի շրջանակներում՝ նշված գործերով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռների դեմ նոր հանգամանքի և արդարադատության բուն էությունը խաթարող հիմնարար իրավունքների խախտման հիմքով ՀՀ գլխավոր դատախազի կողմից բերվել է 16 բողոք, որոնցից 13-ը ներկայացվել է վճռաբեկ դատարանին, իսկ 3-ը՝ վերաքննիչ դատարանին: Նշված գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցով քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը: Մասնավորապես՝ խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով երաշխավորված գործի արդարացի քննության իրավունքը, անձանց մեղադրանքների հիմքում դրվել են անթույլատրելի ապացույցներ, բացի այդ՝ դատաքննության ընթացքում դատարանը անհիմն կերպով մերժել է պաշտպանության կողմի միջնորդությունները՝ դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու դեպքին ականատես անձանց, իսկ մեղադրական դատավճռի հիմքում դրել է բացառապես վիճարկվող իրադարձություններում ակտիվ դեր ունեցած ոստիկանության աշխատակիցների՝ վարույթի ընթացքում պատշաճ չստուգված ցուցմունքները, կամ մեղադրանքի հիմքում դրվել են վկաների հակասական ցուցմունքները, կամ դատարանի կողմից անարժանահավատ են համարվել վկաների դատաքննական ցուցմունքները՝ չնայած դրանք գործով առկա այլ տվյալներով չեն հերքվել:

Մինչդեռ Եվրոպական դատարանը «Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով, վկայակոչելով նաև Հայաստանին չառնչվող մի շարք այլ գանգատներով կայացված իր որոշումները, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ «...ներպետական դատարանները մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, որոնք, ավելին, հիմնված են եղել հակասական ապացույցների վրա, չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն էին և ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում: Կարելի է ասել, որ իրադարձությունների վերաբերյալ ոստիկանության կողմից ներկայացված տարբերակն անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներից որևէ մեկին պատշաճ կերպով չանդրադառնալը և պաշտպանության կողմի վկաներին քննելու հարցում մերժելը՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել են

պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդար դատաքննության երաշխիքներին (տե՛ս mutatis mutandis, «Կասպարովը և այլք»՝ վերեւում հիշատակված, § 66):»:

Բողոքարկումների արդյունքում 3 գործով բողոքներն ամբողջությամբ բավարարվել են, և արդյունքում կայացվել արդարացման որոշումներ: 9 բողոք ընդունվել է վճռաբեկ և վերաքննիչ դատարանների վարույթ, իսկ մնացած 4-ի դեպքում վարույթ ընդունելու հարցը քննարկման փուլում է:

Նշված գործերն ուսումնասիրության փուլում են և հիմնարար խախտումներ հայտնաբերելիս կներկայացվեն բողոքներ:

5. **Պետության շահերի պաշտպանության ոլորտ**

Պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում 2019թ. ընթացքում ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները հսկայածավալ աշխատանքներ են իրականացրել:

Մասնավորապես ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային ընդգրկման բազմաթիվ ոլորտներում կատարվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ընդհանուր առմամբ 1136 ուսումնասիրություն՝ 2018թ. համեմատ 11.4%-ով ավելի /2018թ. ՝ 1020/:

Ուսումնասիրություններն ընդգրկել են պետական և հանրային գույքի պահպանության, մասնավորեցման, հողօգտագործման, ճանապարհաշինության, էներգետիկայի, բնապահպանության, ընդերքօգտագործման, ջրային ենթակառուցվածքների պահպանության և կառավարման, առողջապահության, իսկ զինվորական դատախազության իրավասության շրջանակներում՝ թիկունքային ծառայության, սպառազինության, ռազմաբժշկական, կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման ոլորտները:

Ուսումնասիրությունների արդյունքներով պետությանը պատճառված վնասների վերականգման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու, ինչպես նաև պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով պետական մարմիններին ներկայացվել է ընդհանուր 162 հաղորդում և միջնորդագիր:

Դատախազների կողմից դատարաններ է ներկայացվել ընդհանուր մոտ 1.67մլրդ դրամի բռնագանձման պահանջով պետական շահերի պաշտպանության 76 հայց: Մոտ 6 մլրդ 350մլն դրամ պահանջով հայցերի քննություն գտնվում է ընթացքի մեջ:

Դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստերի առթիվ հարուցվել է 269 քրեական գործ, իսկ 338 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար:

Քրեական գործերը հարուցվել են, մասնավորապես, պետական միջոցներով իրականացված առանձին, այդ թվում ստրատեգիական նշանակության օբյեկտների շինարարության և վերանորոգման ընթացքում կատարված յուրացումների ու վատնումների, օտարման ոչ ենթակա օբյեկտների ապօրինի օտարման, պետական կամ համայնքային սեփականության գույքի վարձակալության տրման, կառավարման, ներդրումային պրտավորությունների կատարման, հանրապետական նշանակության հուշարձանների պահպանության, պետական գնումների ոլորտներում թույլ տրված

չարաշահումների, էներգետիկ կայանների շահագործման խախտումներով միջոցներ չձեռնարկելու, ճանապարհաշինության ոլորտում փաստացի չկատարված կամ թերի կատարված աշխատանքները որպես ամբողջությամբ կատարված համարելու, անտառային և այլ հողերի կատեգորիաների փոփոխության, ձկան պաշարների պահպանության ոլորտներում թույլ տրված ապօրինությունների, բնական ռեսուրսների ապօրինի շահագործման, գնահատման և մրցութային ընթացակարգերի հանցավոր խախտումներով պետական սեփականության բազմաթիվ գույքերի մասնավորեցման, աղբահանության և սանմաքրման ծառայությունների ոլորտում պայմանագրային պարտավորությունների չկատարման պարագայում հանցավոր անգործություն ցուցաբերելու և բազմաթիվ այլ փաստերով:

Պետության շահերին հասցված վնասը վերականգնելու համար, նախազգուշացվել են 332 կամ 2018թ. համեմատ մոտ 7.5%-ով ավելի իրավաբանական և ֆիզիկական անձինք /2018թ.՝ 309/: Արդյունքում տարվա ընթացքում միայն դատախազական այս ներգործության միջոցի կրառմամբ կամովին պետական բյուջե է վերականգնվել շուրջ 1մլրդ 378մլն ՀՀ դրամ, որը 2018թ. համեմատ ավելի է մոտ 172.6 մլն. դրամով կամ 14.3%-ով:

Դատախազության բոլոր ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով հայտնաբերված՝ պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է մոտ 45 մլրդ ՀՀ դրամ, այն դեպքում, երբ 2018թ. այդ ցուցանիշը կազմել է շուրջ 37 մլրդ դրամ: Այսինքն 2019թ. արդյունքը նախորդող տարվա համեմատ ավելի է մոտ 21.6%-ով: Հարուցված քրեական գործերի, ինչպես նաև դատարաններ ներկայացված հայցերի շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում բացահայտված վնասի վերականգնման ուղղությամբ:

Այսպիսով, 2018-2019թթ. պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքի շնորհիվ հայտնաբերված՝ պետությանը պատճառված վնասը ընդհանուր կազմել է մոտ 82 մլրդ դրամ, որը 2.5 անգամ գերազանցում է նախորդող 9 տարիների հանրագումարային արդյունքը:

Միաժամանակ՝ ուսումնասիրությունների հիման վրա կատարված նախազգուշացումների, բավարարված հայցերի, ներկայացված հաղորդումների հիման վրա դատախազության կողմից կատարված աշխատանքի արդյունքում 2019թ. ընթացքում վերականգնվել է ընդհանուր մոտ 1.4 մլրդ ՀՀ դրամի վնաս: Դատախազությունը ինչպես քրեական գործերի, այնպես էլ հայցերի հարուցման շրջանակներում հետամուտ է հայտնաբերված վնասի վերականգնմանը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված ներգործության ողջ գործիքակազմի կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրություններով վեր են հանվել տևական ժամանակ Հանրապետության ողջ տարածքում պետական շահերին վնաս հասցրած հանցավոր սխեմաներ: Այսպես.

1. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության հիման վրա իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք 2013թ. և 2015թ. պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ են մտցրել «Սանիտեք Ինթերնեշնլ» ՍՊԸ-ի և «Սանիտեք SARL» ընկերությունների կողմից մասնագիտական փորձառություն, անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ ունենալը հավաստող ապացույցների առկայության վերաբերյալ՝ հրավերով առաջադրվող որակավորման չափանիշներին ընկերությունների հայտի համապատասխանությունը գնահատելով բավարար: Դրա արդյունքում վերջիններիս հետ կնքվել են Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսներին ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Բացի այդ, անտեսվել է այն հանգամանքը, որ հիմնական պայմանագրերով նախատեսված՝ ծառայությունների մատուցման նպատակով տարեկան համաձայնագրերի կնքման պայման է հանդիսանում բանկի կամ վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիքի ներկայացումը: Մինչդեռ 10 ու 12 տարի գործողության ժամկետներով կնքված պայմանագրերով 2014թ. սկսած յուրաքանչյուր տարվա համար պայմանագրի գինը սահմանող համաձայնագրեր են կնքվել նման երաշխիքի բացակայության պայմաններում: Այդպիսով համայնքը զրկվել է բանկային երաշխիքի չափով գումար ստանալու հնարավորությունից, իսկ ընթացքում ոչ պատշաճ կատարված կամ ընդհանրապես չկատարված աշխատանքները և ծառայությունները ապահովել է իր միջոցներով: Դրա հետևանքով Երևանի համայնքը կրել է 1.607.721.900 ՀՀ դրամի չափով նյութական վնաս:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ 2013 և 2015թթ. կնքված 2 պայմանագրով նախատեսված են եղել ընդհանուր 16.000 հատ 1100 լիտրանոց մետաղական, անվավոր կոնտեյներների (աղբարկղների) մատակարարման և տեղադրման, աղբի հավաքման և հեռացման, ինչպես նաև դրանց լվացման, վնասված մասերի վերանորոգման և փոխարինման աշխատանքներ, որոնց համար յուրաքանչյուր տարի վճարվել է շուրջ 1.805.000.000 ՀՀ դրամ: Սակայն Երևանի քաղաքապետարանի տրամադրած փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ գույքագրվել է ընդամենը 5170 հատ կոնտեյներ, որոնցից միայն 99-ն են եղել մետաղական: Բարվոք վիճակում է եղել միայն 2553 հատը, թեև Կապալառուն պարտավորված է եղել յուրաքանչյուր կոնտեյներ, որը մաքրում, պահպանմանն ուղղված գործողություններ կամ վերանորոգում կպահանջի, միանգամից փոխարինել նույն կամ նմանատիպ մաքուր ու սպասարկման ենթակա կոնտեյներով:

Իսկ ծառայություններ մատուցող երկու ընկերության ներկայացրած տվյալներով, 2014թ.-ից սկսած Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրերով ձեռք են բերել և տեղադրել ընդամենը 9907 հատ 1100 լիտրանոց կոնտեյներ:

Բացի այդ, պայմանագրերով նախատեսված են եղել կոնտեյներների 4000 հարթակների մաքրման աշխատանքներ, մինչդեռ կառուցվել է ընդամենը 459-ը: Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք հարթակների մաքրման համար գումարները վճարել են 100 տոկոսով այն դեպքում, երբ կառուցված է եղել միայն դրանց շուրջ 20 տոկոսը: Արդյունքում, 2014թ.-ից սկսած, գոյություն չունեցող հարթակների մաքրման համար ավելի է վճարվել շուրջ 354 մլն ՀՀ դրամ և Երևանի քաղաքապետարանին պատճառվել է նույնքան դրամի նյութական վնաս:

Վերոնշյալից հետևում է, որ Ընկերության իրավասու անձինք, իմանալով, որ 16.000 հատ կոնտեյներների փոխարեն ձեռք են բերել և տեղադրել առավելագույնը ընդամենը 9907 հատը, իսկ աղբի կոնտեյներների հարթակների մաքրման ծառայությունները մատուցել են 20 տոկոսի չափով, առերևույթ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով 3.706.000.000 ՀՀ դրամի չափով ավելի գումար են ստացել փաստացի ձեռք չբերված աղբի կոնտեյներների տեղադրման, դրանցից աղբի հավաքման ու տեղափոխման, լվացման ու վերանորոգման, ինչպես նաև գոյություն չունեցող հարթակների մաքրման համար: Իսկ Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք, սկսած 2014թ.-ից չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը, հսկողություն և վերահսկողություն չեն իրականացրել կատարված աշխատանքների և Երևան քաղաքի բյուջեով հատկացված միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ: Դրա արդյունքում տարիներ շարունակ Ընկերություններին համայնքային բյուջեից վճարվել են փաստացի չկատարված աշխատանքների և չմատուցված ծառայությունների համար:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելու, բանկային երաշխիքի բացակայությամբ համաձայնագրեր կնքելու, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականությունները չկատարելու արդյունքում համայնքին պատճառվել է շուրջ 5.313.721.900 ՀՀ դրամի նյութական վնաս՝ առաջացնելով ծանր հետևանքներ:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրությամբ արձանագրված խախտումներում առկա են հանցագործությունների հատկանիշների առերևույթ առկայությունը մատնանշող բավարար տվյալներ՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասով:

Քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

2. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Արփա-Սևան» ԲԲ ընկերության միջև 13.08.2010թ. կնքված «Աբու-Դաբի» Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արփա-Սևան» թիվ 2 թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման թիվ ԱՇՁԲ-10/34 պայմանագրով, ընկերությունը պարտավորվել է իրականացնել 11 մլրդ 798 մլն 546 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

Պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները պատվիրատուի անունից իրականացրել է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Նշված պայմանագրի ծավալաթերթ նախահաշվում և կատարողական ակտերում նշվել են հիմնանորոգման աշխատանքները իրականացնելու համար նախատեսված սպասարկման աշխատանքներ՝ մասնավորապես թունելում օդափոխության շուրջ 225 մլն 324 հազ. դրամի, լուսավորության՝ 87 մլն 262 հազ. դրամի, ջրահեռացման՝ 175 մլն 045 հազ. դրամի, մարտկոցային էլեկտրաքարշերի աշխատանքներ 2 մլրդ 061 մլն 485 հազ. դրամի, հանքախորշային մարտկոցալցման սարքերի աշխատանք՝ 191 մլն 030 հազ. դրամի, որոնք իրականացվել են էլեկտրական սարքավորումներով, ընդունվել և վճարվել են պատվիրատուի կողմից:

Պարզվել է նաև, որ ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Արփա-Սևան» ԲԲ ընկերության միջև 14.02.2017թ. կնքված թիվ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա պայմանագրով ընկերությունը պարտավորվել է իրականացնել «Արփա-Սևան» թիվ 2 թունելում առանձին վթարային հատվածների ընդհանուր 4 մլրդ 998 մլն 360 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

Նշված պայմանագրի ծավալաթերթ նախահաշվում և կատարողական ակտերում նույնպես նշվել են սպասարկման աշխատանքներ՝ մասնավորապես թունելում օդափոխության շուրջ 591 մլն. 933 հազ. դրամի, լուսավորության՝ 47 մլն. 725 հազ. դրամի, ջրահեռացման՝ 49 մլն 159 հազ. դրամի, մարտկոցային էլեկտրաքարշերի լիցքավորման աշխատանքներ 1 մլրդ 079 մլն 568 հազ. դրամի, որոնք իրականացվել են էլեկտրական սարքավորումներով, ընդունվել և վճարվել են պատվիրատուի կողմից:

Ուսումնասիրությունների շրջանակներում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունից ստացվել են «Արփա-Սևան» ԲԲ ընկերությանը 2010-2018 թվականներին մատակարարված էլեկտրաէներգիայի չափաքանակների տվյալները, որոնք համադրվել են նշված պայմանագրերի կատարողական ակտերի հետ, որի արդյունքում պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում՝ մասնավորապես թիվ ԱՇՁԲ-10/34 պայմանագրի 30.09.2010թ. թիվ 1, 28.02.2013թ. թիվ 29, 31.03.2013թ. թիվ 30, 31.03.2014թ. թիվ 39, 31.08.2014թ. թիվ 40, 30.09.2014թ. թիվ 41, 31.10.2014թ. թիվ 42, 30.11.2014թ. թիվ 43, 31.01.2015թ. թիվ 45, 28.02.2015թ. թիվ 46, 31.03.2015թ. թիվ 47 կատարողական ակտերով ընկերության էլեկտրաէներգիայի փաստացի ամսական ծախսը զգալիորեն, իսկ որոշ դեպքերում գրեթե

կրկնակի պակաս է, քան կատարողական ակտերում նշված՝ միայն օդափոխության 250 կվտ, 160 կվտ և 7 կվտ էլեկտրական սարքերի աշխատանքի ամսական էլեկտրաէներգիայի ծախսը, իսկ թիվ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա պայմանագրի 31.07.2017թ. թիվ 2, 31.08.2017թ. թիվ 3, 30.09.2017թ. թիվ 4, 31.10.2017թ. թիվ 5, 30.11.2017թ. թիվ 6, 31.01.2018թ. թիվ 9, 28.02.2018թ. թիվ 10, կատարողական ակտերով՝ կատարողական ակտերում նշված՝ միայն օդափոխության 200 կվտ, 125 կվտ և 15 կվտ էլեկտրական սարքերի աշխատանքի ամսական էլեկտրաէներգիայի ծախսը:

Ընդ որում, վերը բերված համեմատականներում ներառվել են միայն օդափոխության սարքավորումները, իսկ մյուս բազմաթիվ էլեկտրական սարքավորումների ծախսը հաշվի չի առնվել:

Այսպիսով, վերը բերված կատարողական ակտերի գրառումները իրականությանը չեն համապատասխանել կամ կեղծ են, քանի որ դրանցում նշված հզորությամբ էլեկտրական սարքավորումները չէին կարող աշխատել և ծախսել զգալիորեն, իսկ որոշ դեպքերում գրեթե կրկնակի պակաս էլեկտրաէներգիա, քան սահմանված է տվյալ հզորությամբ սարքերի նշված ժամանակահատվածում աշխատանքի համար:

Նշված հանգամանքները վկայել են, որ թիվ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա պայմանագրի ծավալաթերթ նախահաշվով նախատեսված՝ օդափոխության շուրջ 591 մլն 933 հազ. դրամի, ինչպես նաև թիվ ԱՇՁԲ-10/34 պայմանագրի ծավալաթերթ նախահաշվով նախատեսված՝ շուրջ 225 մլն 324 հազ. դրամի սպասարկման, դրանց հետ կապված հիմնանորոգման մյուս աշխատանքները և դրանց համար կատարված վճարումները հիմնավոր կամ արժանահավատ չեն և կատարվել են իրականությանը չհամապատասխանող կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա:

Պարզվել է նաև, որ ՀՀ կառավարության 20.04.2006թ. «Որոտան-Արփա-Սևան թունելի պահպանման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման 2006 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 549-Ա որոշմամբ հաստատվել է Եղեգիսի շինարարական տեղամասի վերականգնման՝ 150.000.000 դրամի շինարարական աշխատանքների կատարման ծրագիրը:

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեից ստացված փաստաթղթերի համաձայն՝ Եղեգիսի շինարարական բազայում 2006-2008թթ. իրականացվել են շուրջ 390 մլն դրամի շինարարական սպասարկման օբյեկտների կառուցման աշխատանքներ, մասնավորապես՝ 2,36 հա հողատարածության վրա պետական բյուջեի միջոցներով կառուցվել են երկհարկանի վարչա-կենցաղային շենք՝ 666,8 քմ, էլ. ենթակայանի շենք՝ 46,4 քմ, լիցքավորման շենք՝ 108,6 քմ, ճնշակայանի շենք՝ 237,7 քմ, արհեստանոցի շենք՝ 265,5 քմ, ցեմենտ-բետոնի շաղախման հանգույց՝ 85,9 քմ և հիդրոհանգույցի 2 շենք՝ 64,5 և 18,4 քմ մակերեսներով:

Պարզվել է, որ հողատարածքը, որի վրա կառուցվել են Եղեգիսի շինարարական բազայի շենք-շինությունները, Վարդահովիտ համայնքի ղեկավարի 22.08.2005թ. որոշմամբ կազմակերպված մրցույթի արդյունքում 25 տարի ժամկետով

գյուղատնտեսական նպատակներով՝ 2.0 հա վարձակալության է հանձնվել համայնքի բնակիչ Ագնեսա Ստեփանյանին, իսկ նույն համայնքի ղեկավարի 14.03.2006թ. որոշմամբ ուղղակի վաճառքով՝ 1 հա-ն 67.000 դրամով վաճառվել է վերջինիս:

Ագնեսա Ստեփանյանը 08.11.2010թ. «Արփա-Սևան» ԲԲ ընկերության հետ կնքված պայմանագրով նշված հողատարածքը 4 մլն դրամով վաճառել է «Արփա-Սևան» ԲԲ ընկերությանը:

Ուսումնասիրությունների շրջանակներում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեից ստացված կադաստրային գործի փաստաթղթերի համաձայն՝ ՀՀ կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից Ագնեսա Ստեփանյանին 02.11.2010թ. տրվել է միասնական տեղեկանք՝ ստորագրված և կնքված ստորաբաժանման ղեկավարի կողմից, ինչպես նաև կադաստրային գործում առկա է նշված գույքի ուրվագիծը՝ տեղազննում կատարելու նշումով, որոնցում կառուցված Եղեգիսի շինարարական բազայի շենք-շինությունների վերաբերյալ որևէ գրառում չկա:

Այսինքն՝ ՀՀ կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման պաշտոնատար անձանց կողմից իրականությանը չհամապատասխանող կեղծ փաստաթղթեր են կազմվել և հանձնվել Ագնեսա Ստեփանյանին, վերջինիս պատկանող գույքը «Արփա-Սևան» ԲԲ ընկերությանը օտարելու համար:

Բացի այդ, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից դեռևս 2012թ.-ին (ՀՀ ՎՊ խորհրդի 22.03.2013թ. 5/5 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվություն) արձանագրվել է Եղեգիսի կիրճում պետական ֆինանսավորմամբ կառուցված շենք- շինությունների և արտադրամասերի պատվիրատուին չհանձնելու, փաստացի գրանցում չկատարելու փաստը, սակայն, անգամ դրանից հետո ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի համապատասխան պաշտոնատար անձինք, իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով և ծառայողական պարտականությունները չկատարելով, միջոցներ չեն ձեռնարկել պետության խախտված իրավունքները վերականգնելու, պետական միջոցներով կատարված շինարարական աշխատանքների արդյունքում կառուցված շինությունները գույքագրելու, գրանցելու և տնօրինելու ուղղությամբ՝ էական վնաս պատճառելով պետության օրինական շահերին և առաջացնելով ծանր հետևանքներ՝ շուրջ 390 մլն դրամի գույքը տարիներ շարունակ գտնվում է այլ տնտեսվարող սուբյեկտի անվամբ գրանցված հողատարածքի վրա և օգտագործվում է այլ անձանց կողմից:

Ուսումնասիրությունների արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

3. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ կառավարության 21.05.2001թ. թիվ 435 որոշմամբ՝ «Հայէներգո» ՓԲ ընկերության գույքի կազմից առանձնացվել է «ՁորաՀԷԿ» տեղամասի գույքը և դրա ներդրմամբ ստեղծվել է «ՁորաՀԷԿ» ՓԲ ընկերությունը՝ 2 մլրդ 1 մլն 840 հազ. դրամ կանոնադրական կապիտալով:

ՀՀ կառավարության 15.01.2002թ. թիվ 36 որոշմամբ «ՁորաՀԷԿ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ պաշտպանության նախարարությանը:

ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1660 որոշմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ որպես «ՁորաՀԷԿ» ՓԲ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող մարմնի, թույլատրվել է հավանություն տալու՝ ընկերության գույքի օտարմանը «Ձորագետ Հիդրո» ՍՊ ընկերությանը՝ 3 մլրդ 600 մլն դրամ արժեքով:

ՀՀ կառավարության նշված որոշման համաձայն՝ ընդհանուր առմամբ օտարվել է 15 անվանում շենք /այդ թվում՝ ՀԷԿ-ի շենքը/, 18 անվանում շինություններ, ճանապարհներ և կամուրջներ, շուրջ 130 անվանում հիմնական միջոցներ՝ տուրբինաներ, գեներատորներ, հաստոցներ, մեխանիզմներ, սարքավորումներ և արտադրական գույք, շուրջ 200 անվանում այլ տնտեսական գույք:

Տվյալ ժամանակ գործող՝ ՀՀ նախագահի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 18.07.2007թ. թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 33-րդ կետի համաձայն՝ «Կառավարության քննարկմանը ներկայացվում են միայն հիմնավորված, միմյանց չկրկնող և արդեն լուծում ստացած հարցերին սկզբունքորեն նոր լուծում տալու կամ նոր ընդունված օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանեցնելու նպատակ հետապնդող հարցեր»:

Նույն հրամանագրի 34-րդ կետի համաձայն՝ «Կառավարության քննարկմանը ներկայացվող հարցի հիմնավորվածության, ներկայացված նյութերի արժանահավատության, ամբողջականության և որակի համար պատասխանատվությունը կրում է հարցը ներկայացնողը»:

Նույն հրամանագրի 60-րդ կետի համաձայն՝ «Կառավարություն կամ վարչապետին ներկայացված փաստաթղթերը նախապես քննության է առնում կառավարության աշխատակազմը՝ 15-օրյա ժամկետում: Կառավարության քննարկմանը հարցը ներկայացնողից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, նյութեր, հիմնավորումներ»:

ՀՀ կառավարության աշխատակազմից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ ազգային արխիվից և այլ պետական մարմիններից ստացված տեղեկատվությունում և փաստաթղթերում ՀՀ կառավարության 16.12.2010թ. թիվ 1660 որոշման որևէ հիմնավորում կամ օտարվող գույքի գնի որոշման որևէ հիմնավորում առկա չէ, անգամ

պարզ չէ, թե որ պետական մարմնի կողմից է կազմվել և ՀՀ կառավարությանը ներկայացվել նշված որոշման նախագիծը:

Մինչդեռ, ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ «ՁորաՀԷԿ» ՓԲ ընկերության գույքի շուկայական արժեքը 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ կկազմեր շուրջ 8 միլիարդ դրամ, 2018 թվականի դեկտեմբերի դրությամբ՝ շուրջ 12 միլիարդ դրամ, իսկ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ձորագետ Հիդրո» ՍՊ ընկերությունը նշված գործարքից հետո՝ 2011-2018թթ. առաքել է շուրջ 700 միլիոն կվտ/ժ էլեկտրաէներգիա, որից հասույթը ընդհանուր առմամբ կազմում է շուրջ 14 միլիարդ դրամ:

Այսպիսով, ՀՀ կառավարության և ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու, սահմանված կարգը խախտելու, առանց հիմնավորման, առանց օտարվող գույքի գնի հիմնավորման կառավարության որոշման նախագիծ կազմելու և ՀՀ կառավարությանը ներկայացնելու հետևանքով՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասով «ՁորաՀԷԿ» ՓԲ ընկերության՝ 2010թ. դրությամբ՝ շուրջ 8 միլիարդ, իսկ 2018 թվականի դրությամբ՝ շուրջ 12 միլիարդ դրամ արժեքով գույքը օտարվել է բազմակի անգամ պակաս, ընդամենը 3 մլրդ 600 մլն դրամ արժեքով՝ էական վնաս պատճառելով պետության օրինական շահերին, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք:

Ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն, որտեղ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ ՀՀ նախկին պաշտպանության նախարարին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

4. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Ծաղկաձորի ճոպանուղու (այսուհետ՝ Ճոպանուղի) վերակառուցման նպատակով ՀՀ կառավարության 22.04.2004թ. թիվ 679-Ա որոշմամբ «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ-ի ակտիվների կազմից առանձնացվել են Ճոպանուղու առաջին, երկրորդ և երրորդ կայանները, ինչպես նաև՝ 5 հատ տնակ՝ ընդհանուր 133.800 դրամ հաշվեկշռային արժեքով և հանձնվել ՀՀ ԿԱ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեին, որն էլ, իր հերթին, նշված գույքը նվիրաբերության պայմանագրով պետության անունից նվիրաբերել է «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությանը (ՀԱՕԿ)՝ վերջինիս կամ նրա հիմնադրած առևտրային կազմակերպության կողմից մինչև 31.12.2005թ. Ճոպանուղին վերակառուցելու և շահագործելու պայմանով:

Շինարարությունից հետո 01.03.2005թ. կնքված պայմանագրով ՀԱՕԿ-ը Ճոպանուղին հավատարմագրային կառավարման է հանձնել «Օլիմեն» ՍՊԸ-ին՝ 2005-2008թթ., իսկ 15.12.2008թ. կնքված պայմանագրով՝ 2009թ.-ից մինչ օրս՝ «Լեռնատուր» ՍՊԸ-ին:

Ճոպանուղին շահագործող ընկերությունների կողմից 2005-2017թթ. հարկային մարմիններին ներկայացված տվյալների համաձայն՝ Ճոպանուղու տարեկան շրջանառությունը կազմել է 3-60 մլն դրամ, կամ նշված տարեթվերին ընդհանուր շուրջ 496 մլն ՀՀ դրամ, մինչդեռ միայն 2018թ. Ճոպանուղու շրջանառությունը կազմել է 537 մլն ՀՀ դրամ կամ շուրջ 40 մլն ՀՀ դրամով ավելի, քան անցած 12 տարիները միասին վերցրած:

Վճարված հարկերը 2005-2017թթ. կազմում են տարեկան 1-20 մլն ՀՀ դրամ, կամ նշված տարեթվերին ընդհանուր շուրջ 148 մլն ՀՀ դրամ, իսկ միայն 2018թ. վճարվել է շուրջ 240 մլն ՀՀ դրամի հարկ, այսինքն՝ շուրջ 90 մլն ՀՀ դրամով ավելի, քանի անցած 12 տարիները միասին վերցրած:

Պարզվել է նաև, որ 2005-2018թթ. շահագործման ընթացքում Ճոպանուղու օգտագործած տարեկան էլեկտրաէներգիայի քանակները համադրելի են, իսկ շեղումը ունի ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական միտում և չի գերազանցում 25 տոկոսը: Այսպես, 2005-2018թթ. Ճոպանուղին տարեկան օգտագործել է նվազագույնը 411.816 կվտ/ժ էլ.էներգիա (2015թ.) և առավելագույնը՝ 657.574 կվտ/ժ էլ.էներգիա (2008թ.), իսկ մնացած տարիներին օգտագործած էլ.էներգիան հիմնականում տատանվում է 411.816 – 501.604 կվտ/ժ էլ.էներգիա (2005-2006թթ. և 2010-2017թթ.), և 619.746-657.574 կվտ/ժ էլ.էներգիա (2007-2009թթ. և 2018թ.):

Այսպիսով, երբ 2018թ. Ճոպանուղու տարեկան շրջանառությունը կազմել է 537 մլն ՀՀ դրամ, իսկ վճարված հարկը՝ շուրջ 240 մլն ՀՀ դրամ, ծախսվել է 615.430 կվտ/ժ էլ.էներգիա, այսինքն՝ ավելի քիչ, քան 2008թ., երբ շրջանառությունը կազմել է 56 մլն ՀՀ դրամ, վճարված հարկը՝ շուրջ 17 մլն ՀՀ դրամ, իսկ ծախսած էլ.էներգիան՝ 657.574 կվտ/ժ:

Ընդ որում, պարզվել է նաև, որ Ճոպանուղին շահագործվել է բացառապես ուղևորների առկայության դեպքում:

Ուսումնասիրությունների շրջանակներում ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչությունից ստացված տեղեկատվության և պետությանը պատճառված վնասի նախնական հաշվարկի համաձայն՝ «Լեռնատուր» ՍՊԸ-ի կողմից 2008-2016թթ. հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկներով պակաս են ցույց տրվել և իրավահարաբերության ձևավորման պահին գործած «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված կարգով չեն հաշվարկվել ծառայությունների մատուցումից իրացումից հասույթները՝ 1.985.273.178 ՀՀ դրամի չափով, հարկվող օբյեկտները (շահույթները) պակաս են ցույց տրվել 397.054.636 ՀՀ դրամի չափով, որից պակաս հաշվարկված շահութահարկի գումարը կազմում է 79.410.927 ՀՀ դրամ:

Իրավահարաբերության ձևավորման պահին գործած «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 23-րդ հոդվածներով սահմանված կարգով չեն հաշվարկվել նաև բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները, որոնք 2008-2016թթ. համար կազմում են 397.054.636 ՀՀ դրամ:

Արդյունքում՝ «Լեռնատուր» ՍՊԸ-ի կողմից հարկերը չվճարելու հետևանքով պետությանը պատճառվել է ընդհանուր 476.465.563 ՀՀ դրամի վնաս, որից 397.054.636 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ի գծով, իսկ 79.410.927 ՀՀ դրամը՝ շահութահարկի գծով:

Բացի այդ, ՀԱՕԿ-ի և «Լեռնատուր» ՍՊԸ-ի միջև 15.12.2008թ. կնքված Ճոպանուղու հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն ՝ ՀԱՕԿ-ի զուտ շահույթը կազմում է Ճոպանուղու օգտագործման արդյունքում ստացված զուտ շահույթի 50 տոկոսը, իսկ շահույթի մյուս 50 տոկոսը անցնում է շահագործող կազմակերպությանը:

Եթե հաշվի առնենք, որ «Լեռնատուր» ՍՊԸ-ի կողմից հարկվող օբյեկտները (շահույթները) պակաս են ցույց տրվել 397.054.636 ՀՀ դրամի չափով, հետևաբար նշված գումարի 50 տոկոսի՝ առնվազն 198.527.318 ՀՀ դրամի չափով էլ «Լեռնատուր» ՍՊԸ-ի պատասխանատու անձանց կողմից պակաս շահույթ է փոխանցվել ՀԱՕԿ-ին՝ վերջինիս պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնասներ:

Ուսումնասիրությունների արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի և 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ «Լեռնատուր» ՍՊԸ տնօրենը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

5. Երևան քաղաքի դատախազությունում Հանրապետական նշանակության հուշարձանների կարգավիճակ ունեցող՝ Երևան քաղաքի Ազատության Հրապարակի համալիրի, ինչպես նաև Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահի պահպանության գոտիների տարածքներում սրճարանների և մյուս օբյեկտների տեղադրման վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությամբ և դրա արդյունքների հիման վրա նախապատրաստված նյութերով պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի և պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության իրավասու պաշտոնատար անձանց կողմից 2002-2018թթ. ընթացքում իրենց պաշտոնեական լիազորությունների առերևույթ չարաշահման արդյունքում՝ հանրապետական նշանակության հուշարձանների կարգավիճակ ունեցող՝ Երևան քաղաքի Ազատության Հրապարակի համալիրի, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահի պահպանության գոտիներում օրենքով նախատեսված կարգի խախտմամբ տեղադրվել և

գործունեություն են ծավալել սրճարաններ և այլ օբյեկտներ: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Բացի այդ, Երևան քաղաքի դատախազությունում, զանգվածային լրատվության միջոցներում առկա հրապարակումների կամ Երևանի քաղաքապետի գրությունների հիման վրա, ուսումնասիրվել են Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Վարդավառ զբոսայգու, Կենտրոն վարչական շրջանի օղակաձև զբոսայգու տարբեր հատվածների, Արաբկիր վարչական շրջանի Վահագն Դավթյանի անվան մանկական այգու, Դավթաշեն վարչական շրջանի այգու մեջ մտնող հողամասերը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օտարելու կամ վարձակալության հանձնելու, դրանցում կառուցված ինքնակամ շինություններն օրինականացնելու, Դավթաշեն վարչական շրջանի թաղապետարանի շենքի մի մասը ապօրինի օտարելու վերաբերյալ փաստաթղթերը: Նշված բոլոր դեպքերում պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի, համապատասխան թաղապետարանների կամ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան պաշտոնատար անձինք իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել են ծառայության շահերին հակառակ, կատարել պաշտոնեական կեղծիքներ, ինչի արդյունքում նշված գույքերը օրենքով սահմանված սահմանափակումների առկայությամբ կամ ակնհայտ ցածր գներով օտարել են տարբեր անձանց, երբեմն դրանց սեփականատերեր դարձել են վերջիններիս ընտանիքների անդամները: Նշված բոլոր դեպքերում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածներով հարուցվել են քրեական գործեր, դրանց նախաքննությունները շարունակվում են:

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ համագործակցություն է ծավալվել նաև ՀՀ պետական վերահսկողական ծառայության և հաշվեքննիչ պալատի հետ:

2019 թվականի ընթացքում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել թվով 33 տարբեր ուսումնասիրությունների նյութեր, որոնց կապակցությամբ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների, ստուգողական գործողությունների կամ նախապատրաստված նյութերի հիման վրա հարուցվել է 31 քրեական գործ, որից 6-ը՝ ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքում:

Հարուցված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասը նախնական հաշվարկով կազմել է 7.664.970.962 ՀՀ դրամ, որից նախաքննության ընթացքում վերականգնվել է 38.338.456 ՀՀ դրամը:

2019թ. ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հրապարակված շուրջ 30 հաշվետվություններից ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում պահանջվել և ուսումնասիրվել են 20-ը, որոնցից 6-ով վարչության դատախազների կողմից հարուցվել են քրեական գործեր, 1–ով՝ Արմավիրի մարզի դատախազության դատախազի կողմից, իսկ 1-ն ուղարկվել է ԱԱԾ քննչական

դեպարտամենտ, այնտեղ քննվող քրեական գործի հետ համատեղ ընթացքը լուծելու համար, մնացածը հաշվետվությունները գտնվում են ուսումնասիրության փուլում:

Այսպիսով, միայն ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության և դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից (բացառությամբ ՀՀ զինվորական դատախազության) 2019թ.-ին հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 29 մլրդ 299 մլն 366 հազ. դրամ, 2018թ.-ի 5 մլրդ 255 մլն 294 հազ. դրամի դիմաց, ինչը կապված է դատախազների հետևողական աշխատանքի՝ իրականացված մեծածավալ, բազմադրվագ, ուսումնասիրությունների, պետական շահերին վերաբերող խախտումները հայտնաբերելիս դրանք պատշաճ արձանագրելու, համապատասխան գնահատական տալու, պետությանը պատճառված վնասը վերականգնելու և խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հետ:

Այսպիսով, 2018-2019թթ. պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքի շնորհիվ հայտնաբերված՝ պետությանը պատճառված վնասը ընդհանուր կազմել է մոտ 82 մլրդ դրամ, որը 2.5 անգամ գերազանցում է նախորդող 9 տարիների հանրագումարային արդյունքը:

Վերջին երկու տարիներին արձանագրված արդյունքները հիմնականում պայմանավորված են երկու գործոնով: Նախ՝ նշված ժամանակահատվածում գործադիր իշխանության մարմինների կողմից պետությանը պատճառված վնասների բացահայտման նպատակով օրենքով նախատեսված իրենց վերահսկողական լծակների գործադրման և դրանց արդյունքները ՀՀ դատախազությանը ներկայացնելու հարցում դրսևորվել է աննախադեպ նախաձեռնողականություն: Վերջինս լիարժեք պայմաններ է ստեղծել դատախազության համար գործադրելու իր իրավասությունից բխող գործառույթները:

Մյուս հիմնական պատճառն այն է, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից դեռևս 2017թ. նախանշվել և 2018թ. արմատավորվել է պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակներում դատախազական ներգործության միջոցներն ամբողջ ծավալով կիրառելը դատախազության համապատասխան ստորաբաժանումների տարեկան ծրագրային գործունեության պարտադիր բաղադրիչ դարձնելու մոտեցումը, որի կատարման և արդյունքների ապահովման հարցում դրսևորվում է առանձնակի հետևողականություն:

Այս իմաստով պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության արձանագրած արդյունքները, դրանք բազմապատկելու հանրության հստակ ձևակերպվող պահանջները, ինչպես նաև գործնականում օբյեկտիվորեն ծագող խնդիրների լուծման հրատապ անհրաժեշտությունն արդիական են դարձնում դատախազությանը լիարժեք պետական շահերի պաշտպանի դեր վերապահելու խնդիրը:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ընդունումը աննախադեպ և արդյունավետ նոր գործիքակազմ կընձեռի, որի կիրառման պայմաններում

հանցավոր, ապօրինի ծագում ունեցող գույքը, հատկապես պետական հանրային միջոցները, որոնք ապօրինի տիրապետման տակ են, թիրախավորելու և իրավաչափ սեփականատիրոջը օրենքով սահմանված կարգով վերադարձնելու գործուն քայլեր կձեռնարկվեն:

6. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում 2019 թվականի ընթացքում կատարվել է 1233 ստուգում և ուսումնասիրություն /2018թ. ընթացքում՝ 1052/, որոնց արդյունքում հայտնաբերվել է 591 խախտում /2018թ.՝ 203/: Պատկան մարմիններին ուղարկվել է 9 հաղորդում /2018թ.՝ 19/, ներկայացվել է 47 միջնորդագիր /2018թ.՝ 14/, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 41 ակտ /2018թ.՝ 1/: Իրականացվել է 4 ծառայողական քննություն /2018թ.՝ 6/: Հարուցվել է 12 քրեական գործ /2018թ.՝ 4/, կասեցվել է օրենսդրությանը հակասող 40 ակտ /2018թ.՝ 2/:

Վերը նշված 1233 ստուգումից և ուսումնասիրությունից 920-ը կատարվել է ձերբակալվածներին պահելու վայրերում /2018թ.՝ 797/, 205-ը՝ քրեակատարողական հիմնարկներում /2018թ.՝ 104/, 100-ը՝ ՀՀ պրոբացիայի ծառայությունում /2018թ.՝ 143/, 7-ը՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում /2018թ.՝ 7/, 1-ը՝ ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում /2018թ.՝ 1/:

Քրեակատարողական հիմնարկներում իրականացված ստուգումների արդյունքներով հայտնաբերված խախտումները եղել են բազմաբնույթ՝ ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմանների, նրանց առողջության պահպանման, տեսակցության իրավունքի իրացման, ՔԿՀ-ների պետերի կողմից տույժեր և խրախուսանքներ կիրառելու, հանձնուքներ, ծանրոցներ, փաթեթներ ընդունելու և հանձնելու, ինչպես նաև քրեակատարողական օրենսդրության կատարման այլ գործընթացների վերաբերյալ:

Հայտնաբերված խախտումների պատճառները պարզելու, աշխատանքներում տեղ գտած թերությունները հետագայում բացառելու, ինչպես նաև պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու նպատակով՝ պատկան մարմիններին ուղարկվել է 9 հաղորդում, գրեթե բոլոր դեպքերում առաջարկելով անցկացնել ծառայողական քննություն:

Հաղորդումների հիման վրա ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունից ստացված համապատասխան գրությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ, լավագույն դեպքում որոշ ՔԿՀ-ների պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրելով հայտնաբերված խախտումների վրա և հանձնարարելով հետագայում բացառել այդպիսիք, փորձ չի արվել անդրադառնալու նշված խախտումները ծնող պատճառներին, ինչպես նաև քննարկման առարկա դարձնելու խախտումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց մեղավորության աստիճանը:

Միաժամանակ, պետք է նշել, որ եղել են նաև դեպքեր, երբ ծառայողական պարտականությունները բարեխիղճ և պատշաճ կատարելու համար քրեակատարողական հիմնարկների ծառայողները պարգևատրվել են ՀՀ գլխավոր դատախազի կողմից: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկների 4 ծառայողի պարգևատրել է ՀՀ դատախազության հոբելյանական մեդալով: Նշված ծառայողների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձանց կողմից իրացնելու նպատակով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դեպքեր: Մասնավորապես, ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով՝ 2019թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ ծառայողներն անձնական խուզարկության են ենթարկել նույն հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի մի աշխատակցի, որի բաճկոնի ծոցագրպանից հայտնաբերվել է տարբեր տեսակի թմրամիջոց: Բացի այդ, ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նույն հիմնարկի պահպանության ապահովման բաժնի առաջատար մասնագետը թմրամիջոց և հոգեմետ նյութ ՔԿՀ փոխադրելու համար անհայտ անձից ստացել է 30.000 ՀՀ դրամ կաշառք և արգելված իրեր պարունակող պոլիէթիլենային տոպրակը պահել իր անձնական օգտագործման ավտոմեքենայում: 2019թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ծառայողները զննության են ենթարկել ավտոմեքենան, որտեղից կպչուն ժապավենով փաթեթավորված պոլիէթիլենային տոպրակով հայտնաբերվել է մի քանի տեսակի թմրանյութ: Հարուցվել են քրեական գործեր, առերևույթ հանցանք կատարած ՔԿՀ աշխատակիցները ձերբակալվել են:

ՀՀ դատախազության՝ ոլորտը սպասարկող դատախազների կողմից որպես ուղենիշ է ընդունվել ազատությունից զրկված անձի՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված և ՀՀ միջազգային հանձնառություններից բխող իրավունքների պատշաճ ապահովման հարցը՝ վերջինս դիտարկելով իբրև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախազական գործառույթի առաջնային նպատակներից մեկը:

Վերն ասվածի համատեքստում անհրաժեշտ է նշել հատկապես քրեակատարողական հիմնարկներում գտնվող՝ հացադուլ հայտարարած և ինքնավնասում կատարած անձանց խնդիրներին արագ արձագանքելու և ուշադրության կենտրոնում պահելու առանձնահատուկ կարևորության մասին:

ՀՀ դատախազության կոլեգիայի 2019թ. փետրվարի 27-ի որոշման հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի կողմից ոլորտը սպասարկող դատախազներին հանձնարարվել է տեղեկանալուն պես հանդիպել քրեակատարողական հիմնարկներում գտնվող՝ հացադուլ հայտարարած, ինչպես նաև ինքնավնասում կատարած անձանց, պարտադիր

նախաձեռնել վերը նշված անձանց՝ սահմանված կարգով հարցման ենթարկելու գործընթաց՝ նման ծայրահեղ միջոցի դիմելու պատճառները պարզելու համար: Եթե հարցման արդյունքում պարզվի, որ նման վարքագիծը պայմանավորված է այդ անձանց վերաբերյալ քննվող կամ քննված քրեական գործերով կատարված դատավարական գործողություններով, ապա հարցման արձանագրության օրինակն անհապաղ անհրաժեշտ է ուղարկել տվյալ գործով անմիջական դատավարական հսկողություն իրականացնող դատախազին՝ այն մանրամասն քննարկման առարկա դարձնելու և հացադուլ հայտարարած, ինչպես նաև ինքնավնասում կատարած անձանց՝ օրենքով սահմանված իրավունքների պատշաճ ապահովումը երաշխավորելու նկատառումներով:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2019 թվականի ընթացքում ստացվել է հացադուլ հայտարարելու 393 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով ուսումնասիրվել է հացադուլ հայտարարողի նկատմամբ ՔԿ հիմնարկում ձեռնարկված միջոցառումների իրավաչափությունը, պարզվել են հացադուլ հայտարարելու պատճառները, բոլոր դեպքերում հացադուլ հայտարարած անձը հարցման է ենթարկվել, ընդ որում՝ շատ դեպքերում դատախազի կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում կալանավորված անձը կամ դատապարտյալը դադարեցրել է հացադուլը:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում, ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում, ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում պահվող անձանց կողմից 2019 թվականի ընթացքում արձանագրվել է ինքնավնասման 604 դեպք, որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական, առողջական խնդիրների հետ, որոշ դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ ներկայացվել են անօրինական պահանջներ:

Յուրաքանչյուր ինքնավնասման դեպքով նախապատրաստվել են նյութեր, ինչպես նաև իրականացվել են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ ՔԿՀ հոգեբանի կողմից կատարվել են հոգեբանական աշխատանքներ, որի արդյունքում կազմվել է հոգեբանական եզրակացություն ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել են համապատասխան աշխատանքներ հետագայում անձի կողմից ինքնավնասման փորձերը կանխելու ուղղությամբ:

Ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց իրավունքների պատշաճ ապահովման նկատառումներից ելնելով՝ հարկ է նշել նաև ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում և հարկադիր բուժման վայրում պահվող անձանց մահվան դեպքերով արդյունավետ քննություն իրականացնելու պահանջի կարևորության մասին: Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից տրված հանձնարարության համաձայն՝ ապահովվել է նշված վայրերում պահվող անձանց մահվան հանգամանքների պարզումը բացառապես հարուցված քրեական գործով վարույթի ընթացքում՝ դատավարության մասնակիցների, հատկապես տուժողի իրավահաջորդի՝

օրենքով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կյանքի իրավունքի խախտումների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ նախադեպերով սահմանված իրավունքների երաշխավորմամբ:

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2019թ. ընթացքում ուսումնասիրվել և ամփոփվել է 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ կիրառված տույժերի և խրախուսանքների վերաբերյալ կայացված որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Հայտնաբերվել է 140 խախտում: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ նույնանման խախտումներ կատարելու համար նախկինում տույժի չենթարկված պահվող անձինք մի դեպքում տեղափոխվել են պատժախուց, մեկ այլ դեպքում՝ նրանց հայտարարվել է նկատողություն: Մի շարք որոշումներով նախկինում տույժի ենթարկված պահվող անձանց, նույնիսկ ներքին կանոնակարգի չարամիտ խախտում կատարած անձանց, հերթական խախտումը կատարելու համար հայտարարվել է նկատողություն, իսկ մի շարք որոշումներով խախտում թույլ տված պահվող անձանց նշանակած տույժերը չեն համապատասխանել կատարված խախտման ծանրությանը և բնույթին: Արձանագրվել են դեպքեր, երբ բժշկական հաստատություններից քրեակատարողական հիմնարկներ վերադարձնելուց հետո կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հայտնաբերվել են ներքին կանոնակարգով արգելված իրեր: Նման պարագայում, թեև կալանավորված անձը կամ դատապարտյալը ենթարկվել է տույժի, սակայն հիմնարկների վարչակազմերի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել հայտնաբերված արգելված իրերը պահվող անձանց մոտ հայտնվելու հանգամանքները պարզելու ուղղությամբ: Ստուգմամբ պարզվել է, որ հիմնարկների պետերի կողմից կայացված համապատասխան որոշումներով տույժերի են ենթարկվել մի շարք պահվող անձինք, որոնք հրաժարվել են իրենց ռեժիմին համապատասխան խուց տեղափոխվելուց՝ բերելով տարբեր պատճառաբանություններ: Սակայն վերջիններիս պատճառաբանությունները քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից համարվել են անհիմն՝ առանց դրանք ստուգելու ուղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու:

Արձանագրված խախտումները քննարկման առարկա դարձնելու, դրանք վերացնելու և հետագայում այդպիսիք բացառելու նպատակով, հաղորդում է ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն: Հաղորդման քննարկման արդյունքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ղեկավարության կողմից քրեակատարողական հիմնարկների պետերին և համապատասխան աշխատակիցներին տրվել է ցուցում՝ արձանագրված խախտումները վերացնել և հետագայում դրանք բացառել:

Ուսումնասիրվել է նաև 2018 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից կատարված աշխատանքների

օրինականության և ՀՀ օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության վիճակը: Արդյունքում հայտնաբերվել է 306 խախտում: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 395-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության ներքին կանոնակարգի մի շարք կետեր: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող վերահսկողությունն ու շահառուների վերասոցիալականացմանն ուղղված գործողությունները իրականացվել են լուրջ խախտումներով կամ ընդհանրապես չեն իրականացվել: Որոշ շահառուներ այցելել են պրոբացիայի ծառայության բաժիններ անկանոն՝ ոչ յուրաքանչյուր ամիս, և ոչ էլ երկու շաբաթը մեկ անգամ: Արդյունքում նրանց նկատմամբ վերահսկողությունը լիարժեք չի իրականացվել, իսկ պրոբացիայի ծառայության բաժնի ծառայողների կողմից օրինախախտ շահառուներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Ստուգմամբ նաև պարզվել է, որ պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացվող դատապարտյալների վերաբերյալ պրոբացիայի ծառայության աշխատակիցների կազմած զեկույցները մի շարք դեպքերում չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին և այդ զեկույցներով դատապարտյալներին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ձևավորված վերջնական եզրահանգումները հիմնավորված չեն: Մասնավորապես՝ պատժի կրման ընթացքում բացառապես բացասական վարքագիծ դրսևորած (գործող տույժ, պատժի կրման ընթացքում բազմաթիվ տույժեր, պատժի կրման կարգի չարամիտ խախտողներ և այլն) կամ նոր հանցագործություն կատարելու բարձր հավանականություն ունեցող դատապարտյալների վերաբերյալ պրոբացիայի ծառայության կողմից տրվել են դրական զեկույցներ, իսկ համեմատաբար դրական վարքագիծ դրսևորած կամ նոր հանցագործություն կատարելու ցածր հավանականություն ունեցող դատապարտյալների վերաբերյալ պրոբացիայի ծառայության կողմից տրվել են բացասական զեկույցներ: Ավելին՝ արձանագրվել են դեպքեր, երբ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը պրոբացիայի ծառայության կողմից գնահատվել է բարձր, սակայն տրվել է դրական զեկույց:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ պրոբացիայի ծառայությունը, նույնանման հանգամանքների առկայության պարագայում, նույն դատապարտյալի նկատմամբ ներկայացրել է բացասական զեկույց, սակայն ամիսներ անց, նույն հանգամանքների առկայության պայմաններում, նշված դատապարտյալի վերաբերյալ անհասկանալիորեն կազմել է դրական զեկույց՝ առանց որևէ լրացուցիչ հիմնավորման:

Արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետին ուղարկվել է մեկ միասնական հաղորդում:

Հաշվետու տարում ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից ներկայացվել է 39 միջնորդագիր /2018թ.՝ 1/, որոնց հիման վրա վերանայվել է

խախտումներով կայացված 39 ակտ /2018թ.՝ 1/: Կասեցված և հետագայում վերանայված 39 ակտից մեկը վերաբերել է պահվող անձի նկատմամբ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից տույժ, իսկ 34-ը՝ խրախուսանքի միջոց կիրառելու մասին որոշումներին: Մնացած 4 ակտը վերաբերել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի կայացրած որոշումներին: Խրախուսանքի միջոց կիրառելու մասին 34 կասեցված որոշումից առավել ուշագրավ են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի կողմից քրեակատարողական ծառայության 100-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցուցահանդեսին մասնակցելու համար 14 ցմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կայացված որոշումները: Նշված որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգվել է ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից, ինչի արդյունքում դատապարտյալների ստեղծագործ աշխատանքներով զբաղվելու հանգամանքը չի հիմնավորվել, ինչպես նաև պարզվել է, որ ՔԿՀ-ում կազմակերպվող միջոցառումները չեն անցկացվել օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ և այդ միջոցառումներին դատապարտյալների մասնակցությունն ինքնին չէր կարող հանդիսանալ խրախուսման հիմք: Այդ որոշումները կասեցվել են և միջնորդություն է ներկայացվել ՔԿՀ պետին՝ դրանք վերանայելու համար: ՔԿՀ պետի կողմից բոլոր որոշումները վերանայելու արդյունքում դատապարտյալների նկատմամբ կիրառված խրախուսանքի միջոցները վերացվել են: ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության առաջարկությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը սկսել է ծառայողական քննություն՝ արձանագրված խախտումները ծնող պատճառները վեր հանելու, դրանք հետագայում բացառելու և այդ խախտումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով:

ՀՀ դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 1870 դատական քննության:

Վերը նշվածներից 460-ը վերաբերում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն /2018թ.՝ 1891/, 23-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը /2018թ.՝ 12/, 19-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն /2018թ.՝ 30/, 8-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն /2018թ.՝ 110/, 29-ը՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելուն /2018թ.՝ 66/, 181-ը՝

տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն /2018թ.՝ 604/, 26-ը՝ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի այլ միջոցների կիրառումը փոփոխելուն կամ դադարեցնելուն /2018թ.՝ 72/, 89-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ այն դադարեցնելուն /2018թ.՝ 119/, իսկ 1035-ը՝ դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին /2018թ.՝ 1423/:

2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 212 անձ /2018թ.՝ 530/:

Պետք է փաստել, որ 2018թ. հետ համեմատած 2019թ. ընթացքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ քննված գործերի և կայացված դատական ակտերի թվի էական նվազումը հիմնականում պայմանավորված է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց թվաքանակի էական նվազմամբ՝ պայմանավորված նախորդ տարվա ընթացքում 2017 թվականի օրենսդրական բարեփոխումների և 2018 թվականի «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրառման արդյունքում պատժից ազատված անձանց մեծ քանակով:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 49-ով բերվել է վերաքննիչ բողոք /2018թ.՝ 98/, որոնցից 12-ը բավարարվել է /2018թ.՝ 40/, 8-ով բերվել է վճռաբեկ բողոք /2018թ.՝ 10/, որոնցից 1-ով՝ վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 7-ի վերաբերյալ դեռ որոշումներ չեն կայացվել:

Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ բերվել է 1 վերաքննիչ բողոք /2018թ.՝ 2/, որը բավարարվել է:

Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ բերվել է 1 վերաքննիչ բողոք /2018թ.՝ 5/:

Այլ գործերից 22-ով բերվել է վերաքննիչ բողոք /2018թ.՝ 20/, որոնցից 14-ը բավարարվել է /2018թ.՝ 8/: Այլ գործերով բերվել է 18 վճռաբեկ բողոք, որոնք բավարարվել են /2018թ.՝ 1/:

ՀՀ դատախազության դատախազների կողմից ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում կատարվել են 100 ստուգում և ուսումնասիրություն /2018թ.՝ 104/, որոնց արդյունքում հայտնաբերվել է 358 խախտում, կասեցվել է օրենսդրությանը հակասող 1 ակտ:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման և պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 2019 թվականին ընթացք է

տվել 3471 անձի վերաբերյալ կազմված անձնական գործերի: Դրանցից 2320-ը փոխանցվել է 2018 թվականից, իսկ 1151-ը կազմվել է հաշվետու տարում:

Հաշվետու ժամանակաշրջանում բռնագանձման ենթակա ընդհանուր գումարով 361.057.950 ՀՀ դրամի չափով 883 տուգանքներից փաստացի բռնագանձվել է 170-ը՝ 72.524.300 ՀՀ դրամի չափով: 266 գործ 110.684.100 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու վերաբերյալ կարճվել է՝ համաներման, ներման, դատապարտյալի մահվան, վաղեմությունն անցնելու կամ այլ պատճառներով: ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից հաշվառված շահառուներից 943-ի նկատմամբ կիրառվել է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը, որոնցից 234-ը վերաբերում է «տուգանք» պատժատեսակին:

2019թ. ՀՀ դատախազության՝ ոլորտը սպասարկող դատախազների կողմից, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց դիմումների համաձայն, հարցման է ենթարկվել 226 անձ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժների նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազները նախաձեռնել և կազմակերպել են դատապարտյալների ընդունելություն՝ նրանց բարձրացրած իրավական բնույթի խնդիրներին տեղում ծանոթանալու, դատախազության իրավասությունների սահմաններում և հնարավորության դեպքում դրանց օպերատիվ լուծումներ գտնելու, անհրաժեշտություն առաջանալու դեպքում իրավական խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Ընդունելությունների ընթացքում դատապարտյալների կողմից բարձրացված խնդիրները և հարցադրումները դատախազական հսկողությամբ պայմանավորված գործառույթների իրականացման միջոցով ստացել են պատշաճ լուծում:

Ընդհանուր առմամբ, 2019 թվականի ընթացքում միայն ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից կատարվել է կալանավորված անձանց և դատապարտյալների 164 անհատական ընդունելություն:

Միաժամանակ, այս ոլորտում առկա են մի շարք օրենսդրական խնդիրներ, որոնց լուծումը կարևոր նշանակություն ունի ՀՀ դատախազության՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորության պատշաճ իրականացման տեսանկյունից: Այսպես,

ա) «Դատախազության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազն իրավունք չունի ծանոթանալու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի անձնական գործին: Դատախազի իրավունքը սահմանափակվում է միայն պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների

ենթարկված անձի այն փաստաթղթերին ծանոթանալով, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների: Նշված հանգամանքը հնարավորություն չի տալիս դատախազին արդյունավետ կերպով իրականացնել հսկողական իր լիազորությունները, քանի որ հաճախ օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի անձնական գործը:

Այս համատեքստում հատկանշական է այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» օրենքի՝ փոփոխման ենթակա 28-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հիման վրա դատախազին պրոբացիայի շահառուի անձնական գործին ծանոթանալու իրավունք վերապահված է:

բ) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում հսկողություն իրականացնող դատախազը «Դատախազության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով լիազորված է ստուգելու միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, մինչդեռ պրակտիկայում առաջանում է անհրաժեշտություն՝ ստուգել նաև վերը նշված անձանց այն գործողության կամ անգործության համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որի արդյունքում չի ընդունվում որևէ իրավական ակտ:

Անհրաժեշտ է, որ ոչ միայն կարգավորվի նշված խնդիրը, այլև, որպես հետևանք, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում հսկողություն իրականացնող դատախազը լիազորված լինի ներկայացնելու ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ համապատասխան միջնորդագիր, որն արդեն համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պարտադիր ծառայողական քննություն անցկացնելու հիմք կհանդիսանա:

գ) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս տարբեր բնույթի հարցերի լիարժեք և համալիր բացահայտումը և գնահատումը որոշակի նեղ մասնագիտական, ոչ իրավաբանական գիտելիքներ և հմտություններ է պահանջում: Սակայն գործող իրավակարգավորումները դատախազին հնարավորություն չեն տալիս ներգրավել համապատասխան ոլորտի մասնագետի, որը կտրամադրի հսկողության շրջանակում գտնվող հարցի վերաբերյալ մասնագիտական և օբյեկտիվ կարծիք, ինչը դատախազական հսկողության արդյունավետության վրա ազդող կարևոր հանգամանք է:

դ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրավունք է վերապահում միայն նախաքննության և

հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս: Նշված նորմի բովանդակությունից բխում է, որ վերը նշված օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում դատախազը կարող է օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնել միայն հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս:

Մինչդեռ «Դատախազության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս հաճախ անհրաժեշտություն է ծագում ուսումնասիրելու այդ իրավական ակտերի կայացման հիմքում դրված՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունքում կազմված փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը: Հակառակ դեպքում դատախազության վերոգրյալ գործառույթը կարող է հանգել ձևական-իրավական առումով կազմված իրավական ակտի օրինականության ստուգման՝ առանց անդրադառնալու դրա բովանդակությանը, ինչն ուղղակիորեն հակասում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի բուն էությանը:

Բացի այդ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունների նախազգուշացումը, կանխումը և բացահայտումը դիտարկում է որպես օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակ: Նշված կարգավորման պայմաններում և անհրաժեշտ ու բավարար հսկողության բացակայության դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարող է հանգեցնել կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև պետության և հասարակության օրինական շահերի կոպիտ ոտնահարման:

ե) ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից անցկացված ստուգումների արդյունքում բազմիցս գրություններ են ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն՝ հայտնաբերված խախտումների պատճառները պարզելու, աշխատանքում տեղ գտած թերությունները հետագայում բացառելու և թերացած պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը լուծելու նպատակով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ, սակայն ոչ բոլոր դեպքերում է այդ գրությունների հիման վրա անցկացվել ծառայողական քննություն: Վերը նշված գրությունների հիման վրա հիմնականում անցկացվել են ուսումնասիրություններ, որոնք իրենց իրականացման ծավալով շատ ավելի նեղ են, քան ծառայողական քննությունը:

Նշված իրավիճակը պայմանավորված է «Դատախազության մասին» օրենքի անկատարությամբ, որով պայմանավորված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում հայտնաբերված խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով,

դատախազը դրանք վերացնելու իրավասություն ունեցող մարմնին կամ պաշտոնատար անձին միջնորդագիր ներկայացնելու իրավասություն չունի: Նման իրավասության բացակայության պայմաններում խնդիրներ են առաջանում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության արդյունավետ իրականացման տեսանկյունից:

Վերոնշյալ օրենսդրական խնդիրները լուծելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունը մշակել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր:

Նախագծերով առաջարկվում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազին իրավունք վերապահել ծանոթանալու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի անձնական գործին, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում հսկողություն իրականացնող դատախազին լիազորել ներկայացնելու ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ համապատասխան միջնորդագիր, որն արդեն հիմք կհանդիսանա համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պարտադիր ծառայողական քննություն անցկացնելու և այլն: Նախագծերի ընդունվելու դեպքում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, դատախազն իրավունք կունենա ստուգելու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի գործողությունների կամ անգործության համապատասխանությունը գործող օրենսդրությանը, համապատասխան ոլորտի մասնագետ տրամադրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև գլխավոր դատախազը կամ հսկողություն իրականացնող դատախազը իրավունք կունենան պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում խախտում թույլ տված անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ դիմել վերջինիս վերադասին:

ՀՀ գլխավոր դատախազը գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարին, որպեսզի այդ նախագծերին սահմանված կարգով ընթացք տրվի և ներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

7. **Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ**

Հայաստանի Հանրապետության դատախազության հիմնական առաջնահերթություններից մեկը միջազգային-իրավական կապերի, միջազգային կառույցների հետ հարաբերությունների ամրապնդումն է, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում այլ պետությունների իրավասու մարմինների հետ մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով համագործակցության խորացումը:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին հարցումներ.

2019 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 161 միջնորդություն (նախորդ տարի՝ 170), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 456 միջնորդություն (նախորդ տարի՝ 356), ընդամենն ուղարկվել է 617 միջնորդություն (նախորդ տարվա 526 միջնորդության փոխարեն), որից 35-ը կոռուպցիոն հանցագործություններով:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 129 միջնորդություն (նախորդ տարվա ընթացքում՝ 145), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 34 միջնորդություն (նախորդ տարվա ընթացքում՝ 28), ընդհանուր առմամբ ստացվել է 163 միջնորդություն (նախորդ տարվա 173-ի փոխարեն), որից 8-ը կոռուպցիոն հանցագործություններով:

2. Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.

2019 թվականի ընթացքում ուղարկվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 40 միջնորդություն (նախորդ տարվա 51-ի դիմաց), որից 25-ն ուղարկվել են ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 15-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից ուսումնասիրվել են ՀՀ քրեական հետապնդման մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված հեռագրերի հիման վրա

պահանջված փաստաթղթերի փաթեթները, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում միջազգային պայմանագրերի համաձայն հայցվել և տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ:

Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում նվազագույնի են հասցվել միջնորդությունների անհիմն մերժման դեպքերը: Այսպես.

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 40 հանձնման միջնորդություններից (նախորդ տարի՝ 51) 14-ը բավարարվել են (նախորդ տարի՝ 16), 7-ը մերժվել են, 19-ը գտնվում են քննարկման փուլում: Բավարարվել են նաև նախկինում ներկայացված ևս 16-ը:

Զգալիորեն աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված հետախուզվողների (որոնց նկատմամբ հայցող պետության իրավասու մարմինների կողմից խափանման միջոց է ընտրված եղել կալանավորումը), հետևաբար նաև ստացված հանձնման մասին միջնորդությունների թիվը:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 31 միջնորդություններից (նախորդ տարի՝ 25, 2017թ՝ 12) բավարարվել է 15-ը, թողնվել է առանց քննարկման 2-ը, 6-ն՝ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 8-ը՝ գտնվում են քննարկման փուլում:

ՀՀ գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 187 անձի վերաբերյալ (նախորդ տարի՝ 189):

Շարունակաբար աճում է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված ու կալանավորված անձանց թիվը: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվել են դատախազների միջնորդությամբ կալանավորված շուրջ 33 հետախուզվող (նախորդ տարի՝ 25):

Միաժամանակ, առկա վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում օտարերկրյա պետությունների կողմից հետախուզման մեջ գտնվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ՀՀ-ում ապաստան ստանալու իրավունքից օգտվելը դիտվում է որպես իրենց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված որոշակի սահմանափակումներից խուսափելու միջոց: Ըստ այդմ, ՀՀ տարածք ապօրինի մուտք գործած անձանց կողմից հետագայում փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելն ընկալվում է որպես իրենց կողմից կատարված հանցագործության «արդարացում»: Բացի այդ, հարկ է նշել, որ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված մի շարք հետախուզվողներ հաշվետու ժամանակահատվածում ազատվել են կալանավորումից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետը լրանալու և

նրանց կողմից ներկայացված՝ ապաստան ստանալու վերաբերյալ դիմումներով վերջնական որոշում ընդունված չլինելու պատճառով:

Վերոնշյալ և օտարերկրյա պետությունների կողմից հետախուզման մեջ գտնվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ՀՀ-ում ապաստան ստանալու իրավունքից օգտվելու ոլորտում առկա մի շարք այլ իրավական հարցեր լուծելու նպատակով ՀՀ դատախազությունը մշակել է «Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր՝ նպատակ ունենալով հստակեցնել օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու հայցով դիմելու կարգն ու ժամկետները, սահմանել այդ հայցերի քննարկման արագացված ժամկետներ, կրճատել բացասական որոշումների բողոքարկման և դրանք ՀՀ դատարանների կողմից քննելու ժամկետները՝ հաշվի առնելով ակնհայտորեն անհիմն հայցերի դեպքում իրավունքի չարաշահման անթույլատրելիության սկզբունքը:

Նախագծերի փաթեթը Կառավարության կողմից հավանության արժանանալուց և ՀՀ Ազգային Ժողով ներկայացվելուց հետո 2018 թվականի սեպտեմբերի 10-ին ընդգրկվել էր ՀՀ Ազգային ժողովի հերթական նիստի օրակարգ և հաջորդ օրն ընդունվել էր առաջին ընթերցմամբ: Այնուհետև, 2018 թվականի հոկտեմբերի 23-ին նախագծերի փաթեթն ընդգրկվել էր հերթական նիստի օրակարգ՝ երկրորդ ընթերցման համար: Սակայն, նախագծերի փաթեթի քննարկումը ՀՀ Ազգային ժողովի նիստում հետաձգվել է և մինչ օրս չի քննարկվել:

3. Քրեական գործերով վարույթների փոխանցում (ստացված և ուղարկված քրեական գործեր և նյութեր).

Դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 15 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում 28-ի փոխարեն), որից 8-ը ուղարկվել են ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 7-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 10 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 8):

Քրեական գործերով իրավական օգնություն հայցելու և տրամադրելու, ինչպես նաև հանձնման և քրեական գործերով վարույթների փոխանցման գործընթացում խստորեն պահպանվում են ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ներպետական օրենսդրության դրույթները:

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազությունը շարունակել է զարգացնել և ընդլայնել համագործակցությունն այլ պետությունների դատախազությունների, պետական այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Մասնավորապես,

ա) Համագործակցությունն այլ պետությունների դատախազությունների հետ.

1. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազների կողմից 2017թ . ստորագրված 2018-2020 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության ծրագրի շրջանաներում 2019թ. մայիսի 16-ին Երևանում ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել «Հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման բնագավառում համագործակցության գործնական հիմնահարցերը, հանցագործությունների արդյունքում ստացված ակտիվների հայտնաբերման, առգրավման, բռնագրավման և արտերկրից վերադարձման ուղղությամբ Հայաստանի և Ռուսաստանի դատախազությունների աշխատանքային փորձի փոխանակում» թեմայով սեմինարը:

Սեմինարի ընթացքում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատախազությունների ներկայացուցիչներն անդրադարձ են կատարել հանձնման (էքստրադիցիայի) և քրեական գործերով իրավական օգնության ոլորտում համագործակցության առկա մի շարք հիմնահարցերին, քննարկել դրանց լուծման առավել արդյունավետ մոտեցումները և ժամանակակից հասարակության ներկայիս մարտահրավերները:

Միջոցառման մասնակիցները, ներկայացնելով տվյալ ոլորտում ունեցած փորձը, ևս մեկ անգամ ընդգծել են, որ քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությունը և այդ բնագավառում արդյունավետության զարգացումը մշտապես մնում է երկու երկրների գլխավոր դատախազությունների ուշադրության կենտրոնում:

Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության պատվիրակությանը ընդունել է նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը: Նա կարևորել է ՌԴ գլխավոր դատախազության հետ տարիների ընթացքում ձևավորված արդյունավետ համագործակցությունը և ընդգծել է համագործակցության ծրագրի շրջանակներում նման հանդիպումների կարևորությունը՝ նշելով, որ դրանք նպաստում են առանձին ոլորտներում հիմնախնդիրների լուծմանը և համակարգերի առավել սերտ համագործակցությանը:

Նույն ծրագրի շրջանակներում 2019թ. նոյեմբերին 20-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում Հայաստանի Հանրապետության և Ռոսաստանի Դաշնության դատախազությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել կլոր

սեղան-քննարկում«Անչափահասների կողմից կատարված հանցագործություններով քրեական գործերի վարույթի ընթացքում օրենքների կատարման նկատմամբ դատախազական վերահսկողություն» թեմայով:

Հանդիպման ընթացքում ՌԴ գլխավոր դատախազության ներկայացուցիչները բարձր են գնահատել ՀՀ և ՌԴ դատախազական համակարգերի միջև համագործակցության խորացման ներկայիս միտումները և դրա շրջանակներում իրականացվող համատեղ ծրագրերի նշանակությունը:

Միջոցառման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պատվիրակության անդամները նշել են, որ ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև սերտ գործակցությունը, համատեղ նմանատիպ միջոցառումների իրականացումը փորձի փոխանակման ու կոնկրետ ոլորտներում արդիական խնդիրների համատեղ քննարկման հնարավորություն է: Նրանց կողմից նշվել է, որ երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են ոչ միայն յուրաքանչյուր պետության, այլ նաև միջազգային իրավական կարևորագույն խնդիրներից: Եվ այդ առումով ընդգծվել է երեխաների կյանքի բարելավման, իրավունքների և շահերի պաշտպանության միջազգային գործակցության ամրապնդման անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում կողմերը ներկայացրել են ՀՀ-ում և ՌԴ-ում անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները, անչափահասների մասնակցությամբ վարույթներով իրականացվող դատախազական հսկողության շրջանակները, մեխանիզմները, դատախազական հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով ձեռնարկված և ձեռնարկվող միջոցառումները, այս ոլորտում երկու երկրների համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

2. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր դատախազների կողմից 2018թ. նոյեմբերի 14-ին ստորագրված «ՀՀ գլխավոր դատախազության և ԻԻՀ գլխավոր դատախազության միջև 2019-2020թ.թ. համագործակցության մասին» ծրագրի շրջանակներում 2019թ. հունիսի 5-ին Երևանում տեղի է ունեցել «Հանձնման և քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման բնագավառում համագործակցության գործնական հիմնախնդիրները» թեմայով կլոր սեղան-քննարկում:

Վերջինիս ընթացքում ՀՀ և ԻԻՀ գլխավոր դատախազությունների ներկայացուցիչներն անդրադարձ են կատարել հանձնման (էքստրադիցիայի) և քրեական գործերով իրավական օգնության ոլորտում առկա ընթացակարգային և բովանդակային մի քանի ակտուալ խնդիրների, քննարկել միջազգային իրավունքի և երկու երկրների օրենսդրական իրավակարգավորումների համատեքստում դրանց լուծման առավել արդյունավետ մոտեցումները, երկու երկրների դատախազությունների միջև այս ոլորտներում համագործակցության խորացման հեռանկարները: Ներկայացնելով տվյալ

ոլորտում ունեցած փորձը՝ երկու երկրների դատախազությունների ներկայացուցիչները մեծապես կարևորել են քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությունը և երկուստեք փաստել, որ 2019-2020թթ. համագործակցության ծրագիրը նպաստում է գործակցության հետագա ամրապնդմանը, երկու երկրների դատախազների փոխընկալման դյուրացմանը:

Նույն ծրագրի շրջանակում 2019թ. դեկտեմբերի 17-19-ը Թեհրանում ՀՀ և ԻԻՀ դատախազությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել «Թմրամիջոցների մաքսանենգության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերով հարուցված քրեական գործերի քննության առանձնահատկությունները» թեմայով կլոր սեղան-քննարկում:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազի երկկողմ հանդիպման արդյունքում 2019թ. հոկտեմբերի 1-ին ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ հանցավորության վիճակի և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, իրավական հարցերով խորհրդատվությունների, քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու և հանձնման մասին հարցումների շրջանակներում հաղորդակցության արդյունավետության բարձրացման, դատախազական մարմինների գործունեության հարցերով գիտագործնական համատեղ միջոցառումներ անցկացնելու և այլ ուղղություններով երկու երկրների գլխավոր դատախազությունների միջև համագործակցության մասին:

բ) Համագործակցությունը ԱՊՀ շրջանակներում գործող կառույցների հետ.

1. ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը Բիշքեկում մասնակցել է Անկախ պետությունների համագործակցության մասնակից-երկրների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 29-րդ նիստին:

Նիստի ընթացքում քննարկվել են կոռուպցիայի, մարդկանց առևտրի, անօրինական միգրացիայի, ահաբեկչության և բռնության այլ ձևերով արտահայտվող ծայրահեղականության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հանցագործությունների դեմ ԱՊՀ անդամ երկրների համագործակցության ծրագրերի կատարման 2018թ. արդյունքները, իրականացման ընթացքը, ինչպես նաև 2019-2023թթ. հանցավորության դեմ համատեղ պայքարի պլանները: Նիստի ընթացքում ներկայացվել է ԱՊՀ անդամ երկրներում իրավապահ գործունեության դատավարական հիմքերի արդիականացման, գողացված ակտիվների վերադարձման և այլ ոլորտներում դատախազական գործառույթների արդյունավետության բարձրացման, միջազգային համագործակցության ակտիվացման պրակտիկան և փորձը:

Այս շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է Հայաստանում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացնող միջնորդությունների հիմնավորվածության ապահովման ուղղությամբ ՀՀ

դատախազության նախաձեռնությամբ Հայաստանի, այնպես էլ այլ պետությունների դեմ ՄԻԵԴ կայացված որոշումների, ներպետական իրավակիրառ պրակտիկայի համակողմանի ուսումնասիրության արդյունքում կատարված քայլերը և դրանց արդյունքները:

Բիշքեկ կատարած այցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը առանձին երկկողմ հանդիպումներ է ունեցել գործընկեր երկրների պատվիրակությունների ղեկավարների, գլխավոր դատախազների հետ, որոնց ընթացքում քննարկվել են իրավական փոխօգնության ոլորտում գործակցության, դատախազական կառույցների միջև համագործակցության ընդլայնման ուղղություններին ու հնարավորություններին վերաբերող հացրեր:

2. 2019 թվականի հուլիսի 10-11-ը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը Մինսկում մասնակցել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստը:

Խորհրդի նիստի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազն իր ելույթում ներկայացրել է Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումների ռազմավարական առաջնահերթություններն ու հետապնդած խնդիրները, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, պատճառված վնասների վերականգնման ոլորտներում հիմնական արդյունքները:

Նիստի ընթացքում քննարկման հիմնական առարկա են դարձել նաև ակտիվների վերադարձման ոլորտում միջազգային համագործակցության մեխանիզմների կատարելագործման հրցերը: Բացի այդ, վերլուծվել են ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի կողմից ընդունված նախկին որոշումների, հակակոռուպցիոն պայքարում Միջպետական խորհրդի մասնակից երկրների համագործակցության կոնցեպցիայի, ինչպես նաև հանցավորության դեմ համատեղ միջոցների 2019-2023թթ. միջպետական ծրագրի իրականացման արդյունքները:

Այցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը նաև երկկողմ հանդիպումներ է ունեցել ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի անդամ առանձին երկրների պատվիրակությունների ղեկավարների, գլխավոր դատախազների հետ, որոնց ընթացքում քննարկվել են իրավական փոխօգնության և այլ ոլորտներում երկկողմ և բազմակողմ համագործակցության ամրապնդմանն առնչվող հարցեր:

գ) Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ.

1. 2019թ. մարտի 14-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգային հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Յուլիա Լովոչկինային և Անդրեյ Շիրցելին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են 2018թ. մայիսին համազեկուցողների՝ Հայաստան կատարած այցից հետո դատաիրավական ոլորտում իրականացված գործընթացները, հակակոռուպցիոն պայքարի ինստիտուցիոնալ նոր կառուցակարգերի

ներդրմանը, կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարի արդյունքներին, առանձին քրեական գործերի շրջանակներում հանրային և մասնավոր շահերի համադրված պաշտպանությանը, ընտանեկան բռնությունների դեմ պայքարում դատախազության ունեցած դերակատարությանն առնչվող հարցեր:

Անդրադառնալով համազեկուցողներին հետաքրքրող՝ քրեական առանձին գործերով մեղադրյալի կարգավիճակ ունեցող առանձին անձանց կողմից պետությանը տրվող նվիրատվությունների իրավաչափության հարցին՝ ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ խնդրո առարկայի առնչությամբ իրավական լուծումները շատ հստակ են: Անձի բացառիկ իրավունքն է տնօրինելու իր սեփականությունը՝ այդ թվում նաև նվիրատվություն կատարելու հարցում, սակայն դա որևէ առնչություն չի կարող ունենալ նրանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման հետ: Այսինքն, անկախ սեփական ցանկությամբ նվիրատվություն կատարելու կամ չկատարելու հանգամանքից՝ քրեական գործի շրջանակներում նրանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը շարունակվում է: Եվ եթե քրեական գործերի նախաքննությամբ հիմնավորվում է այդ անձի կողմից պետությանը այս կամ այն չափով գույքային վնաս հասցրած լինելու հանգամանքը, օրենքով նախատեսված ներգործության գործիքակազմով միջոցներ են ձեռնարկվում միայն վարույթի շրջանակներում պարզված վնասի վերականգնման ուղղությամբ և վնասի կամովին վերականգնումն օրենքով նախատեսված բարենպաստ հետևանքներ է ունենում անձի համար:

Հանդիպման ժամանակ ընտանեկան բռնությունների օրենսդրության իրավակիրառ պրակտիկայի ձևավորման խնդրի համատեքստում անդրադարձ է կատարվել դատախազությանը վերապահված քրեադատավարական գործառույթներին: ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ դատախազին բացառիկ իրավասություն է վերապահված հանրային կարգով, այսինքն առանց տուժողի բողոքի առկայության, քրեական վարույթ հարուցելու ընտանեկան բռնության բոլոր այն դեպքերում, երբ դատախազի գնահատմամբ տուժողն ուժեղ կախվածության մեջ է բռնարարից և ի վիճակի չէ կամ չի ցանկանում հետամուտ լինել իր իրավունքների պաշտպանությանը: Համազեկուցողներին տեղեկացվել է, որ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով մշակվել են նման իրավիճակները դատախազի կողմից գնահատելու և դրանից բխող անհրաժեշտ գործողություններ կատարելու հստակ ուղենիշեր, որոնց կիրառման արդյունքում նախորդ տարի հանրային մեղադրանքի կարգով ընտանեկան բռնության հատկանիշներով մի քանի տասնյակ քրեական գործեր են հարուցվել:

2. 2019թ. մարտի 25-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր տնօրինության ղեկավար Քրիստոֆ Պոյրելի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էր նաև Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված մի շարք իրավունքների պաշտպանության, ինչպես նաև Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի քաղաքացիներին վերաբերող որոշումներից բխող պարտավորությունների կատարման ընթացքին և ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ վերսկսվել են քննություններն անձանց խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ բոլոր այն քրեական գործերով, որոնց վերաբերյալ Եվրոպական դատարանը Հայաստանի դեմ որոշումներ է ընդունել:

3. 2019թ. ապրիլի 25-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների քաղաքականության և համագործակցության վարչության պետ Միխայիլ Լոբովի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են արդյունավետ քննությունների իրականացման, խափանման միջոց կալանքի պրակտիկայի, Զինված ուժերում մարդու իրավունքների, կանանց իրավունքների պաշտպանության, միջազգային իրավական համագործակցությանը միտված դատախազների վերապատրաստման ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական նոր օրենսգրքերի ընդունման ուղղությամբ տարվող աշխատանքներին, ինչպես նաև քրեական դատավարության իրավակիրառ պրակտիկայում եվրոպական նախադեպային իրավունքի տարրերի գործարկմանն ուղղված ՀՀ դատախազության նախաձեռնություններին:

ՀՀ գլխավոր դատախազը փաստել է, որ չնայած քրեական դատավարության մշակվող նոր օրենսգրքի նախագծում ներդրվել են Հայաստանի նախկին և ներկայիս իրավական համակարգերի համար նոր ինստիտուտներ, սակայն օրենսգրքի ընդունման գործընթացի որոշակի դանդաղման հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ դատախազությունը, հատկապես եվրոպական իրավունքի իմպլեմենտացման նպատակով, մի քանի կարևոր նախաձեռնություններ արդեն իսկ ցուցաբերել է: Խոսքը վերաբերում է ինչպես եվրոպական իրավունքի տեղայնացման նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մի քանի փոփոխությունների և լրացումների նախաձեռնմանը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, Հայաստանի, այլ երկրների դեմ Եվրոպական դատարանի կայացրած որոշումների ուսումնասիրության հիման հայաստանյան քրեադատավարական իրավակիրառ պրակտիկայում մարդու մի քանի հիմնարար իրավունքների իրացմանը և պաշտպանության երաշխիքների բարձրացմանը միտված ներքին իրավական կանոնների սահմանմանը, դրանցից բխող ուղեցույցերի մշակմանը: Որպես այդպիսիք՝ մասնավորապես, մատնանշել է վատ վերաբերմունքից և խոշտանգումներից

պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի համատեքստում մեղադրյալի կամ ամբաստանյալի հակընդդեմ հարցման, մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի շրջանակներում որպես խափանման միջոց կալանքի կիրառման պրակտիկայի նոր չափորոշիչների կիրառմանն ուղղված ՀՀ դատախազության կոլեգիայի համապատասխան որոշումներին, որոնք արդեն իսկ դրական արդյունքներ են ապահովում:

ՀՀ գլխավոր դատախազը նաև կարևոր է համարել ԵԽ-ի հետ համագործակցությամբ դատախազների վերապատրաստման նոր ծրագրերի նախանշումը՝ մի կողմից հաշվի առնելով իրավունքի զարգացման ներքին տրամաբանությանը և միտումներին համարժեքության ապահովման, մյուս կողմից՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության քրեադատավարական նոր մեխանիզմների պրակտիկ կիրառումը դյուրինացնելու անհրաժեշտությունը:

4. 2019թ. մայիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի միջնաժամկետ ուսումնասիրում կատարելու նպատակով Հայաստան ժամանած Համաշխարհային բանկի պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պետական հատվածի արդիականացման նախորդ երկու ծրագրերի շրջանակում դատահրավական ոլորտում իրականացված բարեփոխումների և էլեկտրոնային արդարադատության գործիքի մշակման աշխատանքների մեկնարկի վերաբերյալ հարցեր: Կարևորվել է նաև ազդարարման համակարգի էլեկտրոնային հարթակի գործարկումը որպես կոռուպցիայի դեմ համապարփակ պայքարի գործիք:

5. 2019թ. մայիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է «Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների ամրապնդում» ծրագրի շրջանակներում Հայաստանում գտնվող ԵԱՀԿ փորձագիտական խմբի անդամներին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ քրեահրավական պայքարի կենտրոնացված և ապակենտրոնացված մոդելային լուծումներին առնչվող հարցեր, դրանցից յուրաքանչյուրի կոնցեպտուալ առավելություններն ու հնարավոր թերությունները, ռիսկերը:

Քննարկման արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել ՀՀ դատախազության ներկայացուցիչների և փորձագիտական խմբի միջև ընդլայնել համագործակցությունը ըստ անհրաժեշտության փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակման հարցում:

6. 2019թ. մայիսի 31-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Եվրոպայի խորհրդի Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակումոպուլոսի գլխավորած բարձրաստիճան պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության և դատաիրավական համակարգերում ու կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում նոր բարեփոխումների վերաբերյալ հարցեր, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի իրացմանը, դատախազության կարգավիճակային և գործառույթային անկախությանը, քրեական դատարավության և քրեական նոր օրենսգրքերի ընդունման հեռանկարներին առնչվող հարցեր:

Պատվիրակության կողմից գոհունակությամբ ընդգծվել է դատախազության վերաբերյալ GRECO-ի հանձնարարականները գրեթե լիարժեքորեն կատարված լինելու հանգամանքը:

7. 2019թ. հուլիսի 9-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Եվրոպական հանձնաժողովի հարևանության հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոսի գլխավորած պատվիրակությանը:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ Եվրոպական հանձնաժողովը կարևոր դերակատարում ունի Արևելյան գործընկերության երկրներում, մասնավորապես Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների կայացման, մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության համակարգի զարգացմանն ուղղված նախագծերի իրականացման գործընթացներում: Այս տեսակետից, ըստ ՀՀ գլխավոր դատախազի, հանգուցային նշանակություն ունի հատկապես Հայաստանի Հանրապետության և ԵՄ-ի միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որով նախանշված են նշված ոլորտներում ռազմավարական բարեփոխումների հիմնական ուղղություններն ու նպատակները:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև կոռուպցիայի հակազդման և դատաիրավական ոլորտի բարեփոխումների ռազմավարության մշակման, հետագա իրականացման գործընթացներում ՀՀ դատախազության մասնակցության և սպասելիքների, քրեական դատավարության շրջանակներում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության առավել գործուն մեխանիզմների կիրառման, դրանց շրջանակներում ԵՄ-ի կողմից կարճաժամկետ և միջնաժամկետ օժանդակության եղանակներին, համագործակցության հետագա զարգացման ուղիներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

8. 2019թ. հուլիսի 9-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Համաշխարհային բանկի և Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների և հանցավորության գրասենյակի կողմից համատեղ հիմնված Հափշտակված գույքի վերադարձման նախաձեռնության փորձագետների հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, այդ համատեքստում ֆինանսական հետաքննությունների, ապօրինի ծագում ունեցող գույքի հետախուզման և բռնագանձման,

փողերի լվացման, երկրից ապօրինի դուրս բերված ակտիվների վերադարձման ինստիտուցիոնալ նոր իրավական մեխանիզմների ներդրման, այս ոլորտներում միջազգային համագործակցության ակտիվացմանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև ՀԲ և ՄԱԿ փորձագիտական ռեսուրսների ներգրավմամբ նշված ուղղություններով մասնագիտացած՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների համապատասխան ծառայողների պրոֆեսիոնալ հմտությունների, կարողությունների կատարելագործման նոր մեթոդների օգտագործման հեռանկարներին և հնարավորություններին:

9. 2019թ. նոյեմբերի 27-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրեն Ինգիբյոր Սոլրուն Գիսլադոտիրիի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների դեմ պայքարի օրենսդրական հիմքերի և իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացման, այս համատեքստում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ եռակողմ ձևաչափով գործակցությամբ դատախազների վերապատրաստման ծրագրերի իրականացման հնարավորությունները:

10. ՀՀ գլխավոր դատախազը Բիշքեկում մասնակցել է Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ-պետությունների գլխավոր դատախազների 17-րդ նիստի աշխատանքներին, որտեղ Հայաստանն ունի երկխոսության գործընկերոջ կարգավիճակ: Նիստի օրակարգում քննարկվել են մաքսանենգությանը, թմրանյութերի, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում կազմակերպության մասնակից և գործընկեր երկրների գործակցության ամրապնդման մեխանիզմները:

ՀՀ գլխավոր դատախազն իր ելույթում անդրադարձել է ներպետական և անդրազգային մակարդակներում այս վտանգավոր և այլ հանցատեսակներ ծնող հանցագործության դեմ պայքարի հիմնական բարդություններին և դրանց հաղթահարման ուղղությամբ ՀՀ-ում իրականացված համակարգային միջոցառումներին: ՀՀ գլխավոր դատախազը, մասնավորապես նշել է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից բխող համակարգային միջոցառումների շրջանակներում նախորդ տարիներին էականորեն բարելավվել է այս հանցատեսակի դեմ պայքարի արդյունավետությունը, ինչի շնորհիվ հայտնաբերվել և առգրավվել են մեծ քանակությամբ թմրամիջոցներ, որոնց առյուծի բաժինը նախատեսված է եղել տարանցման համար:

դ) Համագործակցությունն այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և պետական մարմինների ներկայացուցիչների հետ.

1 . 2019թ . մարտի 26-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան տիկին Լին Թրեյսիին:

ՀՀ գլխավոր դատախազն արժևորել է հատկապես անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում ԱՄՆ իրավապահ մարմինների հետ գործակցության փորձն ու փոխադարձ վստահությունը՝ նշելով, սակայն, որ ունեցած արդյունքները դեռևս բավարար չեն և անհրաժեշտ է ավելի բարձրացնել համագործակցության մակարդակը:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է նաև, որ հիմնական խնդիրներից է համարվում երկրից հանցավոր ճանապարհով դուրս բերված ակտիվների վերադարձման իրավաչափ մեխանիզմների ստեղծումը: ՀՀ գլխավոր դատախազը մանրամասն ներկայացրել է նաև քրեական վարույթի շրջանակներում մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ մի քանի հիմնարար իրավունքների իրացման առավել բարձր երաշխիքներ ապահովելու նպատակով ՀՀ դատախազության նախաձեռնությունները և դրանց արդյունքները:

Դեսպան Թրեյսին նշել է, որ երկու երկրների իրավապահ մարմինների միջև փոխգործակցությունը նպաստում է հատկապես կազմակերված հանցավորության, փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և միջազգային ընդգրկման այլ հանցագործությունների դեմ համատեղ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Նա նաև գոհունակություն է հայտնել ՀՀ դատախազության հետ հաստատված հարաբերությունների կապակցությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև ՀՀ դատախազության համար առաջնահերթություն հանդիսացող մի քանի այլ ուղղություններով՝ մասնավորապես թրաֆիկինգի, առանձին այլ հանցատեսակների դեմ պայքարում, մարդու հիմնարար իրավունքների քրեաիրավական և քրեադատավարական պաշտպանության ոլորտներում Հայաստանում իրականացվող աշխատանքներն ու արդյունքները, դրանց շրջանակներում համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել միմյանց կողմից բարձրացվող խնդիրներին հնարավորինս արագ արձագանքելու՝ ձևավորված փոխադարձաբար օգտակար պրակտիկան:

2. 2019թ. հունիսի 25-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:

Հանդիպման ընթացքում երկուստեք բարձր են գնահատվել իրավական ոլորտում երկու երկրների միջև հաստատված հարաբերությունները, ինչպես նաև երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև զարգացող համագործակցությունը, որը լիարժեքորեն արտացոլում է երկու պետությունների դաշնակցային հարաբերությունների բնույթն ու մակարդակը:

Ընդգծվել է, որ ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև պարբերաբար թարմացվող համագործակցության ծրագրերով նախատեսվող միջոցառումները, որոնք շարունակվում են ներկայումս, մեծապես նպաստում են դատախազների մասնագիտական ու որակական հմտությունների կատարելագործմանը, ստեղծում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքային խնդիրները և դրանց լուծման մեխանիզմներն առավել անմիջականորեն և հանգամանալից քննարկելու հնարավորություն:

Շեշտվել է ՀՀ-ի և ՌԴ-ի միջև իրավական ոլորտում կապերի առավել սերտացման անհրաժեշտությունը՝ վերահաստատելով այդ հարցում դեսպանության պատրաստակամությունը:

Մտքեր են փոխանակվել Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն պայքարի ռազմավարական առաջնահերթությունների և խնդիրների շուրջ: Արթուր Դավթյանը շեշտել է հատկապես ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, Հայաստանից հանցավոր ճանապարհով հանված ակտիվների վերադարձման ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որոնք գլխավոր դատախազի գնահատմամբ էապես կնպաստեն կոռուպցիոն հանցագործության դեպքերով քննվող քրեական գործերի արդյունավետությանը, ապօրինի հարստացման կանխմանը, սեփականության իրավունքի պաշտպանության հստակ երաշխիքներով ապօրինի ծագում ունեցող գույքը քաղաքացիադատավարական կարգով բռնագանձման գործընթացի ակտիվացմանը: ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ միջազգային համագործակցության ոլորտում միջոցներ են ձեռնարկվելու նաև Հայաստանից հանցավոր ճանապարհով դուրս բերված ակտիվների վերադարձման, այդ նպատակով Հայաստանի և այլ երկրների վճիռների փոխադարձ ճանաչման խնդիրները լուծելու ուղղությամբ:

3 . 2019թ . ապրիլի 30-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի սահմանադրական և իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ, Չեխիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Մարեկ Բենդայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են 2018 թվականին տեղի ունեցած հասարակական-քաղաքական արմատական փոփոխություններից հետո Հայաստանի դատահրավական ոլորտում ընթացող բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացներին առնչվող հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ կոռուպիցիայի դեմ ակտիվացած պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իրավապահ մարմինների նկատմամբ հասարակական վստահության մակարդակի բարձրացմամբ և քրեական հետապնդման մարմինների դրսևորած պրոֆեսիոնալիզմով: Վերջինս թույլ տվեց հանրային պահանջների զգալի մեծացման պայմաններում պահպանել իրավական հավասարակշռությունը և մնալ Հայաստանի ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների շրջանակներում:

4 . 2019թ . մայիսի 6-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԱՄՆ Փոխպետքարտուղարի՝ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) հարցերով օգնական Ջորգեն Էնդրյուսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ապօրինի ձեռք բերված գույքի և ակտիվների վերադարձման, հակակոռուպցիոն պայքարի ռազմավարության կատարելագործման, քրեական դատավարության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության և երաշխավորման ոլորտներում համագործակցության նոր հնարավորություններին և ուղղություններին առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ գլխավոր դատախազը տեղեկացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում որպես խափանման միջոց կալանքին այլընտրանք այլ խափանման միջոցների, մասնավորապես տնային կալանքի ներդրմանն ուղղված ՀՀ դատախազության նախաձեռնությունների և շրջանառության մեջ դրած օրենսդրական փոփոխությունների նախագծի մասին՝ հավելելով, որ այս առանցքային բարեփոխումն իրականացնելու հարցում տեսնում է համագործակցության հեռանկար:

5. 2019թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Խորվաթիայի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահ, Արդարադատության ակադեմիայի խորհրդի նախագահ Դուրո Սեսայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են դատական և իրավապահ համակարգերի ներկայացուցիչների վերապատրաստման, որակավորման բարձրացման ոլորտում երկու երկրների միջև համագործակցության ընդլայնման և այդ շրջանակներում արդարադատության ակադեմիաների ներուժի արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցեր:

ՀՀ դատախազությունը, իր առջև դրված սահմանադրական գործառույթների իրացման համատեքստում կարևորում է իրավական մտքի զարգացմանը զուգընթաց, քրեադատավարական և դատահրավական պրակտիկայում ի հայտ եկող գործնական խնդիրների լուծման նպատակով քրեական քաղաքականության արդիականացումը:

Ելնելով դրանից՝ 2019թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել ոլորտը կարգավորող օրենսդրությունում, դրանից ածանցվող ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների, լրացումների 14 նախաձեռնություն, որոնցից 1-ը ՀՀ Ազգային ժողովն արդեն իսկ ընդունել է: Համեմատության համար նշենք, որ 2018թ. իրականացվել էր նման 3 նախաձեռնություն:

Հաշվի առնելով ասարակությանը, մասնագիտական հանրույթին դրանց վերաբերյալ իրազեկելու անհրաժեշտությունը՝ ընդհանուր գծերով ներկայացնում ենք դրանցից առավել կարևորների էությունն ու նպատակները: Այսպես՝

Բնակարանային գողության դեպքերի էական աճը կանխարգելելու և բնակարանային գողությունների դեմ տարվող քրեաիրավական պայքարը խստացնելու նկատառումներով, ի թիվս այլ միջոցառումների, ՀՀ արդարադատության նախարարություն ուղարկված՝ «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով, առաջարկվել է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 177-րդ հոդվածներում: Մասնավորապես՝ խստացնել բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված հափշտակությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի սանկցիան:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի մեկ այլ նախագծով առաջարկվել է խստացնել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան, իսկ հիշյալ հոդվածում նախատեսված հանցագործությունների առավել բարձր վտանգավորություն ունեցող տեսակների համար քրեական պատասխանատվություն նախատեսել որակյալ հանցակազմերով: Նշված նախաձեռնությունը պայմանավորված է վերջին տարիներին ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի ակնհայտ աճով:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվել է սահմանել բացառիկ դեպքերում տեսակապի միջոցով քննչական գործողություններ կատարելու իրավական կառուցակարգ: Առաջարկվում է նաև դատական քննության փուլում սահմանել բացառիկ դեպքերում տեսակապի միջոցով վկաներին և փորձագետներին հարցաքննելու հնարավորություն: Ընդ որում, վկաներին տեսակապի միջոցով հարցաքննելու հնարավորությունը նախատեսվում է այն բանից հետո, երբ ձեռնարկվել են բոլոր ողջամիտ քայլերը վկայի ներկայությունն ապահովելու համար:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի այլ նախագծով նախատեսվում է քրեական հետապնդման մարմնին տալ մասնավոր հետապնդման ցանկացած գործ հարուցելու լիազորություն, բացի այդ, դիմողի բողոք չունենալը, կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտությունը քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի համար չի հանդիսանա պարտադիր հիմք քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար, եթե հանցանք կատարողը հանցագործությունը կատարելուն նախորդող երեք տարվա ընթացքում ոչ արդարացնող հիմքերով ազատվել է քրեական պատասխանատվությունից դիտավորությամբ կատարված հանցագործության համար կամ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտվել է: Օբյեկտիվ անհրաժեշտությունն առաջրել է քրեադատավարական օրենքում առկա, ըստ էության, այն բացը, որով անձը, նախկինում կատարած դիտավորյալ արարքների համար քրեական հետապնդման չենթարկվելով կամ քրեական պատժի չարժանանալով, պարբերաբար կարող է կատարել մասնավոր հետապնդման բնույթի դիտավորյալ արարքներ և ամեն

անգամ ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դիմողի կողմից բողոք չունենալու կամ կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի հետ հաշտվելու հիմքով:

ՀՀ Սահմանադրական դատարանի 19.02.2019թ. ՍԴՈ-1446 որոշման մեջ առկա իրավական դիրքորոշումների լույսի ներքո մշակվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասում լրացում կատարելով նախատեսել, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշման հետ մեկտեղ բողոքարկման ենթակա է նաև միջնորդությունը մերժելու մասին որոշումը: Ներկայացված նախագիծը, հավանության արժանանալով ՀՀ կառավարության կողմից, ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Նախագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020թ. հունվարի 21-ին ընդունվել է և 2020թ. փետրվարի 22-ին մտել է ուժի մեջ (*օրենքի համարը՝ ՀՕ-8-Ն*):

Մշակվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ուղղված է հանցագործության կատարման վայրը պարզված չլինելու, անձի կողմից մի քանի տարածքներում հանցանք կատարելու, այդ թվում՝ շարունակվող հանցագործության տարբեր մասերը տարբեր տարածքներում կատարելու դեպքերում նախաքննության կատարման վայրը որոշելուն՝ դրանց նկատմամբ սահմանելով նախնական դատախազական հսկողություն: Առաջարկվել է ներդնել նաև ենթակայության վերաբերյալ վեճերի լուծման մեխանիզմ:

ՀՀ գլխավոր դատախազի ուղեկցական գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել դատական փորձաքննությունների ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության որոշումներում փոփոխությունների առաջարկներ, որոնց նպատակն է թարմացնել և արդի պահանջներին համապատասխանեցնել դատական փորձաքննությունների տեսակները, ենթատեսակները, յուրաքանչյուր մեկ առանձին օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամածախսը, փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները և դրա փորձաքննության արժեքը:

ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել «Դատախազության մասին» և «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություն և լրացում կատարելու նախագծեր, որոնցով առաջարկվում է, ի թիվս այլնի, սահմանել, որ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի կամ հսկող դատախազի միջնորդությունը քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պարտադիր հիմք է:

Օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորումների զգալի մասը ձևավորվել է դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից՝ ելնելով տեղերում արվող՝ իրավիճակի և քրեաիրավական պրակտիկայի օբեյկտիվ վերլուծություններից, ինչը վկայում է ոլորտի օրենսդրական դաշտի և իրավակիրառ պրակտիկայի բարելավման նախաձեռնություններում դատախազության՝ իբրև լիարժեք միասնական համակարգ լինելու իրողության մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել են ՀՀ դատախազության դիրքորոշումները «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ ոստիկանության զարգացման 2020-2023 թթ. ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ: Մասնավորապես, հիշյալ ռազմավարությունների՝ դատահիրավական և քրեական արդարադատության ոլորտին վերաբերող կարգավորումները մանրամասնորեն վերլուծվել են և դրա հիման վրա ներկայացվել են համապատասխան առաջարկներ, որոնք գերակշիռ մեծամասնությամբ ընդունվել են նախագծերի հեղինակների կողմից:

Բացի դրանից, հաշվետու ժամանակահատվածում տարբեր պետական մարմիններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին (Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչի գրասենյակ և այլն), վերջիններիս կողմից ներկայացված ազգային զեկույցների, տարբեր հարցաշարերի, տեղեկատվական բնույթի այլ փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության դատախազության իրավասությանն առնչվող հարցադրումների վերաբերյալ, տրամադրվել է **43** վերլուծական բնույթի տեղեկություն (տեղեկանք):

Մասնավորապես, ի թիվս այլնի, ներկայացվել է տեղեկատվություն.

- ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմից օգտվելու նախապայման հանդիսացող 27 կոնվենցիաների իրականացման դիտանցման հերթական փուլի շրջանակներում Եվրոպական Հանձնաժողովի ներկայացրած Հայաստանի կողմից դրանց իրականացմանը վերաբերող հարցադրումների վերաբերյալ,

- Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի (ԹՊԻՀ) շրջանակում անդրազգային կազմակերպված հանցավորության ու դրան սերտորեն առնչվող հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարի ասպարեզում ձեռնարկված գործողությունների ու ձեռքբերումների վերաբերյալ՝ 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,

- ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին (ԺՀՄԻԳ)՝ 2017թ. ատելության հողի վրա հանցագործությունների վերաբերյալ,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության ներկայացված թվով 16 գանգատներով,

- ԱՄՆ պետդեպարտամենտի 2019 թվականի մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին ամենամյա զեկույցի պատրաստման համար,

- Եվրոպայի Խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 4-րդ փուլի 1-ին համապատասխանության զեկույցով ներկայացված մասնակի կատարված և չկատարված հանձնարարականների կատարման վերաբերյալ,

- ԵԱՀԿ մասնակից մի շարք պետություններում դատախազների գործունեության անկախության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցի նախագծի վերաբերյալ:

ՀՀ դատախազությունում կարևոր նշանակություն է տրվում դատախազների պաշտոնեական պարտականությունները բարեխղճորեն կատարելուն, պատշաճ վարքագծին: Շարունակական բարեփոխումների շրջանակներում ներքին իրավական ակտերով մշտապես մշակվում են դատախազական գործունեության առանձին ուղղություններով, ոլորտներով հստակ գործողությունների, դատախազական ակտերի ուղեցույցներ, և, որ ամենակարևորն է, բարձրացվում է նաև վերահսկողական մեխանիզմների արդյունավետությունը, որոնք հնարավորություն են տալիս բացառել խախտումները, թերացումները, պարզել դրանց պատճառներն ու հանգամանքները՝ կարգապահական ներգործության համաչափ ապահովման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է 29 ծառայողական քննություն՝ 27 դատախազի նկատմամբ:

Ծառայողական քննություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների առերևույթ խախտումներ թույլ տալը, մասնավորապես՝ դատախազին ոչ վայել, անհամարժեք և ոչ հարգալից վարքագիծ դրսևորելը և այլն:

Վերոհիշյալ ծառայողական քննություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել ինչպես քաղաքացիների դիմում-բողոքները, այնպես էլ դատախազության ներքին վերահսկողական մեխանիզմները՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հանձնարարությունը:

Իրականացված ծառայողական քննության արդյունքներով հարուցվել է 6 կարգապահական վարույթ՝ 7 դատախազի նկատմամբ, 4 դեպքով՝ 4 դատախազի վարքագծի կանոնների պահանջների և աշխատանքային պարտականությունների

խախտումները քննարկվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների և Երևան քաղաքի դատախազի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, մյուս դեպքերով ծառայողական քննության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել:

Կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել քրեական գործով նախաքննության նկատմամբ թերի և մակերեսային դատավարական ղեկավարում իրականացնելը, վերադաս դատախազի կողմից ոչ պատշաճ վերահսկողությունը, դատավարական ժամկետների չպահպանումը, դատախազի վարքագծի կանոնների խախտումները:

Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 3 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթը դադարեցվել է՝ ՀՀ գլխավոր դատախազի 05.06.2018թ. N 49 հրամանի 26-րդ կետի հիմքով (կարգապահական վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարությամբ այն հանձնում է հանձնախմբին կամ յոթնօրյա ժամկետում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է լինել նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7-օրյա ժամկետում էթիկայի հանձնաժողովի քննարկմանը չներկայացվելու դեպքում կարգապահական վարույթը դադարում է), իսկ 1 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթը դադարել է՝ հաշվի առնելով այն փաստը, որ վերջինս կարգապահական վարույթի ավարտից հետո՝ մինչև կարգապահական վարույթի նյութերը ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով ուղարկելը, իր դիմումի հիման վրա ազատվել է զբաղեցրած պաշտոնից: 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը, 1 դատախազի նկատմամբ՝ «նկատողություն» կարգապահական տույժը, 1 դատախազի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը կարգապահական խախտում չի հայտնաբերել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվել են աշխատանքները զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու բնագավառում: Մասնավորապես, այդ նպատակով 2019 թվականի ընթացքում հերթական ատեստավորման է ներկայացել 64 դատախազ: ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումների համաձայն՝ 51 դատախազներ համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին, 7-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին՝ ներառելով ծառայողական առաջխաղացման ցուցակում, 5-ը համապատասխանել են զբաղեցրած

պաշտոններին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով, 1-ը չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանի համաձայն արտահերթ կարգով ատեստավորվել է 3 դատախազ, որոնցից 2-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին, իսկ 1-ը չի համապատասխանել զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդվել է ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին:

2019թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացրել է նաև բաց և փակ մրցույթներ: Բաց մրցույթն օրենքի համաձայն անցկացվել է հունվար ամսին:

- Բաց մրցույթին մասնակցելու համար դիմել է 44 հավակնորդ, որոնցից 5-ը չեն ներկայացել բաց մրցույթին:

- 13 հավակնորդի վերաբերյալ Հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է դրական եզրակացություն՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, որոնց ՀՀ գլխավոր դատախազը ընդգրկել է դատախազների թեկնածությունների ցուցակում:

- Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 13 անձինք ուղարկվել են ՀՀ արդարադատության ակադեմիա՝ ուսումնառություն անցնելու:

2019թ. ընթացքում փակ մրցույթի մասնակցելու խնդրանքով դիմել է 21 անձ, որոնցից 1-ը չի ներկայացել փակ մրցույթին՝ խնդրելով փակ մրցույթին մասնակցելու դիմումը թողնել անհետևանք: 2 հավակնորդի ՀՀ գլխավոր դատախազը չի թույլատրել մասնակցել փակ մրցույթի՝ քանզի հավակնորդներից 1-ը քննիչի պաշտոնում աշխատանքի ստաժը չէր բավականացնում փակ մրցույթի մասնակցելու համար, իսկ մյուսը դիմել էր բաց մրցույթից ընդամենը 2 ամիս առաջ: ՀՀ գլխավոր դատախազը 19 դիմորդի թույլատրել է մասնակցելու փակ մրցույթի, սակայն 6-ի վերաբերյալ Հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ նրանց դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, իսկ 13-ի վերաբերյալ՝ դրական:

8. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ

2019թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ-ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 3495 դեպք, նախորդ տարվա 3525-ի դիմաց: Նվազում է արձանագրվել 30 դեպքով կամ 0,8%-ով: Արձանագրված դեպքերից 2548-ը, կամ 72.9%-ը եղել են պատահարներ-զանցանքներ: 929-ը կամ 26,6%-ը՝ հանցագործություններ, այդ թվում՝ 556-ը կամ 59,8%-ը՝ զինվորական, 373-ը կամ 40,1%-ն՝ այլ ընդհանուր բնույթի: 18 դեպքի, կամ դեպքերի 0,5%-ի հանգամանքները 2020թ. հունվարի 1-ի դրությամբ դեռևս պարզված չեն եղել:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 190 դեպքով, կամ 8.0%-ով, հանցագործությունները նվազել են 211-ով, կամ 18.5%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 171-ով, կամ 23.5%-ով, իսկ այլ՝ ընդհանուր բնույթի հանցագործությունները ՝ 40-ով, կամ 9,7 %-ով: Եթե 2018թ. ընթացքում արձանագրված 1140 հանցագործությունից 163-ը, կամ 14,3% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 120-ը՝ ծանր, իսկ 43-ը՝ առանձնապես ծանր, ապա 2019թ. արձանագրված 929 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 141-ը, կամ 15,2%-ը, որոնցից 110-ը՝ ծանր, 31-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն, նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործությունները նվազել են 10 դեպքով, կամ 8,3%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 12 դեպքով, կամ 27,9%-ով:

2019թ. արձանագրված 31 առանձնապես ծանր հանցագործությունից 4-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 3-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության, 1-ը՝ անհայտ անձի կողմից կատարված սպանության, 18-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 4-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության փորձի, 1-ը՝ ոստիկանի կողմից պայմանագրային զինծառայողի նկատմամբ խոշտանգման դեպքեր են:

2019թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 20 զինծառայող, որոնցից 4-ը՝ հակառակորդի կողմից սպանության, 4-ը՝ սպանության, 1-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, 7-ը՝ ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու, 1-ը՝ հիվանդության, 1-ը՝ ավտովթարի, 2-ը՝ դժբախտ պատահարի հետևանք: 2018թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 38 զինծառայող, այդ թվում 7-ը՝ հակառակորդի կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ զինված ուժերում և ԱՀ ՊԲ-ում 2019թ. ընթացքում արձանագրվել է 49 զինծառայողի մահվան դեպք, որոնցից 14-ը՝ ժամկետային զինծառայող, 22-ը՝ պայմանագրային զինծառայող, 5-ը՝ ենթասպա և 8-ը՝ սպա:

49 զինծառայողից 20-ի մահվան դեպքերը կապված են եղել զինվորական ծառայություն անցնելու հետ, 29-ը տեղի է ունեցել զինվորական ծառայության հետ չկապված հանգամանքներում:

Մասնավորապես՝

Զինվորական ծառայություն անցնելու հետ կապված մահվան դեպքերը՝ ըստ պատճառների՝

- 4-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության հետևանքով,
- 7-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով,
- 1-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով,
- 1-ը՝ հիվանդությունից,
- 4-ը՝ սպանության հետևանքով,
- 2-ը դժբախտ պատահարից,
- 1-ը՝ ծառայության հետ կապված ավտովթարներից,

Զինվորական ծառայություն անցնելու հետ չկապված 29 մահվան դեպքերը՝ ըստ պատճառների՝

- 14-ը՝ ծառայության հետ չկապված ավտովթարներից,
- 12-ը՝ հիվանդությունից,
- 3- ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու:

Համեմատության համար նշենք, որ 2018թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԱՀ ՊԲ-ում արձանագրվել էր 63 զինծառայողի մահվան դեպք, որոնցից 27-ը՝ ժամկետային զինծառայող, 23-ը՝ պայմանագրային զինծառայող, 2-ը՝ ենթասպա և 11-ը՝ սպա: Արձանագրվել էր զինվորական ծառայություն անցնելու հետ կապված է 38, իսկ զինվորական ծառայության հետ չկապված հանգամանքներում՝ 25 անձ:

2018թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԱՀ ՊԲ-ում զինվորական ծառայություն անցնելու հետ կապված մահվան 38 դեպքերն արձանագրվել էին հետևյալ պատճառներով.

- 7-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության հետևանքով,
- 11-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով,
- 2-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով,
- 3-ը՝ հիվանդությունից,
- 1-ը՝ ականի պայթյունից,
- 1-ը՝ սպանության հետևանքով,
- 3-ը՝ դժբախտ պատահարից,
- 6-ը՝ ծառայության հետ կապված ավտովթարներից,
- 2-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով,

• 2-ը՝ թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնների խախտման հետևանքով:

Զինվորական ծառայություն անցնելու հետ չկապված 25 մահվան դեպքերի պատճառներն են՝

- 11-ի դեպքում՝ ծառայության հետ չկապված ավտովթարները,
- 10-ի դեպքում՝ հիվանդությունները,
- 4-ի՝ դեպքում դժբախտ պատահարները:

Համեմատական դիտարկումը վկայում է, որ ԶՈՒԽ-երում մահվան դեպքերը նախորդ տարվա համեմատ ընդհանուր առմամբ նվազել են 14-ով կամ 22%-ով: Կտրուկ՝ 18-ով կամ 47%-ով նվազել են զինծառայության հետ անմիջականորեն կապված մահվան դեպքերը:

Հատկանշական է, որ 2018թ. համեմատ նախորդ տարվա ընթացքում գրեթե կիսով չափ (7-4) նվազել են հրադադարի ռեժիմի խախտմամբ հակառակորդի կողմից արձակված կրակոցներից զինծառայողների զոհվելու դեպքերը, 4-ով կամ 36.4%-ով՝ զինվորական ծառայության հետ կապված ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու դեպքերը: Նվազել են նաև զինծառայության հետ կապված դժբախտ պատահարներից, ավտովթարներից, մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով առաջացած մահվան դեպքերը:

Ընդհանուր առմամբ վերջին տարիներին արձանագրվում է ՀՀ և ԱՀ զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի էական նվազման կայուն միտում. եթե 2017թ. արձանագրվել է 76 դեպք, ապա 2018թ.՝ 63, իսկ 2019թ՝ արձանգրվել է 49 դեպք, ինչը փաստում է, որ 2017թ. համեմատ 2019թ. զինծառայողների մահվան դեպքերը նվազել են 35.5 %-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1042 զինծառայող (2018թ.՝ 1173), այսինքն նվազում է արձանագրվել 131-ով կամ 11,2%-ով: Այդ թվում՝ 58 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք (2018թ.՝ 54):

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված (ՀՀ քր. օր-ի 356-360-րդ հոդվածներ) հանցագործությունները, ինչպես նաև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ քր. օր-ի 361-364-րդ հոդվածներ): Այսպես՝ եթե 2018թ. ընթացքում արձանագրվել է ՀՀ քր. օր-ի 356-360-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 395 դեպք, ՀՀ քր. օր-ի 361-364-րդ

հոդվածներով նախատեսված հանցագործությունների 194 դեպք, ապա 2019թ. դրանց թիվը համապատասխանաբար կազմել է 309 և 145:

Ըստ հանցատեսակների՝ զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները նվազել են 21,8%-ով, զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 25,2%-ով, հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 81,8%-ով, զինվորական պաշտոնեական հանցագործությունները՝ 31,9%-ով, կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները՝ 11,5%-ով, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները՝ 28,6%-ով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝ 11,1%-ով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները՝ 38,6%-ով: Փոխարենը աճել են ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործությունները՝ 6,25%-ով, ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 21,4%-ով, հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները՝ 58,8%-ով: Հանցագործությունների բացահայտումը կազմել է 97.0%, գրեթե նույնքան, որքան 2018թ.:

Վերլուծությունը ցույց է տվել, որ հատկապես բռնություններով պայմանավորված դեպքերը, այն է՝ զինծառայողների կողմից կանոնագրքով նախատեսված փոխհարաբերությունների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելը՝ իրենց թվացյալ առավելությունը ցույց տալու, կամ այդպիսի առավելությունն ընդգծելու, ծառայության ընթացքում իրենց համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև զինվորական կարգապահությանը չհարմարվելու և փողոցային բարքերով առաջնորդվելու հետևանք են:

Չնայած հանցագործությունների նվազման դրական միտումներին, ինչը իրավապահ մարմինների և ՀՀ ՊՈ ղեկավարության աշխատանքի արդյունավետության վկայությունն է, 2020թ. հիմնական առաջնահերթություններից պետք է դառնան նման հանցագործությունների կանխարգելման, դրանց նպաստող պայմանների ու պատճառների վերացման ուղղությամբ տարվող ակտիվ աշխատանքները: Այդ շրջանակներում անողոք պայքար պետք է մղվի բանակում քրեական ենթամշակույթին բնորոշ դրսևորումների վերացման, զինծառայողների հետ ինտենսիվ բացատրական աշխատանքների իրականացման ուղղությամբ: ՀՀ գլխավոր դատախազի կողմից զինվորական դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է զինծառայողների նկատմամբ բռնության բոլոր այն դեպքերով, որոնց քննությունների ընթացքում անձը չի հաստատում իր կողմից նախապես հայտնած տեղեկությունները, դատախազների կողմից պարտադիր կազմակերպել նրանց ընդունելությունը:

Ցանկացած առանձնապես ծանր հանցագործության դեպքով քննության առարկա պետք է դառնան նաև դրա կանխման, բացահայտման պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունները և խիստ վերահսկողություն իրականացվի տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

Թեև զինվորական դատախազության դատախազների կողմից հանցագործություններին նպաստող գործոնների վերացմանն ուղղված միջնորդագրերով պատկան պետական օղակներին դիմելու նախաձեռնողականությունը զգալի աճել է /2019թ . ընթացքում զինվորական դատախազության դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 181 միջնորդագիր/, սակայն դրանք պետք է առավել ինտենսիվ դարձնել՝ զուգահեռաբար հետևողականություն ցուցաբերելով դրանցում նշված խնդիրների վերացման ուղղությամբ գործուն միջոցների ձեռնարկման ուղղությամբ:

Ըստ վերլուծությունների՝ արձանագրվում են դեպքեր, երբ հանցագործությունները հետևանք են սպայական անձնակազմի կողմից կատարված հանցագործությունների ու այլ իրավախախտումների, ինչպիսիք են զինծառայողների նկատմամբ համածառայակիցների, կրտսեր և ավագ սպայական կազմի ներկայացուցիչների կողմից դրսևորվող ոչ կանոնագրքային վարքագծի տարաբնույթ դրսևորումները: Այս առումով կարևորվում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ սպայակազմի վարքագծի փոփոխության ուղղությամբ միջոցառումների շարունակման անհրաժեշտությունը: Այս իմաստով հատկանշական է, որ զգալիորեն՝ 33,1 %-ով կամ 87 դեպքով նվազել է հանցավորության մակարդակը սպաների շրջանում: Եթե 2018թ. ընթացքում արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործությունների 263 դեպք, ապա 2019թ. դրանց թիվը կազմել է 176:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2019թ . արձանագրված հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմել է 19,5% (2018թ . -25,7%), ենթասպաներինը՝ 2,8% (2018թ . -1,4%), պայմանագրային զինծառայողներինը՝ 18,1% (2018թ . -18,1%), ժամկետային զինծառայողներինը՝ 59,6% (2018թ. -54,7%):

Պետք է նշել, որ ՀՀ դատախազության և ՊՆ-ի միջև համագործակցության հիմնական ուղղություններից է զորամասերում տարաբնույթ հանցագործությունների կանխման և բացահայտման հարցում ՀՈՒ ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի շահագրգռության բարձրացման գործուն մեխանիզմների ներդրումը: Այդ շրջանակներում, էական է, որ հանցագործությունների կանխման և բացահայտման ցուցանիշները որպես դրական գործոն դիտարկվեն զորամասերի ղեկավարների աշխատանքի գնահատման հարցում:

Տարիներ շարունակ հրամանատարի աշխատանքի գնահատման մեխանիկական չափանիշ է հանդիսացել արձանագրված դեպքերի քանակը՝ առանց այդ հարցում

վերջիններիս նախաձեռնողականությունը հաշվի առնելու, ինչը նպաստել է նրան, որ վերջիններիս միտում են ունեցել թաքցնել այդ դեպքերը:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ քննարկումների ընթացքում վեր է հանվել այս խնդիրը և աշխատանքների գնահատման չափանիշների վերանայումներով լրջորեն լուծվել է այս հարցը:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ 2019թ . ընթացքում բոլոր կայազորներում ուսումնասիրվել են առանձին զորամասերում զորամասի հրամանատարների կողմից հանցավոր դեպքերի հայտնաբերման, բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքները, որով վեր են հանվել ըստ զորամասերի արձանագրված դեպքերը, դրանցից հրամանատարների նախաձեռնությամբ բացահայտվածները, դրա հիման վրա վերլուծություններն ու հետևությունները:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ էականորեն բարձրացել է զորամասերի հրամանատարների նախաձեռնողականությունը, ներկայումս հրամանատարները հենց իրենք են շահագրգրված հայտնաբերել, բացահայտել զորամասերում կատարված հանցավոր դեպքերը:

ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից, որպես հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների շրջանում, հաճախակի անց են կացվել զրույց-զեկուցումներ և դասախոսություններ, որոնց շրջանակներում կատարվել են օրենքների ու այլ նորմատիվ-իրավական ակտերի մեկնաբանություններ, զինծառայողների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ:

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2019թ. ընթացքում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ քր. օր.-ի 327-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված 3089 քրեական գործ, որոնցից 436-ը փոխանցվել է նախորդ տարվանից, 961-ը հարուցվել է հաշվետու տարում, 10-ը ստացվել են այլ մարմիններից, 1682-ով նախաքննությունը վերսկսվել է:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերից 1544-ի նախաքննությունն ավարտվել է: Դրանցից 19-ը մեղադրական եզրակացություններով ուղարկվել են դատարաններ, 1525-ով վարույթները կարճվել են: Ընդ որում՝ 359-ի վարույթները կարճվել են ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 925-ինը՝ ՀՀ քր դատ. օր-ի 37-րդ հոդ. (իրադրության փոփոխման), 241-ը՝ այլ հիմքերով: Իրադրության փոփոխման հիմքերով վարույթները կարճված քրեական գործերից 697-ի վարույթները կարճվել են «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ, 228-ինը՝ զորակոչիկի զինված ուժեր զորակոչվելու

կապակցությամբ: 1104 քրեական գործով վարույթները կասեցվել են, 4 քրեական գործ ուղարկվել է այլ մարմիններ, 402 քրեական գործ փոխանցվել է 2020թ.:

Հաշվետու ժամանակահատվածում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու վերաբերյալ նախապատրաստվել է 152 նյութ, որոնցով մերժվել է քրեական գործի հարուցումը: Դրանցից 152-ը՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-ը՝ այլ հիմքերով:

Զինվորական դատախազության դատախազների ամենօրյա առանձնակի հսկողության տակ են գտնվել հաշվետու ժամանակահատվածում արձանագրված կոռուպցիոն բնույթի հանցագործությունները և դրանց նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության իրականացումը:

2019թ. ընթացքում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 154 դեպք, որոնց վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների դատավարական ղեկավարմամբ և դատախազական հսկողությամբ նախապատրաստված նյութերից 145-ով հարուցվել են քրեական գործեր:

Դրանցից 63-ը հարուցվել է պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության, 29-ը՝ պաշտոնեական կեղծիք կատարելու, 27-ը՝ վատնման կամ յուրացման եղանակով տարբեր չափերի հափշտակություններ կատարելու, 11-ը՝ կաշառք ստանալու կամ տալու, 8-ը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, 3-ը՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախության, 3-ը՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու, 1-ը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու հատկանիշներով:

Ընդհանուր առմամբ 2019թ. ընթացքում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի 296 քրեական գործ: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 64 քրեական գործ՝ 102 անձի վերաբերյալ: Դատարան ուղարկված գործերի քանակը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է 50 տոկոսով:

Պարզվել է նաև, որ 2019թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված, ավարտված, ինչպես նաև տարվա ընթացքում քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով և նախապատրաստված նյութերով արձանագրվել է 786 մլն ՀՀ դրամի վնաս, որից վերականգնվել է 410մլն դրամը, իսկ մի մասով քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է:

Նշված ցուցանիշները վկայում են, որ նախորդ տարվա ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումից բացի, զինվորական քրեական հետապնդման մարմինների համար առաջնային է համարվել քննվող քրեական գործերի հանգուցալուծումը, վարույթների ավելորդ ձգձգումներից խուսափելը և ողջամիտ

ժամանակահատվածում մեղավորությունը հաստատված անձանց պատասխանատվության ենթարկելն ապահովելը:

Բացի այդ, էական նշանակություն է տրվել կոռուպցիոն հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքների, պատճառների վերացմանը, զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում նյութական միջոցների ստացման, պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Այդ նպատակով դատախազների կողմից պատկան մարմիններին հղվել է 195 միջնորդագիր և հաղորդում, որոնց քննարկումների արդյունքում միջոցներ են ձեռնարկվել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնակարգով սահմանված տույժերի են ենթարկվել խախտումներ թույլ տված պաշտոնատար անձինք և զինծառայողներ:

Կոռուպցիոն հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով զինված ուժերի ստորաբաժանումներում շարունակվում են նյութական միջոցների ստացման, պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացմանը միտված միջոցառումները: Ապահովվում է նյութական միջոցների սահմանված կարգերին համապատասխան հաշվառումը՝ զերծ մնալով ձևական փաստաթղթավորման արատավոր դրսևորումներից: Այդ նպատակով դատախազների կողմից պատկան մարմիններին հղվել է 195 միջնորդագիր և հաղորդում, որոնց քննարկումների արդյունքում միջոցներ են ձեռնարկվել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնակարգով սահմանված տույժերի են ենթարկվել խախտումներ թույլ տված պաշտոնատար անձինք և զինծառայողներ:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ առկա իրավական կարգավորումները թույլ չեն տալիս ապահովելու զինվորական ավտոտեսչությանը հատկացվող միջոցների օգտագործման նկատմամբ պատշաճ հսկողություն, ինչպես նաև հայտնաբերվել են նշված ստորաբաժանման ծառայողների կողմից ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների մի շարք խախտումներ, որոնց կապակցությամբ ծառայողական քննություն անցկացնելու և պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը բացառող միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ներկայացվել է միջնորդություն: Ծառայողական քննության արդյունքում ՀՀ ՊՆ ՌՈ 15 զինծառայող ենթարկվել է կարգապահական տույժի:

2019թ. շուրջ 23.1%-ով նվազել են կրկնահանցագործությունները, ինչը մեծապես պայմանավորված է հանցագործություններ կատարած զինծառայողների զորամասերի հրամանատարությունների, ՌՈ բաժինների և կայազորների զինդատախազությունների

աշխատակիցների իրականացրած հսկողությամբ, նրանց հետ տարված բացատրական աշխատանքներով:

2019 թվականին զինվորական դատախազության դատախազների կողմից էական աշխատանքներ են իրականացրել նաև նախորդ տարիներին կատարված հանցագործությունների բացահայտման և հետախուզական աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման, առկա թերությունների հայտնաբերման և դրանց վերացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական ստորաբաժանումների վարույթներում եղել է նախորդ տարիներից փոխանցված, ՀՀ քր. դատ օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված 1046 քրեական գործ (2018թ.՝ 906): 2019թ. ընթացքում նույն հիմքով կասեցվել է 192 քրեական գործ (2018թ.՝ 90): Կատարված վերլուծությամբ պարզվել է, որ 2019թ. ընթացքում ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կասեցված քրեական գործեր չեն վերսկսվել, նախկինում կատարված հանցագործությունների բացահայտման դեպքեր չեն արձանագրվել:

2019թ. ընթացքում, ղեկավարվելով ՀՀ զինվորական դատախազի 12.06.2017թ. N 13 կարգադրության և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից, սպասարկման տարածքներում տեղակայված ՀՀ ՊՆ ՌՈ բաժիններում և բաժանմունքներում ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված քրեական գործերով կազմված օպերատիվ փնտրողական գործերը՝ հանցանք կատարած անձանց բացահայտման ուղղությամբ դատախազական գործունեության կազմակերպման միասնական կառուցակարգեր ձևավորելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ուսումնասիրության ընթացքում հետազոտման առարկա են դարձել հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզելու նպատակով իրականացված միջոցառումների՝ օպերատիվ հարցումների, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերման նպատակով տարբեր իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների իրավական հիմքերը, դրանց կատարման անհրաժեշտությունը, ժամանակին կատարված լինելը և դրանց արդյունքում ստացված տեղեկությունների հավաստիությունը: Այդ ընթացքում նախաքննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների հայտնաբերման և հետաքննության մարմնին ուղղորդող նշանակության ցուցումներ տալու անհրաժեշտություն չի առաջացել:

Նախաքննության մարմնի՝ քննիչի կողմից տրված գրավոր հանձնարարությունների հիման վրա իրականացվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Քրեական գործերով ձեռք բերված տվյալների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տեղեկությունների միջև հակասություններ չեն հայտնաբերվել:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բավական ցածր մակարդակի վրա գտնվում Ռազմական ոստիկանության՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնող մարմնի արդյունավետությունը՝ ինչպես պատշաճ կադրային ռեսուրսների զարգացման աշխատանքների, այնպես էլ անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության բացակայության հետևանքով:

Նշված խնդիրը բարձրացվել է և ձեռնարկվում են միջոցներ այս ոլորտում համակողմանի բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:

2019թ. ընթացքում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումների և հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման ու լուծման մասին օրենքի և մյուս համապատասխան իրավական ակտերի, հանձնարարականների (ցուցումների) պահանջների կատարումն ապահովելու նպատակով կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հետաքննության մարմիններում անցկացվել են 458 ստուգումներ և ուսումնասիրություններ՝ նախորդ տարվա 436-ի դիմաց:

Կատարած ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում արձանագրվել է 75 իրավախախտումների դեպք (2018թ.՝ 49), 75 անձանց վերաբերյալ դատախազները ներկայացրել են միջնորդություններ՝ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ (2018թ.՝ 51): Արդյունքում՝ 10 անձ ենթարկվել է կարգապահական տույժի:

2019թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների հսկողությամբ նախապատրաստվել և ավարտվել է 5423 նյութ (2018թ.՝ 5583), որոնցից 2596-ը՝ քննչական (2018թ.՝ 2767), 2827-ը՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից (2018թ.՝ 2816):

Հետաքննության մարմինների նախապատրաստած նյութերով կայացված 2099 մերժման որոշումներից 6-ը դատախազների կողմից վերացվել և հարուցվել են քրեական գործեր (2018թ.՝ 7): Դրանցից 3-ով վարույթները կարճվել են, 3-ով նախաքննությունն ընթացքի մեջ է:

2019թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի դատախազները վերահսկողություն են իրականացրել կայազորների զինվորական դատախազություններից ստացված 1381 նյութերով կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականության նկատմամբ (2018թ.՝ 755): Բոլոր նյութերով կայացված որոշումների օրինականությունը վերստուգվել և հաստատվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ բաժինների վարույթում քննվող 5088 քրեական գործի նկատմամբ (2018թ.՝ 4872):

2609 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է (2018թ.՝ 2436): Ավարտված քրեական գործերից 503-ը՝ 752 անձանց նկատմամբ (2018թ.՝ 588 գործ, 915 անձ) մեղադրական եզրակացությամբ, 1 գործ 1 անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ ուղարկվել են դատարաններ, 2105 քրեական գործով վարույթները կարճվել են (2018թ.՝ 1848), 1248 քրեական գործով վարույթները կասեցվել են (2018թ.՝ 1177), 65 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2018թ.՝ 108), 189-ը միացվել է այլ գործերի (2018թ.՝ 181), 841-ը՝ փոխանցվել 2020թ. (2018թ.՝ 912):

2019թ. ընթացքում վերացվել է քրեական գործերով վարույթները կարճելու 78 (2018թ.՝ 38) որոշում:

Զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ, ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից, մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ են ուղարկվել 503 քրեական գործ՝ 752 անձի (2018թ.՝ 588 գործ 915 անձ) վերաբերյալ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ ընդհանուր առմամբ 407 քրեական գործ 614 անձի (2018թ.՝ 578 գործ 852 անձ) վերաբերյալ քննվել է դատարանում, որոնցից 306 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 416 անձ (2018թ.՝ 643 անձ):

Դատարանների որոշումներով 92 քրեական գործ 184 անձի վերաբերյալ կարճվել է (2018թ.՝ 114 գործ 193 անձ), այդ թվում՝ 154 անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ (2018թ.՝ 39 անձ): 7 քրեական գործով 12 անձի վերաբերյալ և 2 առանձին քրեական գործերով 2 անձանց մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2018թ.՝ 10 գործով 15 անձի), իսկ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են կիրառվել 1 գործով 1 անձի նկատմամբ (2018թ.՝ 0):

Դատապարտված 416 անձից 375-ը եղել է զինծառայող (2018թ.՝ 599), այդ թվում՝ 122-ը՝ սպա (2018թ.՝ 138), 253-ը՝ պայմանագրային և ժամկետային զինծառայողներ (2018թ.՝ 461): Նախորդ տարվա համեմատությամբ 224-ով նվազել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 41 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 1 անչափահաս:

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրողների կողմից օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերվել է 59 վերաքննիչ բողոք՝ 65 անձի վերաբերյալ: ՀՀ զինվորական դատախազի կողմից բերվել է 9 վճռաբեկ բողոք:

ՀՀ զինվորական դատախազի կողմից ևս կարևորվել է միասնական իրավական մոտեցումների ապահովումը, որոշակի դատական պրակտիկայի արմատավորումը:

Այդ նպատակով կարևոր արդյունք է ապահովվել զինծառայողի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ մեկ գործով բերված վճռաբեկ բողոքով, որն էական է զիված ուժերում բռնության գործադրման հանրային վտանգավորության բարձր

աստիճանն արձանագրելու, այդ երևույթների դեմ միասնական, հետևողական և խիստ պայքար ապահովելու գործում:

Այսպես.

2017 թվականի մայիսի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով («Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ) հարուցվել է թիվ 90755417 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումներով Արմեն Օհանյանը և Արմեն Ազարյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով: Ա. Ազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա, հանդիսանալով պետ՝ ՀՀ ՊՆ ... զորամասի 1-ին ՀԳՄ-ի 1-ին վաշտի 2-րդ դասակի հրամանատարի պաշտոնակատար, կոչումով ավագ սերժանտ, 2016 թվականի նոյեմբերին՝ քննությամբ չպարզված օրը, ժամը 06:50-ին, զորամասի շարահրապարակում, ֆիզպատրաստության ժամանակ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ շարքից ուշանալու պատճառով բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս (ենթակա) հանդիսացող պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Կարոյի Բաղդասարյանի նկատմամբ՝ ձեռքով հարվածել է վերջինիս պարանոցին՝ պատճառելով ֆիզիկական ցավ (...)»:

Ա. Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա, հանդիսանալով պետ՝ ՀՀ ՊՆ ... զորամասի 1-ին գումարտակի 1-ին վաշտի հրամանատար, կոչումով կապիտան, 2016 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը, ժամը 08:00-ի սահմաններում, զորամասի շարահրապարակում, շարային ստուգատեսի ժամանակ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ համազգեստի կրման կանոնները խախտելու և ոչ պատշաճ արտաքին տեսք ունենալու պատճառով բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս (ենթակա) հանդիսացող պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Կարոյի Բաղդասարյանի նկատմամբ՝ ոտքով հարվածել է վերջինիս ոտքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ (...)»:

2017 թվականի նոյեմբերի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 17-ի դատավճռով Ա.Օհանյանը և Ա.Ազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել են անմեղ և արդարացվել: Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը.

«(...) [Ա]պացույցների համադրված վերլուծության ու գնահատման արդյունքում դատարանը գտնում է, որ տուժողի կարգազանց վարքագծով պայմանավորված ամբաստանյալ Ա. Օհանյանը ոտքով հարվածել է վերջինիս ոտքին՝ ի ցույց դնելով պատռված ու ցեխոտ կոշիկները, իսկ ամբաստանյալ Ա. Ազարյանը ձեռքի ափով հարվածել է ծոծրակին՝ պահանջելով շարք կանգնել: Նշված հարվածներից ցավ զգալու կապակցությամբ տուժողը տարաբնույթ ցուցմունքներ է տվել, իսկ դատարանում պնդել, որ հարվածները թույլ են եղել, ինքը դրանից չի վրդովվել, քանզի իրեն կարգի հրավիրելու նպատակ են հետապնդել ամբաստանյալները, որոնց հետ հաշտ է, բողոք կամ պահանջ չունի ու չի ուզում, որ պատժի ենթարկվեն:

(...)

Այսպիսով, քրեական գործի փաստական տվյալների համադրված վերլուծության ու գնահատման արդյունքները հիմք են տալիս արձանագրելու, որ Արմեն Ռուբենի Օհանյանի, Արմեն Յուրիի Ազարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի առկայության մասին նախաքննական մարմնի հետևությունը հիմնավոր չէ և այդ կապակցությամբ թույլ է տրվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, քանզի ամբաստանյալների փաստական գործողությունները չեն համարվում հանցագործություն, քանի որ թեև ձևականորեն պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հատկանիշներ, սակայն նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառվել և չէր կարող պատճառվել: Այս պայմաններում դատարանը գտնում է, որ ամբաստանյալների արարքում բացակայում է հանցակազմը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով արդարացման դատավճռի կայացման պայման է: Ընդ որում, այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով պետք է հաստատագրել հանցակազմի բացակայության մասին, բխում է դատական պրակտիկայից (...)»:

Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 17-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ: Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ գործով ձեռք բերված ապացույցներով, մասնավորապես ամբաստանյալներ Արմեն Օհանյանի, Արմեն Ազարյանի, տուժող

Ն.Բաղդասարյանի, վկաներ Ս.Ագասյանցի, Ա. Ալեքսանյանի, Ն. Մանգասարյանի ցուցմունքներով, հաստատվում է Արմեն Օհանյանի կողմից տուժող Նվեր Բաղդասարյանի ոտքին և Արմեն Ազարյանի կողմից վերջինի ծոծրակին հարվածելու հանգամանքները:

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալների փաստական գործողությունները թեև ձևականորեն պարունակել են վերոնշյալ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն իրենց նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացրել, այսինքն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պետությանը կամ հասարակությանն էական վնաս չեն պատճառել և չէին էլ կարող պատճառել:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալների դիտավորությունն ուղղված է եղել ոչ թե տուժող Ն. Բաղդասարյանի նկատմամբ բռնություն գործադրելուն, այլ վերջինին կարգի հրավիրելուն, ինչը հաստատվում է նաև տուժողի ցուցմունքներով:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Արմեն Օհանյանի և Արմեն Ազարյանի արարքները չնայած ձևականորեն պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն իրենց նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում, ուստի վերաքննիչ բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու հիմքերը բացակայում են (...)»:

Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով հանցանք կատարած անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի կիրառման հնարավորության հարցին, արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ.

« ... պետը, պատասխանատու լինելով զինվորական կարգապահության, զինվորական քաղաքավարության կանոնները պահպանելու, ինչպես նաև ենթակաների շրջանում պատշաճ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու համար, պարտավոր է իր այդ պարտականությունները կատարելիս առաջնորդվել միայն օրենքներով և զինվորական կանոնագրքերի պահանջներով: Անթույլատրելի է վերոնշյալ նպատակներին հասնելու համար ստորադասի նկատմամբ բռնության կամ դրա սպառնալիքի գործադրումը՝ նույնիսկ եթե դա կատարվել է վերջինին կարգի հրավիրելու նպատակով: Զինվորական ծառայության ընթացքում բռնությամբ զուգորդված արարքներն ինքնին հանրային բարձր վտանգավորություն են ներկայացնում, քանի որ խարխլում են զինվորական ենթակայության սահմանված կարգը, ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտը, բացի այդ երբեմն կարող են ավելի ծանր հետևանքների հանգեցնել»:

Վճռաբեկ դատարանն իր նշյալ որոշմամբ կարևորել է նաև այն հանգամանքը, որ մեղսագրվող արարքները կատարվել են զինվորական ծառայության

պարտականությունները կատարելու կապակցությամբ, ինչն օրենսդրորեն գնահատված է որպես առավել բարձր վտանգավորություն ներկայացնող: Վճռաբեկ դատարանն փաստել է նաև, որ համապատասխան անձինք հանդես գալով որպես պետ և պարտավոր լինելով զինծառայողի պատշաճ վարքագիծն ապահովելու համար ձեռնարկել օրենքով սահմանված համապատասխան միջոցներ, գերադասել են վերջինիս նկատմամբ բռնություն գործադրել:

Զինվորական դատախազության մասով մեղադրանքի պաշտպանության դատախազական գործառույթի կիրառման արդյունավետության համատեքստում հանձնարարվել է, որպեսզի հատկապես մահվան ելքով քրեական գործերի դատական քննության փուլում ղեկավար դատախազներն անմիջականորեն ներգրավվեն մեղադրանքի պաշտպանության գործընթացում: Բացի այդ, հանձնարարվել է, բավարար ապացույցների համակցության առկայության դեպքում, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ հնարավորինս շուտ ուղարկել դատարան՝ ոչ միայն համաչափ պատժի անխուսափելիության ապահովման սկզբունքից ելնելով, այլ նաև հաշվի առնելով ինքնին դատական քննությունների նշանակությունը հանցագործությունների կանխարգելման առումով:

Զգալի աշխատանք է տարվել զինված ուժերում պետական շահերի պաշտպանության դատախազական գործառույթի իրականացման համատեքստում: Մասնավորապես, պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 2019թ. ընթացքում կատարվել է 400 ուսումնասիրություն, որոնց ընթացքում հայտնաբերվել է 230 խախտում: Դրանք հիմնականում վերաբերել են թիկունքային ծառայության, սպառազինության, ռազմաբժշկական, կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման բնագավառներին: Ընդ որում՝ հարկ է նկատել, որ 2018թ. համեմատ 2019թ. իրականացված ավելի շատ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են մոտ 27.3%-ով ավելի քիչ խախտումներ, ինչը վկայում է զինվորական դատախազության կողմից նախկինում իրականացված ուսումնասիրություններով ի հայտ բերված նմանատիպ խախտումները բացառելու և դրանց պատճառները վերացնելու ուղղությամբ իրավասու մարմինների, զորամասերի ղեկավարության կատարրած աշխատանքի մասին: Այդ խախտումներով պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ 2019թ. ընթացքում տրվել է 175 նախազգուշացում, ինչը 2018թ. համեմատ ավելի է 70.3%-ով: Իսկ ուսումնասիրություններով պարզված՝ առերևույթ հանցագործության հատկանիշ պարունակող տվյալների ձեռքբերմամբ հարուցվել է 41 քրեական գործ:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունների շրջանակներում արձանագրվել է պետությանը պատճառված շուրջ 12 մլրդ ՀՀ դրամի վնաս, որը 2018թ. արդյունքը (մոտ 2 միլիարդ ՀՀ դրամ) գերազանցում է 6 անգամ, կամ հավասար է 2013-2018թթ. արձանագրված վնասի ընդհանուր չափին:

Բացառապես դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ ընդհանուր վերականգնվել է 1.2 մլրդ ՀՀ դրամ վնաս՝ կամ 2018թ. (680մլն ՀՀ դրամ) համեմատ գրեթե կրկնակի ավելի: Պետությանը պատճառված գույքային վնասից մնացած մոտ 10.2 մլրդ ՀՀ դրամը վերականգնելու ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվում հարուցված քրեական գործերի շրջանակներում:

9. Քաղաքացիների ընդունելության, դիմում-բողոքների քննարկման և հանրային կապերի ոլորտ

2019թ. ՀՀ դատախազությունում քաղաքացիներից ստացվել է 11.862 դիմում-բողոք՝ նախորդ տարվա 11.198-ի համեմատ: Ստացված դիմումների թիվն աճել է 664-ով: Դիմումներից 2244-ը եղել է կրկնակի, 889-ը բավարարվել է (2018թ.՝ 695), 3966-ին տրվել է պարզաբանում, 1969-ը մերժվել է (2018թ.՝ 1762), 141-ը թողնվել է անհետևանք (2018թ.՝ 177), 12-ը վերադարձվել է դիմումատուին (2018թ.՝ 12), 15 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2018թ.՝ 30), 181 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2018թ.՝ 130), 4634 դիմում ուղարկվել է այլ մարմին, 55 դիմումի քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ (2018թ.՝ 84):

2019 թվականի ընթացքում ՀՀ դատախազությունում կազմակերպվել է քաղաքացիների 2491 ընդունելություն (2018թ.՝ 2763), որոնցից ՀՀ գլխավոր դատախազությունում՝ 527, ՀՀ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում՝ 374: Մյուս մասը կազմակերպվել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազություններում՝ 1590:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների հարցերին տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպված քաղաքացիների ընդունելությունների արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ և հարուցվել են քրեական գործեր, ինչպես նաև քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումները վերացնելու դեպքեր:

2019թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունը ստացել է տեղեկատվության 130 գրավոր հարցում, որոնցից 126-ի դեպքում պատասխանը տրվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված 5-օրյա ժամկետում, իսկ 4-ի դեպքում՝ 30-օրյա ժամկետում:

Նշված 4 հարցումին պատասխանվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված պահանջների պահպանմամբ, այսինքն՝ գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝

տեղեկությունը դիմողին տրվել է դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվել է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական կամ մոտավոր ժամկետը:

ՀՀ դատախազության կողմից տեղեկության տրամադրումը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և 11-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում ամբողջությամբ մերժելու դեպք նշված ժամանակահատվածում չի արձանագրվել: Առանձին դեպքերում տեղեկությունը չի տրամադրվել հարցման այն մասով, որը վերաբերել է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությանը, հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներին, ինչի վերաբերյալ հարցմամբ տրվել են այդ մասով մերժման հիմքերի և պատճառների մասին պարզաբանումներ:

Հարցումների մի մասի դեպքում, երբ ՀՀ դատախազությունը չի հանդիսացել հայցվող տեղեկության տնօրինողը և չի ունեցել համապատասխան տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է եղել, գրավոր հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, այդ մասին գրավոր պատշաճ տեղեկացվել է դիմողին՝ իրազեկելով այդ տեղեկությունը տնօրինողի մասին:

ՀՀ դատախազությունը, էապես կարևորելով իր գործունեության հրապարակայնության ապահովումը, ակտիվացրել է աշխատանքները նաև ամենօրյա գործունեության լուսաբանման ոլորտում:

Առաջնային է համարվել ոչ միայն հանցավորության դեմ պայքարում դատախազության և քրեական հետապնդման մյուս մարմինների աշխատանքների արդյունքների ներկայացումը, այլ նաև ՀՀ գլխավոր դատախազության կողմից որդեգրված քրեական քաղաքականության ուղղվածության, նպատակների ու խնդիրների, իրավունքի զարգացման միտումներին համահունչ քրեական դատավարության և քրեական արդարադատության ոլորտի բարեփոխմանը միտված դատախազության ձեռնարկումների հանրայնացումը:

Այս համատեքստում հիմնական թիրախային նպատակներից է համարվել հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների պրակտիկ կիրառման, այդ հարցում ցուցաբերվող հետևողականության համընդհանուր հասարակական համոզմունքի ամրապնդումը:

Դրան զուգահեռ, դատախազության հանրային կապերի ապահովման ռազմավարական խնդիրներից է համարվել քրեական վարույթի շրջանակներում դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանությանն ուղղված դատախազական գործիքակազմի կիրառման դրսևորումների, արդյունքների ներկայացումը՝ որպես հասարակության իրավագիտակցության բարձրացումը խթանելու

միջոց: Այդ համատեքստում քայլեր են ձեռնարկվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ գործընկերային հարաբերությունների զարգացման, մասնագիտական շրջանակների համար ՀՀ դատախազության գործունեության, նրա կողմից 2019թ. համար նախանշված առաջնահերթություններն ու սկզբունքներն առավել ընկալելի դարձնելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ գրեթե ամենօրյա ռեժիմով հրապարակվող պաշտոնական հաղորդագրությունների միջոցով հանրային լայն իրազեկում է ապահովվել հանրապետությունում հանցավորության ընդհանուր վիճակի, դինամիկայի, հանրային առավել մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործությունների կանխարգելման, խափանման, բացահայտման, սոցիալական և հասարակական նշանակության ոլորտներում կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվող քրեական վարույթների, դրանց ընթացքի և հանգուցալուծման վերաբերյալ:

Դատախազության պաշտոնական հրապարակումներում առանձնահատուկ նշանակություն է տրվել հանցագործությունները ծնող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ դատախազների կողմից պետական և համայնքային իշխանության մարմիններին հասցեագրված միջնորդագրերի, հաղորդումների, այդ նախաձեռնությունների հետևանքների, արդյունքների մասին հանրային իրազեկմանը:

Ամենօրյա ռեժիմով և աննախադեպ բարձր օպերատիվությամբ, ինչպես լրատվամիջոցներին, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին անհրաժեշտ իրավական պարզաբանումներ են տրվել ամենատարբեր, այդ թվում՝ հանրության համար առանձնահատուկ կարևորություն ստացած կամ ուշադրության արժանացած գործերով դատախազության կողմից կայացված դատավարական որոշումների, դրանց պատճառների և հիմքերի վերաբերյալ:

Վերոնշյալ ուղղություններով, ընդհանուր առմամբ, ՀՀ գլխավոր դատախազության կողմից պատրաստվել և հրապարակվել է շուրջ 360 հաղորդագրություն:

Լրատվամիջոցների հետ լայն համագործակցություն է ծավալվել հատկապես կոռուպցիայի դեմ պայքարում, պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտներում դատախազության իրականացրած աշխատանքը, դրա արդյունքները և թիրախները ներկայացնելու, ինչպես նաև ընթացող դատահիրավական ոլորտի բարեփոխումների, դրանց առանձին կողմերի, դրանցում դատախազությանը վերապահված դերակատարության և պատասխանատվության մակարդակի վերաբերյալ պարզաբանող տեղեկության տրամադրման առումով:

2019թ. ընթացքում տեղեկատվական հոսքերի ապահովման տեսանկյունից հիմնական առաջնահերթություններ են հանդիսացել բնակարանային գողությունների, ապօրինի անտառահատումների, ընտանեկան բռնությունների, անչափահասների հանցավորության դեմ համակարգված պայքարին ուղղված դատախազության նախաձեռնությունները, քրեակատարողական հիմնարկներում պատժի կրման և պահման պայմանների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը, առանձին ոլորտներում՝

ինչպես, օրինակ, ջրօգտագործման, էներգետիկայի, բնապահպանության, պետական գույքի մասնավորեցման, սոցիալական աջակցության, ճանապարհաշինության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, նրանց ենթակայության կամ մասնակցությամբ կազմակերպություններում աշխատանքային հարաբերություններում հանցավոր մեխանիզմների բացահայտումները, զինված ուժերում կոռուպցիայի դեմ պայքարի, հանցավորության մակարդակի նվազեցմանը միտված քայլերը, նախկինում կայացված մեղադրական դատական ակտերի վերանայմանն ուղղված՝ դատախազության կողմից վարույթների հարուցմանը, վերադաս դատական ատյաններ նման դատական ակտերի բեկանմանն ուղղված դատական բողոքարկման գործընթացների, հակակոռուպցիոն պայքարում ազդարարման համակարգի դերի, գործարկման արդյունքների և այդ համակարգից օգտվելու եղանակների և անվտանգության մասին, ինչպես նաև քրեական ենթամշակույթի դեմ պայքարի իրավական մեխանիզմների, դրա հանրային վտանգավորության և դրանից զերծ մնալու անհրաժեշտության մասին պատշաճ հանրային իրազեկման ապահովումը և այլն:

Մասնագիտական հանրույթի հետ հետադարձ կապի ապահովման տեսանկյունից կարևորվել է քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի բարելավմանը միտված փոփոխությունների, առաջարկությունների՝ դատախազության նախաձեռնությունները, մարդու հիմնարար ազատությունների պաշտպանությանը միտված քրեադատավարական ընթացակարգերի նշանակալի փոփոխություններին վերաբերող՝ ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները հանրայնացնելը, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ հավելյալ պարզաբանողական մեկնաբանություններով հանդես գալը:

Որպես դատախազության հանրային կապերի ապահովման արդյունավետ միջոց՝ դատախազության գործունեության առանձին կողմերի, քրեաիրավական արդիական առանձին խնդիրների, առանձին հանցատեսակներով նախաձեռնված համալիր կանխարգելիչ միջոցառումների լուսաբանման նպատակով գլխավոր դատախազությունը մշակել և ՁԼՄ-ների միջոցով տարածել է համապատասխան տեսանյութեր, և այս միջոցն աստիճանաբար վերածվում է հանրության հետ արդյունավետ աշխատանքի հիմնական գործիքներից մեկի:

ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, համապատասխան տարածաշրջանում հանցավորության լոկալ վիճակը, դրա դեմ պայքարը, այդ համատեքստում դատախազության տվյալ ստորաբաժանման նախաձեռնությունները, քրեական հետապնդման տարածքային մարմինների աշխատանքները հատկապես համապատասխան վարչական տարածքների ազգաբնակչության համար տեսանելի և գնահատելի դարձնելու, առանձին իրավիճակների, դեպքերի կապակցությամբ օպերատիվ իրավիճակը նրանց ներկայացնելու, տարածքային մակարդակով դատախազության և բնակչության հաղորդակցությունը բարելավելու և իրազեկում ապահովելու նպատակով, պարբերաբար

կազմակերպվել է դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների պարբերական հանդիպումները լրագրողների հետ:

Վերոնշյալ աշխատանքների շրջանակներում, ՀՀ գլխավոր դատախազության սեփական նախաձեռնությամբ, կոնկրետ թեմաներով ՁԼՄ-ների հետ սերտ գործակցության արդյունքում պատրաստվել և հրապարակվել է 175 տեսանյութ, ռեպորտաժ:

Սերտ գործակցություն է ծավալվել մի քանի հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ՝ հատկապես հակակոռուպցիոն վարքագծի խրախուսմանը միտված քարոզչական-ուսուցողական նախաձեռնությունների, «Միասին ընդդեմ կոռուպցիայի» սոցիալական գովազդի երիտասարդական մրցույթի անցկացման շրջանակներում:

Մեր մոնիտորինգներով ՁԼՄ-ներից վերցվել և համապատասխան ընթացք է տրվել 125 հաղորդագրության, որոնց արդյունքում հարուցվել են բազմաթիվ քրեական գործեր, պետական շահերի պաշտպանության ուղղությամբ կայացվել են դատախազական ակտեր: